

ԵՂԻՍԱ ԿԱՐՆԵՑՈՒ

ԳԻՎԱՆԸ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

# ДИВАН ЕГИЯ КАРНЕЦИ

МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ  
БЛИЖНЕГО ВОСТОКА И ЗАКАВКАЗЬЯ

Предисловие и примечания  
Проф. А. Г. Абрамяна

ИЗДАТЕЛЬСТВО «МИТК»  
ЕРЕВАН 1968

3(6) 7)  
5-38

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍ ԱՐԱՆ

# ԵՂԻՍ. ԿԱՐՆԵՑՈՒ ԳԻՎԱՆԸ

ՆՅՈՒԹԵՐ ՄԵՐՉԱԿՈՐ ԱՐԵՎԵԼԻ  
ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Առաջաբանը և ծանոթագրությունները  
Պրոֆ. Ա. Գ. Աբրահյանի

1254  
~~25418~~

ՀՄԽՏՔ ԳՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ  
ԲԻԲԼԻՈՏԵՔԱ  
1968  
ՀՄԽՏՔ ԳՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՕՏՔԱՆԱԼԵ ՏՈՒՆԵՐԻ  
ԲԻԲԼԻՈՏԵՔԱ  
ՆԱՍԿ ԱՐՄ. Ս.Ս.Ր.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1724 թվականի գարնանը, քաղաքական հատուկ միսիայով, Պարսկաստանից Ռուսաստան է մեկնում պարսկական կառավարության պատվիրակությունը՝ պարսկահայ աչքի ընկնող առևտրական և հասարակական գործիչ Եղիա Կարնեցի Մուշեղյանի ղեկավարությամբ: Պատվիրակության նպատակն էր շահ Քահմազի երեք հրովարտակները հանձնել ավստրիական Կարլուս VI կայսրին, Լյուդովիկոս XV թագավորին և Իննովկենտինոս պապին: Պատվիրակությունն իր հետ ունէր նաև էհտիմա Գովլի պաշտոնազիրը՝ հասցեագրված ցարական արքունիքի կանցլեր իշխան Գոլովկինին: Եղիա Կարնեցին մտադիր էր նախ լինել Պետերբուրգում, ցարական արքունիքին հանձնել պաշտոնազիրը, այնուհետև անցնել Արևմտյան Եվրոպա և տեղ հասցնել մյուս հասցեատերերի հրովարտակները:

Եղիա Կարնեցու Ռուսաստան մեկնելու շարժառիթը, սակայն, միանգամայն այլ էր. նա ցանկանում էր հանդիպում ունենալ Պետրոս Մեծի հետ, զաղտնի բանակցություններ վարել նրա հետ հայկական հարցի մասին և խնդրել արագացնելու հայ ժողովրդին պարսկա-թուրքական արշավանքի լծից ազատագրելու գործը: Բայց գեղեցիկ նպատակադրության ճանապարհին նա հանդիպում է մեծ ողբերգության. Ռուսաստանում և Պարսկաստանում գործող ֆրանսիական հետախուզությունը, ցանկանալով խափանել Եղիայի մտադրությունը, իր գործակալների միջոցով դավ է կազմակերպում նրա դեմ. զրպարտագրեր ներկայացնում ռուսական իշխանություններին, որ Եղիան իբրև թե պարսկական դորձակալ է և Աստրախանից դեպի Մոսկվա ճանապարհին Ղասիմով քաղաքում ձերբակալել տալիս նրան: Ռուսական իշխանությունները Եղիա Կարնեցուն 12 տարի պահում են բանտում և արսորում, մի քանի անգամ հարցաքննությունների ենթարկում, իրենց գործակալների միջոցով նյութեր հավաքում Եղիայի մասին և վերջ ի վերջո, երբ համոզվում են, որ Եղիա Կարնեցին ստոր գրպարտություն զոհ է, արդարացնում են և ազատում բանտից:

Ռուսական իշխանությունները Եղիային ձերբակալելու ժամա-

81128

17797

նակ նրանից բռնագրավում են տարբեր անձնավորությունների հետ նրա վարած գրագրությունների 60-ից ավելի թղթապանակները: Արգարացնելուց հետո, սակայն, Եղիային այդ վավերագրերը չեն վերագրվում, այլ հանձնում են Արտաքին գործերի պետական կոլեգիայի արխիվ: Ահա այս ճանապարհով կորստից փրկվել է մեզ է հասել Եղիա Կարնեցու գրագրությունը, որը պատմական բացառիկ արժեք է ներկայացնում Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի պատմության համար: Եղիայի այդ գրագրության թղթապանակներն այժմ գտնվում են Մոսկվայում ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Արտաքին հարաբերությունների արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» կոչվող ֆոնդում:

Ահա Կարնեցու այս նյութերի հիման վրա է կազմված պատմական նյութերի հրատարակվող ներկա ժողովածուն: Համառոտակի ծանոթանանք այն ժամանակաշրջանի հետ, երբ գործել է մեր հեղինակը:

\* \* \*

18-րդ դարի առաջին քառորդում Պարսկաստանը, ինչպես հայտնի է, գտնվում էր տնտեսական և քաղաքական կազմալուծված վիճակում: Աֆրիկան շրջանցող ծովային ճանապարհի յուրացումը ծանր հետևանքներ թողեց Պարսկաստանի տնտեսական կյանքի վրա. Արևմտյան Եվրոպայից Պարսկաստանի վրայով ձգվող ջամբային տարանցիկ ուղին փոխեց իր ուղղությունը և անցավ ծովային ճանապարհով: Պարսկաստանը դուրս մնաց միջազգային աշխույժ առևտրի ոլորտից և մեկուսացավ: Նա զրկվեց առևտրական գործարքներից ստացվող հսկայական միջոցներից և սկսեց տնտեսական ճգնաժամ ապրել: Սկսեցին ցամաքել պարսկական արքունիքի եկամուտները:

Պարսկաստանի տնտեսական ճգնաժամին զուգահիշեց նաև քաղաքական կյանքի կազմալուծությունը: Շահ Հուսեյնը, որ զահ էր բարձրացել 1694 թվականին, Սեֆյան հարստության ամենից տպիկար և անձեռնհաս զահակալն էր: Ռուսական պատվիրակ Արտեմի Վոլինսկին, որ 1715—1719 թվականներին եղել է Պարսկաստանում և հանդամանորեն ուսումնասիրել երկրի քաղաքական վիճակը, Պետրոս Մեծին ներկայացրած իր ղեկուցագրում հետևյալն

է գրում. «Այստեղ (այսինքն՝ Պարսկաստանում—Ա. Ա.) այնպիսի մի ղեկավար է, որ ինքը ոչ թե հպատակների գլխին է կանգնած, այլ հպատակ է իր հպատակների մոտ, և հազվագեղ կարելի է գրտնել նման հիմարի ո՛չ միայն թագավորների, այլ նույնիսկ հասարակ հպատակների մեջ: Այդ պատճառով ինքը ոչ մի գործի մեջ մտնել չի բարեհաճում և ամեն ինչ վստահել է իր փոխանորդ էհտիմա Գովլին, որն ամեն տեսակ անասունից էլ հիմար է»<sup>2</sup>:

Տեղեքում փաստական իշխանությունը գտնվում էր խաների ձեռքում, որոնք օգտվելով կենտրոնական իշխանությունների թուլությունից, անձնիշխան կառավարում էին իրենց վստահված խանությունը և կեղեքում ժողովրդին: Պետական պաշտոնեությունը վերից վար նշանակվում էր կաշառքով. կենտրոնական իշխանություններից կաշառքով էր նշանակվում ինքը՝ խանը, նա իր հերթին կաշառքով էր նշանակում իրեն ենթակա պաշտոնյաներին և այսպես մինչև ամենից կրտսեր աշխատակիցը: Պաշտոն ստանձնած ամեն մեկի հիմնական նպատակն էր հարստահարել ժողովրդին և նրանից կորզել իր աված կաշառքի կրկնակին: Ըստ որում, սովորություն էր պաշտոնյաներին երկար շթողնել իրենց պաշտոնում. շուտ շուտ փոփոխելով նրանք նորանոր կաշառքի հնարավորություն էին ստեղծում:

Շահական արքունիքն իր դատարկ զանձարանը լցնելու և պետական անհրաժեշտ ծախսերը ծածկելու համար ծանրացնում էր հարկերը: Ժամառակալից պատմիչներից մեկը՝ Հասան-Ջալալյանցը, խոսելով Պարսկաստանում հարկերի ծանրացման մասին, գրում է. «Եւ ցրուեցան զօրք Պարսից ընդ երկիրս և ընդ դիւղօրայս ի թիւ արկեալ գրովն. և քանզի յոյժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ շարշարէին և կեղեքէին և ջարդուելով առնուին... նոյնպէս վաճառականաց և յամենայն արհեստաւորացն առին: Եւ այսպէս ամի ամի զգլուխն համարէին, և հարկահանքն ճշդիւ եկեալ առնուին: Յետ այսորիկ միւս ևս կերպիւ հարկս եղին և անուանեցին ապիբուրան: Գարձեալ միւս ևս եղին և զայն ասացին շահզադէ և զայս երեքատեկեցին: Եւ զարձեալ կրկին ևս եղև հրաման ելանել և զբել զամենայն սահմանս երկրի, զիւղօրէից և չաբարակաց, զճող, զշուր, զբայգի, զանդաստան, զժառ, զտունկ, և զամենայն ինչ որ պիտոյ է մարդկան առհասարակ...»<sup>3</sup>: Վերջում նա դառնացած ավել-

<sup>2</sup> С. М. Соловьев, История России с древнейших времен, Москва, 1963, кн. IX, стр. 367.

<sup>3</sup> Տալի կարդիկոս Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառոտ Ազուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 15—16:

<sup>1</sup> 84՝ М. С. Иванов, Очерк истории Ирана, Москва, 1952, էջ 80—81:

չացնում է. «Զայս ամենայն, զոր գրեցաք, նորահնար շարիք էր, զոր եղին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն, որ և առաջինն ևս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեան»<sup>4</sup>:

Ծանր դրութիւն էր ստեղծվել նաև վաճառականութեան, մասնավորապես նոր-Ջուղայի պարսկահայ առևտրականների համար: Նրանցից մաքս էին վերցնում իրենց անցած ուղու վրա գտնվող բոլոր խանութիւններում: Ըստ որում, գոյութիւն չունէր մաքս վերցնելու սահմանված կարգ: Ամեն մի խան մաքսը սահմանում էր ըստ իր նախասիրութեան: Եղիա Կարնեցին իր «Անձկութեան» մեջ նկարագրում է մաքսային իշխանութիւնների կամայականութիւնները այսպիսի մի փաստ. Մոսկովայից վերադառնալու ժամանակ նիսգովա նավահանգստում նրան արգելում են ապրանքները տեղափոխել Շամախի, թե «Ոչ ոք կարէ տանիլ Շամախի իր ինչ, մինչև որ խանի մարդն գայ և կնքէ դամենայն զոգրակս վաճառականաց, զի յորժամ որ գնայ քաղաք, գայ խանի տնօրէնն և տեսնու, զի զոր ինչ գտանի զիրս արժանի թագաւորին և կամ վասն խանին, առնուն զնոսա և ապայ թէ մնացեալն տան վաճառականաց»<sup>5</sup>: Այսպես էր անշուշտ դրութիւնը նաև մյուս խանութիւններում: Այս բոլորի հետևանքով Պարսկաստանի գործոնյա վաճառականներից շատերը, հատկապես նոր-Ջուղայի հայ վաճառականները, տեղափոխվում են Ռուսաստան, Հնդկաստան և Արևմտյան Եվրոպայի երկրները:

18-րդ դարի առաջին քառորդում պարսիկ ժողովրդի տառապանքը կրկնակի շափով բաժանում էին պարսկական գերիշխանութեան տակ գտնվող մյուս ժողովուրդները՝ հայերը, վրացիները, աֆղանները, քրդերը և այլք: Հարկերի ծանրացումը, անզուսպ կամայականութիւնները և կեղեքումները զուգակցվում էին կրոնական անհանդուրժողականութեամբ: Պարսկական կենտրոնական իշխանութիւններից վասալական կախվածութեան մեջ գտնվող վրացական թագավորները չէին կարող զահակալել, մինչև որ մահմեդականութիւն չընդունեին և չփոխեին իրենց նախկին քրիստոնյա անունը: Պատկերացնելու համար պարսկական պաշտոնյաների կամայականութիւնները այլազգի հպատակների նկատմամբ, ավելորդ չենք համարում բերել Ղարամի որդի Պետրոսի 18-րդ դարի առաջին քառորդում գրած հիշատակարանից մի փոքրիկ քաղվածք. «Դարձեալ յայսմ ամի,—գրում է նա,—(այսինքն՝ 1703 թվակա-

նին—Ա. Ա.) երկու միմեկ եկաւ Նախչիվան, շատ նեղութիւն ավին այս տառապեալ քրիստոնէից, որ միայն մեր գեղին ԴՃ (400) թուման գնաց: Դարձեալ, Երևանայ, Նախչիվանայ խաներն երկու տարէն մէջումն շորս անգամ փոխվեցան, գեղօրէից շատ շատ խասարաթ տվին, որ գրել ունման չէ... Դարձեալ ՌՃԿԶումն (1717) միմէկ եկաւ Նախչիվան, մէկ տարի նստեց, մեր գեղին ՃԾ (150) թուման գնաց: Մեր գեղի զլուխ եկածն գրելով ճար չի ընիլ, որ յետ սորայ չի կարացին օճտէն գալ»<sup>6</sup>:

Պարսիկ ժողովուրդը, ինչպես և պարսկական գերիշխանութեան տակ գտնվող այլազգի մյուս ժողովուրդները, բնական է, չէին կարող հանդուրժել պարսկական իշխանութիւնների հարստահարութիւնները և հաճախ ընդվզում էին: Վոլինսկին իր գեկուցարում հայտնում է, որ եթե Պարսկաստանում հանդես չգա եռանգուն մի նոր շահ, ապա՝ «Այս զահը ենթակա է կործանման, որովհետև ոչ միայն իրենց թշնամիներից չի կարող պաշտպանվել, այլև՝ իր սեփական ապստամբներից, և քիչ տեղ է մնացել, որ ապստամբութիւն չլինի»<sup>7</sup>:

Պարսկաստանի հպատակ այլազգի ժողովուրդներից շատ ծանր էր մասնավորապես հայերի ու վրացիների դրութիւնը, որոնք ոտքի էին կանգնել ազատագրական շարժումների և իրենց հայացքն ուղղել էին դեպի հյուսիս՝ դեպի Ռուսաստան, այնտեղից սպասելով օգնութիւն՝ իրենց ուսերից օտարերկրյա լուծք թոթափելու համար: Ինչպես հայերը, այնպես և վրացիները իրենց նամակներով և դրութիւններով անընդմեջ դիմում էին ռուսական արքունիքին և օգնութիւն խնդրում:

Ռուսական արքունիքը ուշադրութեամբ էր վերաբերվում հայերի և վրացիների ազատագրական ձգտումներին, սակայն, նաև ուներ իր անձնական շահը Անդրկովկասում. ցանկանում էր հաստատվել Կասպից ծովի ափերին, իր ձեռքը վերցնել Արևելքի առևտուրը և մտտենալ Հնդկաստանին: Տվյալ դեպքում՝ հայերի, վրացիների և ռուսների ձգտումները համընկնում էին:

Յարական կառավարութեան դեպի Անդրկովկաս իջնելու ձրգտումը չէին կարող հանդուրժել Անգլիան և Ֆրանսիան, որոնց դիվանագիտութիւնը ամեն կերպ աշխատում էր արգելքներ ստեղծել ռուսների առաջխաղացման առջև: Նրանց համար ցանկալի չէր ռուսների մտտեցումն իրենց գաղութներին և կիսագաղութներին, չէին ուզում ձեռքից բաց թողնել Պարսկաստանի շահավետ առև-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>5</sup> Ե. Զ. Ռսկյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Միխայիլայն մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1980, թ. 19ա: (Այսուհետև մեջբերումներ անելիս նշելու ենք «Անձկութիւն» խորագիրը—Ա. Ա.):

<sup>6</sup> Մատենադարան, ձեռագիր № 604, թ. 199ա—199բ:

<sup>7</sup> С. М. Соловьев, նշված աշխատութիւնը, էջ 367—368:

տուրը: Թուրքիայում շատ ակտիվ էր գործում հատկապես անգլիական դիվանագիտությունը, որն աշխատում էր հրահրել թուրքերին՝ կռիվ սկսելու ռուսների դեմ<sup>8</sup>: Աշխատում էին համոզել թուրքական կառավարությունը, որ եթե ռուսական զորքերը մտնեն Անդրկովկաս, հայերը և վրացիները կմտնեն ռուսական հովանավորության տակ ու կսկսեն սպառնալ Թուրքիային: Կոստանդնուպոլսի ռուսական ռեզիդենտ Նեպլյուերը հայտնել է ցարական արքունիքին, թե իրեն գաղտնի հայտնի է դարձել, որ «Մոտ օրերս անգլիական ղեսպանը Բարձր Դուռը ներկայացրել է հուշագիր թուրքերեն լեզվով», որով հայտնել է, թե Պետրոս Մեծը հսկայական զորք է հավաքել և ցանկանում է արշավել Անդրկովկաս, խորհուրդ է տվել կռիվ հայտարարել ռուսներին և շվախենալ նրանցից, որովհետև Ռուսաստանի ներքին կյանքը խախտւտ է և եվրոպական ոչ մի երկիր բարեկամ չէ ռուսներին:

Մյուս կողմից, անգլիական և ֆրանսիական կառավարող շքանները հակառուսական եռանդուն աշխատանք էին տանում Պարսկաստանում: Նրանք իրենց դիվանագետների, առևտրական ընկերությունների գործակալների և միսիոներական կազմակերպությունների միջոցով աշխատում էին թշնամանք առաջացնել պարսկական արքունիքում ընդդեմ ռուսների. հավատացնում էին, թե Ռուսաստանը ագրեսիվ նպատակներ ունի Պարսկաստանի նկատմամբ:

Հակասությունները Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև ավելի սուր բնույթ ստացան 1722 թվականի աֆղանների արշավանքի հետևանքով: Աֆղանները, ինչպես հայտնի է, պարսկական գերիշխանության տակ գտնվող այն ժողովուրդներից էին, որոնք չհանդուրժելով պարսիկ իշխանավորների վայրագությունները, անկասկածաբար և անկախացան: Նրանց բանակը, Միր-Վեյսի գլխավորությամբ, խորտակիչ հարված հասցրեց պարսկական բարոյալքված զորաբանակին և մի քանի ճակատամարտից հետո հասավ Սպահան ու շրջապատեց այն: 1722 թվականի հոկտեմբերի 22-ին աֆղաններին հաջողվեց վերցնել Սպահանը, գահընկեց անել շահ Հուսեյնին: Աֆղանների առաջնորդ Միր-Վեյսը իրեն շահ հայտարարեց Պարսկաստանում<sup>9</sup>:

Պարսկաստանում ստեղծված քաղաքական այս խառնակ վիճակը աշխատեցին օգտագործել ինչպես արևմտաեվրոպական խո-

շոր պետությունները, այնպես և Պարսկաստանին հարևան Թուրքական կառավարությունը: 1722 թվականին Պետրոս Մեծը խոշոր բանակով մտավ Դաղստան և հասավ մինչև Դերբենդ: Իր արշավանքի նպատակը նա բացատրեց նրանով, թե ցանկանում էր պատժել լեզգիներին, որոնք Շամախիում կողոպտել էին ռուս առևտրականներին: Հաջորդ տարին ռուսական առանձին զորամասեր հաստատվեցին Կասպից ծովի ափի այլ քաղաքներում՝ Բաքվում, Ռաշտում և այլուր: Այդ էլ բացատրվեց «հարևանական բարի ցանկություն»՝ թույլ շտալ, որ աֆղանները գրավեն պարսկական դահլիճ:

Շահ Հուսեյնի տղաներից մեկը՝ Թահմազը, Սպահանը աֆղանների կողմից շրջապատված ժամանակ, փախել և հաստատվել էր Հարավային Ադրբեջանում ու իրեն շահ հայտարարել: Ցարական արքունիքը, ցանկանալով իր գրավումներին իրավական հիմնավորում տալ արտաքին աշխարհի առջև, Պարսկաստանում գտնված իր ղեսպանի միջոցով, բանակցությունների մեջ է մտնում շահ Թահմազի հետ, խոստանում ճանաչել նրա գահակալությունը և օգնել նրան դուրս անելու աֆղաններին Պարսկաստանից այն պայմանով, եթե Պարսկաստանը Ռուսաստանին զիջի Կասպից ծովի մերձափնյա շրջանները: Խորհուրդ է տրվում Ռուսաստան ուղարկել պարսկական կառավարության լիազոր ներկայացուցչին՝ բանակցություններ սկսելու համար: Շահ Թահմազը և նրան շրջապատող մարդիկ հարմար են գտնում Ռուսաստան ուղարկել Իսմայիլ բեկին: Սա մեկնում է Մոսկվա, բանակցություններ վարում ռուսական արքունիքի հետ և 1723 թվականի սեպտեմբերի 12-ին կնքում ռուս-պարսկական պայմանագիրը: Ըստ այդ պայմանագրի, ռուսներին է տնցնում մերձկասպյան որոշ շրջաններ, այդ թվում՝ Դաղստանը և Կասպից ծովի ափով ընդարձակ մի շերտ՝ Բաքվից մինչև Ռաշտ: Իսկ ռուսները խոստանում են օգնել պարսիկներին դուրս բերելու աֆղաններին Պարսկաստանից:

Թուրքիան ևս պասսիվ դիրք չունեցավ Պարսկաստանի նկատմամբ, հասարակ դիտորդի դերում չէր գտնվում. նա էլ էր ցանկանում օգտվել առիթից և իր բաժինը ստանալ կազմալուծվող Պարսկաստանից:

1723 թվականին թուրքական զորքերը, առանց կռիվ հայտարարելու, մտան Վրաստան և գրավեցին Թիֆլիսը: Վրաստանի Վախթանգ թագավորը, շտանալով Ռուսաստանի խոստացած օգնությունը, հարկադրված եղավ թողնել Վրաստանը և ապաստան փնտրել Ռուսաստանում: Թուրքական զորքերն այնուհետև իրենց հարվածն ուղղեցին Երևանի և Գանձակի վրա ու ռազմական մեծ ջանքերից

<sup>8</sup> Տե՛ս Լ. Ա. Никитин, Русско-английские отношения при Петре I, М., 1950, էջ 276:

<sup>9</sup> Տե՛ս Петрос ди Саргис Гиланенц, Дневник осады Испагаи афганцами, СПб, 1870:

հետո, վերցրին դրանք: Չնայած թուրքական հրամանատարությունների նպատակն էր առաջ շարժվել և դուրս գալ Կասպից ծով, սակայն նրանց առջև ծառայած Զանգեզուրի և Ղարաբաղի հայ ղեկավարականությունը հերոսաբար կռվելով, թույլ չտվեց զբաղվել Զանգեզուրն ու Ղարաբաղը և առաջ շարժվել դեպի Կասպից ծով: Թուրքական հարավային բանակը մտավ Պարսկաստան, գրավեց Քրմանշահը, Թավրիզը և հասավ մինչև Ղազվին:

Պարսկաստանի և Անդրկովկասի հողի վրա իրար մոտեցան ռուսական ու թուրքական զորքերը և երկու բանակների ընդհարման վտանգ առաջացավ: Ռուսաստանը չէր ուզում հանդուրժել թուրքական զորավորումները Վրաստանում և Արևելյան Հայաստանում, իսկ Թուրքիան չէր ուզում թույլ տալ ռուսներին հաստատվել Կասպից ծովի ափերին և գրավել Դաղստանը: Ռուսները ցանկանում էին հովանավորել և օգնություն ցույց տալ Վախթանգին ու հայ քաղաքական գործիչներին՝ թոթափելու օտարերկրյա լուծը, իսկ թուրքերը ցանկանում էին օգնել Դավութ-բեկին: Նրանք ծրագրել էին Կովկասում ստեղծել Ղրիմի խանության նման մի վասսալական խանություն՝ Դավութ-բեկին ճանաչելով այդ երկրամասի խան: Թուրքերի և ռուսների միջև գոյություն ունեցող այս հակասությունն աշխատում էին ավելի սրել անգլիական և ֆրանսիական դիվանագետները Թուրքիայում: Սակայն Ռուսական արքունիքը տրամադիր չէր նոր պատերազմ սկսելու Թուրքիայի դեմ, ուստի հանձնարարված էր Պոլսում իր պատվիրակին համաձայնություն կարգել փնտրել: Պոլսում տեղի ունեցող բանակցությունների ժամանակ կողմերը համաձայնության են գալիս և ֆրանսիական դեսպան Դը Բոնակի միջնորդությամբ 1724 թվականի հունիսի 12-ին կնքում ռուս-թուրքական պայմանագիրը: Ըստ այդ պայմանագրի, ռուսները ճանաչում են թուրքական գրավումները Անդրկովկասում և Պարսկաստանի որոշ մասում, իսկ թուրքերը՝ ռուսական գրավումները Կասպից ծովի ափերին և Դաղստանում:

Քաղաքական ահա այսպիսի բարդ իրադրություն մեջ է հանդես եկել ու գործել Նդիա Կարնեցին, և հրապարակվող նամակագրությունը հիմնականում վերաբերում է այս ժամանակաշրջանին:

\* \* \*

Ո՞վ է Նդիա Կարնեցին, ի՞նչ հասարակական և քաղաքական աշխատանքներով է նա հայտնի եղել, ի՞նչ կապ է ունեցել պարսկական արքունիքի հետ, ինչպե՞ս է, որ նրան է վստահվել Ավստրիա-

յի կայսրին, Ֆրանսիայի թագավորին, Պապին և ռուսական կառավարության կանցլեր Գոլովկինին պաշտոնագրեր հասցնելու, անշուշտ, նաև նրանց հետ դիվանագիտական բանակցություններ վարելու պատասխանատու գործը: Այս բոլոր հարցերի պատասխանը, հանդամանորեն գրված, գտնում ենք իր՝ հեղինակի «Պատմութիւն իմն կարճաբոտ անձկութեանց» խորագրով մի աշխատության մեջ, որը նա գրել է ռուսական բանտից ազատվելուց և հայրենի Կարին քաղաքը վերադառնալուց հետո, 1747—1749 թվականներին: Նա այս աշխատության մեջ փորձել է վերլուծել իր գլխով անցածը և գտնել իր դժբախտության պատճառները:

Այդ աշխատությունը, ձեռագիր վիճակում, այժմ գտնվում է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում: (Կարնեցու այս աշխատությունը դեռ չի հրատարակված, սակայն նրանից որոշ քաղվածքներ, ինչպես և հեղինակի մասին ընդարձակ ու արժեքավոր տեղեկություններ հրատարակել է Հ. Հ. Ոսկյանը «Հանդես ամսօրյա»-ում)<sup>10</sup>:

Նդիան ծնվել է Կարինի խոտորչրի շրջանի Կրման գյուղում 1689 թվականին: Իր հաշվեմատյաններից մեկում նա իր ծննդյան թվականի մասին թողել է հետևյալ հիշատակությունը. «Իմ՝ Նդիայիս, ծննդեան թիւն՝ Փրկչին 1689, իսկ Հայոց՝ 1137, մայիս երեսուն երեքշաբթի գիշերն, որ լուսացավ չորեքշաբթի, եղև մայիսի 31: Նդիականին պասին ես՝ Նդիա, աշխար եկի պաս շաբաթին՝ երեքշաբթի լուս չորեքշաբթի»<sup>11</sup>:

Նդիայի հայրը՝ Աստվածատուրը, իր ժամանակի մեծահարուստ վաճառականներից մեկն է եղել: Նդիան ցանկանալով որոշ տեղեկություն տալ իրենց հարստության մասին, իր «Անձկութեան» մեջ հետևյալն է գրել. «Զի՞նչ յերկարեցից, յերբ ատենատան դպիրքն սկսեցին ամենայն ինչ մատենագրել՝ թէ քուր, թէ ինձ տված մատենանքն, և թէ փող, և թէ տանն գինն, ամենեցուն բովանդակն եղև 2300 մառչիլ: Ահա այս էր ամենայն փարթամութիւն Մուշեղանց Աստուածատուրին, և յիւր երից որդոցն, այսինքն՝ պարսից դեսպան Յիլեա բէկին և անուանի մեծ վաճառական պարոն Ղևոնդին և պերճապատի և համբաւունակ վաճառական պարոն Մովսէսին: Թարց մատենից, ոչ կարեմ թվականել՝ որքա՞ն ապրանք պարտի լինել ի տան յիմում, բայց ըստ ոմանց և իմ կարծեօքն, պարտի

<sup>10</sup> Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1927, էջ 28—36, 126—138, 237—249, 367—375, 493—501:

<sup>11</sup> Архив внешней политики России (այսուհետև մեջբերում է արվելու ԱВРР ձևով), Ф. Сношение России с Арменией, 1724, № 1, „А“, Л. 61а.

լինել իմ տանն հարկը հազար մառչիլ՝ թէ արծաթեղէն, թէ ոսկեղէն, թէ գուհարեղէն, և թէ ըստակ, թէ բարեղէն և թէ այլ»<sup>12</sup>:

Եղիայի մոր անունը Գոհար էր, որը, Եղիայից բացի, ունեցել է երկու այլ տղաներ՝ Մովսէսը և Ղևոնդը, նրանք Եղիայի գործակիցներն են եղել առևտրի ասպարեզում և հաճախ են հիշվում Եղիայի նամակագրության մեջ:

Եղիան գրաճանաչությունը սովորել է Կարինում, տիրացու Մինասի մոտ, այնուհետև շարունակել է թվաբանություն ուսանել կազմարար և գրավաճառ Գրիգորի վարժարանում, որը, ըստ Եղիայի հաղորդման, հանդիսացել է «Ամենայն վարուք բարեգործ և բարեկենցաղ և կատարեալ հմուտ գրոց՝ հռչակեալ ի մէջ քաղաքիս մերոյ»<sup>13</sup>: Եղիան եղել է Գրիգոր վարժապետի ընդունակ և սիրված աշակերտներից մեկը:

Տասնվեց տարեկան հասակում Եղիան կորցնում է իր հորը և գտնվում հորեղբոր տղայի՝ Ղազարի խնամքի տակ: Վերջինս ցանկանալով, որ Եղիան եվրոպական լեզուներ սովորի, ուսանելու է հանձնում Կարինում այդ ժամանակ բնակություն հաստատած եգիպտացի Պետրոս Ռիբարդի մոտ, որի առաջին գործն է լինում Եղիային կաթոլիկ դարձնել և օգտագործել Կարինի կաթոլիկ համայնքում՝ քարոզչության համար:

Եղիան երիտասարդ հասակից սկսել է գործածել իր հոր զբաղմունքը և պարապել առևտրով: Նրա հաշվեմատյաններից երևում է, որ նա առևտրական գործարքներ է սկսել կատարել 1713 թվականից: Իր զբաղմունքի պահանջով նա եղել է Պարսկաստանի, Փուրբիայի, Անդրկովկասի և Ռուսաստանի առևտրաշատ մի շարք քաղաքներում: Հետագայում, ավելի հասուն տարիքում, նա թողել է ինքնուրույն առևտուրը և ծառայության մտել սկզբում Պարսկաստանի անգլիական, իսկ հետո հոլանդական առևտրական ընկերություններում: 1718—1720 թվականներին եղել է Արևելյան հնդկական առևտրական ընկերության կառավարիչի օգնականը Թավրիզում: (Այդ տարիներին Թավրիզի կառավարիչն էր Իսրայել Օրու երբեմնի աշխատակից Բերգարը):

Թավրիզում իր պաշտոնավարելու ընթացքում Եղիան կարողանում է մեծ հեղինակություն ստեղծել իր շուրջը որպես Արևելքին քաջածանոթ, լեզուներ գիտցող և գործունյա անձնավորություն: Նրան է վստահվում փաստորեն Արևելյան հնդկական ընկերության գործերը վարելու ողջ պատասխանատվությունը:

<sup>12</sup> «Անձկութիւն», ձեռագիր, թ. 109բ—110ա:

<sup>13</sup> Նույն տեղում, թ. 7ա:

1721 թվականին, աֆղանական արշավանքների շրջանում, Եղիան գտնվել է Սպահանում և ականատես եղել Պարսկաստանի մայրաքաղաքի շուրջը ծավալվող իրադարձություններին, որոնք ամենայն մանրամասնությամբ նկարագրված են նրա հրատարակվող նամակներից մի քանիսում: Եղիային մեծ դժվարությամբ է հաջողվում դուրս գալ աֆղանական շրջապատումից և մեկնել Թավրիզ ու զբաղվել Թավրիզում երկրաշարժի ժամանակ իրենց գողացված ասլիաների հայտնաբերման գործով:

1723 թվականին, կարճ ժամանակով, նա նշանակվել է Ֆրանսիական հյուպատոս Մաշադում:

Այդ տարիներին, երբ Հարավային Ադրբեջանում շահ Քահմազը նոր էր գահ բարձրացել և հարկավոր էր ճանաչելի դառնալ մեծ պետություններին, մյուս կողմից, երբ անհրաժեշտ էր ցրել աֆղանական Միր-Վեյսի անպարտելիության վերաբերյալ տարածված լուրերը, շահ Քահմազի արքունիքում առաջանում է արևմտակամ լրտեսական երկրների արքունիքներին, ինչպես և ցարական արքունիքին հրովարտակ գրելու և Պարսկաստանի գոյավիճակը ներկայացնելու անհրաժեշտությունը: Այդ հրովարտակներում ասվում է, որ իրենց հաջողվել է ջարդել դեպի Հարավային Ադրբեջան արշավող աֆղանական զորաբանակը: Հրովարտակներում միաժամանակ վախ է հայտնվում, որ հարևան երկրներից մեկը, որի անունը չի տրվում, ցանկանում է օգտագործել քաղաքական խառնակ դրությունը և գրավել Պարսկաստանից որոշ երկրամասեր<sup>14</sup>՝ ականարկելով անշուշտ Քուրբիային կամ Ռուսաստանին, կամ գուցե՝ երկուսին էլ:

Անհրաժեշտ է համարվում շահական այդ հրովարտակները տեղ հասցնելու համար ընտրել այնպիսի անձնավորություն, որը հասարակական դիրք ունենար, ճանաչված մեկը լիներ, լեզուներ իմանար և վստահություն ներշնչեր եվրոպական արքունիքներում: Այդ գործի հարմարավոր թեկնածու էր Եղիան, և նրան է հանձնարարվում գլխավորել պարսկական պատվիրակությունը:

Կարնեցին հաճույքով է հանձն առնում այդ պատվիրակության ղեկավարությունը, ինչպես ինքն է ասում, ոչ նրա համար, որ դրա մեջ փառք ու պատիվ է ուզում փնտրել, այլ որ այդ հարմար առիթ էր հանդիպելու Պետրոս Մեծին և նրա հետ խոսելու իր դժբախտ աղապակիցների ազատագրության հարցի մասին:

Եղիան կազմում է իր շքախումբը, դժբախտաբար՝ անհաջող:

<sup>14</sup> Տե՛ս АВІР, Сношение России с Персией, т. № 103, № 1:

նա շքախմբի մեջ է մտցնում այնպիսի կետեղծելի անձնավորու-  
թյուններ, որոնք հետագայում իրեն մատնողները և խորտակող-  
ները եղան: Այլ խոսքով ասած, նա կրկնում է այն սխալը, որը նրա-  
նից առաջ թույլ էր տվել Իսրայել Յորին ռուսական իր զենսպանու-  
թյունը կազմելու ժամանակ:

Եղիայի հրապարակվող նամակագրությունից երևում է, որ նա  
սկզբում ցանկացել է ուղևորվել Արևմտյան Եվրոպա Քուրբիայով:  
Նա մտադիր է եղել Քուրբիայի վրայով նախ հասնել Հռոմ, Ինկուլ-  
կենտիոս պապին հանձնել շահ Քահմազի հրովարտակը, ապա այն-  
տեղից անցնել Վիեննա, տեղ հասցնել Կարլոս VI կայսեր հրովար-  
տակը, այնուհետև շարունակել իր ճանապարհը դեպի Փարիզ, Լյու-  
զովիկոս XV -ին հանձնել նրան հասցեագրված շահ Քահմազի հրո-  
վարտակը և վերջում անցնել Ռուսաստան, հանդիպում ունենալ  
Պետրոս Մեծի հետ և կանցլեր Գոլովկինին հանձնել էհտիմա Գովլի  
գրությունը:

Քուրբիայի վրայով ճանապարհորդելու ժամանակ դժվարու-  
թյուն չունենալու համար, նա 1723 թվականի հուլիսի 4-ին նամակ  
է գրել Պոլսի ֆրանսիական դեսպան Ժան Լուի Բոնակին և խնդրել  
նրանից հավատարմագիր ուղարկել իրեն: Մի այլ գրություն էլ նա  
ուղարկել է Հալեպի ֆրանսիական դեսպան Փելրանին, որ սա  
իր համար նաև պատրաստի՝ Իտալիա գնալու համար: Սակայն շու-  
տով, երբ Պոլսից ստացվում է ֆրանսիական դեսպանի բացասա-  
կան պատասխանը և հայտնի դառնում, որ Պարսկաստանի արև-  
մուտքի սահմանի վրա Քուրբական զորքեր են կենտրոնացվում  
կոբլ սկսելու համար, վախենալով, Եղիան փոխում է իր մտադրու-  
թյունը և որոշում Արևմտյան Եվրոպա գնալ Ռուսաստանի վրայով:

Պատվիրակության մեջ Եղիան իրեն օգնական է վերցնում  
Հովհաննես անունով կապուչին մի պատրու, որը Քավրիզի կապու-  
չիների միաբանության անդամ էր: Կապուչին պատրին ցանկացել  
է, որ ինքը ղեկավարի պատվիրակությունը, ոչ թե Եղիան: «Անձկու-  
թեան» մեջ Եղիան բերում է մի զրույց, որ տեղի է ունեցել իր և  
պատրու միջև. «Երբ տեսի, որ սրա սիրտը դառնացած է,—գրում է  
Եղիան,— և բանակով լինի ատուր միում, ասացի. «Պատրի, խոր-  
հուրդտ քո ի՞նչ է, էս բանս ես եմ շինել. կամ թող ես կատարեմ, դու  
գործ չունես, կամ դու շինէ, ես բան չունիմ, քեզ կու տամ»:

Ասաց. «Ո՛ր, դու ես սկսել»:

Ասի. «Ես աշխարհական եմ, կաշխատեմ վասն շահել, դու ի՞նչ  
կասես»:

Ասաց. «Ես կամիմ գնալ միայն հաւատոյ»:

Ասի. «Ի՞նչ որ դատում լինի՝ քո՞նն է, թէ՞ իմն»:

Ասաց. «Երեք բաժինն քեզ լիցի և մինն ինձ, որովհետեւ դուն  
շատ աշխատում ես և ամեն բան դու ես տեսնում»<sup>15</sup>:

Պարսկաստանում գործող ֆրանսիական գործակալներին, ինչ-  
պես երևում է, հենց սկզբից հայտնի է եղել Եղիայի Ռուսաստան  
գնալու բուն նպատակը, նրա ցանկությունը՝ ազատագրելու Հայաս-  
տանը ռուսների օգնությամբ, իսկ քանի որ նրանք խնդիր ունեին  
խափանել ամեն մի ձեռնարկ, որը նպաստելու էր ռուսների առաջ-  
խաղացմանը դեպի Անդրկովկաս, ռուսի անմիջապես գործի են  
անցնում և աշխատում խափանել նրա ծրագրերը:

Ֆրանսիական հետախուզությունը սկզբում նպատակ է ունեցել  
Եղիային սպանել տալ Քուրբիայի վրայով ճանապարհորդություն  
կատարելու ժամանակ, բայց, երբ նրանց հայտնի է դառնում, որ  
Եղիան ընտրել է ճանապարհորդության նոր ուղի՝ Ռուսաստանի  
վրայով, ֆրանսիական գործակալները ընտրում են Եղիային վար-  
կաբեկելու և շարքից դուրս հանելու նոր և ավելի նենգ միջոց. աշ-  
խատում են լուրեր տարածել և վարկաբեկել ռուսների մոտ, որ Ե-  
ղիան իբրև թե պարսկական գործակալ է և Ռուսաստան է գնում  
հետախուզության նպատակով:

Այդ գործում, ինչպես երևում է Եղիայի վկայությունից, ամե-  
նից ակտիվ գործել է պատրի Բեռնարդոսը՝ Քավրիզի կապուչին-  
ների միաբանության «մեծավոր»-ը: «Զինի գնալոյն իմ,—գրում է  
Եղիան,— սկսեց ստեպլ գրել ի ռուսաց, թէ Եղիան ոչ է դեսպան,  
այլ լրտես է Պարսից, զի եկաւ առ ձեզ լրտեսել և յետս դառնալ»:  
Եղիան հետո ավելացնում է. «Նա ոչ թէ միայն ինքը գրեք, այլ և  
զրել տայր այլոց»<sup>16</sup>: Եղիայի դեսպանության օգնական Հովհաննես  
պատրուն հանձնարարվում է կազմակերպել Ռուսաստանում Եղիա-  
յին խորտակելու գործը:

Եղիայի դեսպանությունը, երբ հասնում է Գիլան, որն այդ ժա-  
մանակ գրավված էր ռուսական զորքերի կողմից, Հովհաննես պատ-  
րին իսկույն գործի է անցնում, գտնում է ֆրանսիացի մի զինվորա-  
կանի, որը հարցուրապետի պաշտոնով ծառայում էր ռուսական բա-  
նակում, և նրա միջոցով սկսում ռուսական հրամանատարության  
մոտ վարկաբեկել Եղիային: Այդ զինվորականը, որի անունը Գա-  
լանտոն էր, պետք է ենթադրել, որ դարձյալ ֆրանսիական գործա-  
կալ է եղել:

<sup>15</sup> Տե՛ս ներկա ժողովածուում հրատարակվող Եղիայի օրագրությունը:

<sup>16</sup> Անդ, թ. 47ա—47բ:

Հովհաննես պատրին շարունակում է Եղիային վարկաբեկել նաև Աստրախանում: Նրան հաջողվում է այդ գործում օգտագործել պարսկական ղեսպան Իսմայիլ բեկին, որն այդ ժամանակ գտնվում էր Աստրախանում, և որի կնքած պայմանագիրը շահ Քահանազի սրտով չէր, ուստի Եղիայի վրա նայում էին որպես մեկի, որը կարծես գալիս է չեղյալ հայտարարելու Իսմայիլ բեկի կնքած պայմանագիրը: Եղիան ճիշտ է կռահել, որ Հովհաննես պատրին «Առաւել ապականեալ էր ընդ զամենեսան, մանաւանդ՝ ընդ ղեսպանին Պարսից Իսմայիլ բեկին, որ դարձել էր ի Մոսկոֆու, կամ էր գնալ ի Ղարս, որ սայ յայտնի գրեց հակառակ իմ առ Պետրոս թագաւորն Ռուստաց, բանդի թշնամեաց արարն ծածուկ էր»<sup>17</sup>:

Եղիայի մեղադրական գործից երևում է, որ ռուսական իշխանությունների մոտ Եղիային որպես կասկածելի անձնավորություն առաջին անգամ ներկայացնողը, իրապես, պարսկական ղեսպան Իսմայիլ բեկն էր: Իշխան գեներալ Տրուբեցկին 1724 թվականի մարտի 15-ին ցարական արքունիքին ներկայացրած ղեկուցագրում գրում է, որ Իսմայիլ բեկն իրեն հայտնել է, թե ինքը կապուչին պարսիկ մի ծառայողից իմացել է, որ պատվիրակությունն իր հետ տանում է արևմտասլավոնական գահակալների վրա հասցեագրված շահ Քահանազի կասկածելի հրովարտակները<sup>18</sup>:

Եղիայի նկատմամբ ստոր է վարվել ղեսպանության մի այլ անդամ ևս՝ Հակոբ Հարությունյանը, որը ռուսական արքունիքին է ներկայացրել երկու զրպարտագիր, զրանցից մեկում (1725 թվականի հունվարի 15-ին) հայտնել է, թե Եղիան թշնամաբար է տրամադրված ղեպի ռուսները, իսկ երկրորդում (գրված նույն թվականի մարտի 12-ին)՝ որ Եղիան Նիժնի-Նովգորոգում իր ներկայությունը իբրև թե ասել է, որ ռուսները շնայած քրիստոնեական եկեղեցիներ ունեն, եկեղեցիների վրա խաչեր կան, և եկեղեցիներում աղոթելու համար զանգեր են զարկում, սակայն ռուսների գործերը հետու են քրիստոնեական լինելուց:

Եղիային վերագրված մեղադրանքների մեջ հիմնականը սակայն այն էր, որ կասկածվել է, թե նա գալիս է չեղյալ հայտարարելու Իսմայիլ բեկի կնքած պայմանագիրը, որը, ինչպես կտեսնենք հետո, ճիշտ չէր:

Նվ այսպես, բոլոր զրպարտագրերի և անհիմն կասկածանքների արդյունքը լինում է այն, որ Աստրախանից ղեպի Մոսկվա գնա-

լու ճանապարհին, Ղասիմով քաղաքում, Եղիային ձերբակալում են, ձեռքերը և ոտքերը վերցնում երկաթի կապանքի մեջ և բանտարկում:

Եղիային ձերբակալելուց հետո ռուսական իշխանությունները նրան տանում են Մոսկվա, այնուհետև տեղափոխում բանտից բանտ՝ «Սլուչպոքի», «Փետրպոքի», «Կրասնաեարի» և այլ բանտեր ու շարշարում: Իր ասելով, բանտային իշխանությունները նույնիսկ փորձ են անում թունավորել նրան, սակայն թույնը չի ազդում ամուր կազմվածք ունեցող կարնեցու վրա: Նրան մի քանի անգամ ենթարկում են հարցաքննության: Չնայած համոզվում են, որ Եղիան բարեմիտ մեկն է և անխիղճ զրպարտության զոհ է դարձել, բայց, այնուամենայնիվ, ազատ չեն արձակում, այլ աքսորում են Աստրախան և հանձնարարում, որ նա օգտագործի իր հեղինակությունը և ներշնչի պարսկական արքունիքին՝ հաստատելու Իսմայիլ բեկի կնքած պայմանագիրը, ինչպես և ընդունելու 1724 թվականի հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրի օրինականությունը: Պարսկական արքունիքի՝ Եղիայի մասին այդ առթիվ կայացրած որոշումը, Եղիայի հետ միասին, ուղարկում են Աստրախանի նահանգապետին՝ առաջարկելով Եղիային բնակարան տալ և ուժեղ հսկողություն սահմանել նրա վրա, որ «լինի թե նա փախչի»<sup>19</sup>:

Մեծ տառապանքից, տասներկու տարի բանտերում և աքսորում շարշարվելուց հետո, վերջապես 1736 թվականին Եղիան ազատ է արձակվում, բայց չի վերադառնում Պարսկաստան, այլ մեկնում է Արևմտյան Եվրոպա: Ըստ երևույթին, նա վախենում էր, որ պարսկական նոր գահակալ Նադիրը, որը թշնամաբար էր վերաբերվում շահ Քահանազի հետ աշխատակցող բոլոր մարզկանց հետ, կարող է անբարյացակամ գտնվել և իր նկատմամբ: Մյուս կողմից, նա ցանկանում էր փառատել իր շուրջը տարածված զրպարտությունները և կարգի բերել իր առևտրական գործերը: Նա լինում է Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ Լեհաստանում, Գերմանիայում, Նիդերլանդիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր, բայց ամեն տեղ հանդիպում է միայն թշնամանքի և անբարյացակամության: Ամեն տեղ նրան նայում են կասկածանքով, ամեն տեղ նրա վրա հսկողություն սահմանում. «Քննչին ինձ պէս պէս հնարիւք,— դառնացած գրել է նա,— լրտեսէին քաղաքէ քաղաք,

<sup>17</sup> «Անձկութիւն», թ. 50բ:

<sup>18</sup> ՏԵՄ «Дело о зарестовании... армянина Ильи Мушека» АВІР, Сношение с Персией, г. 10, №. 1а—2а:

<sup>19</sup> Նույն տեղում, թ. 1866—187а:

փոխէին լրտես արքն, լրտեսէին ի նստելս, ի առնելս, ի ուտելս, ի ըմպելս, ի ննջելս, ամենայն ինչ քննէյին»<sup>20</sup>:

Փարիզում գտնված ժամանակ նա փորձում է հանդիպել կյուզովիկոս թագավորին, սակայն չի հաջողվում. նրան մի անգամ միայն հեռուից տեսնում է եկեղեցում: Տմարդի է վարվում նրա հետ նաև Արևելյան հնդկական ընկերության ղեկավարությունը, որոնց համար ժամանակին մեծ նվիրվածությամբ աշխատել էր նա: Ֆրանսիական կառավարությանը ներկայացրած իր դիմումները ևս անուշադրության են թողնվում: Վերջ ի վերջո, երբ Նդիան համոզվում է, որ բոլորն էլ երես են դարձրել իրենից, շարունակում է իր ճանապարհը և «Ալիկոնիայի» վրայով հասնում Հոռո: Այստեղ Պետրոս Թոխաթեցին նրան տեսության է տանում պապին: Այնուհետև շարունակելով ճանապարհը, հասնում է Զմյուռնիա, իսկ այնտեղից սուլեռվում Պոլիս: Որոշ ժամանակ նա մնում է Պոլսում, հիվանդանում և առողջանալուց հետո ճանապարհովում ղեպի Թիֆլիս, ուր հասնում է 1739 թվականի հունիսի 15-ին:

1740—1744 թվականներին Նդիային նորից տեսնում ենք Պարսկաստանում, ուր նա եռանդուն փորձեր է կատարում վերականգնելու իր խախտված դիրքը և տնտեսական վիճակը, բայց հաջողություն չի ունենում: Յանկանում է հանդիպել շահ Նադիրի հետ, սակայն բարեկամները խորհուրդ չեն տալիս:

Դժբախտությունների և անհաջողությունների ծանրության տակ, մեծ թափառումներից հետո, հոգնած ու հուսահատ, Նդիան 1745 թվականի սկզբներից հաստատվում է իր հայրենի Կարին քաղաքում և այնտեղ անցկացնում իր կյանքի մայրամուտը:

«Անձկութեան» մեջ եղած մի տեղեկությունից երևում է, որ Նդիան այստեղ ևս հանդիստ չի գտել՝ ենթարկվել է հալածանքների ինչպես օտարների, այնպես էլ բարեկամների կողմից: Նդիան համեմատության մեջ դնելով Կարինում իր կրած տառապանքները Ռուսաստանում և այլ վայրերում ունեցածների հետ, վշտով նշում է. «Յամենայն տեղեաց կիրն, զոր կրեցի ի թշնամեաց, թրվովք էին, բայց այս քաղաքինս՝ (այսինքն՝ Կարինին) — Ա. Ա.) անթիւք էին, ամենայն տեղեաց ժամանակն կարճ էր, կարճօրէն չարչարեցայ, բայց աստ՝ երկար յոյժ»<sup>21</sup>:

Ե՛րբ է մահացել Նդիան, ճիշտ ժամանակը մեզ հայտնի չէ: Հավանական է, որ նա մահացած լինի 1750—1751 թվականներին,

<sup>20</sup> «Անձկութիւն», Թ. 130ա:

<sup>21</sup> «Անձկութիւն», Թ. 108բ:

որովհետև մինչ այդ նրան տեսնում ենք խախտված առողջությամբ՝ զամված անկողնուն: Իր «Անձկութիւն» աշխատության վերջին էջը, որը կարծես աշխատության վերջին հիշատակարանը և իր դժբախտ կյանքի վերջաբանը լինի, ավարտվում է հեղինակի հետևյալ տողերով. «Ահա մոտ երկու տարի է, — կարդում ենք այնտեղ, — որ վրոյսըն աշխարհի տեսանեմ ի պատուհանէն... ցայսօր, որ է թիւն 1749 մայիսի ինն նոր տօմարիւ, որ այս օրն վերջ արարի պատմութեանն, որքան որ մնալու եմ, ձեռն Աստուծոյ է, բայց որ հարկն պահանջէ և կարօտի մարմնաւոր պարենից, խնդրեմ ինչ ի պարտապանաց զման աղքատօրէն կեւոյ առժամայն չարուցանել ի վերայ իմ գնորագոյն դաւա... ոչ կամիմ և ոչ կարեմ ամենայն անձանքն գրել, բայց այս մեկ բանիւս արարից վերջ և բաւ է. որ այս տարի զատկի օրն մինչ ի երեք օր միայն ցամաք հաց կերի, շունեցայ դրամ, որ գնէյի կերակուր ի շուկայէն, եթէ լինի որ ունենամ, ես ոչ կարեմ յեւանել ի դուրս և ոչ որ ունիմ, որ գնայ առ ի բերել զի կերայց»<sup>22</sup>:

Իրապես, մեծ ողբերգություն է... մի մարդ, որ աշխարհն էր ստրի տակ տվել, այժմ ի վիճակի չէ անգամ շուկա գնալու, իր համար ուտելիք գնելու: Մի մարդ, որ թագավորների և նախարարների պալատական եռուն կյանքի գործուն մասնակիցն էր եղել, այժմ միայնակ, երեսի վրա ձգված, իր վերջին օրերն է անցկացնում նեղլիկ մի հյուրկալում: Մի մարդ, որի մեծահարուստ տանը հազարավոր մարդիկ են օթևանել, որը բազմաթիվ կարիքավոր մարդկանց է օգնել, այժմ ինքը ոչ մի օգնող չունի և գատկի օրը չոր հացից բացի ուրիշ ուտելիք չունի...

\* \* \*

Նդիա Կարնեցու գործունեությունը և նրա փոխհարաբերությունն իր շրջապատի հետ, որ այնքան մանրամասնորեն արտացոլված է հրապարակվող նամակագրության մեջ, ճիշտ հասկանալու համար, անհրաժեշտ է ծանոթանալ նրա հասարակական և քաղաքական հայացքների հետ, որը, պետք է խոստովանել, այնքան բարդ է և խճճված, որքան այն միջավայրը, որի մեջ աշխատել և դանդաղ է նա: Ինչպե՞ս բացատրել օրինակ, այն փաստը, որ նա չնայած նվիրված կաթոլիկ է եղել և մեծ ջանասիրությամբ աշխատել է կաթոլիկության համար, բայց կաթոլիկ պատրիսներն են մատնել ռուսական իշխանություններին և խորտակել նրան: Ինչո՞ւ

<sup>22</sup> «Անձկութիւն», Թ. 118բ:

են ռուսական իշխանությունները բանտարկել նրան, երբ նա մոլի ռուսասեր է եղել: Ինչո՞ւ հայկական շրջաններում չեն սիրել նրան, երբ նա ջերմ հայրենասեր էր և երազում էր Հայաստանի ազատագրությունը: Ինչպե՞ս է, որ շահ Թահմազը, որի գահակալական իրավունքները ճանաչել տալու և նրա նկատմամբ բարենպաստ կարծիք ստեղծելու համար է աշխատել Եղիան, անտարբեր է գտնվել նրա նկատմամբ և ոչ մի փորձ չի արել բանտից ազատելու իր դեսպանին: Եվ, վերջապես, ինչո՞ւ են ֆրանսիական քաղաքական շրջանները և Արևելյան հնդկական առևտրական ընկերությունների ղեկավարները մեկեն երես դարձրել Եղիայից, որը Պարսկաստանում տարիներ շարունակ անձնվիրաբար աշխատել է իրենց համար:

Եղիան, իր բանտարկությունից հետո, երբ կորցրել էր ամեն ինչ՝ և՛ դիրք, և՛ պաշտոն, և՛ փառք, և՛ հարստություն ու դառը ազքատություն մեջ եկել և հաստատվել Կարինում, անհրաժեշտ է համարել անդրադառնալ գլխով անցածին և գրել իր «Անձկութիւն» խորագրով մեծարժեք աշխատությունը, աշխատելով նրա մեջ պատասխանել թե ինչո՞ւ իր հետ պատահեց այդ ղոփախությունը և դրանում ո՞վ էր մեղավոր:

Եղիան դեռ իր պատանի հասակում ինչպես ասվել է վերևում, կաթոլիկություն է ընդունել Կարինում եզվիտ Պետրոս Ռիբարդի կողմից և աշխատել նրանց համար: Ըստ որում, աշխատել է մեծ նվիրվածությամբ: Իր «Անձկութեան» մեջ ցանկանալով ցույց տալ երիտասարդական շրջանի իր մոլի կաթոլիկասիրությունը, գրել է. «Օրինակաւ պատմեցից զսէր և զարարն իմ ընդ նոսա: Ես ոչ կարեմ թուել բերանօվ և կամ գրել զըշաւ զամենայն մի ըստ միոջէ, միայն թէ նմանեցուցանեմ զիս երիտասարդի միոջ, որ սիրահարեալ լինի ի գեղ կոյսի ուրուք, որ մոռացեալ ամեն ինչ և մայլի գնովա... ոչ թէ միայն պաշտէյի զնոսա (այսինքն՝ կաթոլիկներին—Ս. Ա.) այլ՝ զասգն, զժողովուրդն, զսիրելիս, բարեկամս նոցա: Սիրէյի զսիրելիս նոցա առաւելագոյն, քան զնոսա և ատէյի զատելիս նոցա առաւելագոյն քան զնոսա»<sup>23</sup>:

Նա բազմաթիվ փաստեր է թվարկում, թե ինչպես է օգնել կաթոլիկներին, ինչքան մեծ աշխատանք է կատարել նրանց համար: Թվարկենք նրանցից մի քանիսը:

Կարինում գտնված ժամանակ Եղիան մեծ աշխատանք է տա-

րել տեղի հայկական շրջանում և երեք ամսվա մեջ, ինչպես ինքն է ասում, 24 հայ լուսավորչականների կաթոլիկ է դարձրել<sup>24</sup>:

Առևտրական գործով Պոլսում գտնված ժամանակ, երբ թուրքական կառավարության կողմից խստիվ հետապնդվում էին կաթոլիկները, Եղիան հայ հողերականի տարազ հագցրած, Պոլսից փախցրել և Կարին է հասցրել լեհ պատրի Հովհաննեսին<sup>25</sup>:

1723 թվականին, երբ Նախիջևանում գտնվող հայ կաթոլիկների նկատմամբ ապօրինություններ էին կատարվում, ծանր հարկեր դնում նրանց վրա, Եղիան, օգտագործելով իր հեղինակությունը պարսկական արքունիքի առջև, հրամանագիր է խնդրել շահ Թահմազից, որ նեղություն չպատճառեն Նախիջևանի շրջանի հայ կաթոլիկներին: Այդ մասին ինքը գրում է. «Ի յաւուրս այսորիկ (այսինքն՝ 1723 թվականին—Ս. Ա.) մեծ հարկապահանջութիւն և մեծ նեղութեան մէջն էր գաւառն Նախչուլանայ, մանաւանդ՝ ճահկցոց զեղարէնքն: Առաքեցաւ ի նոցանէ պատրի մի, որոյ անունն պարոն Բեռնարտոս Միլանցի, յայտնեաց մեզ զամենայն ինչս նոցա և հալածանս նոցա, զորս կրէյին ի ձեռանէ պարսից, ի բերանոյ ամենայն ժողովրդեանն ազալէր օգնել նոցա: Մատուց մեզ ամենայն հին թագաւորաց ողորմութեան հրամանսն: Տարեալ մատուցաք շահ Թահմազին և խնդրեցաք ի նմանէ առնել ողորմութիւն, որպէս որ նախնի հարքն արարեալ են: Հրամայեաց, ըստ հայեցուածոց մերոց նորել և հաստատել զամենայն հին թագաւորաց հրամանսն և տալ ինձ, որ և Աստուծով անթերի կատարեցաւ և ևս վերստին շնորհեաց յինքննէ նոր հրաման: Այս ամենայն հրամանաց մէջն գրեցաւ՝ թէ ըստ խընդորոյ Յեահիչեա բեկին»<sup>26</sup>:

Չենք խոսում նյութական և բարոյական այն օգնությունների մասին, որ Եղիան ցույց է տվել եզվիտ կամ կապուլին այս կամ այն պատրոն, այս կամ այն կաթոլիկ համայնքին: Եվ այս բոլոր բարեբարությունների արդյունքը եղել է այն, որ եզվիտները, պատրի Հովհաննեսի միջոցով, Եղիային ամբաստանել են ռուսական իշխանությունների առջև և բանտարկել տվել նրան: Ինչո՞ւ են այդպես երախտամոռ գտնվել եզվիտները: Նման հարցով Եղիան դիմել և հարցրել է աչքի ընկնող եզվիտ կրոնականներից մեկին: Եվ նա հետևյալ պատասխանն է տվել. «Վասն չորս պատճառից: Նախ որ դուն միշտ գովաբանէյիր ռուստ թագաւորն առաչի պարսից, տեսաւ զքոյ ջերմեռանդ սէրն ընդ ռուսաց, կարծիք անկաւ ի վերայ քոյ,

<sup>23</sup> «Անձկութիւն», թ. 11ա—11բ:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 9ա:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 13բ—14բ:

<sup>26</sup> Նույն տեղում, թ. 23բ:

թէ դուն ծածուկ միաբանիս ընդ ուստաց և յայտնին ընդ Ֆոանցի-  
զաց, իբր թէ կամիս անուամբ Ֆոանցիզաց շրջել ի մէջ պարսից և  
բանել վասն ուստաց: Գուն որ անուամբ Ֆոանցիզաց էջիբ, ոչ էր  
պարտ քեզ գովել զդուան առաջի քափուշինացն, դուն ևս ոչ գիտէջիր  
բարեպէս, զնրբահայեաց միտան Ֆոանցիզաց:

Երկրորդ պատճառն էր, որ որովհետև իւր մեծաւորն քափու-  
շին Բեռնարտոսն սկսեց յայտնապէս վիճել ընդ քեզ և յայտնեաց  
իւր թշնամութիւնն, ոչ կարէր ստել զնայ և զքեզ ճշմարտել, կամե-  
ցաւ, որ նորա բանն յառաջանայ, քանզի մեք հայոց նման չեմք, որ  
միաբանիմք ընդ օտարաց և հակառակիմք ընդ մերոցն, այլ մեք  
այնպէս բնութիւն ունեմք, որ մեր մարդն որքան որ սուտ լինի, նմաչ  
ոչ թե թողումք, որ լինի նկուն:

Երրորդն, որ կամեցաւ հաւատարիմ երևիլ յուստաց, որ յի-  
ւեանց վանորայքն, որք ևն ի մէջ յուստաց, ապահօվ ապրին, մա-  
նաւանդ տեսնուն թէ իրաւի ուսը որպէս համարին զքեզ յիւրեանց  
և թէ ոչ:

Չորրորդ պատճառն, որ քեզ թուղու անդ կապեալ ի ձեռն ուս-  
տաց և ինքն միայնակ դառնայ առ շահն, որ ամենայն խորհուրդն  
ինքն իմանայ և ինքն միայնակ լինի մեծ և որ դու մեր թագաւորքն  
չը տեսնուա, յերկեաւ ի քէն թէ՛ գիտուն մարդ ևս և լեզվօվ ճարտար,  
չլինի թէ յառաջես և նկուն առնես քափուշինքն փոխանակ մատնու-  
թեանն, որք արարին ընդ քեզ: Եւ մնացեալ պատճառքն որք ևն ի  
միշի մերում, խորհուրդ ոչ կարեմ յայտնել, այսքան բաւական լիցի  
վասն քոյ հրամանուցն»<sup>27</sup>:

Եղիան բանտարկութիւնից հետո միանգամայն հիասթափվում  
է կաթողիկոսներից և դառնում կատարի հակակաթողիկ ու աշխատում է  
մերկացնել նրանց երկդիմութիւնը, խաբեբայութիւնը, անբարոյա-  
կան կյանքը և այլն: Սակայն նա, ինչպես երևում է, ունիթոռներից  
հիասթափված է եղել բանտարկութիւնից առաջ: Տարիների համա-  
տեղ աշխատանքի ժամանակ նա մտտից ծանոթանում է նրանց գոր-  
ծունեութեանը, վարք ու բարքին և գալիս այն հաստատ համոզման,  
որ Արեւելքում աշխատող եվրոպացի ունիթոռների մեծ մասը իրենց  
երկրների գործակալներն են: Նա այդ մասին որոշակի գրում է.

«...Սովորութիւն ունին թագաւորքն քրիստոնէից առաքել զլըր-  
տեսունս ընդ ամենայն աշխար առ ի գիտել զամենայն անցանքն և  
գորպիսութիւնն աշխարհաց: Բազում անգամ պատահեցաւ, որ ի  
լրտեսաց ոմանք կօրան անգիտելի, ոմանք չբաւորեցան, որ ոչ ու-

նեցան օգնական մեռան և ոմանս պէս պէս վտանգի դիպեցան, զի ոչ  
ժամանեցին դառնալ առ առաքիչն իւրեանց: Վասն այս պատճառէս  
խորհեցան հնար. սահմանեցին զպալիօղունս առաքել զմայրաբա-  
ղաբունս, զի ի երկիրն առնեն զգործ վաճառականութեան և ծածկա-  
բարն լինել օգնիչ և նպաստ ի լրտեսաց և զգուշանան ի նոցանէ:  
Իայց այնուհետև բազում ինչ աշխարհութիւն անկան ի մէջ լրտեսաց,  
վասն այն պատճառացն յաւելին առաքել զկրոնաւորսն լրտեսս ի  
վերա լրտեսացն: Այս է պատճառ զալստեան նոցա»<sup>28</sup>:

Մերձավոր Արեւելքում աշխատող ունիթոռները, ինչպես հայտ-  
նի է, հետեւելով իրենց երկրների քաղաքականութեանը, դեմ էին  
ռուսների առաջխաղացմանը զեպի Անդրկովկաս: Պատճառը միան-  
գամայն հասկանալի է. նրանք չէին ցանկանում, որ ռուսական հզոր  
պետութիւնը մտտենա իրենց գաղութներին և կիսագաղութներին:  
Պարսկաստանի և Անդրկովկասի փոքրաթիւ հայ կաթողիկոսները,  
կամա թե ակամա, բաժանում էին այս կարծիքը: Եվ, քանի որ հայ  
ժողովրդի լայն շրջաններում գոյութիւն ունեւ այն համոզմունքը,  
թե Պետրոս Մեծը գալիս է իրենց ազատելու մահմեդական լծից, ուս-  
տի այն բոլոր մարդիկ, որոնք բաժանում էին ունիթոռների հա-  
յացքները, համարվում էին ազգի զավաճաններ: Եղիան, որ  
Մերձավոր Արեւելքի ղեկավար կաթողիկոսներից մեկն էր, հասկանալի  
է, չէր կարող դիտվել իբրև հայ ժողովրդի ազատագրութեան գործը  
խանգարող:

Եղիան իր «Անձկութեան» մեջ հանգամանորեն անդրադարձել է  
այդ մեղադրանքին և ցույց տվել, որ ինքը ոչ միայն դեմ չէր հայ  
ժողովրդի ազատագրութեանը Պետրոս Մեծի միջոցով, այլ այդ նրա  
կյանքի հավատամքն է եղել:— Ես ինչո՞ւ գնացի Ռուսաստան, ին-  
չո՞ւ հանձն առա գլխավորելու պարսկական ղեսպանութիւնը, հարց  
է տալիս նա, Թագավորի պես էի ապրում Պարսկաստանում, հաշ-  
վիր որ թագավոր էի, բայց ինչու թողեցի և գնացի Ռուսաստան, մի-  
թե՞ ցանկանում էի փառք և մեծութիւն փնտրել: Ո՛չ, պատասխա-  
նում է նա, Պարսկաստանում այնքան մեծ էի, որ նախարարների և  
շահի հետ էի նստում և կանգնում, բայց գնացի, «վասն օգտի ազ-  
գին իմոյ»: Այնուհետև նա բացատրում է իր գնալու նպատակը.  
«Թէպէտ վաղուց գիտէջի՝ թէ Պետրոս թագաւորն զալոց է փրկել  
զազգն մեր, բայց առաջի անգամն որ գնացի Շամախի և հաստա-  
տութեամբ լսեցի թէ ամենեկին ուստ թագավորն զալոց է առնուլ  
յերկիրն Պարսից վասն փրկելոյ զմեզ, առժամայն ուխտ եղի յան-

<sup>27</sup> «Անձկութիւն», Թ. 276բ:

<sup>28</sup> Նույն տեղում, Թ. 289ա:

ձին իմոյ ասել ամենայն յաւուր հինկ Հայր մեր և հինկ Ողջոյն Մա-  
րիամ՝ յիշատակաւ սրբազանից հնկից վիրացն Յիսուսի Քրիստոսի,  
այսու դիտաւորութեամ թէ՛ Տէր Աստուած, զմի ի տասանց կենացն  
իմոց հատ յինէն և դիր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին, Տէր  
տուր նմայ առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողու-  
թեամբ գայ և ազատէ զմեր ազգն: Եւ այլ այս աղօթն սահմանէ՛յի  
ասել ի զէմ սուրբ պատարագին, յորժամ որ քահանայն ասէր՝ Առէ՛ք  
կերեք, առժամայն բարձրացուցէի զերկոսին բազուկն իմ և ամե-  
նայն մտադրութեամբ և ջերմ արտասուօք երգէ՛յի վերոյ հինկ Հայր  
մերն և զՈղջոյն մինչի վերջն: Եթէ ոչ լինէր տեսանել զպատա-  
րաք, առանձին ասէ՛յի ամենայն աւուրս կենաց իմոց մինչի այն  
օրն, որ հրամանան նոյն Պետրոս թագաւորին կապեցին երկաթեաւ  
զերկոսին բազուկն իմ այնուհետ այլ ոչ կարացի բարցրացուցանել  
զբազուկքս իմ, զազարեցայ այլ առաւել աղօթելոյ, քանզի չընկալայ  
գտիրիտուն»<sup>29</sup>:

Եղիան այնուհետև հարց է տալիս.— Եղբայր, կա՞ մեր կամ  
ուռաների մեջ մեկը, որ ցանկանա իր կյանքը տալ ռուսական թա-  
գաւորին: Եթե ես այլ ժողովրդի զավակ լինեի, պատասխանում է  
նա, զուցե գործեի ընդդէմ Պետրոսի, կարելի էր հավատալ դրան,  
«Այլ ես էի ազգաւ հայ և որ վաղուց գիտէ՛յի այդ գործն թէ՛ ռուս  
թագաւորն կամի ազատել զազգն իմ տառապեալ, զիա՞րդ կարէ՛յի  
դայդ գործ գործել որ շէր արժան և անհնար վասն իմ: Ոչ թէ միայն  
ես գիտէ՛յի զայդ գործն, այլ և՛ ամենայն ազգն իմ՝ այր և կին, ծեր  
և տղայ, և ամենեքեան յայտնապէս խօսէ՛յին և ոչ ի ծածուկ: Ո՞ր-  
պէս ես զօրէ՛յի գործել հակառակ ռուսաց, որ ամեն օր տեսանէ՛յի  
զտառապանն, զթշուառութիւնն և զգերլն ազգին իմոյ»<sup>30</sup>:

Եղիան իր հայրենասիրութիւնը փաստելու նպատակով, իրեն  
համեմատում է Աստվածաշնչի Եղիա ու Մովսէս մարգարեաների հետ  
և գտնում, որ իր հայրենասիրութիւնն ավելին է, քան նրանցը, քա-  
նի որ նրանք չնայած նախանձահուլզ հայրենասերներ են եղել և  
մեծ բարերարութիւններ են արել իրենց ժողովրդի համար, բայց  
շատ հեռու են եղել իրենց կյանքը տալու ազգի փրկութեան համար,  
իսկ ինքը հոժար է եղել այդ անելու: Այնուհետև նա ավելացնում  
է. «Եթէ Աստուած ժամոյս առաքէր վասն իմ հրեշտակ և ասէր ինձ՝  
թէ տուր զքոյ զանձն ի մահ վասն ազգին քոյ, ես շնորհեմ քո ազգին

աղատութիւն և թագաւորութիւն առժամայն, պատրաստ լինիմ և  
յօժար կամօք և զուարթագին դիմօք մատուցանեմ զանձն իմ»<sup>31</sup>:

Իր խորհրդածութեան վերջում նա նորից է վերադառնում իր  
ուռասիրութիւնը և այդ բացատրում է նրանով, որ ինքը ուռաներից  
է ակնկալել հայ ժողովրդի ազատութիւնը: Ինչո՞ւ էի ես իմ կյանքը  
շնորհում ռուսական թագաւորին, եթե ոչ՝ «Վասն փրկութեան ազ-  
գին իմոյ: Այս էր իմ դիտաւորութիւն, եթե կարճէին կեանն թա-  
գաւորին, իմն լինէր վասն նորա, որ սկսած գործն կիսատ չը մնայ,  
մինչ որ ամենայն բանն կատարի և հասուցանէ ի աւարտ»<sup>32</sup>:

Վերջում ավելացնում է, որ եթե ինքը չուռենար շեշտված հայ-  
րենասիրութիւն և նրանից բխող ուռասիրութիւն, կապուլինի  
զոհն ինքը չէր դառնա. «Եթէ ոչ էր իմ վասն ռուսաց բարի կամիւն  
և բարի խորհիւն, ոչ մտանէր զիս քափուլինն»:

Նոսնելով Եղիայի անձնավորութեան և քաղաքական հայացքնե-  
րի մասին, պետք է նշել, որ նա վերին աստիճանի ինքնատիպ և  
հաստատուն համոզմունքի տեր մեկն է եղել և տարիների բանտն  
ու աքսորը չեն խախտել նրա համառ կամքը. այդքան վշտակրու-  
թիւնից հետո ևս նա չի ստորացել և բարձր է պահել իր արժանա-  
պատվութիւնը: Ռուսական իշխանութիւնները ցանկացել են Եղիա-  
յին ուղարկել Պարսկաստան և օգտագործել նրան հօգուտ իրենց  
քաղաքականութեան, դրա համար գրավիչ խոստումներ են տվել,  
սակայն նա չի ցանկացել խեղդատակ գործիք լինել և կատեգորիկ  
կերպով հրաժարվել է: Այդ մասին նա իր «Անձկութեան» մեջ  
գրում է.

«Կացիր և լսէ այլ իմն զարմանալիս: Յամի տեառն 1724, յոր-  
ժամ որ ես կապանօք ածայ ի Փետրեօք, այն ժամանակին խոս-  
տացաւ թագուհին ռուսաց Կատարինա Ալեքսանան տալ ինձ չիւր  
տանէն մեծ իշխանի աշխիկ մի ի կնութեան վեց հազար տամբ զոհե-  
կաւ, եթէ ծառայէ՛յի նմա, նայ և յաւել խոստացաւ տալ ինձ, մեծու-  
թիւն, իշխանութիւն, պատիւ և զօրաւորութիւն, բայց ամենայնէ  
հրաժարեցայ... վասն զի ոչ վայել է հաւատոյս, ազգիս և տոհմիս  
իմ, ի նախատանս ամենայն աշխարհի, և ես որքան որ կենդանի եմ  
ամօթալից լինիմ ի մէջ եխպայրց, պատճառ լինիմ վասն անուանա-  
կոտրութեան...»<sup>33</sup>:

Եղիայի հետ անչափ տմարդի են վարվել կաթոլիկ բարձրաս-  
տիճան հոգևորականները, ֆրանսիական իշխանութիւնները և Ա-

<sup>29</sup> «Անձկութիւն», թ. 225բ—226ա:

<sup>30</sup> Նույն տեղում, թ. 227ա:

<sup>31</sup> «Անձկութիւն», թ. 227բ—228ա:

<sup>32</sup> Նույն տեղում, թ. 28ա:

<sup>33</sup> Նույն տեղում, թ. 279ա—279բ:

ձերբակալված ժամանակ ուսական իշխանությունները նրանից վերցրել և շին վերադարձրել ոչ միայն նրա տարբեր անձնավորությունների հետ վարած գրագրությունը, այլև նրա գիտական ստեղծագործական բնույթի աշխատությունները և նրա կազմած շատ արժեքավոր տաղարանները:

Եղիայի մի շարք աշխատությունների մասին խոսել է Հ. Հ. Ոսկյանը իր «Եղիա Ա. Մուշեղյան և իր գրական արտադրությունները» խորագրով հոդվածում: Ամբողջացնելով Ոսկյանին հայտնի Եղիա Կարնեցու աշխատությունների ցանկը ՄՍՀՄ արտաքին գործերի արխիվում պահվող նրա աշխատություններով, ունենում ենք նրա գործերի մասին հետևյալ պատկերը:

1. «Պատմութիւն իմն կարեառօտ ի վերայ անձկութեան Եղիայի Աստուածատուեան Մուշեղանց, զոր կրեցի ի ազգէն ֆռանկաց, մանաւանդ ի խաբերայ կրօնատուաց նոցա և ի սուտ եխպայրց և բարեկամ կռեցելոց»:— Այս աշխատությունը, որ բաղկացած է երեք մասից՝ «Պատմութիւն», «Վիճարանութիւն առաջին» և «Վիճարանութիւն երկրորդ», ինչպես ասել ենք, Վիեննայի Մխիթարյանների սեփականությունն է և մեր կողմից օգտագործվում է համառոտ «Անձկութիւն» անվան տակ<sup>38</sup>:

2. «Ազգարանութիւն»:— Այս աշխատությունը մեզ չի հասել: Այն պարունակել է Թավրիզի և Սպահանի 1717—1721 թվականի հիսուսյան հոգևորականների գործունեությունը, Պոռեկարի վարքը և դեսպանության ժամանակ իր աշխատողներից ոմանց իր նկատմամբ ցուցաբերած զեշ վերաբերմունքը:

3. «Պատմագիրք»:— Մեզ չի հասել: Պարունակել է հիսուսյան վեղարավորների անվայել վարքն ու գործունեությունը և ֆրանսիական կառավարության գործունեության մերկացումն Արևելքում և այլն:

4. «Փոքրիկ պատմութիւն»:— Պարունակել է տեղեկություններ Հնդկաստանի առևտրի մասին: Այդ աշխատությունը, որը, Եղիայի ասելով, գրել է «Հրամանաւ զլատր վաճառականացն վաճառին հնդկաց», մեզ չի հասել:

5. «Ընդհանուր պատմութիւն»:— Մեզ չի հասել, բովանդակությունը հայտնի չէ:

6. Սրանցից բացի, Ոսկյանը թվարկել է 13 դանազան նամակներ՝ հասցեագրված տարբեր անձնավորությունների<sup>39</sup>:

<sup>38</sup> Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1927, էջ 493—501:

<sup>39</sup> Տե՛ս Հ. Հ. Ոսկյան, Եղիա Ա. Մուշեղյան և իր գրական արտադրությունները: «Հանդես ամսօրյա», 1927, էջ 367—376:

Անշափ մեծ և բովանդակալից է Եղիայի թողած գրական և գիտական այն ժառանգությունը, որը գրավվել է ուսական իշխանությունների կողմից և այժմ գտնվում է Մոսկվայի Ռուսաստանի արտաքին հարաբերությունների արխիվում: Այս աշխատությունների հետ ծանոթ չէ Հ. Ոսկյանը:

Նշված արխիվի Եղիայի գրական ժառանգության մասին հակիրճ տեղեկություն է հրատարակված 1833 թվականին Մոսկվայում լույս տեսած «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» (առաջին հատոր): Այստեղ Եղիայի և նրա մասին ընկերոջ՝ Հովհաննես կապուլչինի անունով, ընդհանուր վերնագրի տակ, հիշված են ութ կապոց ձեռագրեր և վավերագրեր: «А» կապոցում հիշված է ութը տպագիր ու ձեռագիր գրքեր և տասը տեսարակներ, «В» կապոցում՝ 32 թղթապանակ նամակներ հայերեն և պարսկերեն լեզուներով, «С» կապոցում՝ քարոզգրքեր և եկեղեցական պատմություններ՝ հայկական տառանիշներով, «D» կապոցում՝ հայկական քերականության թղթապանակներ, «E» կապոցում՝ նամակներ հայերեն, պարսկերեն և ռուսերեն՝ տարբեր անձնավորությունների վրա՝ ուղարկված Պարսկաստանից և Աստրախանից, «F» կապոցում՝ նամակներ, «որոնք վերաբերում են դեսպան Օրու մոտ ծառայող Պոռեկարին» (Берек-ին), և «G» կապոցում՝ «Հայկական նամակներ առանց թարգմանություն»<sup>40</sup>:

Եղիայի արխիվի հետ առաջին անգամ ծանոթ է եղել և նրանից վավերագրի հրատարակել ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը 1921 թվականին իր «Հայ-ռուս օրինետացիայի ծագման խնդիրը» աշխատության հավելվածում: Այդ վավերագիրը պատմական կարևոր արժեք ներկայացնող վրացական Արշիլ թագավորի նամակն է՝ գրված 1705 թվականին Իսրայել Օրուն: Հովհաննիսյանի Ոսկյանի հարցումին գրած մի նամակի պատասխանից երևում է, որ նա 1916 թվականին անձամբ թերթել է Եղիա Կարնեցու արխիվի բոլոր վավերագրերը<sup>41</sup>:

Եղիայի արխիվի հետ մենք ծանոթացել ենք 1936—1937 թվականներին՝ Մոսկվայում մեր ուսանելու տարիներին: Մեզ ծանոթ նյութերի մասին տեղեկություններ ենք հաղորդել մեր մի շարք աշխատություններում և նշել Կարնեցու արխիվի պատմական նյութերի հրատարակության անհրաժեշտությունը<sup>42</sup>:

<sup>40</sup> Տե՛ս «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», 5. I:

<sup>41</sup> Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1927, էջ 501:

<sup>42</sup> Կարնեցու արխիվից մենք հրատարակել ենք նրա գրի առած Բլոտ-օղու 13

Նշիա Կարնեցու արխիվի պատմական կարևոր արժեք ներկա-  
չացնող նյութերը 1718—1724 թվականներին գրած նամակների  
պատճեններն են, որոնք հավաքված են շորս հատորի մեջ: Կարնե-  
ցին իր առջև խնդիր է դրել. ինչ նամակ որ գրում է, նախ գրի առնի  
նամակների մատյանի մեջ, հետո միայն պատճենն արտագրի և  
ուղարկի հասցեատերին: Նա, հավատարիմ իր սկզբունքին, անհրա-  
ժեշտ է համարել այդ բանը նշել անգամ մատյանի տիտղոսաթեր-  
թում. «Մատենան առաջին, որ կոչի կերպարան կամ տիպ բարովա-  
գրի. սկսեցի յամի տևառն 1718 յունվարի մեկ Գ. շիթ (չորեքշաբ-  
թի): Մինչև կես կատարածի կենաց իմոց, զոր ինչ բարովագիր գրել  
կամիմ, նախ տեղս գրեմ և համատիպն ողարկեմ այլոց: Նզև թավ-  
րիդ քաղաքի»<sup>43</sup>:

Կարնեցու առաջին մատյանի մեջ ղեկավարված են 1718 թվակա-  
նի հունվարի մեկից մինչև 1719 թվականի մայիսի երեքի նամակ-  
ները, երկրորդ մատյանում՝ 1719 թվականի մայիսի 11-ից մինչև  
1720 թվականի վերջերի նամակները, երրորդ մատյանում՝ 1721  
թվականի հունվարի մեկից մինչև 1723 թվականի մայիսի 19-ի նա-  
մակները և վերջապես չորրորդ մատյանում՝ 1723 թվականի մայի-  
սի 2-ից մինչև 1724 թվականի մայիսի 27-ը, այսինքն՝ մինչև Ռու-  
սաստանում իր հետ հանդիպած ղժբախառնությունը:

Բացի ուղարկած նամակներից, մեկ-մեկ իր մատյաններում  
նշել է նաև տարբեր անձնավորություններից նամակների ստացու-  
մը՝ համառոտ ձևով տալով նրանց բովանդակությունը: Որպես կա-  
նոն, իր ստացած և ուղարկած նամակներին նա համարներ է գրել  
և նույնը խնդրել անելու իր հետ նամակագրություն ունեցող անձ-  
նավորություններին: Ըստ որում, ամեն անգամ նշել է՝ թե որ նա-  
մակատարի միջոցով է ուղարկել կամ ստացել այս կամ այն նա-  
մակը:

Ստացած նամակները նա խնամքով հավաքել է առանձին թղղ-  
թապանակների մեջ, որոնք նույնպես բռնազրավիլ են ռուսական  
իշխանությունների կողմից և այժմ գտնվում են արտաքին քաղա-  
քականություն արխիվում: Անհրաժեշտ ենք համարում թվարկել այդ  
թղթապանակները:

Երգերը, որոնք գրված են հայատառ պարբյաններին (տե՛ս Հայկ. ՍՄԸ ԳԱ «Տեղե-  
կագիր», 1954, № 9, էջ 71—93): Մի քանի վավերագրեր հրատարակել ենք մեր  
«Մի էջ Անդրկովկասի և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից»  
աշխատության մեջ, 1953 թ. և այլն:

<sup>43</sup> АВІР, СРА, опись 100/1, Собрание частных писем Ильи Мухе-  
ва, „А“, 12:

1. Նղբայր Մովսեսից տարբեր վայրերից ստացած նամակնե-  
րը, երկու թղթապանակ, մոտ հարյուր նամակ («Յ» № 2):
2. Կարնեցի Ղալամբար Մովսես Չալաբու որդի ոսկերիչ Մատ-  
թեսի նամակները, 1715—1720 թվականների, 9 նամակ («Յ»  
№ 4):
3. Կարնեցի Խալիլ աղայի նամակները, 1715—1716 թթ., 17  
նամակ («Յ» № 6):
4. Գանձակից Խալիլ աղայի գրած նամակները, 18 նամակ  
(«Յ» № 7):
5. Մելքում քահանայի Նոր-Ջուղայից գրած նամակները,  
1717—1723 («Յ» № 8):
6. Կարինից մոր նամակները, ուղարկված 1711—1715 թվա-  
կաններին, 11 նամակ («Յ» № 9):
7. Նղբայր Ղևոնդի նամակները տարբեր վայրերից՝ գրված  
1712—1720 թվականներին, 31 նամակ («Յ» № 10):
8. Շահինի նամակները տարբեր վայրերից՝ գրված 1711—1721  
թվականներին, 55 նամակ («Յ» № 11):
9. Կարնեցի Քիրիշի որդի Գալուստի նամակները՝ գրված  
1720—1721 թվականներին, 7 նամակ («Յ» № 12):
10. Կարնեցի Ղոնդաղի մահտեսի Կիրակոսի որդի Արուսյու-  
նի նամակները՝ գրված 1717—1723 թվականներին, 18 նամակ  
(«Յ» № 13):
11. Կարինից իր մորաքրոջ որդի Գասպարի և ոսկերիչ Ալեք-  
սանի նամակները՝ գրված 1714 թվականին, 9 նամակ («Յ» № 14):
12. Պարսկերեն նամակներ տարբեր անձնավորություննե-  
րի կողմից գրված, 34 նամակ («Յ» № 15):
13. Վրաստանից Մելքումի նամակները՝ գրված 1713 թվակա-  
նին, 8 նամակ («Յ» № 16):
14. Նախիջևանից մահտեսի Սարգսի նամակները՝ գրված  
1721—1723 թվականներին, 5 նամակ («Յ» № 17):
15. Կարինից Գուղղաբանի որդի Մովսեսի գրությունները՝ գր-  
ված 1711 թվականին, 7 նամակ («Յ» № 18):
16. Կարինից Բարաղամ քահանայի որդի մեհտար Հովհաննե-  
սի նամակները, 8 նամակ («Յ» № 19):
17. Կարնեցի Հակոբ վարդապետի նամակները, 1715—1722  
թվականներից, 8 նամակ («Յ» № 20):
18. Մարգարի նամակները՝ գրված 1711—1722 թվականներին,  
39 նամակ («Յ» № 21):

19. Կարնեցի մահտեսի Սարգսի երկու նամակները՝ գրված 1713 թվականին («Յ» № 22):

20. Կարնեցի Դուզդաբանի որդի Գրիգորի նամակները՝ գրված 1713 թվականին, 21 նամակ («Յ» № 23):

21. Եղբայր Մովսեսի՝ տարբեր վայրերից դրած նամակները, 1717—1718 թվականներից, 49 նամակ («Յ» № 24):

22. Մահտեսի Սարգսի գրած նամակները («Յ» № 25):

23. Հայերեն, պարսկերեն և ռուսերեն լեզվով տարբեր անձնավորություններին գրած նամակներ: Նամակների հեղինակն է կապուչին Ռոշվոֆորը, գրել է Աստրախանից և Պարսկաստանի տարբեր վայրերից («Ե»):

Թվարկված նամակները արժեքավոր տեղեկություններ են պարունակում Մերձավոր Արևելքի քաղաքական, տնտեսական ու հասարակական կյանքի պատմության համար և արժանի են հատուկ ուշադրության:

Եղիայի նամակների պարունակած տեղեկությունների մեծ մասը վերաբերում են Պարսկաստանի, Իրաքի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Գաղստանի և Հնդկաստանի պատմությանը: Եղիա Կարնեցին նամակներ է ստացել Գանձակից, Թիֆլիսից, Շամախուց, Սպահանից, Հալեպից, Պոլսից, Կարինից ու այլ վայրերից և պատասխանել է դրանց: Եղիայի հետ նամակագրություն ունեցող անձնավորությունների մեծ մասը Մերձավոր Արևելքի աչքի ընկնող առևտրականներ, քաղաքական գործիչներ, դիվանագետներ, բարձրաստիճան եկեղեցականներ են եղել, ուստի լիովին հասկանալի է այն հետաքրքրությունը, որ ցուցաբերել են նա՝ Եակազիդները իրենց ժամանակի հասարակական և քաղաքական իրադարձությունների, առևտրական գործարքների, ապրանքների առուժախի նկատմամբ և այլն: Եղիայի հետ նամակագրական կապ են ունեցել այնպիսի աչքի ընկած անձնավորություններ, ինչպիսիք Արևելյան հնդկական ընկերության Թավրիզի ներկայացուցիչ Բերգարն է՝ Պոռեկարը, Պարսկաստանի արքունիքի էֆտիմա Գուլա Նադին, Միր Ազիզ Սուլթան խանը, Պոլսի ֆրանսիական դեսպան Մարկիզ դը Բոնակը և այլք:

Կարելի է ասել, որ շկա իր ժամանակի քաղաքական շատ ու բիշ հուզող հարց կամ իրադարձություն, որ այս կամ այն չափով շոշափված չլինի Եղիայի վավերագրերում: Նրանց մեջ նոր և արժեքավոր տեղեկություններ ենք գտնում լեզգիների արշավանքի, պարսկական արքունիքում տեղի ունեցող փոփոխությունների, արևմտյան եվրոպական պետությունների Արևելքում վարած գաղութարարական

քաղաքականության, կաթոլիկ հոգևորականության Արևելքում ունեցած գործունեության, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների, Թուրքիայի՝ Պարսկաստանի և Անդրկովկասի նկատմամբ վարած զավթողական քաղաքականության, ռուս-պարսկական դիվանագիտական հարաբերությունների մասին և այլն:

Եղիայի վավերագրերում միջանկյալ տեղեկություններ կան նաև Մերձավոր Արևելքի հայկական գաղթավայրերի վերաբերյալ, հայ բնակչության իրավավիճակի, նրանց զբաղմունքի մասին և այլն: Ուշագրավ տեղեկություններ կան մասնավորապես՝ Նոր-Ջուղայի, Թավրիզի, Հալեպի, Բաղդատի, Թիֆլիսի և Շամախու հայկական գաղթօջախների մասին:

Եղիա Կարնեցու երկրորդ խումբ նյութերը նրա՝ առևտրական հարցեր շոշափող նամակները և առևտրական հաշվեմատյաններն են, որոնք հարուստ փաստական նյութեր են պարունակում Մերձավոր Արևելքի և նրա հարևան երկրների տնտեսական կյանքի պատմության մասին: Առևտրական ինչ կարևոր կենտրոններ են եղել, որտեղ ինչ արդյունագործական ապրանքներ են արտադրվել, որտեղ ինչ ապրանքներ են գնվել և վաճառվել, ինչ ազդեցություն է գործել արևելյան շուկաների վրա կապիտալիստական երկրներից ներմուծված ապրանքները, ինչ ապրանք ինչ գին է ունեցել այս կամ այն երկրում, այս կամ այն շուկայում. այս ամենը մանրադիտակային մանրամասնությամբ կարելի է գտնել Կարնեցու արխիվում:

Տնտեսական կյանքի համար առանձնապես արժեքավոր են Կարնեցու հետևյալ թղթապանակները: Հաշվեմատյան «Ա» № 10, որն սկսել է 1717 թվականի հունվարի մեկից և վերջացրել 1720 թվականի ապրիլի 30-ին: Հաշվեմատյանում նշվում է իր գնած և վաճառած ապրանքների գները, տեղափոխությունների ժամանակ նրանց վրա կատարած ծախսերը և այլն: Արժեքավոր են նաև «Ա» № 8, «Ա» № 1, «Ա» № 9, «Յ» № 5, «Յ» № 3 թղթապանակներում գտնվող հաշվեմատյանները: Եղիայի արխիվում կան նաև ծառաներ վարձելու, տոկոսով գրամ տալու տարբեր պայմանագրեր:

Եվ վերջապես, Եղիայի արխիվում կան մի շարք գիտական աշխատություններ և բացառիկ արժեք ներկայացնող տաղարաններ:

Գիտական աշխատություններից արժեքավոր են երկու բժշկարան, որոնցից մեկը թարգմանություն է ֆրանսերենից, նրա հեղինակն է Ֆուբեթը, թարգմանել է Եղիայի «ընկերակից» Հովհաննես Մկրտիչը, իսկ ինքը՝ Եղիան արտագրել է 1723 թվականին ՎՊՄ

Քափուշինաց»։ Այս բժշկարանը պարունակում է գործնական խորհուրդներ այս կամ բժշկութեան վերաբերյալ (տե՛ս «Ա» № 11)։

Մյուս բժշկարանը՝ Խիրաբատին է, որի հեղինակը Գրիգոր քահանան է։ Այս բժշկարանի հիշատակարանում Կարնեցին գրում է. «Հետևեալ բառանս ղեղոցի ի վերայ այբուբենից։ Օրինակն էր ի թղթի գրեալ ի ձեռն դպրի միոջ Ստեփաննու կոչեցելոյ, զոր ասէր՝ եթէ իմ տեսեալ բժշկարան մի բան, ի նմանէ օրինակեցի և իմ՝ Մինաս ղեղածախս, տեսեալ խնդրեցի զօրինակն ի նմանէ, օրինակեցի ի գիրս այսմիկ»։ Եղիան նշում է, թե այդ անձնավորութիւնը տեր Գրիգորն է, որ ներկայումս «քահանայազործ է զեկեղեցին Շերմանեցոց» («Ա» № 4)։

Գիտական տեսակետից ուշագրավ բնագիր է Եղիա Կարնեցու կազմած աստղագիտական մի բնագիր, որն ընդօրինակված է «Ա» № 6 կապոցում (թ. 271ա—303ա)։ Այդ մեզ հասած հայկական աստղագիտական առաջին բնագիրն է, ուր խոսվում է լեհականավոր գիտնական Կոպերնիկոսի հելիոցենտրիկ տեսութեան մասին և միաժամանակ բազմաթիվ փաստերով հակադրվում հնից եկող այն կարծիքին, որ երկիրը իրրև թե կ'ընդ շէ։

Արհեստների պատմութեան համար բացառիկ արժեք է ներկայացնում արհեստագործութեան մասին մի աշխատութիւն, որը վերնագրված է. «Գիրք հնարից և պէս պէս արուեստից և զանգան իրաց բազում ժամանակաց»։ Եղիան այն ընդօրինակել է Թավրիզում 1720 թվականին։ Այս արշխատութիւնը Եղիան կազմել է արհեստավորներից հավաքած տեղեկութիւնների հիման վրա («Ա» № 5)։

Եղիայի աշխատութիւնների մեջ կա երկու բառարան՝ լեհերեն-հայերեն («Ը» № 5) և պարսկերեն-հայերեն։ Երկրորդի թերթերը, դժբախտաբար, խառնված և ցրված են տարբեր թղթապանակներում։

Եղիայի աշխատութիւններից, մեր կարծիքով, ամենից արժեքավորները նրա երկու տաղարաններն են։ Նրանց մեջ հավաքված տաղերի մի մասի հեղինակները XVII—XVIII դարերում մեծ ժողովրդականութիւն վայելող և սիրված անձնավորութիւններ են, իսկ մյուս մասը՝ ժողովրդի մեջ լայն տարածում ստացած երգեր են, մանիներ (Թղթապանակ «Ա» № 3 և «Ա» № 2)։

Եղիայի գրի առած տաղերի մի մասը հայատառ պարսկերեն է կամ հայատառ աղբիջաներեն։ Կան նաև հայերեն տաղեր։

Եղիայի ներկա հրատարակվող հատորում մենք զետեղել ենք նյութեր հիմնականում նրա նամականու շորս մատյաններից, բա-

ցառութեամբ մի քանի նամակների, որ մենք վերցրել ենք Եղիայի այլ թղթապանակներից. դրանք պատմական մեծ արժեք են ներկայացնում։ Եղիայի շորս ստվարածավալ մատյաններից շենք բերում բոլոր նամակները. կատարել ենք որոշ ընտրութիւն. բերում ենք նրանք, որոնք, մեր կարծիքով, պատմական արժեք ունեն։ Մեր նպատակն է եղել այս հատորում հավաքել զխավորապես պատմական արժեք ներկայացնող վավերագրերը։ Հրատարակվող վավերագրերի մեջ կան այնպիսիները, որոնք շնայած պատմական արժեք չունեն, սակայն կարևոր են իր ժամանակի կենցաղի, անձնական փոխհարաբերութիւնների և լեզվի պատմութեան համար։

Եղիայի նամակները մենք հրատարակում ենք առանց որևէ փոփոխութեան, առանց միջամտելու նրա ուղղագրութեանը և լեզվին, նկատի ունենալով, որ նրանք արժեքավոր նյութ են տալիս ո՛չ միայն հայ բարբառագիտութեանը, այլև լեզվագիտութեանը։

Հեղինակի լեզվի մեջ բավականին շատ են օգտագործված օտարամուտ բառեր, որոնք հաճախ հասկանալի չեն կարող լինել սովորական հարցասեր ընթերցողին, այդ նկատի ունենալով, անհրաժեշտ ենք համարել գրքի վերջում տալ օտար բառերի ցանկ։

Եղիայի բնագրերում բավականին խառնակ վիճակում է կետադրութիւնը, ուստի տեղ-տեղ, երբ խիստ անհրաժեշտութիւն է եղել, փոփոխել ենք կետադրութիւնը կամ թե բաց թողած կետերը նշանակել։

Եղիայի «նամականի»-ի շարունակութեան մեջ՝ ժողովածուում զետեղված են հատվածներ նրա հաշվեմատյաններից, երեք նոքարի պայմանագրեր և մի քանի պարտմուրհակներ։

Անհրաժեշտ ենք համարել հատորի վերջում տալ առանձին անձնավորութիւնների, անժանոթ վայրերի և իրադարձութիւնների ծանոթագրութիւն՝ մեծ մասամբ օգտվելով իր իսկ աշխատութիւններից, մասնավորապես «Անձկութիւն»-ից։ Նրա միկրոֆիլմը մեծ սիրալիրութեամբ ստացել ենք Վիեննայի Մխիթարյաններից, որի համար մեր խորին շնորհակալութիւնն ենք հայտնում։

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ր Ե Ր

1. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՌԵԿԱՐԻՆՆԻ (1715 մարտի 13)

84ա || Իմ սհապ դովաթ սինիյեօր մուսի Պուրդարին

1715 մարտի 13 հին թարեղ. Գանճ[ա] номер 6:

Բազում սիրով և կարօտիւ ողջոյն մատուցանեմք վերո [սհապիդ] և այլ քոյին համախոհ եղեալ հազիր ջումիաթին, մանաւանթ Գէւորքին: Ծանիր իմ սհապ, բազում ժամանակ է, որ քո հրամանոց սաղլուղութեան խապարն մեզ չէ հասել, բայց հարցանելով զորպիսութիւն տէրութեան քո, զոր տէր Յիսուս անսահելի կենօք պահեսցէ և տացցէ ժամանակ ընդ յերկայն արուրս քո հրամանոցն, որ միշտ և ամենայն ժամ դովաթօվ լինիս, ուրախութեամբ ի փառս Յիսուսի և ի պարծանս մերո:

Յետ սիրալիր ողջունիս իմո, յայտ լիցի վերո սհապի դուլուղումն, որ թէ մեր յերկրի էհուալն հարցանել կամիս, բազում ժամանակ է, որ Մօռայու վրա սաֆար կա, կասէին, բայց մեր չէյինք հաւատալ մինչի էս թարեղին, էս քանի արուրն էրզրմ մարթ էկաւ և զիր, որ ճշմարտապէս սաֆար է, զերա էրզրմ պարայղներն բացվել է Յեայեան ասքարն դնացել է ձիաւ, որն էլ պիտի զատկին գնա:

Քարա վըլահու բակն Իստանպօլ սպանեցին՝ ինքն, և իւր երկու որդին, աղչիկն, փեսան, և կինն և նրա հասպսուղ խաղնան զաֆտ արարին, որ Իստանպօլ աչքօվ տեսնօղներն զարմացել են թէ՛ աշխարքս մէկ մարթուն էլ է՝ սշափ ոսկի, էսշափ դուռուշ կամ է՝ սշափ ջաւահիր կու լինի: Մին էլ էս վլահ սպակին դաֆտարն գելնէ, որ սաքսան հազար ոսկի վանատիկու պանքօնէ տուել: Վազիրն վանատիկու էլուն մարթ կողարկէ, բերել կու տան, կասէ՝ «վլահ բէկն ձեր խաղնան սաքսան հազար ոսկի է տուել, պիտի որ բերել տաս»: Պալիօզն կասէ՝ «էնտեղաց փող չի դուս գալ, բայց միայն շահն դուս գու գա»: Յետոյ վազիրն կասէ՝ «ես այտպէս բան չեմ գիտել, պիտի որ

փողն գա»: Պալիօզն կասէ թէ՛ «Ես չեմ աւատալ որ գա, ամմա գրեմ»: Մէք այնպէս գիմանամք թէ՛ կովի սապապն այս է, զերա ասքար որ ժողովում են, այսպէս կիմացվի, ամա խելք չի կտրել թէ ութսուն հազար ոսկի [ի]ն համար օսմանցին սաֆար անէ, գիտելին աստուած է, բայց մեք ինչ որ լսեցինք, դուրսդիտ արդ արինք:

84բ || Մին էլ թէ յիմանաս, չե՞նու մին մեծ էլլի էկել է Իստանպօլ, որ գուզէր զար Սպահան, վազիրն չէ թողել, գնացել է Լեհ: Եւ ուսուսի էլլին Շէրամարտի տղան և քանի զրօլ որ կային, ուսուսխաթ է եղել, գնացել են ուսուսի հետ սաֆար, մին խօսք չի կա: Յետո մին մեծ էլլի գու գա իմփերաթօն թաքաւորէն խիստ շատ ազաթօլ, մեծ փէշվազօլ, տանին թաքաւորին պուլուշմիշ կանեն: Ատաթ է, որ երկու սհաթ, գամ փոքր յաւել, դիւան կու լինի. էս էլլին վեց սհաթ կու մնա: Խիստ շատ խօսք կու խօսվի, աստուած գիտէ, բայց մանշուր գլխաւոր խօսքն այս է, որ կասէ հունքարին թէ՛ «Շուէթու թաքաւորն ինչ տու, տանեմ իմ թաքաւորին, մեք դորա դիւանն կանեմք, ախր մեր դինդաշն է, մեր դաստուրն դուն չես գիտել, մեք մեր դաստուրօվն մեր բանն կու շինեմք»: Հունքարն կասէ թէ՛ «Չեմ տալ, իմ օճախն է էկել, էս լաւ գիտեմ»: Յետո էլլին կասէ թէ՛ «Խօշ, դուն գիտես, լաւ չես անել, սապապն էտ մին մարթն, մեր զաւն կափրես, մեր մէշն կոխ կու լինի, քեզ հետ մեք ամէն քրիստոնէքս պարիշել եմք էս սապապին, քուլի քեզ վրա կու յընկնին, սապապն դուն կու լինիս, մեզ սուշ չի մնալ, մեք նրա տեղն մին շահապատ կու դնեմք, որ նրա թաքաւորութիւն բշէ, բայց քեզ վատ կու լինի, մին մարթ պահելօլ ինչ պիտիս անել, մեք դրա օճաղն չեմք թողուլ որ փշանա, մեզ ատաթ է, որ մեր քրիստոնէիք մէշն որ մինն փոքր գլուխ քաշէ, թուլ կու տանք որ փոքր խոֆաթ քաշէ, ամմա չեմք թողուլ որ օճաղն փշանա, թէ որ մեք օճաղ փշացնելու ֆիքր ունէնայնք, հիմա շատուց դրա տեղն մեք զաւթ էյինք արել, զերա ինքն տեղ չէ, ուսուսն մեք եմք պահել, որ էսչափ ժամանակ դրա թաղթն չէ առել, թէ ոչ հիմա շատուց առած կու լինէր ուսուսն»: Շատ խօսելուն յետ, թաքաւորն օսմանցուն կասէ թէ՛ «Ինքն գուզէ որ ձեր յերկիրն գա, թող լինի՛ զրկեմ, զերա յուրիշ ֆոանկաց էլլիք էլ էկան յուզելու, ինքն չի գնաց: Խապար առնեմ, թէ յըրազի է, որ ինքն գա ձեր իմփէրաթոռին, թող լինի զրկեմ»: Յետո Իստանպօլու զափուշի կու զրկեն շէթ թաքավորին թէ՛ «Իմփէրաթօն թաքաւորն քեզ գուզէ տանի, գնա՛ս թէ ոչ»: Կա-

85ա || սէ՛ «էլ ինչ պիտեմ անել, կու գնամ, ինչ լինի լինի»: Չորս ամիս անճախ կա, որ էլլին շէթու թաքաւորն առել, գնացել է: Սե յետ ամէն էհուալին, մալիմ լինի քո հրամանուց դուրսդուլու[մն], որ մեր էրզրմու շորս հերետիկոս հայ գնացին Իսթանպօլ գանկատ մեր ուղղափառաց համար, շաուշ են զըրկել էրզրմ, որ պատրի Մունիան և շորս անուանի քաթօլիք տանին Իսթանպօլ: Պատրի Մունիան փախել է, գնացել Ախլըցըխա, միտա երեք մարթն պիտի տանին Իստանպօլ. աղօթեցէք վասն սիրուն Քրիստոսի, որ աստուած նոցա կոյս լիցի: Եւ էրզրմցի Տապաղ օղլի Մուստաֆա շալապին գրել է Ախլըցխա պատրի Մունիային թէ՛ մի՛ հոքալ, էս քեզ էլի էրզրմ կու նըստացնեմ:

Մին էլ քո հրամանուց աշքն լուս, և մերն, որ մուսի Յըրթարն ԺԲ(12) քափուցին պատրի հետն եկել է Իստանպօլ, որ պիտի գա Սպահան, զերա թիֆլիսցի Սապէն որ գնացել էր Փարիզ վախտանկ խանի համար, էս էլլին հանել է, որ գա Սպահան, պալքի աստուած տա, որ մին իլաճ անեն վախտանկ խանին համար, զերա մին մօնֆրէր էկաւ Գանճա, նա խապար բերեց թէ՛ Թիֆլիսու խանն խիստ թուրքութիւն է անում, պիտի մեծ մաշիթ շինէ, քաթալիքօսն, որ պիտի թուրքանա եղել, որ էրիսթան բոնեց, տարաւ, պիտի աշքն հանէյին: Էս խանն բերել կու տա, էլ վրացոց վրա քաթալիքօս կու շինէ:

Մին էլ թէ ալիշվէրիշի էհուալն հարցանես, մինչի էս թարեղս Գանճա զարպաֆին լիտրն տասներկու հազար-տասներեք հազար դիան էր, հիմա յիշաւ մին թուման, ամմա Շամախու համիշա խապար գու գա թէ՛ տասնվեց հազար, տասնեօթ հազար, տասնութ հազար դիան է զարպաֆն: Եւ այլ անպէս մին էհուալ չի կար, որ գրէյի, դուլ եմ քեզ, իմ սհապ պօլաքի Յուէյին խանի վրայի փողն բիթուրմիշ անես: Թէ որ մինչի էս թարեղին Շահին [ն] տեղտ է, շատ կարօտիւ ուղղուն մատուցանեմ: Նրա էլ պիտի գրէյի, ամմա ումիտ շունիմ որ մինչի էս գիրս հասնիլս տեղտ լինի: Սարքսին, Ուսուստամին շատ բարօլ կանեմ, թէ տեղտ են:

Պիր տահա աւալ օնի իշուն թուրքա յեազարիզմ քի օխույեանտա յեաքշի անղւայասն, զէրա պիզմ էրմանի դիլի ջուլֆալույեա ույմազ քի պայեան էյլիա պիլմաղլար, սօնղրա էշիթտում քի փարք շէթին օխուրարիմիշ, շինտի էրմանիճա յեազտմ, թաղիբրմազ պաղլլա, պանտա դուլուն եղիլեա տա-

յիմ տուվա էլլարդ քի դովլաթտա գալասն սաղլըղ իլա, ամին:  
Գանճալու Յովսէփ Ատիրէկ դովլաթղա շօք սալամ տուվա  
ղըլարլար դապուլ էլլիասն\*:

Մին էլ էս մօտիկներն իզմիրու գիր էկաւ, Գանճա թուր-  
քերուն օսմանցի մարթոցն գրել են թէ՛ Իզմիրու պալեօզներն  
փախել են, գնացել աստուած գիտի՝ թէ սուտ է, թէ իրաւ:

\* Այս անգամ թուրքերեն գրելու հարկ համարեցի, որ կարգաւոց լավ հասկա-  
նաք, որովհետև մեր հայկական լեզուն Զուլֆաչի (բարբառին) չի հարմարվում,  
հասկացնել չենք կարող: Բացի այդ, լսեցի, որ այն դովարութլամբ են կարդում,  
ուստի հայերեն գրեցի: Սխալներս ներիր, ես էլ քո ծառան՝ Եղիաս, մշտապես աղո-  
թում եմ, որ դուք բախտավոր և առողջ լինեք, ամեն: Գանճակեցի Հովսէփ Աղիբեկը  
իր համախոհներով շատ բարև է հղում, եթե այն ընդունելի է ձեզ»:

## 2. ՄՈՐ ՆԱՄԱԿԸ ՈՐԴՈՒՆ՝ ԵՂԻԱՅԻՆ<sup>5</sup> (1716 մայիսի 28)

Ի նուաստ ծառայէս աստուծոյ, քո ծնողաց բերնէն, և քո մօրա-  
բուրիա բերնէն հասցէ բազում սիրով կարօտիւ բարև պարոն Ա-  
պարին, և իմ որդի Եղիին, և իմ որդի Ղեվէնդին, և իմ փոքրիկ որդի  
Մոսէսին: Ինչ հարցանէք զձեզ՝ ի բարին և ի կամս արարչին:

Եթէ կամիք ըզմեզ հարցանել, պահեալ է տէր աստուած ամե-  
նայնի ձեր սուրբ աղօթիւք: [3] այս լիցի քեզ Եղիայ որդի, Խոնտաղչի  
Յարութեանին ժե (15) ղուրուշ տվեր էիր թէ՛ է (7) սոմար ցորեն  
տուր, նայ մեզի Ե (5) սոմար ցորեն տվեց, Եղիայ որդի, երեք շորս  
էլ գնացինք: Հոս մեզի տէր շունենք, մահ ու մեռնիլ կայ, մէկ մէկ  
վերցցող էլ պիտի, թէ գու գաք, նայ էկէք, թէ չէք գար, մեզ ալ հօտ  
տարէք, սէֆիլ կարօտ չի մեռնինք:

Տեղիս էհուալն հարցանես, սոմարը՝ Ե (5) ղուրուշ, ալուր ժէ  
(17) հոխան՝ մի ղուրուշ, բրինձ՝ է (7) հոխան մին ղուրուշ, ամե-  
նայն զատ նորայ կորայ:

Եղիայ որդի, տեսնեմ քեզ՝ թէ ախպերտուց ի՞նչպես կու շա-  
հիս, ի՞նչպես տիրութիւն անես:

Գրվեցաւ գիրս թիվն ՌՃԿԵ (1716) մայիս ի՞՞ (28) օրն:

Եղիայ որդի, ան քո ասած գրգերն հոս չի գտնվէր, ան քո ղըր-  
կած գիրն ղրկեցինք Գասպարին:

Եղիան նամակի վրա կատարել է հետևյալ նշումը.

«Մայրս գրել էր ձեռամբ էրզրմցի Ղոնտաղչոնց Ստեփանին,  
Գանճա էկա, կարթացի 1716 սեպտեմբեր 11 Շամախի»:

3. ՄԵԼՔՈՒՄԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆՑ (1717 մայիս 8)

Սպահան եղբայր Եղիայիդ, Սպահան մահտեսի Սարգսիդ,  
Սպահան Յովհաննէս Չալապուդ

Թվին ՌՃԿԶ մայիսի Ը (8), եղև Րևան:

Ի բռնենայ ծառայէս արդև պենտեկի լիցի ի վերոյ և այլ  
ձերին համախոհ բարեկամացն, ի հեռաստանէ, իբր ի մօտոյ առն-  
թեր գլուով, բազում ողջոյն ընդունակ լինի: Արդև պենտեկի լիցի ի  
վերայ սիրելոյդ, որ պենտէ եկի Րևան, լսեցի որ քո հրամանքդ Թեպ-  
րիդ եկեր ես, խիստ ուրախացայ, զերայ պենտէ Կիւմուշի եկի Րևան  
սիվիլէրիվի արծաթ տվի զարպախանէն<sup>7</sup>: Այս թարեխա մինչ քսան  
օր հազիւ զարպախանէն փողս կելնէ, որ գամ Թեվրէզ: Ձեր հրամա-  
նուցն զխարեթ անեմ, այս թարեխուն Թիֆլիսու քեարվան եկաւ  
Րևան, որ երկու երեք օրէն երնի գայ Թեվրիդ, պենտէ մին փոքր ոս-  
կի ունեմ Պօղոս աներձագովս Թիֆլիսու քեարվանով զրկեմ քո  
հրամանուց ղուլուղն որ մինչ էն փողն մեր քաղաքիցն կուղարկեմ:

Օվ օր լինի, ձեր սաղութենի ու տեղի աֆալն համաշայ գրես:

Դարձեալ, մալում լինի հրամանուցդ, որ մին ուղբաշի ԻՐ հա-  
զար (22000) դիան էր տալու, ասացել էր թէ՛ էն Գ (3) թուման բա-  
րաթն Թարվէլ թող մին տեղ, փող կու տամ: Հիմայ էն բարաթն ու-  
ղարկեցինք Գուրգեն բեկի մոտ, որ նա փողն առնէ: Լաւ էր որ ասի՝  
թէ ես չեմ առնիլ, բարաթն տայ ձեզ, դուք առէք, ձեզ մոտ պահե-  
ցէք և ինձ գրէք:

Պատրի Թաթէոսն մին քսան մսխալ հիլ ուզեց, հրամանքդ առ-  
նես, ուղարկես: Թէ հարցանէք, մին ամիս է, որ ձուկն չի գալիս,  
ամա ասում են թէ՛ բարիկենդանին կու գայ, կառնեմ, աղ կանեմ՝  
համ պատրուն համար, համ ձեզ համար, կուղարկեմ կասէ՞: Հիմայ  
մին էլ ես իլթիմազ կանեմ, որ էն տղին և իր հօրն հետ խոսէք իմա-  
նաք թէ ի՞նչ պան արին, փախան, ինչ մաթլապ զատ է պակաս. թէ  
որ գողացել չեն, ինչի՞ փախան: Պիտես ջամն ալ ծախես, փող շի-

նես, որ տեղդ չյամիմ, լինի թէ, աստուծով, Գիլան գամ: Ուրիշ էհ-  
վալներն կամիս հարցանել, զապիլ շէր գրել, աստուծով, մին քանի  
օրէն գամ ղուլուղտ, լեզվով պատմեմ:  
Մին ալ այս գիրն բերող Սայեթվանն եկավ Րևան, գնայր էր-  
զլրում, Ֆրենկին լեզուն խիստ աճ էր, զիրեանքն կնայէին, վասն  
այն չկարացի գրել:

(Թղթապանակ «B», № 9)

4. ՄԵԼՔՈՆ ԲԱՀԱՆԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1717 նոյեմբերի 16)

Իմ սիրելի եղբոր ի Քրիստոս եղիային Քրիստոսառաք ողջոյն մատուցանեմ: Մալում լինի քո հրամանուցն, որ քո հրամանուց գրած սիրո գիրն, որ գրեր էիր մայիսի 14ումն, եհաս առ նուաստութիւնս մեր յուլիս հինգումն, կարգացինք և ամենայն մաթլապն իմացանք: Շնորհակալ եմ հրամանուցդ, որ մեզ գրով քով մխիթարեցիր և մեր հոգեւոր սէրն ոչ ես մոռացել:

Դարձեալ գրել էիր մեր պատրի Մօնիերին կողմանէ և մեր ոչ էլած սուտ էլչուն: Նախ որ պատրի Մօնիերին տեղն ջիզուփտ վանիցն Բեռնարդն է, որ է առաջնորդ և մեծաւոր, այժմու ժամանակ ոչ կարէ գալ, ժամանակ ինչ տեսնում է, թէ քո հրամանուցդ սիրով ողջոյն կանէ: Եւ մուսի Ռուզաթի բանն հարցանես խաղբ և խաչտառակ եղև աշխարհի մէջ, որ իւր նամային իւր անունն շկա, էհտիմայ Դօվլաթն մաճլիսն տարաւ, ինչ որ փէշքաշ ունէր, առաւ. շահի մէճլիսն այլ գնաց շատ: Էն մահրամէն, որ բերեր էր, Կ(60) թումանի այլ փէշքաշ տարաւ. տեղէս պարտութ առաւ, այսչափ փէշքէշ մուշատաւայ Գ (3) թուման ամէն թեթև խալաթ տուին ի նա: Յետոյ գիր ուղեց թէ՛ իմ նամէն ջեվղապն տուէք, որ գնամ: Էհտիմայ Դօվլաթըն ասաց թէ՛ դու սուտ էլչի ես, ոսկից եկար, դէնն գնայ: Այսպէս պաշարեալ մնաց, դռան մարդիքն դուրս արաւ, մին դազցեկի մինին շտուեց, այսպէս անօթի ծարաւ ման կու գան և կանիծեն: Եւ մեր քաղաքացի տղայոցն շատ սիթամ եղաւ, մին փող շունին, որ հացի տան, ամէնն պատրի Մօնիերին վիզն անկեր են: Այս էլչուս բանն նման չէ, զերա բովանդակ ջուղայիցոց հերձուածողացն ծաղրելի եղանք:

Եւ եթէ նուաստիս որպէսութիւնն հարցանես, նուաստս քո աղօթիւն, հրամանուցդ պարոն Շահրիմանի եկեղեցումն եմ, շատ սիրով զիս ընդունեց պարոն Շահրիմանն. դպրոցատուն բացեր եմ և երեխայից վարժապետ եմ: Պարոն Շահրիմանին խօսքն հետ ինձ ամէն օր այս է, որ իր որդին և քո հրամանուցդ ծառան ողբակէ Հոռմայ դպրատունն, տասը տարի կարդա և գայ տեղս, որ նա դպրապետ լի-

նի: Եւ իմ տունն՝ պիտի տեղս բերէ, նորա կամքն և դիտաւորիթիւն այս է. ես այլ կամք տուի:

Խնդրեմ, որ աղօթող լինես եղբայր իմ, թողութիւն անես, նաչաղութեան մէջ գրեցի, ոչ կարացի երկար թուլթ գրել:

Մեր քաղաքացի Պօղոսն, երկու Մօվսէսքն, Յոհանն սիրով ողջոյն մատուցանեն հրամանուցդ: Ողջ լիւր:

Ծառայ պատրաստական Մելքոն Առաքելական Պաղտասարեան:

Գրեցաւ ՌՉԺէ (1717) օգոստոսի ԺԱ (11) Հայոց Զուղայ Շահրիմանեց եկեղեցումն:

Հասցէ գիրս Թաւրիզ կամ Շամախի ի ձեռն սիրելի եղբորն մերոյ Արզրուցի Մուշեղեանց Աստուածատուրի որդի պարոն եղիայի զուլուղն, իւր մինն հազար լինի:

Նամակի վրա եղիան արել է հետեյալ նշումը.

«Հասաւ Թաւրիզ Սպահանու էրզրմցի տէր Մելքօնէն 1717 նօյեմբերի 16, պատասխանեցի զեկտեմբերի 7»:

(Թրքապահակ «B», № 8)

14 || № 4. Պատուելի հայր պատուեալն պատրի Թաբէոսիտ

1718 յունվարի 2. Թարվէզ:

Մանուցումն լիցի վերո հօրտ մերոյ, որ քո հրամանուց հրամանքովն թֆանքն էլչին շոռաւ, սպասալարին նշած տվինք, թահվիտարի ձեռովն հաւան չի կացաւ, յետոյ թահվիտարն ուզեց, ամա մին թուման տուեց, չի տուի: Ելիզպարն էլ էս խանին ղուլուղ չի անում, իրան համ[ար] սօվտաքարութիւն անում է: Հիմա էխտիար ունիս, թէ որ ուռուսխաթ կու տաս, մին թումանօվ ծախելու, ես կառնում, թէ որ չես ուզել, մին խապար արա, թֆանքն կողարկեմ քո հրամանուց ղուլուղն:

Մուսի Գառտանին էհուալն հարցանես, դեկտեմբերի 20 գնաց Սպահան: Մօտերս Շամախու մին շաթր էկաւ, ասաց թէ ուռուսի էլչին Շամախի դախճ հղաւ, լաւ փէշվազ արին: Եւ այլ այնպէս մին էհուալ չի կար, որ ղուլուղիտ արզ անէի: Թէ իմ էհուալն հարցանես, տեղս մնացի մուսի Պօռէկարին կշտին: Քո հրամանուց էհուալէն մեզ գիր պակաս չանես: Եւ մուսի Պօռէկարն քո հրամանուցն շատ բարե կանէ. խնդրեմ մեզ աղօթից չի մօռանաս:

Եւ էն առաջի գրումն որ գրել էյի թէ ձուկ ղրկէք, հ[ա]լպ[ա] թ, հասանել գրոյս մուղխաթ լինիս, թահտի անես որ ղրկեն: Թէ որ էն իմ ասած մարդիքն տեղն չի լինեն որ առնուն, շահախատ անես քո հրամանքտ առնուլ տաս, շուտ ղըրկես, գէրա շատ հարկաւոր պետքի պիտի՝ որ Սպահան ղրկէ մուսի Պօռէկարն, աճէնթին համար, այնպէս իմանաս:

Եւ այլ մնամ ի սէր ծառայութեան քո՝

Ի ծառայէ քումմէ էլիյեսա Աստուածատուրեան

Ջելյանէս

№ 19. Սիրելի Մօվսէսիտ

1718 յունվարի 16. Թարվէզ:

Մանիր Մօվսէս, ձեր ղրկած բեռներն և ամանաթներն մեզ հասաւ յունվարի 11, անճախ նմրա 4 հակն կտրած էր ճանփին, մին ղրմզ ճօթէն է (7) կազ կտրած էր: Սարվաններն բռ[ն]եց աղէն, կազն ժՁ (16) ապասօվ հասալ արաւ. Իթ Ռ (22 000) դին փող առաւ: Յետ մին երկու աւուր տեսինք, որ մին գուլնար ճօթիցն էլ մին կազի շանք կտրած էր, չուն որ բիշ էր. ձեն չի հանեցինք, աստոծօվ պէլքի ԳՌ (3 000) դին կազն ծախվի, անճախ դուք ասացիք թէ՛ ժԲ (12) ապասի դուզեն եղել:

Մին էլ ես քեզ գրեցի թէ՛ լաւ ապրանք առնուս, դուն վատըն առեր ես. 24 ճոթի մէջն անճախ Ե Զ (5—6) ճոթ կա, որ ջուղեցու ապրանք է, մնացածն ուռուսի: Էսչափ ժամանակ Շամախի ե՞րբ է ծախվել ուռուսի պակաստն ժԲ ժԳ (12—13) ապասի, որ էս քեսաթ ժամանակն էտ գնօլն առիք: Համեշա Ը (8) ամիս, մին տարի վատա էր, հիմա դուք Գ Դ (3—4) ամիս վատա էք առել. թէ որ ուսնկներն լաւ չի լինէր, ըսկի շէր ծախվի:

Մին էլ գրել ես թէ՛ մերն քանց Շահվելու ապրանքն լաւ է: Նրանցն ջուղալեցու մալ է, || մերն ուռուսի. ո՞րն լաւ կու լինի. դուն խափվեցար, գուզես ի՞նձ էլ խափել:

Մին էլ որ ոչ բարօվագիրն դաֆտարիս ոյղուն է, ոչ դաֆտարն՝ վիճակին, ոչ գրել էք թէ՛ ֆալան մալն ֆալանին է, և ոչ գրել էք թէ՛ էսչանք ճոթ բակրաստի ջամն էսչափ կազ է որ իմանամ: Եւ չէլ գրել թէ՛ մինմինու վրա կազն էս գնովն եղաւ, էսչափ է մային: Էտ ինչպէ՞ս բան է: Հալպաթ, էս գի[ր]ն քեզ հասնելուն պէս ասացէք թէ՛ էն ապրանքն որ ղրկեցինք աղաւուղ էր, դերա հէրու Շահանն մուսի Պօռէկարիցն շատ մալ էր տա-

րել, ինքն ուշ եկաւ, նրա կօնթէն առինք, զրկեցինք, մէք իւրախա շունինք: Այսպէս ասեցէք, գէրա մէք տեղս այսպէս ատրցուցինք, գէրա էս մարթու անունան պակասութիւն կու գա քիչ բանի համար, ալայ մալ այ. էս հակնեբու ըսխտարութիւն Ե 2 Ռ (5 000—6 000) դիան է, ամա սրա անուանն պակասութիւն է. որ իմանան թէ ուրիշի ապրանքն իրան անունօվն անց կացնում է: Թէ որ ես սրա կշտին շի լինէյի, ուրիշ բան էր, ամա շուն որ սրա կշտին եմ, շի լինիլ: Մին էլ որ էլ մարթ չէ մնաշել՝ ամանաթ զրկել է. մակար ես իմ գլխու եմ, որ մուղիաթ շինիմ: Հիմակուց դէն ինչ մարթ որ գատ զրկէ իմ վրա, մուղիաթ չեմ լինիլ, թէ զրկելու լինեն, շի թողուա:

Շահպաղին շատ բարե անես, ասես թէ՛ պալխ դիշուն յերեսն մարթ շի մտիկ անել. կէսն փող տամ դակիշ շէն անել, սախաթեղէն ապրանքն տեղս կրակի գին է, փողօվ ձեռք շի յընկնիլ:

Մին էլ Մօվսէս, առաջմէ գրել էյի թէ՛ ինչ որ ապրանք ունիս, նաղտէ, հաղր կաց, որ ինչ գրեմ, այնպէս անես, մոռանաս ոչ: Թէ որ կարես ճարել ասմանի ապի, մին քանի ճոթ էլ առ. ուռուսի ճոթ լինի, զարար շունի, թաք շատ բաց լինի: Ամէն բանտ տես, թէ որ մնացած ապրանք ունիս՝ լաւ, պաղահե. սընճապի հետ դակիշ արա, և այլ ինչ որ փող լինի, պահես: Ամէն բանտ տեսնու, զերա պիտի գաս տեղս, հաղիր կաց, էս գրէն յետ մին գիր էլ որ գրեմ՝ գաս, ամա ինչ որ ապրանք լինի, առնու: Երբ որ շարվատարին կու տաս, պառլամէն գրել տուր թէ՛ ինկիլիս Պալէօզին սարքարէն էսչանք բեռ առի, էսչանք բիրա պարշեցա, որ Թարվէզ Պալէօզին թասլիմ անեմ:

Մին էլ՝ քանի որ Շամախու յիլել եմ, քեզ քանի գիր եմ գրել, ողջ համպարես՝ էս գրօվս քանի՞ կանէ, գրէ ինձ, որ այսուհետև նմրա պիտի դնեմ, որ շի կորցի: Քու գրերն ես համպրեցի՝ Խուլ Վարդանի հետ զրկած գրօվն 21 գիր է, հիմակած դէն ինչ որ գրես, վրան նշան արա:

Մուսի Պօռէկարն պարոն Մօսէսին շատ բարե կանէ, կասէ՝ «Յիրք մի քաշել, ասածօվ ճոթերն լաւ կու ծախես»: Եւ ինչ որ գրել ես՝ էնչանք փող կու տամ շուղայեցի պարոն Գրիգորին, անձախ մին էլ էտենց մի անել: Էս ապրանքն որ զրկել էս մեր վրա, մեզ խու ֆաթ կու լինի, քու հայերուն բերանն բռնել շի լինիլ, թէ ըսխտարութիւն տամ՝ շի լինիլ, զերա ինչ պարխանա գայ, գու գան կասէն թէ՛ ամանեթ մալ կայ, բեր խարճն

տուր, գլխացաւութիւն կու լինի, թէ որ խարճն շի տամ՝ շի լինիլ, անձախ թէ մին էլ ուզես զրկել, իմ անունօվն զրկէ:  
Մին էլ՝ Մօվսէս, Սարքիսն գրել է թէ՛ «Աղա՛, իմ սանատն զրկէ, ինչ որ քասր է մնացել, գլխուս վրա, կու տամ»: Դուն մէջն շես սանատն հանել դուս նշանց տալ, մէկ էլ՝ մուսի Պօռէկարին տուած գիրս էլ նշանց տալ. ասա սօվտաքարի մէջն թէ՛ «է՛ս քու սանատն, է՛ս մուսի Պօռէկարի սանատն, թէ սրա մէջն գրած է թէ՛ էսչափ ապրանք տուի Եղիային, ես բէհասպ եմ քեզ լաւութիւն արի, իմ փողն տուր, գնա քու տվածն Պալէօզինցն ուզէ. պէլթի տուն նրա հետ առնելիք տալիք շատ ունիս, ես ի՛նչ անեմ, հալա էս փողն տուր», ասա՝ «էն ժԲ (12) թուման որ առիք, նրա տաւան յետև կանեմ»:  
Եւ այլ մեզ հարցանող բարեկամաց բազում ողջոյն մատոյ:

Շամախու զրկած ժ (10) հակին քաշն նմ [ը]ա նմրա շոկ լոկ գրեցի, գրի էս թղթիս մէջն:  
Մառայից ծառա էլիաս Աստուածատուրեան:  
Վերո գիրն մօհրեցի տուի շուղայեցի շաթր Դաւիթին.  
յունվարի 17 շափաթ:

7. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՎՍԵՍԻՆ (1718 փետրվարի 12)

Յա || № 22. Սիրելի Մովսէսիս

1718, փետրվ[ա]րի 12, Թարվէզ:

Մալիմ լինի քեզ Մովսէս, որ քո գրած նմրա 23 գիրտ ինձ հասաւ փետրվ(ա)րի 11, Շահպազի ձեռովն հասաւ: Պարաթիտ փողն կու տամ, պարոն Գրիգորին էլ փող կու տամ, զրկած զատերտ կառնում: Անճախ էս գիրն քեզ հասնելուն պէս Սարքսին հասպն կտրէ. ինչ որ հասել է, ամէնն հասպ արա, պաղին շահն հասպովն առ, Հաշթարխանու առած ժԲ(12) թուման մնա, շափառներու գրովն ինչպէս որ գրել եմ, այնպէս անես: Անճախ սախն շասէք՝ թէ մեք Պալիօզին վաքիլն ենք կամ նօքարն, զերա դիւանբէկուն վրա մուհասիլ զրկեց աղէն, մարթու բան միք ասիլ, անճախ թաքուն շափառներուն ասա թէ՛ ահ տան Սարքսին թէ՛ քեզ Թարվէզ կու տանինք: Թէ որ կարացին առել, լաւ, թէ ոչ՝ Ղևոնդն թող մին արզ գրէ թաքուն, տայ մեր շափառներուն, նրանք կու տանին խանին հուքմ անել կու տան, կառնուն: Ամա շափառին հարցէք, ինչպէս կասէ, այնպէս գրէք արզան: Սահակ բէկն քաթօլիկ է, ի՞ճ խաթրն շատ կուզէ, ես ամէն բանն բերանսօլ ասել եմ տեղս:

էս բարօվազիրն Սարքսն աղին գրել էր, նրա համար քեզ զրկեցի, որ շասէ թէ թամամ փողն հասել է, զերա նա գրել է թէ՛ «Իմ սանատն զրկէ, ինչ որ պակաս մնացել է, իմ գլխիս վերա կու տամ»: Հալպաթ, քանի շափառներն չեն էկել, էս 12 թուման հասպն կտրէ, թէ որ շափառներն էլ էկած լինին, ասա թող ձեն չհանեն, մինչի էտ հասպն պրծնու, յետո արզ արէք:

Թէ որ պարոն Շահանն տեղտ լինի, շատ բարօվ արա. նրան գիր կու գրէյի, ամա գիտեմ, որ վրա չի հասնիլ, էրզրմ կու գրեմ ամէն էհուալն նրան: Անճախ էկան տեղս ասին թէ՛ պարոն Շահանն աղին համար մէկ շուն էր բերել, հիմա համիշա հարցնում է, թէ՛ «Չու մար չի զրկել»: Հալպաթ, էս գիրն թէ վրա հասնի պարոն Շահանին, ասա իմ խաթերն համար

թող շունն զրկէ, զերա խաթրն կու մնա, լսեց որ իրան համար բերել է, հիմա որ շղրկէ, վատ է:

Մին էլ՝ Մօսէս, քանի անգամ քեզ գրեցի թէ՛ մին երկու լաւ սահաթ զրկէ, դակիշ արա, զերա դու գրեցիր թէ՛ տեղս սահաթն շատ էժան է, թէ կարես դակիշօվ առնուլ, երկու երեք հատ լան առ, թէ որ դակիշօվ չես կարիլ առնուլ, փողօվ մին լան առ, զրկէ, կամ ջուղապ գրէ: Ամէն օր աղէն հարցնում է թէ՛ «Ո՞նց էլաւ, ի՞նչ ջուղապ գրեց»: էս թուղթն որ մարթ մարթու կու գրէ, թամաշի համար չէ, խօսք իմանալու համար է, ամէն խօսքին ջուղապ արա՝ թէ լաւ, թէ վատ, հայ կամ չէ:

Մօհրն ինձ չհասաւ, մեծ գրքին հետ զրկես: Ալեքսանին փողն տաս իրան: Թոխաթցի Սարքսին, Արութենին շատ բարե անես և մեզ հարցանօղաց:

Լսեցի թէ ծախու սաշմա շատ է էկել, շորս լիտր առ, զրկէ,

լաւ շայ մին հօխա ուզանկուն զրկէ:  
Ծառայից ծառայ էլիյեսա Աստուածատուրեան  
Այս վերո գիրն գրեցի տվի Սպահանլու գեղին շաթր Շուքր Ալուն: Փետրվարի 13:

26418  
17727  
1257



8. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄԵԼՔՈՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ (1718 փետ. 17)

4բ || № 1. Պատուելի հոգևոր հօրս մերո տէր Մելքումիտ օրհնեալ յաջն ողջունիւ համբուրեմ

1718 փետրվարի 17 հին տօմարիւ. Թ[ա]րվէզ:

Յիսուսաւանդ ողջունիւ յորմէ սէր ժամանեալ հասցէ ներքո գրեալ ծառայէս հասցէ առ վերո նազելոյտ: Եւ ծանուցումն լիցի հրամանուցտ, որ նամակ հօրս մերոյ հասաւ առ մեզ փետրվարի 16 հին տօմարին, զոր գրեալ էլիր յունվարի ԺԾ (15) նօր տօմարիւ: Շատ շնորհակալ եղէ, որ քո ամենայն որպիսութիւն մեզ ծանուցիր և իմացանք ամենայն բանն, բայց զոր ինչ հրամայեցիր, զլիսօվ ծառայութիւն կաննեմ: Քո ողորկած պարաթն տվի Յօհանջանին, փողն առա, զրերն և փողն մին լաւ մարդու ձեռովն հասուցանեմ էրզրում. մօտերս գնացօզ կայ, հոք մի քաշել: Յոսանկ Ալահվերդին փոխեցաւ կենացըս, վասն նրա աղօթեայ: Պատրի Բեռնարտոսի յաջն համբուրեցի ողջունիւ քով, շատ ուրախացաւ և կարօտիւ ողջոյն կանէ հրամանուցտ:

Ապարաներցի պատրին եկեր էր տեղս եկեղեցո զարթն ծախելու համար, շատ և շատ նեղութիւն ունին ի ձեռն բռնաւորաց. հարկապահանջ յօլօվ պահանջեն զհարկս և նոքա ոչ ունին կարողութիւն տալո, վասն այն պատճառի խաշ, սկիհ, սուրվառ բերին ծախեցին և իւրեանց հարկն տուին:

Մին անօրէն կայ տեղն Ալի Մարտղան բէկ կասեն, թէ մին կամ երկու տարի էլ մեծաւորութիւն անէ, մին տուն չի մնալ. էս տարի օրհնեալ տօնախմբութեան, ի աւուրն ծննդեան ոչ ժամ, ոչ պատարաք կար և ոչ կարացին բանալ դուռն եկեղեցեաց վասն հալածանաց հարկապահանջից:

Ղօնտաղչի օղլի Սահակն գնաց էրզրում, ծառայտ լաւ մարթօվ կողարկէ, հոք մի քաշել. պարտ է որդուց պատուել ծնօզս ամենայն իրօք որչափ ևս առաւել են հոգևոր ծնօղք ի մարմնաւորաց, այնպէս և պարտական եմք մեք պատուել զհո-

գևոր ծնօղքն մեր, պարտական եմ ծառայել պատուելի հօրս մերո. բայց խնդրեմ երբեմն միտ ածելօվ յիշատակես զիս առաջի անմահ գառին աստուծոյ. միայն թէ խնդիրն իմ այս է ի քեզանէ՝ միթէ սուրբ և մաքուր աղօթիւ քով զթասցի տէր ծառայքն և խնդիրն իմ շուտօվ կատարեսցէ, ամէն:

Անանհայիայ շէլէպին ինձ թողութիւն շնորհէ, իւր ապրսպլըրած խօսքն ինձ չէ հասել:

Հայր իմ պատրի Մունիեր Լեօնաւոր օրհնեալ յանջ համբուրես, հանթ[ե]րց ողջունիւ մեզ աղօթից շի մոռանաս. ո՛հ, օրհնեալ լիցի օրն այն, որ առողջ մարմնաւոր յաշօք տեսանիմ օրհնեալ յերեսն նրա և փափաք սրտիւ զօրացուցանեմ, զի կարի յոյժ փափաքի սիրան իմ տէր:

Քո հրամանուց զատերն, որ էրզրումայ գու գա, շուտօվ կողարկեմ հրամանուցտ. ողջ լեր ի տէր ամէն:

Ամենախոնարհ ծառա էլլեաս Աստուածատուրեան  
էրզրմեցո Մուշեխանց

Թէ որ Անանիյեա շէլէպին տեղտ շի լինի լաւ մարթօվ զրկես Բանտար:

էրզրմցի Թարզի պաշի օղլի տէր Մելքումին գրեցի:

էս գիրն մօհրեցի Անանիյեա շէլէպու գրին հետ տվի շաթըր Դահիրին փետրվարի 18 նմրա 2, 3 գրի պատասխանն:

9. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊԱՏՐԻ ԹԱԴԵՈՍԻՆ (1718 փետ. 24)

5ա || № 5. Պատուէլի և հոգևոր սիրելի հօրս մերո պատրի Թաթուհտօրինեալ յաջն համբուրեմ հանթերց ողջունիւ

1718 փետրվարի 24. Թարվէզ:

Ծանուցումն լիցի վերո հօրս մերո, որ քո հրամանոց գիրն մեզ հասաւ պատրի Բեռնարտոսի ձեռովն: Զարտաւարուզել ես, ամա չեմ գիտել թէ քանի՞ հատ ուզում ես՝ թէ երկու կամ թէ շատ, համ չես գրել թէ ինչ բանի համար գուզես, ֆութթա դատիֆա կառնեմ կուղարկեմ:

Թուֆանկն մին թումանով ուզեցին, աւելի չի տուին. թէ որ ուռուխաթ կու տաս, մին թումանով ծախելու, խապար արա, որ փողն ողարկեմ:

Էրզրմցի խօճա Մելքումն մեզ համար ձուկ էր դրկել, հասաւ, շորս հատ պակաս էր. էլ պէտք չէ, ձուկ մի ողարկել:

ԺԸ (18) մսխալ կէս մեխակ, ԺԸ (18) մսխալ կէս հիւ, ԼԷ (37) մսխալ խիթթ միատեղ կապեցի մին մուշմապի մէջն կարեցի, տվի հալպաեցի Ֆաթեհ շելպուռն, որ քու հրամանուցն հասուցանէ:

Մեր պարոն Միքայելիցն իսկի մին խապար շունիմ: Անձախ հերու որ ուռուսի դօշունն գնացին Աստառապատ, անցել գնացել են Օղպակի հողումն Նէյվա անունով մին քաղաք կա, էտ Նէյվայու մարդիքն ֆանտով ուռուսի դօշունն տարել են քաղաքի մէջն, որ ղօնաղլուղ անեն, ամէն մարթ իրան տանն ղօնաղն սպանել են, մնացած դօշունն, որ նաւերու մէջն են մնացել, նոքա փախել են՝ ո՛րն Նիաղօվա, ո՛րն Կիլան յելիլ են, որն էլ չեն գիտել թէ ուր գնացին:

Եւ ուռուսի էլչին էլ Շամախի նստել է. ԺԸ (18) բաղամ է բերել շահիցն, ոչ մինն անց չի կենալ: Եւ այլ այնպէս մին խապար շունիմք, որ գրեմ...

Էլիյաս Պօղտանով Զէյրանէս

10. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՎՍԵՍԻՆ (1718 ապրիլի 5)

Սիրելի Մօվսէսիս

1718 ապրիլի 5. Թարվէզ:

Ծանուցումն լիցի քեզ Մօվսէս, որ թէ իմանաւ նո՞վեմբ[ե]րի երեքիցն մինչի մարտի 24 Ս (50) թուման փող հասուցինք ջուղայեցի պարոն Գրիգորին ղաֆայեթով, շահն հեսապ արինք թումանին ամսէն երկու շահն և կէսովն, որ շահի ջամն ելաւ երկու թուման ԲՌՁԾՍ (2650) դին, ղապզն առի. ղրկեցի որ տեղտ հասա անես սանատի վատիցն մինչի նոյեմբերի մինն, հասա արա, քանի որ անցել է, շահն տուէք: Ամա թէ որ փողի սառֆ ուզէ, չի տաք, զերա մեր փողն ինչ որ առաւ, թէ տեղս յեօլպօռճի տվեց, որ Շամախի թաղա փող առնու: Թէ ղօռ անէ, ասա թէ դուն մեր տված փողն Թարվէզ յետ տուր, ես տեղս քեզ թաղա տամ: Էն երկու թուման ԲՌՁԾՍ (2650) դին շահիցն մեր բաժին ԺԵ (15) թումանին համար շահ կու հասնի ԶՌԷՃՂԵ (6795) դին, Մօսէսին ԼԵ (35) թումանին համար շահ կու հասնի մին թուման ԵՌԸՃՍԵ (5855) դին: Ղապզըն տաք, սանատներն առնուք:

Եւ այլ մին հակ ձոթն, որ խրիտ արի, ղաֆտարն այս է, որ Թավրիզա գնօլն գրեցի.

ԺԱ (11) շէշուտի ալաճա, ամէն մինն ՌԴՃՂԴ (1494)

դինօվն, ջամն է՝

016450

ԺԱ (11) շէշուտի ամէն մինն ՌԺԳ (1013) դինօվն 011150

Ի (20) ջուխտ մեծ ֆութթա էճՍ (750) դինօվն 011000

Ի (20) ջուխտ միանա ֆութթա ԴՃՍ (450) դինօվն 009000

Ժ (10) թաք ֆութթա ԴՃ (400) դինօվն 004000

Չորս թօփ շիթ յաղլուղ ԳՃԻԵ (325) դինօվն 001300

Չորս հաշիյա շիթ ԵՃԺ (515) դինօվն 002040

Քսան կարմիր շիթ հինգ հարիւրօվն շաղրանօվն 010020

Վեց ուսանի ալիճա էՃԻԵ (725) դինօվն 003125

Բ (2) խալիսչի արաճա՝ ԵճԻԵ-օվն (525)	001050
Գ (3) նառտնա արաճա՝ Եճ (500) դինօվն	001500
Գ (3) պատամի արաճա՝ ԷճԾ (750) դինօվն	002250
Ժ (10) մօլ ԲճՂԵ (275) դինօվն	002750
Ճ (100) քալաղա մին ճն (140) դինօվն	014000
ԺԵ (15) մալտա՝ ԴճԾԵ-օվն (455)	006225
Գ (3) քէճի արաճա ԷճԾ (750) դինօվն	002250
Ձ (6) յեօրղանի յերես ԲճՁԳ-օվն (283)	001700
ԺԷ (17) դալամ: Խրիտի ջամն է 09 թուման 60	

Վերո ապրանքն մին հակ կապեցի բարպնտի ջուլն քալա 99960 խարճօվն ջամն էլա ԳՌ (3000) դին էլ տվի Շահպա-  
 7բ || ղին, որ ճանապարհին հակին վրա խարճէ, հասպն քեզ տայ: Տվի Շահպաղին Ժ (10) թուման ԳՌ (3000) դին: Թ (9) թուման ԹՌԹՃԿ (9960) դինն հակին, խրիտի ջամն է, կմնա Շահպաղին վրա ավելի փող՝ ԳՌԽ (3040) դին, որ հասպն քեզ տայ: Եւ էն առէջի Գ (3) թուման, որ պարաթ արել էյիր, տվի Գ (3) թուման, Գ (3) շահի Շահպաղին:

Մին էլ թէ Գրիգորն ուժ անէ, ձեզանից փող սառֆ ուզէ, ասէ թէ՛ սանատն ուճի շահ գրած է, դապուլ [ա], ամմա սանատումն գրած չէ թէ անցածին շահ տամ, ողորդ որ տեղս ու-  
 յիճ փող տուի, ամմա էս փողն առա յեօլպօռնի տվեց որ Շա-  
 մախի թաղա առնու շահօվն. թէ խիստ չի լինի դազպն, միք տալ, թող նա սանատն պահէ: Մին էլ էս Ժ (10) թուման ԳՌ (3000) դինն, որ Շահպաղին տվի, խրիտի համար, որժամ բեռն քեզ հասնի, ծախես. Ը (8) թուման մին ՌԳՃՂ (1670) դինն տաս Մօֆմուէլին, Բ (2) թուման, մին ՌԳՃՂ (1330) դինն ձեր պակրաստի փողիցն է դատումն քեզ, մայէն տաս Մօֆմուէլին և Բ (2) թուման մին ՌԳՃՂ (1330) դինն պակրաստի հեսապն քցես, մինչի էս գիրն քեզ հասնելն: Թէ որ Ղևոնդն չէ յելել, էս գիրն քեզ հասնելու պէս ղրկես ինչ որ գրել եմ, թէ խերով ճարվի, առնուս ղրկես: Գիտեմ Ղևոնդն յելած կու լինի տեղէտ:

էս գիրն որ գրում էյի, քու մին գիրն հասաւ, որ գրել ես թէ՛ մեզ տեղտ ինչ որ փող կայ, ղրկէ. մակար սանտո՞ւղն է, որ ղրկեմ, զանճիրին վրա մտիկ անող չի կայ: Գրել ես թէ՛ զնամ էրզերում: Ի՞նչ բան ունիս էրզերում: Առէջ գրել էյի թէ՛ որ մահն թարփանմիշ լինի, եկ տեղս, թէ ոչ՝ մնա Շամախի: Հաշ-

թարխան մին փողի զատ մի ղրկել, թէ բարձերն գան, կու ծա-  
 խեմ: Դուն գրել ես թէ՛ կէսն աղին է, կէսն մերն է: Պա [ր] դա-  
 մին Մօվսէսն գրել է թէ՛ մին բաժինն աղին, մինն իմն, մինն  
 Ղևոնդին. երկուսիդ խօսքն ոյմիշ շաներ: Գրել ես թէ՛ Սար-  
 քիսն կերթա. դուք շու՛մ արէք, վախում Սահակ բէկն կանուս:  
 Հալալաթ էս գիրն քեզ հասածին պէս թէ մահ լինի, ինչ որ շո-  
 րեղէն զատ կայ, վեր առ, եկ, մնացեալ մանտր մունտրն լից  
 մեծ սանտուղի մէջն, դիր Մօֆմուէլի կուշտն: Մեր ԺԷ (17) թու-  
 մանին սառֆն տեղս շինեցի, դուն տաս ոչ:

Ահա Գրիգորի դապուն էս գրի մէջն է, տաք Արուսթէնին,  
 թամասուկն կարթաք վատեյէն, յետ մինչի նոյնմբ [է] ըի Գ (3),  
 ինչ որ անց է կացել, հասալ արա, շահն տուր, սանատն առ.  
 Երկու դապու է, մեկելն էլ ուրիշ քարվանի հետ կողարկեմ, որ  
 տաս նրանց:

Գասպարի գրմուսնեքէն ինձ մին խապար արա թէ՛ ի՞նչ  
 ուրիշ արիք:

Թոխ [ա] թցի պարոն Սարքսին, Արուսթէնին, Պետրոս չե-  
 լեպուն, Յօհաննին, Շահանին, թիֆլիսցի պարոն Մելքոնումին,  
 և այլ մեզ հարցանողաց շատ բարև անես: Ողջ լեր:

Եխպօրց ծառայ էլիյեաս

Այս վերո նմր 25 գիրն մօհրեցի ապրիլի 7, վերո բարօ-  
 վագրիս միչի ապրանաց դաֆտարն ջոկ դաֆտար արի և գրի  
 մէջն գրի և ջուղայեցի Գրիգորի որդի Սուլթանումիէն առած  
 Ծ (50) թմնի պարաթն էլ գրի էս գրի մէջն, մօհրեցի տվի թօ-  
 խաթցի Ասլանի որդի Շահպաղին և վերո Մօվսէսին նմրա 30  
 գրի պատասխանն գրեցի էս գրումն:

11. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ՝ ԵՎ ՍԱՀԱԿԻՆ  
(1718 ապրիլ 7)

Ձա || Սիրելի եխպայր Արուֆինիտ և Սահակիտ

1718 ապրիլ 7. Քարվէլ:

Ներքո գրեալ ծառայէս ծանուցումն լիցի վերո եխպօրտ փմո, որ էս գրովն Գ (4) գիրն, գրում եմ հրամանուցտ, քեզանէ մին ջուղապ չեկաւ, և քանի դատ ապսպրեցի, չի զրկեցիր. ասեմ թէ գրերն քեզ չի հասաւ, այնպէս մարթու հետ չեմ զբրկել, որ կորչի, թէ ասես, եկող չը կա՝ տեղս գալօզն անպակաս է: Չեմ գիտել ի՞նչ բան անց կացաւ, խնդրեմ սիրելի, առաջի գրերումն ինչ որ ապսպրել եմ, Յիսուսի խաթէրն, ամէն առնուա, զրկես: Յոյս ունիմ, որ մինչի էս գիրն քեզ հասնիլն, զրկած լինիս:

Եւ էս գիրն որ քու հրամանուցն կու հասնի, Գ (3) Հալապի ալ ինկլիսու մահուտ և Գ (3) Հալապի կուշտ կանանչ լինի, խիստ լաւն, քանի որ կառնուա, դապուլ է, գեր[ա] Պալէօզին համար գուզեմ: Կուշտ կանանչն, որ ուզել եմ, տեղս փանգահարի կասեն, հ[ա]լպ[ա]թ, էս Բ (2) ոանկ ալ և կուշտ կանաչ մահուտն, հ[ա]լպ[ա]թ շուտով, ողարկես:

Եւ էս շաթրն որ քեզ կու հասնի, մինն թուրք և մինն հալ է, էս թուրք շաթրին լաւ մեհրիպանութիւն անես, անուոն Մահմուտ է և էն մեկել հայ շաթրն յետ գու դա՝ Մահմուտն Հալէպ գնա. էս հայ շաթրին Ղ (90) դուռուշ նոր շուլթա տաս և մին գիր առնուա քու գրի մէջն դնես, զրկես:

Քուռչի սայի Մկրտիչն թէ տեղդ լինի, ինձանից շատ բարե արա, թող էս Մահմուտին շաթրին հետ գնա Հալէպ, գալ տեղս, իրան ռազի կանեմ: Թէ որ Մկրտիչն տեղտ չի լինի, հալպաթ աստուծոյ խաթերն, մին ուրիշ լաւ սայի ճարես և էս Մահմուտ շաթրին հետ զրկես Հալապ, գերա էս Մահմուտ շաթրն ճամփա չի գիտել, պիտի որ մին լաւ գիտուն սայիցի ճարես: Մին օրէն աւել չի պահես, զրկես գնան: Մին էլ քու

ճարած սային փող ուզէ, մին խարչուի տաս, ձեռացէն գիր առնուա, զրկես տեղն, որ որժամ գայ Թ[ա]ր[վ] էզ, հ[ե] սապ անեմք, ինչ որ փող պէտք լինի, թէ առաջի գրած և թէ հիմիկ վան գրած զատերուս համ[ա]ր: Մեր տեղտ աշնա ամսնեք կան, նրանցից առ, խարճէ: Ինչ որ գրել եմ, վրաս պարաթ արա պազրկանի հասպով, դապուլ է:

Եխպայր, չի լինի թէ ինձ ամաչեցնես Պալէօզի կուշտն, գերա ուրիշ մարթու վրա պիտի գրէր, ես չի թողի թէ՛ ես մին լաւ բարեկամ ունիմ: Ամեն բանն լաւ տեղն անես, ինչչալահ, Պալէօզին քեզ խեր կու հասցնեմ: Թէ էս բաներն որ քեզ գրեցի ամէնն տեղն անես, ուրիշ բան շատ կու լինի:

Նանայիս, մեզ հարցանող տօտերուն շատ բարե անես: շատ խօսք ունէյի գրելու, կարացի ոչ, չունի էս գրերն շուտով պիտի գնան, էնկից իմացիր, որ մօրս կարացի ոչ գրել: Էլ ի՞նչ ասեմ, դուն գիտես, բաւեսցի իմաստութիւն քո: էս Բ (2) դափանցի սայիներն որ քեզ կու հասնին, մին օրէն աւել չի պահես, մէկի անունն Շահան է, մէկինն՝ Մկրտիչ, թէ որ մեր Քուռիչ Եսային տեղտ չի լինի, մին ուրիշ լաւ սայի ճարես, էս Շահանին հետ զրկես Հալ[ա]պ, որ գնայ գայ Թարվէլ. ինչ որ դաստուրն է, աւելով ռազի կանեմ: էս միտս Մկրտիչ սային դաստուրն է, աւելով ռազի կանեմ: էս միտս Մկրտիչ սային յետ պիտի գայ, ինչպէս որ լինի, սրա հետ գրես, որ մեր իմանամ: Առէջ Հալապու սայիքն ճանփու դնես, յետ էս Մկրտիչն յետ զրկես: Այնպէս էս բանն տեսնուա, որ մարթ չիմանա: Շուտով պիտի գնալ Հ[ա]լապ, որ գնացող Պալէօզին հասնի էս գիրն: Քրիստոսի խաթերմ քու [ու]միտովն զրկեցի, մեզ սեերես շանես. լիցի եր[կար] կեանք, ամէն:

Եխպօրտ ամենախոնարհ ծառայից ինչեաս Աստուածատուրեան:

էս կուշտ կանանչ ասած ոանկի մուստուռն էս գրի մէջն է, ճանփէս, լաւ ոանկ լինի և մուստառին պակրաստ է: Դուն մահուտ առ խիստ լաւ:

Վերո գիրն մօհրեցի ապրիլ 8, զրկեցի էրզրմ ներքո գրերին հետ:

Իմ հոգևոր հայր պարոն Ղապարիս

1718 ապրիլ 22. Թարվէզ:

Ներքո գրեալ ծառայէս հասցէ բազում սիրով ողջոյն առ վերո և իմ ծնօղ մայր Նանէյիս, մօրքուրիս և այլ մեզ հարցանողաց յոյժ սիրով ողջոյն մատուցանեմ լիցի ընդունակ:

Մալում լինի քո հրամանուցն պարոն, որ հրամանուց Բ (2) գիրն մեզ հասաւ, ինչ որ գրել ես, ամէնն իմացա:

Գրել ես թէ՛ ամեն զատն առինք, ձի չի կա: Մեկե՛ր էրզում ձին դահաթ եղաւ ինձ համար. ձի շատ կայ, ամա փողի շես դիմիշ անել. Ե (5) դուռուշ, Ժ (10) դուռուշ ավել տուք, լաւ ձի առ, հլպթ: Էս գիրն որ քեզ կու հասնի, շուտով մին լաւ, լաւ ձի առնուք զրկեք. պուրտէն լաւն շինել տվէք, քանարներն սաշախ:

Մին էլ մեզ խիստ թահաթի Բ (2) լաւ նօթար պիտի՝ մին սէյիս, մին փեշխզմեթ, հլպթ. մուղիաթ լինիք՝ մին լաւ ձիու լեզու գիտեցօղ սէյիս և մին լաւ տղա, որ փէշխզմաթ լինի, ազին առաջն խզմեթ անէ. Էս Բ (2) տղէն ճարես, զրկես:

Առէջ գրել էյի, թէ Սարքիսն գար, լաւ խեր կու տեսնու, ամա շուն որ կարբվեցաւ, գիտեմ, էլ չի գալ, ուրիշ ֆիքր անէք: Զարդաւա կղի բանն որ գրել ես առաջուց, մուղիաթ էյի, ամա չի կար, ինչ որ կար, կրակի գին էր, խրտտարն շատ է, մին էլ որ ես ուրիշ բանի ձեռ շեմ կարիլ տալ, անճախ աղի բանն կարեմ տեսնուլ, որ ինձ նիսպաթ է: Ղեռնղն բերել տվի, որ աղին դուլուղն անէ. մին քանի աուր զու գա տեղս: Պղտիկին գրեցի թէ՛ Շամախի մահ լընկնի, գա, թէ ոչ՝ մնա Շ(ա)մախի: Ես էստուց առէջ ինչ որ գրել եմ Արուսեանին, գրեբը կարթալ տաք, զատերն առնուք:

Հալապեցի խօճա Սաֆարի որդի Քաթէհին հետ ամանեթ զրկեցի, գիտեմ, հասած կու լինի. պուխարու մօրթի չի կա, որ ինձ համար գտակ անելի, գրեցի Շամախու զրկեն: Գրել

ես թէ՛ Ղեռնղին բարի անունն լսեցի. էն պարաթն որ դուն լսել ես, այնպէս չէ. Ֆարաշի այնպէս լինի, ինչո՛ւ բետնամ զընիս: Գիտեն որ դուն մին փուշ բանի համար կնեղանաս, անոր համար քեզ կասեն է՛ր շեն ինձ էլ ասել, շուն որ գիտեմ ջուղայն  
11ա տալ: || Աստուած սիրել ես, էնտենց փուշ բաներու համար ո՛չ դուն նեղացի, ո՛չ ինձ նեղացրու. թէ որ գիտենաս ողորդ է, դուն պիտի այնպէս ջուղայլ տաս, որ տուշմնի սիրտն էրվի, ասած խոսքերուն փոշիման լինին: Աստուած յերկար օմբ տա քո հրամանուցն, այնպէս մին բնութիւն ունիս, որ մին մարթ ուզէ վեր վրա մին լու սպաթ անէ լեզնով, ուղտ կու դառնա, մեր վրա սպաթ կու լինի: Մարթ պիտի իր մարդուն պակասութիւն ծածկէ, պէլքի դուշմաններն լսել էյին, շէյին աւատալ, քեզնօվ սպաթ արին. ինչպէ՛ս անեմ՝ մօրթեմ մէքն է, ո՛ւմ ասեմ: Աստուած աղաչել պիտի, որ շնորք տայ:

Ասում ես՝ ինչ ֆիքր ունէյի, ինչ բան գուհուր արաւ: Էս բանիս համար քու ֆիքրն մի քցել, ինչ որ կամիս, կանես, ինձ դապուլ է, ինչ որ կամիս և շես անել, դապուլ է, և ինչ որ կու կամիս և ոչ կանես, նա էլ ինձ դապուլ է, միայն թէ քեզանից մին օրհնութեն գուղեմ և մեզ աղօթից չի մօռանաս: Ողջ լեր:

Թէ իմանաս, նոր յելած սիբան ապրիլի Ժ (10) տվին Թ[ա]րվէզ: Ապասին է (7) դանկ է, ամա սաֆ արծաթ ունի: Գումիշխանու արծաթի մեծ քաշն կառնուն: ԺԵՌ (15000) սիվիլան, ԺԼ (18) շահի, զրա դուրուշ քաղթ յրոթանն նմանապէս: Ասլանլուն՝ ԺԳ (14) շահի, մին պիստի ըռուպն ԺԵ (15) շահի, մին պիստի նոր զօլաթան՝ ԺԱ (11) շահի, Զ (6) փող. յեալտուղն՝ Լ (30) շահի, ունկրուղն՝ ԻԹ (19) կէս աչ, ամա պիլքի՝ էլ աւելան ա, դերա Սպահան օսկի կտրում են Լ (30) շահօվ խարճ է և այլքն նմանապէս:

Եւ եթէ իմ էհուպն Գարցանես, ողջ և առողջ անք և տեղս նստում եմ. աղէն քո հրամանոցն շատ բարե կանէ:

Գրիր խօճա Մելքոնին վրեն թիֆլիսցի, որ էն ղուլն ողարկէ, որպէս խոստացել էր, թէ չէ՝ յետ ողարկէ թուրն Բ (2) թումնիւ հանդերձ, որ ինձ տալու ա: Դարձեալ ապսպրում եմ, որ յուժ անես Գաֆտելի ախպօրն, անուամբ Յուսեփ, որ տայ փողն Ասլանին էլ յետ տայ. Բ մին ալթուն, որ ինձ տալու ա. իրան յետ տաս խանշարի կոթ, ինչպէս յառաջ գրեցի: Քանի որ գրում ես, ասում ես թէ՛ լօնտոա շատ կուզվի, ամա գրում չես թէ ծախեցիր: Էն լօնտոան, որ քո ձեռն թողել եմ, ակար չես ծախել, խելք դիր որ թէզ ծախես. յես փոխես շալ ղուլնու հետն, քո միտքն թամամ բոլորես, որ շինես ամեն բանն որ գրեցի քեզ և ընդուր համար որ չի մոռանաս իլթմազ արա պատրուցն, որ շաղաւթ անեն էս գիրն թարքմանեն. որ տուն գրես: Ամենայն առաջագրեալ գրոց մէջն մոռացել ես գրել Բ (2) կամ Գ (3) բան, սապապ ես անգետ եմ ուրիշ բանի վրան, վասն որոյ էստուց յետն պիտի գրես մին գլուխ յատուկ բանի համար: Չունքի Գալուտոն ինձ պետք չէ, յետ եմ ողարկում ընդուր համար, որ քեզ ղուլուղ անէ: Վասն ընդուր վարձու համար հեսապ կը պահես՝ ինչ ես տվել, ինչ Ասլանիցն առել ա, մին ալթուն էլ ես տվել եմ: Երբ որ կը հասնի, շունքի ինքն մինակ հերիք ա քու ղուլուղումն, Օհաննէսն ղուս արայ:

Յիքր արա որ հասուցանես գրէրն, որ էս տեղս պատատած է, մանաւանդ որ պարոն Քափուչինի վրա գրած ա, զերա էնտեղն դրած ա մին րազամի սաւատն, որ մուսիու Գառտանն նոցա ողարկում այ:

Հեսապ առ Գաֆտելիցն վասն մին քանի ապրանք որ մնային ընտուր ձեռն. էլ ապրանքի համար որ Ղարա Օղլա Սարքիսն յետ տվել էր:

Վերջ նմրա 16 գրին:

Այս աղի միշի գրերիցն մինն գալուտի ձեռովն ղրկեցի պարոն Բեռնարտոսին, որ ղրկէ Հալապ, Բ (2) Շամխու գիրն, և մին Գանճու գիրն միատեղ պատատեցի պարոն Քաթէոսին գրել տւած Ադիբէկի գրին հետ, տվի Իսմի խանին, որ նայ տայ ղումեցի Սիմոնին, որ նայ տանի Շամխի, տա պարոն Պաշօթին: Փէտրվարի 12:

№ 27 (15). Իմ պատուելի աղայ մուսիու Պօռեկարիս

1720 մարտի 11. Թավրէզ:

Նմրա 12 գրումս գրեցի թէ՛ Նաղուն փող չեմ տալ: Այսօր խապար առի շաթրիցն, որ ասում էր թէ ԲՃՄ (250) դուռը ծախուեցաւ տիֆտիկի դանթարն: Այս բանիս համար առաջ որ ձեռս փող գու գայ, ժ (10) թուման կու տամ Նաղուն և որչափ ձեռացէս գու գայ, տիֆտիկ կառնում: Մին ֆիքր արի թէ՛ հաճի Դարերիցն առնում որչանք որ կարէ տալ նիսիա, այնպէս անելով թէ՛ դուն չիմացար, կարծեմ թէ պահած տիֆտիկ շատ ունի, թէ ուռուխաթ կու տաս, այս բանն կանեմ:

Գ (3) ինկլիսի նաւ ելել է Հալապ, խիստ շատ լօնտա է բերած էն լօնտոիցն, մօտէրս գու գայ Թարվէզ. ԳՃ (300) բեռ: Այնպէս մին լաւ ալիշ վէրիշ եղել է Հալապ, որ մի ասել, որչանք որ ապրանք կայ եղել Հալապ, գիշերով առած է, սպիտակ ճոթն էլ շատ գին եղել է և չի ճարվիր:

Աղայ, աստուծոյ խաթերն, շուտով շուտով մին բան շինէ, որ տեղիս փողերն առնունք, մեր առևտրի յետնէն լինենք, որ մեր տունըն քանդուցաւ:

էս Հալապս գրերն բերող Սարգիսն ասում է՝ աղեն ասաւ թէ՛ Թարվէզ մուսի Պօռեկարիցն մին թուման առ, թէ միուսիու Պօռեկարն տեղն չի լինի, եղիայիցն առ: Ես չի տվի, էս գրերումն թէ՛ գրած է, հրամայես որ տամ:

էրզրմա զրկած զմրոթն ծախել է դոսթն կէս դռօզով, վրան փող է գրել մին լաւ մեծ րախտի հետ դակիշ է արել. րախտն տեղս է, թէ՛ որ տեղս լաւ ծախել կու լինի, զրկեմ հրամանացտ, որ ծախես, մինչի այսօր մին փող չեմ առել:

Ծառայից ծառա ելիյեսա:

Մայիսի 14-ին գիր եկաւ շաթրով, մարտի 27 գրած էր, նմրա 21 գիրն յառաջ էր գրած իմ նմրա 25, 26 և 27 գիրս պատասխանն, որ թարգմանի այսպէս.

Ձեր գրերն որ գրեցիր 27 փետրվար և մարտի 8 և 13, իմ ձեռս հասան, ամմա ոնց որ հիմի ամէն բանի վրեն չեմ կարել պատասխան տալ որ գրել ես: Անճախ քեզ կասեմ, որ մին փոքր համբերես մինչև որ մին խան լինի Թարվէզու համար ոնց որ յոյս ունիմ որ միրզա Մօմին խան լինի, ես ֆիքր կանեմ որ լաւ գլնի որ ժ (10) թուման տաս Նաղուն որ յառաջի փողիցն որ կառնուս: Ամմա լաւ մուղիաթ կու լինի, որ տֆտիկ տայ, ինչ որ մեզ տալու է, և էլի մուղիաթ կու լինիս որ փող տալիս յուրիշ բանի վրա չի դնէ:

Տֆտիկի համար չեմ ծախել ինչպէս ինձ գրեցիր, շունքի պարոն Լօքն ինձ գրեց թէ՛ Մաշատու սև տիֆտիկն ծախում են ԲՃԺԵ (215) դուռուշ և Մաշատու կարմիր տիֆտիկն՝ ԲՃԽ (240) դուռուշ, Թարիզու տիֆտիկն՝ մինչ ճի՛ն և ճլ՛ն (125 և 135) դուռուշ: Խապար կառնուս թէ Իզմիր բանի՝ են ծախում և ինձ կու գրես:

էս բանի վրեն որ գրեցի թէ նիսիա կառնուս հաճի Դարերիցն, քեզ պատուիրելով պատուէր կտամ երկու պատճառի համար, մին որ ընդուր համար, որ խափեփայ է, գուցէ որ քեզ խափէ, երկրորդ որ յուժ անէ փող առնելու, որ քեզ թեթև անէ, շունքի այսպէս է, լաւ մուղիաթ կու լինիս որ քեզ տալու են տֆտիկ առնուս:

Շատ շնորք ինձ արիր, որ ինձ խապար տվիր որ նաւերն հասան Հալապ ԳՃ (300) բեռ, որ գալիս էր Թարվէզ, էս պատճառէն էս ապրանքն շուտ կու ծախեմ, որ է իմ ձեռն իմ խորհուրդն է, որ ալիշ վերիշ անենք, որ դատիրք: Ամայ այսօր անճախ ֆիքր անելու եմք, որ փողերն ժողովելու, և ինչպէս որ վախտ մօտ է որ ծախեմ ապրանքն. ինչ որ ունիմ խորհուրդս այս է, որ էն ժամանակն որ ծախեմ պրծնում, գնամ

Սպահան. և էն ժամանակն դատիմ շինել ինչպէս որն լաւ է մեզ համար, մինչ կու տաս Սարքիս շաթրին և մին գիր ընտուց կանուս, որ նշանց տամ՝ որ փող տվիր: Ձիուն բախտն, որ զմրութի հետ փոխել են ինձ կու գրբես, որ շատ տեղս դուզեն և լաւ կանուն ինչպէս որ հիմի պատասխան չեմ կարեր զրկել:

Պարոն Հեացինթոսին շնորք անես իմ լեզուիցն բարև տաս և պարոն Բեռնարտոսին և պարոն Լանկլատին, հալպաթ մեր բարեկամաց ողջոյն կու տաս: Վերջն:

Միրով ծառա Պօռէկարտ.

33բ Ինձանից շատ բարև կանես հաճի Մախսում խան-բէկին և կասես ընդան թէ՛ տեղս այսպէս խօսք կայ, որ էշիկ աղասութիւնն տվին նրան, էս խապարս ինձ շատ ուրախացուց, շատ կերևի թէ՛ նայիպութիւն կու տան միրզա Մումինին: Եւ նրա էնչանք լաութիւն կանեմ, որ գիտեմամ անել: Եւ ինչպէս որ ինձ նշանց հիմի կու տա որ լաութիւն նրա կանեմ, գիտէ և գիմանա իմ արած լաութիւն, ինչպէս որ տեսաւ իմ արած լաութիւն, ես էլ նրանց զուգեմ իմ աշխատանքին համար լաութիւն անէ Հաճի Մախսում խանբէկին համար որչանք որ կարէ, մինչի հիմի իսկի չը կարացի անել էն վնասի փոխարէն որ մեզ արաւ Մահմուտալի խանն մինչի հիմի արի, ինչ որ ձեռացս դու դար, աւել չը կարացի անել, ամա ինչարա՞հ են ժամանակն կանեմ, ինչ որ ձեռնէս դու գայ:

36. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՌԵԿԱՐԻՆ (1720 ապրիլի 8)

№ 29—17. Իմ սահապ աղայ մուսիու Պօռէկարտ

1720 ապրիլի 8. Թարվէզ:

Աղա՛, Մլթանին ինքար է անում թէ՛ իմ կուշտն թամպաքի չը կայ: Սպաթ անելու համար պիտի որ տեղտ հաճի Հուսէյինիցն այն գիրն առնու, որ հաճիներին գրել տվեց թէ՛ թամպաքուն տվեց Մլթանուն: Թէ՛ որ ասէ թէ՛ գիրն կշտին չէ, էն գիրն մօհրօղներուն անունն հարցընես, ինձ գրես, գերա ես այն մարդիքն չեմ ձանաչել: Եւ օվ որ էլ որ գիտեն, թէ՛ հարցնեմ, ինատուն չեն ասել: Կամ հաճի Հուսէյինին բերանիցն մին գիր առ, որ գրէ թէ՛ ես հաճի Հուսէյինս ե (5) թայ Պալիօզի թամպաքուն բերի ֆալան ֆալան մարդու հուզուրումն տվի Մլթանուն. զէրա յումից որ փող՝ գուզեմ, կասեն թէ՛ այս Մլթանուն բանն էլ թէ՛ սպաթ արի, լաւ է, միուս ամէն թալապներն կանունը, թէ՛ որ այս Մլթանուն բանն սուտ յելաւ, ամէնն սուտ է: Շուտով հաճի Հուսէյինիցն մին գիր առնու զրկես այս Մլթանուն բանին համար: Եւ միրզա Մումինի զրկած սանատներիցն շատ կան, որ ասում են թէ՛ մեք փողն տվել եմք, նրանց զապ ունիմք և այլ ուրիշ խօսքեր կասեն, որ զլպաշի խօսքերին դուն լաւ գիտես:

Աղա՛, լսեցի որ ինձանից բետամաղ եղել ես՝ թէ՛ քեզ յիմաց շարի մուճալէն աղին զրկել. մակար այնպէս կողարկէյին՝ որ ես կամ մեր մարդն յիմանար, թաքուն զրկել են, ես էլ այսպէս մին ֆիքր արի, գնացին միրզա Հաշումին այս գիրն գրել տվի մուսի Պաթսունի վրայ, սատան այս գրի մէջն է, գիմանաս. թէ՛ որ գիտես քո հրամանուց համար լաւ է՝ զրկէ աղին, թէ՛ որ չուզես՝ պահէ կըշտիտ:

Եւ միրզա Հաշումն շատ բարև կանէ ասելով թէ՛ այնպէս անէ, որ այս իմ մօհրով գրած քափիտանին վրայի գրած գիրն ուրիշ մարդու ձեռք չի լընկնի: Կրկին արզ կանեմ, որ էս գրովն ես քա-

<sup>1</sup> «փող»-ի կողքին այլ թանաքով գրված է «մուհասին».

դաքն բան շի բուսնիլ. անճախ ես վախտ թէ վախտ վազիրին թահ-  
տի կանեմ որ յետոյ շատէ, թէ ինձ յիմաց չէր անել: Եւ այլ ամէն  
էհուալն յառաջի գրերումս գրել եմ:

Առաջ գրեցի թէ տիֆտիկն ԲՃԾ (250) դուռուջ է ծախուել, սուտ  
ասին: Մուրատխան շաթրիցն հարցի, ասմ էր՝ ճԾ (150) ծախուե-  
ցաւ: Եւ այլ տէր եղիցի քեզ օգնական, ամէն:

Հալպաթ, հաճի Հուսէյինիցն մին գիր առ թամպաքուլի բանե-  
րին համար, որ ուրիշ շատ մարդ կան, որ ասում են թէ՛ շլթազ են  
անում: Այս գիրն հաճի Հուսէյինիցն որ առնուս, մեզ համար շատ  
լաւ է յուրիշ ամէն բանի համար, զերա Մլթանն ասել է Գաֆտէլին  
թէ՛ ես գրեցի Սպահան Մլթանոց թէ՛ Պալիօզն վարչիքաստ եղաւ  
ինձ, շլթազ են անում: Էս բանիս համար շատ աղաչանք եմ անում,  
որ բարեկամութենով և ինչ ֆանտով որ լինի հաճի Հուսէյինիցն գիր  
առնուս, վախում են Սպահան Մլթանիքն զնան աղին ծուռ հասկաց-  
նեն, իրաւին սուտ ասեն, պէլքի աղէն էլ աւատայ Մլթանոց սուտ  
խօսիցն:

Մուրատխանին տվի նմրա 16 գիրն. Հալպաւ գրերովն:

Ծառա էլիյեաս:

Այս գիրն գրել տվի պարոն Հեացինթոսին և միրզա Հաշումին  
գրած մուսի Պաթանի գիրն և նրա սաւատն միատեղ մօհրեցի, մու-  
շանպի մէջն և տվի վրացի Սօդրօեանց Ալահվերտուն, որ տանի  
Ղանգարին տայ աղայ մուսիու Պօռէկարին:

Ապրիլ 9:

### 37. ՊՈՌՏԵՎԱՐԻ ՆԱՄԱԿ ԵՂԻԱՅԻՆ (1720 մայիսի 14)

37ա || Յունիս միւնն վերո իմ գրած շաթրն եկաւ, որոյ անունն է Մուլ-  
թան Ղուլի, այս գիրն բերեց Ղազպինու աղիցն, որ թարգմանի  
այսպէս.

Իմ նմրա 28, 29 և 30 գրիս պատասխանն:

Պարոն, Բ (2) գիր քեզ գրեցի, միւնն 27 մարտի ամսուցն,  
միւսն, ապրիլի շորսիցն. էս գրէրովն հիմա գրի թէ՛ ինչպէս  
պիտի անէյիր և քեզ իմացուցի որ Բ (2) կազ կէս սև մահուդ և  
Բ (2) սև պուխարու մորթի, ինչպէս որ յուզեր էյիր Պալասա-  
նօվն:

Էս գիրն որ գրեցիր ապրիլի Ե (5), ինձ գրեցիր թէ մօլա  
Իսմայիլն գրել էր քափիտանին, որ նրա աւատացնէ, որ ինձ  
Թարվէզ կը Ղրկէ, և թէ որ քափիտանն հաճել է, ամա հիմի  
մօլա Իսմայիլն աստուծոյ քուշտն խալաթ կառնու էս վնասին  
համար, որ քեզ տվեց. թէ որ մարդիք մեր դատաստանն լաւ  
չարին, աստուած արաւ մեր դատաստանն՝ նրան էս աշխար-  
քէն բառնալով, որովհետև այսպէս է որ աստուած մեզ մեծ  
ողորմութիւն շնորհեց մեր մեծ թշնամոյն մեզ պրծուց. պիտի  
որ յոյս ունենանք որ յուրիշներիցն էլ մեզ պրծացնէ, և կամ  
նրանք ցածցանէ:

Նրանք որ դժարութիւն արին մեզ տալ, ինչ որ միրզա  
Մումինն պիտի տայր, հիմի դիժարութեան չեն գիտել անել,  
բանդի միրզա Մումինն թարվիլ է և յոյս ունիմ որ շուտ մու-  
ղիաթ կու լինի մեզ տալու տալ տայ, զոր ինչ տալու են թար-  
վէզ: Էլ ինչ որ քու ձեռացէն գու գա, կաշխատես առնուլ ու-  
րիշներիցն, որ մեզ տալու են, և թէ մին ուրիշ որ դիժարութիւն  
անէ տալու, իլթիմաս արի միրզա Մումինէն, որ քեզ օգնու-  
թիւն անէ էնչանք որ գիտէ առնուլ:

Հաճի Հուսէյինիցն յուզեցի գիրն, ինչպէս որ ասիր թէ՛  
մօհրել տվել է թայ թամպաքում համար, որ կար Մլթանի  
կուշտն, ամմա ինձ ասաց թէ՛ սուտ է, էս գիրն գրել չէ տվել,  
անճախ ինձ ասաց թէ շորս թայ թամպաքուն տվի Մլթանին

որ մեր մահճի Պապեն տեղն էր որ տվել է Մլթանին և յոյս ունեմ, որ դիւանին շահատուութիւն կու տա, թէ որ յուզես, մին գիր Հաճի Հուսէյիսիցն քեզ ողարկում եմ, որ Հաճի Մահմատ Քազիմին վրա գրում է նրա ասելով թէ՛ քեզ տալ տայ էն թամպաքուն, որ Մլթանի կուշտն է: Եւ թէ Մլթանըն էլի ինքար անէ, էս գիրը Հաճի Հուսէյիսի գրած գիրն վկայութիւն կու տա և էն Մլթանին սուտ լինելով թամպաքուցին վրա էլի էնենց սուտ կերևին ուրիշ հսապի վրէն որ արինք: Արզա անել յուզեցի յուրիշ թալիզա հանելու համար, ամմա ինձ ասին թէ՛ առաջինն հերիք է, որովհետեւ այսպէս խանն քաղաք գալն ի բաց արզ արա. նրա տալով թալիզեն և դիւթտարի գիրն և հալպաթ, որ հաճի Մախսում խան բեկն էս շնորքն քեզ կայնէ: Ծատ բարե կանես ինձանից և նրա կասես թէ՛ էն ժամանակն որ Թարվէզ նստեմ, նրան նշանց կու տամ, որ անշնորք չեմ:

37բ || Ինչպէս որ յաճ կայ թէ տիֆտիկն փթի թէ յաւել պահես, նայ լաւ իստակել կու տաս և էն կու ծախես քանի յաւել գնով որ կարես էն պատճառին, որ Նաղին կարաց ոչ փող տալ մղտսի Սարքսին, էսա որ ինքն կարող չէ դուսիցն առնուլ, որովհետեւ այսպէս է, նրա օգնութիւն կու տաս, որ առնելիքներն առնու որ պարտ են: Եւ նրա կասես որ շուտ փող տայ մղտսուն և ինձանից բարե կտաս:

Թէ որ դեռ չես դրկել ձին և Բ (2) թուրն, շուտով ընտունք մեզ դրկես: Էս փողերիցն որ միրզա Մումինն քեզ կու տա, Ծ (50) կտաս մղտսուն, մնացածին լաւ լազի քաթան առնուս. պիտի որ շատ լաւն լինի, և շուտով դրկես Սպահան:

Էս գրի մէջն, որ գրել եմ, մին գիր է Մահմուտ Իպրահիմ շարվատար զանկանցի, որ նրա տվել եմ Բ (2) սնտուկ, մին պօխչա, մին թուր որ Միրզա Մումինին է, մուզիաթ լինես, շարվատարիցն առնուս և տաս միրզա Մումինին: Չարվատարին տվի Ծ (50) շահի, որ հրսապ անես միրզա Մումինին վրա, Զ (6) ապասի, որ տվի թուրն շինելու և ԳՌ (4 000), որ մին շուխայի համար, որ հեսապ շարի Միրզա Մումինին հետ էն ժամանակն, որ հ[ե]սապ արի:

Ամեն ապրանքն ծախեցի, որ ինձ հետ բերել էյի, լաւ գնով ծախեցի, անճախ Լ (30) թումանի ապրանք մնաց, աստուծով, շուտ կու ծախեմ, որովհետեւ այսպէս է, շուտով էստուց գեղնեմ Սպահան գնալու և տեղն մին բան կու շինեմ մուսիու Գառտանին հետ: Դուն որչանք նր կարես աշխատէ, որ մեր բաներն պրծնու Թարվիզումն, արայ, և թէ դիժարութիւն

ճարես, շուտ ինձ խապար արայ, որ անեմ ինչ անել պիտեմ:  
Լսեցի թէ արապկիրցի Այվազն մին քանի աւուր Թարվիզու կանցնի Սպահան գնալու համար, ամմա ինչպէս որ նրա բնութիւն դժար է, տունդ չը պահես:  
Եւ ես եմ ծառա քո Պօռէկար:

Ղազպին, 14 մայիս 1720:

Պարոն, մին շափառ եկաւ միրզա Մումինիցն, զանկատ արաւ ասելով թէ՛ լօթիպազար արել է, մուզիաթ կացիր, որ նրա հետ բան շունենաս, անճախ ինչ որ մեզ պարտ է, յուզես և կառնուս: Էն ապրանքներն ամանաթ որ քեզ կու տայ: Էն ժամանակն որ քեզ կու հասնի, Բ (2) սանտուղն պահես, թէ կարես: Եւ էս գրերն թափշուրմիշ կանես յում որ պիտի հասնի: Մին ապասի տվի շաթրին, որ նրա մուզտին վրա հասապ անես: Պօղչան, որ միրզա Մումինին կտաս պատրիներուն որ տան միրզա Մումինին:

№ 32 (21). Իմ պարոն մուսիու Պոռեկարիա

1720 յուլիս 15. Թարվեզ:

Աղա՛, քո հրամանաց յունիս 20 գրած գիրտ շաթրով առի յուլիսի մինն, որով չիմացուցիր մեզ Շահդուլին գալն և դաստա գրերն նրան տալն և հաճի Հուսէյին հետ չը պարիշիլն: Մլթանին աղաշանք անելով մարդ է մէջ բցել թէ՛ թամպեթին առնու Ռ (1 000) դիանիցն, քանի որ պակաս ծախէ, մնացածի փողն ես տամ: Ես դապուլ չեմ անել թէ՛ Ռ (1 000) դինով փող առնում, թէ որ փող կարացի ոչ առնուլ, թանպաբուն կառնում, քանի որ պակաս ծխուի, Ռ (1 000) դինիցն պակաս կառնում Մլթնուցն:

Յունիսի 9 գրած գիրտ Քալպալայի ջլովտարովն առի յուլիսի 5, որով ծանեաք Շահդուլին մուհասիլ հանելնտ, աստուծոյ փառք աստուծոյ շատ և շատ լաւ կը լինի թէ որ որշվատ ուտող չը լինի: Ասացի մղտտուն՝ որ ինչ հրամայեցիր և նա ևս ողջոյն կը մատուցանէ հրամանուցտ, ինդրէ քո հրամանուցէ, որ գրես թէ Պանտարա նաւերումն լեղակ, դալայ և դահուա շատ յելէլ է կամ թէ բիշ է, քանզի Երզրոմ շատ էժան է, թէ որ չիմանա թէ տեղտ բիշ կայ, գրես՝ տեղտ շատ կառնու:

Միրզա Մումինն գնացել է Թիֆլիս, խապարն էկաւ, և Բ սանտուղն և պողչէն և թուրն որ շարվտարին տվել էջիր, ինձ հասաւ, պահեցի կշտիս: Ասլանին տեղտ եղած փողերն կը ժողովեմ, բայց չեմ գիտել թէ Գարուտին որջանք փող է տվել քանի որ կհարցանեմ, կասէ՛ ես չեմ գիտել. աղէն գրել է իրան դաֆտարումն:

Յունիսի 16 գրած գիրտ առի յուլիս 12 Մահմատ Հուսէյինի ձեռովն հանդերձ ուրիշ գրերին: Եւ Մահմատ Հուսէյին բեկն իշաւ քալանթարի տունն, գնացի տեսա, ասում է՛ ես ձեր բանն չեմ կարել տեսնուլ, մինչ որ Յեաղուպ բէկն գայ: Եւ ասում էր թէ՛ պայրամիցն յետ գու գայ, վախենում եմ թէ յուշ գայ և

մեր բանն մնա: Ինչպէս հրամանք արիր թէ՛ դիւթտարի գիրն Յեաղուպ բէկի ձեռովն տար խանին, այժմուս Յեաղուպ բէկի ձեռովն տար խանին, այժմուս Յեաղուպ բէկն տեղտ չէ: Մահմատ Հուսէյին բէկն ասաց թէ՛ որժամ գնամ խանի կուշտն, քեզ իմաց կանեմ, որ գաս միատեղ գնամք, որովհետե Յեաղուպ բէկն տեղտ չէ, սորա ձեռովն գիրն խանին տալն լաւ չէ, ամայ որովհետե չեմ գիտել Շահդուլին յերբ գու գայ, հարկ է որ տամ:

Աղա՛, խիստ երկբայեցա որ քեզ նոր թալիղա չի տվին, քանզի վախենում եմ թէ մեզ խափել գուղեն, առանց թալիղա Շահդուլին կարող չէ բան շինել, քանզի կասեն թէ՛ քու անուսովն թալիղա շունիս. աստուած տա, որ լինի՛ ինչպէս մեր կամքն է:

Աղա՛, գրեցիր թէ մեր բանին մուղաիթ չես: Աստուած լաւ գիտէ իմ աշխատանքն. ես ուրիշ էլ ի՛նչ բան ունիմ, որ քո բանին մուղաիթ չը լինեմ. այնքան զրգուեցա էս քաղաքի մարդէրն, որ մին օրն ինձ մին տարի է թուում, աստուած պրծացնէ: || Նաղուն համար ինչ որ հրամայեցիր քան քու գրելն, յառաջ ես էտ խօսկերն ասի, առաւել՝ ուրիշ բաներ: Եւ կամի ինձ խաբել աստուծով, ոչ կխափուիմ այնպիսի հարամպաղա մարդիցն. եթէ աստուած իմ ձեռս մին կարողութիւն կու տա, տանջելով կառնում զոր ինչ մեզ պարտ է ևս (40) թուման, առաւել մղտտու փողն: Ամեն խօսքն գրել չի լինիլ, քանզի գիր չեմ գիտել, և թէ գրեմ քեզ՝ ձանձրութիւն կու լինի, ինզրեմ ամենազօր արարչէն, որ այնքան յերկարէ իմ կեանքն, որ ցանկալի տեսուտ արժանանամ և պատմեմ դամենայն անցանքն, որ անցին ի վերա իմ: Եւ հանապազ նեղեն գիս, բայց քոյին սուրբ և մաքուր աղօթիւն և Յիսուսի Քրիստոսի կարող զօրութեամբն կամ հաստատուն և կսպասեմ շնորհալի գալտեանքո:

Ձին սախաթ էր արած, զրկեցի սարն՝ թէ լաւ լինի, յետ միո ամսո բերի, էլ վատ էր, ծախեցի 2Ռ (6 000) դին: Շատ եմ վախում թէ՛ Շահդուլին չը գայ և ինձ շատ տրտմեցուց այն խօսքն, որ լսեցի թէ՛ նոր թալիղա չեն տվել Շահդուլուն:

Մին գիր տվի Այվազին քո հրամանուցն համար, այն գրի կերպն է, որ միրզա Մումինի մարդն տվեց. ևս առաւել քանի խօսք որ գրել էյի, քանզի կարծել էյի թէ միրզա Մումին տված գիրն կորել է:

Քո հրամանուց յուզած գրերն՝ թէ գաֆտար և թէ բարօ-

վազիր, ամէնն միատեղ կապեցի, տվի Մաղմաղ Արուսեանին, քանզի շուտով յուզել էջիր. և թէ սպասէջի քարվանի, մօտերս քարվան չը կայր և թէ լինէր՝ յուշ կու հասնէր, վանն այն լաւ համարեցի շաթրին տալ, քան թէ սպասել քարվանի:

Գաֆտելին ախպերն տեղտ մինչի յետ դառնալն վատ են, թամամ կու լինի տեղտ առնուս ԺԲ (12) թուման, որ քեզ պարտ է: Աղա՛, Հուսէյինն պրծաւ և տեղս նստած է, ինձանից ուզեց իրան տված ԺԲ (12) թումանի սանատն՝ ասելով թէ՛ մեզ պարտ չէ. թէ մեզ պարտ չէ, գրես ինձ, որ սանազն տամ նրան:

Իզմիրու քարվանն Բ (2) օրումս գու գա, լանտոս մահուդ փոքր ունին:

Մին ամսէն տեղս մին Հալպա քարվան գու գայ, որ շատ բակրաստ են բերում ջուղեցու և ապրանքերոց:

Մին թավրիզեցի հալ եկաւ Իզմիրու, որ քարվանիցն յառաջ էր անցել, որ մեր քարխանէն տիֆտիկի բան էր արել, նրան հարցուցի տիֆտիկի էհուալն, ասում էր՝ խիստ շատ քեսատ է՝ Բ (2) բաժին ապրանք մին բաժին փողով ուզում էջին, ամմա չէր գիտել թէ դանթարին քանի գին կու տային: Եւ կասէր ևս թէ՛ էնչափ տիֆտիկ էր եկել, որ քարվանսարաներումն տեղ չը կար. չը հաւատամ որ այնպէս լինի, քանզի ճնթլումն էս տարի միայն Ի (20) բեռ զբկեց, աշունքն մնաց, խրիտն դեռ ևս տեղն է: Լսեցի թէ ուզում է տեղտ ծախել, ամա առնող չը կա:

Աղա՛, թէ յիմանաս, մեր մեծ թշնամին ճնթլումն է, քանզի համատանցի հալերն պատմել են մղտսուն թէ՛ Բեժան ազէն որ մղտսին բռնել կամեցաւ, ճնթլումն է մատնել այսուդիտաւորութեամբ, որ (Հաճի Գարէշին խորհուրդ ին արել)՝ թէ մղտսին այս քաղաքէն փախցնեմք, որ Պալիօզին քօմակ շանէ, յետոյ շուտով Պալիօզն վարշիքաս կանեմք և կփախցրնեմք: Ականճով լսօխքն պատմեցին: Շատ ուրիշ բաներ պատմօղք կան, ամմա չեն ասել, կարծելով թէ ինկլիսի վէթիլ չէջիր և հիմի մանգուլ արին այսպէս կարծելով, ճրնթլումիցն կը վախեն: Եթէ աստուած տար, որ մեր աղէքն քեզ լաւ քօմակ անէջին և այս վատութիւնն որ մեզ եղաւ, վրէժ խնդրէյին, առժամայն ամեն բանն յայտնի կու լինէր և մեր թշնամիքն կորագլուխ լինելով կը կորնչէին: Որ թէպէտ մեր աղեքն անհոգութիւն արարին այս բանիս, բայց աստուած արդարաւ 44ա գատ է, դատելոց է, որ յոյս ունիմ, բայց փութամ թէ || երբ

իցէ՛ եթէ ոչ իցէ այստ, հարկիւ լինելոց է հանդերձեան: Աղա՛, այսպիսի երախտամոռաց մեծաւորաց սպասաւորութիւն անելըն անպատեհ իմն է, քանզի առաւել հաւատացին անհաւատի, քան թէ հաւատացեալ քրիստոնի, թշնամոյն՝ քան թէ բարեկամին, օտարին՝ քան թէ ընտանոյն: Եւ այլն խնդրեմ ներումն, զի մի անդուկն թեցցի առ յաջս քո, զի յուսահատի սիրտս այսպիսի բան տեսանել զաչս և լսել՝ զազանչս, փոխանակ հաւատարմութեամբ աշխատանաց քոց վարձս ընկալցիս ապենիազ արարչէն, որ կամիմ: Քեզ զխացաւորութիւնս ներումն շնորհել մախթեմ:

Քանզի քո եմ ապաշնոր և շնչին ծառա էլիաս Մուշեխանց:

№ 44. Մուսիու Պօռէկարիս

Յուլիս 20. Թարվէզ:

Յուլիս 14 ողջ և առողջ ձեր սուրբ աղօթիւն մտայ Թարվէզ և նստայ պատրինեքի կուշտն: Քո ամէն ապսպարած խոսկեքին պատասխան շեմ գրել, քանզի միրգա Մումիին սպաննեցին յունիսի 25 Պլվերտի գեղն Ամարու ճանփին պատճառն է. Դիւանբէկին և միրգա Յուսուֆն և միրգա Աթան և այլք քանիք է՞: (700) թուման խոստացան սարտարին եթէ սպաննէր միրգա Մումիինն: Եւ վնասն որ գրեցին ծածուկ սարտարին, այս էր թէ՛ միրգա Մումիին կամի քեզ սպաննել և խրատել է ժողովրդեանն, որ ոչ թողուն զքեզ մտնուլ քաղաք, որ ամենին սուտ էր:

Նաղին էկաւ քաղաք, զրկեցի որ մեր ապրանքնգեղիցն բերէ, պատասխանեց թէ՛ չի բերել, մինչև որ ես քեզ չը գնամ: Ես չէյի կարել գնալ, քանզի լօթիներն կամին սպաննել ասելով թէ՛ լաւ ժամանակ է, որ ոչ շահ կայ, ոչ խան: Կարծեմ թէ՛ Նաղին, որ ստիպում է ինձ տանել գեղ, նրանց հետ խօսք կապեց թէ՛ գան գեղ, զիս սպաննեն, որ ապրանքն ուտեն այսու կարծիքով թէ՛ աղուանն կառնու Սպահան և ձեզ կշարթեն: Այսօր Օվանէան զրկեցի գեղ, և բարեկամք արգելեցին որ ես գեղ չը գնամ. առաջ Դիւանբէկին մեզ թշնամի էր, այժմ՝ ևս առաւել, քանզի նրա գրեցին Սպահանա թէ՛ ֆոանկներն գանկատ արին քեզանից: Տեղս իրանք ասում են թէ՛ ես սովորացուցի պատրինեքին, որ Դիւանբէկու համար գանկատ անեն ասելով թէ՛ պատրիքն լեզու և բան չեն գիտել, ես գիտեմ, տես թէ՛ կարեմ մնալ առանց օգնութեան որ այժմ քաղաքիս տէրն է, ամէնն նրանից կվախեն լաւ ֆիրք քաշես: Գաֆտելն, Մամաչանն գնացել են Թիֆլիս, տեղս այնչափ սովտաբար չէ մնացել, ամէնն փախել են լազկու ահիցն: Եւ ալիշվէրիշ իսկի չը կայ, լօնդոան 19 շահի ծախվել է մին քանի օր առաջ, այժմ

23բ ոչ առնող կայ և ոչ ծախող: Լազկին Արտաւիւլ ջարթեց և թալանեց, մնաց || 17 օր, որժամ լսեցին թէ՛ վրացին եկել էր Քուղդաղն, յիւան Արտաւիւլու և փախան գնացին Շամախի: Ասում են թէ՛ օսմանցուցն 5 փաշա պիտի գայ Թավրէզու վրայ, ոմանք ասում են թէ՛ կոնի համար է, քանզի ասում են թէ՛ Հասան փաշան թային են արել Սպահանու վրա 7 փաշայով և էրզրմա փաշան թային են արել 5 փաշայով Թարվէզու վրա: Ասում են թէ՛ էրզրմա փաշան լազկին պիտի ջարթէ, Հասան փաշան՝ աղուլանն: Ոմանք կայ որ ասում են թէ՛ էրզրմու փաշան մինչի Ղաղապին պիտի զաֆթի և հասան փաշան՝ դենն, որչանք յերկիր որ կայ: Ճշմարիտն աստուած գիտէ: Բայց մեզ ասում են թէ՛ 2 օր կայ, որ էրզրմու մարդ էկաւ, զիր բերին որ օսմանցու մարդիկքն ապրանքներն առնուն և յետ գնան:

Այս երկու օրումս էրզրմայ տղերքն իրանց ապրանքն բառնում են, որ յետ տանին էրզրում: Եւ ասում են թէ՛ էլչի էկաւ օսմանցուցն Վախտանկ խանի կուշտն, թէ՛ լազկուն հետն բան շոֆես, յետ գաս, տեղտ նստիս:

Այսօր գնացին միրգա Մումիինի տունն: Միրգա Մումիինի կնիկն խապար գուրս զրկեց ինձ Զիմշիտի բերանօվն թէ՛ որ գուզեն որ իրանց փողն չը կորչի, վէզիրութեան ըաղամն միրգա Մումիինի փոքր ախպօրն անուանն շինեն: Միրգա Մէհտուն խնդրեցի՝ իմ շէշխանա թուֆանքն և թուրն և տապանչան որ տան ինձ: Պատասխանեցին թէ՛ որժամ սպաննին միրգա Մումիինն, նոյնժամայն սարտարն քաշեց, տարաւ էտ իբժիխանին:

Եւ Միրգա Շեֆին շատ բարև է անում, հրամանուցէտ խնդրում է թէ՛ այս թղթաբեր մարդուն որչանք որ փող պետք լինի, տաս, քանզի ինձ համար մանուուպ է անում աղա Մումիինն հետ: Սովանէան Օրտաարէ պիտի գնա էրզրում: Մղտսի Սարգիսն գրեց մին գիր, որ խնդրում է իրան փողն շուտով տամք, քանզի շատ տաւայ են արել և շատ փող են առել և դեռ ևս պրծել չէ: Տէր Բարղամին գիրն էկաւ իրան տղին վրայ, որ գրեց թէ՛ շուտով ինչ ապրանք որ ունիք առնուք, յետ գաք, և Գալուստին էլ գրեցին այնպէս:

Ասում է Նաղին թէ՛ ապրանքն հողի տակն է գրել, քանզի լազկուցն վախում է: Եւ լսեցի թէ՛ սանտուղներն շատ անգամ բացել է և պաղի ինքմինն ծախել: Օվանէան յետ 2 աւուր գնում է էրզրում և իրան փողն յուզում է: Որչանք որ քարվան է եկել էրզրմ, չեն թողել որ տեղս գան. գրել են թէ՛ այնքան շատ

վաճառական է էկել էրզրմ, որ մահալլէքն տներումն են իշել:

Ճանապարհիցն 2 գիր եմ գրել հրամանուցտ՝ մինն հօ-  
նօմդարայու վրացի շափառներիքօվն, մինն Քաշանայ՝ ջուղա-  
յեցի Օվանօվն: Նոր որ գիրս կնքում էչի, շաթր էկաւ էրզրու-  
մայ: Եւ գրեցին թէ՛ Դաւրիշ աղէն կամ Ուզուն Մուստաֆեն  
24ա պիտի ॥ գան էլշութին: Եւ հունթբարիցն նոր ֆերման է յելել  
թէ՛ ղօշուն հազր լինի Աճամու յերկրին համար, ամա քանի որ  
Սպահան շահի ձեռն է, թարփանմիշ մի լինիք, երբոր Սպա-  
հան աղուանի ձեռն յընկնի, շուտով գնաք Աճամու յերկրն  
դաֆտէք:

Օվանէսն յետ էկաւ գեղիցն դատարկ, նաղին մեր ապ-  
րանքն չէ տվել, ասում է թէ՛ ԳՌ (4 000) լիտր տիֆտիկ եմ  
տվել, ժէ (15) թուման էլ հերու խարճել եմ, հետապ անէ,  
յետո ապրանքն տանի: Եւ ասում է թէ՛ քեզ գիր է տվել, իրան  
մօհրօվն այս ապրանքին համար, թող իմ գիրն բերէ և իրան  
ապրանքն տանի: Վերչի խօսքն այս է, որ չի ուզում տալ:  
Ահայ ամէն բանն քեզ ծանուցի, ֆիքր քաշես: շունքի իսկի  
մարդի խօսքի ակաճ չես դնել, վասպինճ որ քեզ ասի թէ՛ Գա-  
լուստն տանի քաղաք, չը թողիր, հիմիկս անես ինչ որ կարող  
ես շուտով և ինձ տեղս սարգարտան չը թողուս: Եւ այլ ողջ լեր  
ի տէր:

Խոնարհագոյն ծառայ էլիաս Մուշեխ:

Այս գիրն գրեցի ներքո գրին հետ, կնքեցի և տվի հարգե-  
վոր տիրոջ շաթր երեւանցի Ալահվերդուն, որ նայ տանի Սպա-  
հան, տայ Մուսիու Պօռէկարին. օգոստոսի 6, քանդի միրզի  
մարդ Աղա Տահիրն յետ տվեց գիրն և ինքն չը գնաց:

40. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊԵՏՐՈՍԻՆ<sup>18</sup> (1720 օգոստոսի 13)

Հնորհազարդ և պատուելի եկայայր պարոն Պետրոսիս

1720 օգոստոսի 13. Թարվէլ:

Մշտաւէտ տարփմամբ տենչալի սիրով ողջոյն մատուցի ներքո  
գրէալ ծառայէտ, յորմէս սէր ժամանեալ հասցէ առ եխաբայրու-  
թեանտ: Զի քաջայայտ լիցի հրամանուցտ, որօվհետև հրամայեցիր  
մեզ տեղեկանալ և իմացուցանել սիրելոյտ Գանճու ապրէշումի  
էհուալն, որ արարաք իսկ:

Մեզ գրեցին Գանճու յունիսի իննիցն, որ հասաւ մեզ գիրն յու-  
նիսի 22: Եւ մեր պատասխանն այսպէս էկաւ գրելով թէ՛ մեզան-  
տարն լա է, խրիտարն փոքր է զարազաֆին ժՁՌ-իցն (16 000-իցն)  
մինչի ժԸՌ (18 000): Եւ գրեց ևս թէ՛ երբ որ նոր նուզան լինի, շատ  
և փոքր լինելն ներխն և խրիտարի շատ և քիչ լինելն շուտով գրե-  
լոց եմ: Եւ մեք վասն այն անագան գրեցաք գիր հրամանուցտ, որ  
կապասէջի թէ միւս գիր էլ գայ որ ամեն խապարն ոճիւ գրելի, որօվ-  
հետև յուշացաւ խապարն, մեզ հարկ եղև գրել այլ ուրիշ հարկաւոր  
խապար, որ ստուգիւ որոնելով չիմացաք: Քանդի Իզմիրումն ծա-  
խուել է Գանճու քանարն 24 մաուշիլ զարպաֆին՝ 36, Կիլանունն՝ 52:

Այսօր գիր էկաւ Շամախու, որ գրած էր նոր ապրէշումի բանն  
այսպէս. ջուղայեցտ խարճն՝ ժէՌ (17 000), Քաշանա խարճն՝ 19 Ռ  
(19 000), զարպաֆին՝ Բ (2) թուման: Եւ այնչափ զալիս է, որ միչի  
մարդն առնում է, բանացնում, քանդի լաղկու ահուն գեղարենքն  
ողջ փախստական են: Ըստ այսմ սարասի իմացես Գանճա, թէպէտ  
գիր չէկաւ: Եւ որժամ Գանճու գիրն ժամանեսցէ առ մեզ, փութով  
վերստին գրելոց և առաքելոց եմ առ հրամանքտ: Խնդիր լինի հրա-  
մանուցէտ, որ պարոն Մինասի գրին ի քէն խնդրած մին տօնուղ  
շալ ղութնին ղրկած լինիս, լաւ գերմակ թահր լինի: Եւս հարկ եղև  
մեզ փոքր ապի լիմուն է պետս տեղո և ոչ կարեմ ճարել, եթէ շնորհ  
անես մեզ համար մին թարվիզի կամ կէս կամ մին շարեկ մեզ ո-  
ղարկես, քանդի հարկաւոր պետք է: Եւ զոր ինչ ծախեսցես վասն

մեր, հատուցից հրամանուցտ: Եւ այլ այնպէս մին պատշաճաւոր  
խապար չունենմ որ ծանուցման արժան լինէր:

Ողջոյն տաս բանիւ իմօվ եխպայր պարոն Օվանէսին և սիրելի  
պարոն Խաչիկին և այլք որ զմեզ հարցանել կամին: Եւ կամք առողջ  
մարմնօվ մինչի կետ գրոյս և ձերին սրբանուէր աղօթին և կամ  
սպասու և պատրաստ առ ի ծառայել ծառայից:

Եխպայր ծառա էլիյեաս Աստուածատուրեանց Մուշեխանց:

Այս գիրն գրեցի և տվի նախջւանցի Աղամալի որդի պարոն Ա-  
կաթանգեղոսին, որ տանի յերկիրն ճենաց ի քաղաքն Ռեշտ կամ  
Կասկար տայ ջուղայեցի նազարի որդի պարոն Պետրոսին և կամ  
Խաչիկին: Օգոստոս 14:

41. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓԻՆ (1720 սեպտեմբերի 27)

№ 8. Սիրելի հայր իմ և եխպայր պարոն Յուսեփիս

1720 սեպտեմբերի 27:

Գիտութիւն լիցի հրամանուցտ, որ քո հրամանուց օգոս-  
տոսի 29 գրած նմր 12 գիրտ հասաւ ձեռամբ շաթրօվ սեպտեմ-  
բերի 27: Առաչի Բ (2) գիրն պատասխանն գրել եմ սեպտեմ-  
բեր 3: Ձեր ամենայն բանին համար գրեցի Ղազապին ֆռան-  
սուզ էլլուն, և պատրի Բեռնարտոսն էլ գրեց, հանդերձ ձեր  
գրերին զրկեցինք Ղազապին սեպտեմբերի 24: Ամմա խա-  
պար առինք, որ շահն յելաւ Ղազապինու դէպի Թէհրան, էլլին  
մնաց Ղազապին: Աստուած տար, որ յառաջ քան էլլին Ղա-  
զապինու դուս յելնուլն մեր գիրն հասնէր, որ քանի շահին  
մօտ էր մին բան շինէր: Բայց ես կասեմ ձեր հրամանուցն,  
որ սակաւիկ մի համբերէք՝ թէ յուշ և թէ շուտ աստուած մեր  
բաներն շատ առաւել լաւ կու լինի, քան թէ ձեր խորհածն:

Սեպտեմբերի 19 Սպահանու մեր շաթրն էկաւ, տղեքոնցմէ  
գիր չունէր, պատճառն որ պուլուճն Սպահանու չորս դին կո-  
ղոպտելով տանում է, մինչ որ ինկլիսի մեծ պարխանեն զար-  
կին, տարան հանդերձ ուրիշ ազգի ապրանքօվն: Սպահանա  
երկու աղաճ հեռու հինկ ինկլիս Ե (5) նօքարով հասան, թա-  
մամ ապրանքն պլուճի ձեռքն բերին Սպահան:

Յետո լսեցինք, որ այլ շատ ապրանք ճանփին կար և շատ  
էլ յահու յետ էյին դառնում գնում Շիրազ: Գնացին Սպահանու  
նաչիպիցն մարդ յուզեցին, որ գնան ինկլիսների ապրանքն  
բերեն, պատասխանեց թէ՛ մարդ չունիմ, անճախ էս քաղա-  
քըն կարեմ պահել: Այսպէս լսելով որչափ որ ինկլիս կար  
Սպահան, ողջ ուրանց նօքարօվն, և տօնլուղօվ էլ մարդ բռնե-  
ցին, մինչի ճՄ (150) մարդօվ գնացին մինչի Շիրազ, որ ապ-  
րանք ունին, բերեն Սպահան: Վասն այս պատճառիս յերկա-  
րեց գրերի պատասխանն: Նմանապէս Ֆռանցիգի էլլին, քանզի  
ամենեքանն մնացին իւրանց ապրանաց ֆիքրն քաշելն, ամմա

յոյս ունիմ ամենազօր արարչէն, որ վերչն շատ լաւ կլինի: 49բ || Շատ ժամանակ է որ գրեցին մեզ թէ՛ պարոն մունսինօս Բառնարայն հանդերձ պարոն Թաթեոսին և պարոն Մունիբրին պիտի գային շահի կուշտն բան շինելու համար, քանզի երկու թագաւորի նամէ կայ, որ պիտի բերեցին շահին, և դեռ ևս ոչ եկին: Կարծեմ թէ՛ Սպահան բուլուճի գալուն համար այսպէս եղև, թէպէտ մեզ չը գրեցին, ամմա կարծիքով՝ այսպէս գիմանամ: Զէրա 3 ամիս կար, որ Սպահանու մեզ գիր չէկաւ: Այս նոր շաթրս որ էկաւ, ոչ ինձ գրեցին և ոչ Սպահանա պատրիքն՝ այս պատրուն: Ինձ ստիպել պետք չէ, ես շատ տրտմութիւն ունիմ ձեր վրա, երբ կը մոռանամ այսպէս մի կարծեք, ի՞նչ ասեմ, աստուած շինէ, աղօթից մի մոռանայք և ես ոչ մոռացայց:

Ժամագիրք և գօղուք որ յուզել ես, կողարկեմ: Եւ իմ գրած նմրա 7 և այս նմրա 8 գրիս պատասխանն գրես: Եւ բանի իմօվ ողջոյն տացցես՝ պարոն Սուփերիօր Յօւսեփ Մարիային, և պարոն Հերոնիմոսին, Յակոբ չելչպուն, պարոն Վարդանին: Ապտուլ Մսէհ բէկին, Էսպայր Պետրոսին և առհասարակ ուղղադաւան Էսպայր մերոց յոյժ [ա]իրօվ ողջոյն տամ իբր առնթեր գու: Մինչի գրոյս ողջ եմք ձերին սուրբ և մաքուր աղօթիւն, ապագայի տեառն եմ յանձնեալ:

Որ եմ ձեր ամենախոնարհ ծառայից ծառա էլիշեաւ Մուշեխանց:

Այս գիրն գրեցի իւր նմրա 12 գրի պատասխանն և տվի Մլթանի Տանային, որ նայ զրկէ Գանճայ գանճայեցի քաթանչի տիրացու Յուսէփին: Սեպտեմբերի 28:

42. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄԻՐՉԱ ՄՈՒՄԻՆԻՆ<sup>19</sup> (1720 նոյեմբերի 4)

№ 3. Պատուելի միրզա Մամէնիս

1720 նոյեմբերի 4. Թարվէլ:

Միրզա՛, քո հրամանուց գրած գիրտ Տաւութ շափառօվն հասաւ յետ երկու աւուր, որ շափառն էկել էր. գնացի ձեր տունը՝ ինդրել իմ գիրն: Աղայ Մամինն տվեց առանց մօհրած. և կարդաց գրի մէջն՝ որ ինձ գրեցիր թէ՛ կարմիր տօպրակն տանեմ ձեր տունն տամ, որ բանան և հայերի սանատն հանեն, աւատացի:

Աղա Մամինն և Հուշանկ աղէն եկան մեր տունն, սանտուղն բացինք, քեսան հանեցինք, տարի տունն, զրկեցի ներս, որ կնիկտ մօհրնքս տեսաւ, միրզա Սայիտն, և աղա Մամինն, և Հուշանկ աղէն և Ջմշիտի կու[շ]տն մօհր բացինք, հայերու սանատն հանեցինք, յետո քէսի գլուխն ես և քո կնիքն մօհրեցինք: Եւ քէսան պահեցին: Յետոյ էկա քո հրամանուց գիրն րեցինք: Եւ քէսան պահեցին: Յետոյ էկա քո հրամանուց գիրն յուրիշի կարգաւ տվի, որ այդպէս չէր գրած: Շուտ գնացի խալուրի շափառն տվի թէ՛ ինձ խաբեցին, իմ տօպրակն տվէք: Դ Ե (4—5) օր գնացի եկա, հազար զօրով տօպրակն առի, բերի տուն: Եւ գնացի շատ թահաի արի թէ՛ շափառի տանն տեսէք, որ այս քեսան զրկեմ: Չարին. մինչի այսօր որ այս նոր շափառն էկա և ինձ գիր չէյի զրկել, անճախ քէսան մօհրած իմ տվի շափառին պատրու կուշտն:

Ինդրեմ հրամանուցէտ, որ ինձ գրելիս գլուխն մօհրես, որ մարդ չիմանա թէ՛ ինչ գրեցիր:

Մին էլ հրամայեցիր թէ՛ ամեն օր գնա մեր տունն: Առէջ համիշա գնում էյի, որժամ այսպէս ինձ խաբեցին, այլ չեմ գնալ. լայն՞դ է որ ինձ խաբեն:

Եւ հրամայեցիր թէ՛ մինչի տասն թուման տունն խարչլուխ տամ: Միրզա՛, գլուխս քո ճանփին չեմ խնայել, բայց մին փող շունիմ, խիստ խեղճ մնացի, մին փող մեր թալպաներիցն շառաւ էս խանն. և քո հրամանիտ մեզ չեն կարել բօմակ անել,

ես էլ չեմ գիտել թէ ինչ անեմ:

Եւ թէ մեր աղի աճալն իմանաս, դեռ ևս Սպահան է այսօր  
Ե (5) ամիս է, որ աղիցն ինձ գիր չէ եկել. գրեցի թէ նայիպին  
վրա գրեցի, որ բանիս մուղայիթ լինի միրզա էհտիմա Դօլլին  
թալիղեն և դաւատտարի գրին մտիկ շանօղն յերբ քո գրին  
մտիկ կանէ. խնդրեմ որ աստուած քեզ մին դօվլաթ տա, որ  
մեք էլ ուրախանանք: Ի՞նչ անեմ, թէ այս ժամանակն մեր  
աղեն օրտուն լիներ, քեզ համար շատ լաւ էր. տեսնում եմ, որ  
քեզ համար սիրտ ցաւացնօղ բարեկամ չունիս. աստուած լինի  
քեզ բարեկամ և քո բանն բարին աջողէ: Էնչանք չը մեռնէյի,  
որ քեզ դին մին դօվլաթի մէջ տեսնէյի՝ որ կամիմ քեզ:  
Քիսային: Նոյեմբեր 22:

52ա || Այս միրզա Մօմինի նմրա 3 գիրն գրեցի իւր նմրա 2 գրի  
պատասխանն Ֆարսից բառօվն և ներքո գրին հետ միատեղ  
մօհրեցի և տվի պատրոն Բեռնարտոսին, որ գնէ իւր գրի մէջն  
և տա միրզա Մօմինին նօքար մելիք Մահանմատին, որ նա  
տանի Քիֆլիս, տայ վերո միրզա Մօմինին հանդերձ կարմիր  
քիսային: Նոյեմբեր 22:

Իմ բարեկամ Հուսէյնիտ:

1720 հոկտեմբերի 4. Քարվէզ:

Բազում ողջոյն մատուցանեմ հրամանուցա: Սիրելի, ես  
կարծէյի թէ դու գնաս տեղտ մեզ ամէն բանիցն իմաց կանես,  
էսչափ ժամանակ է որ գնացիր, իսկի մեզ մին էհուալ չը գրե-  
ցիր որ լսելինք և ուրախանայինք, չեմ գիտել թէ մեզ հետ սէրն  
ինչո՞ւ կտրեցիր: Դուն ողջ կացիր և մեզանից ձեր ամէն ծա-  
ռայից ողջոյն տաս: Ողջ լերուք, ամէն:

Այս գիրն վերո գրին հետ մօհրեցի որ Քիֆլիս տան միր-  
զա Մօմինի նօքար և մօհրտար սպահանցի աղա Հուսէյնին:  
Նոյեմբերի 22:

43. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓԻՆ (1721 հունվ. 14)

4բ || № 10. Ծերունի հօրտ և եղպօրտ մերո պարոն Յուսէփին

1721 յունվարի 14. Քարվէզ:

Քո հրամանուց համար 14 և դեկտեմբ [է] ըի 31 գրած գիրտ  
մեզ հասա յունվարի 13, որօվ ծանեաք մահն ժամաշէն Յա-  
կոբ Չէլէպուն. տէրն մեր Յիսուս Քրիստոս նորան մշտենչե-  
նաւոր հանգստութիւն պարգեւէ, ամէն:

Էս գրիցն յառաջ մին գիր գրել եմ համար 9 և տվել եմ  
պարոն Մանուկին, որ զրկէր հրամանուցա, մինչի այս գրիս  
հասնիլն, նա ևս հասած գնի: Ամէն էհուալն անգ գրեալ կայ  
վասն էհտիմա Դօլլին: Եւ Շահպանտա խանին սպաննելն ա-  
մենկին սուտ է, բանզի ոչ որ վնասեցաւ շահի բանակիցն.  
բացի էհտիմա Դօլլայէ: Պարոն մեծաւորն շահի կուշտն  
գնալն անպատեհ իմն է, բանզի ոչինչ չը կարէ շինել, թարց  
դեսպանաց. եթէ դեսպանք հաստատեն, էլ ի՞նչ պէտք է դո-  
րա գնալն:

Երկու նամակ [է] էկել պարոն Պառնաբասի ձեռն, որ պի-  
տի գայ շահին կուշտն բան շինելո, բանզի պարոն Քաթէոսն  
էկաւ Ղազպին, որ նոր թալիղայ առնու, գնա Սպահան, որ էլ-  
չութենեօվ գան Ղազպին: Այս բանն աստուծօվ գլնի մեծ պա-  
սին կամ վատկին, որօվհետև այսպէս ասա մեծաւորին, որ իւր  
ամէն կամքն գրէ պ[արոն] Պառնաբասին և զրկէ տեղս հան-  
դերձ իմ գրին, առաքեցից և ձեռն նոցա: Երկայայր, ի՞նչ օգուտ  
է նոր բաղամ հանելն, որօվհետև ունեցածներն իրանք կկոտ-  
րեն. այն մին բաղամն, որ ունէյին, ընդէ՞ր իրանք չը թողե-  
ցի, որ գնաց հայերու կուշտն մասլահաթ կանէր և նոցա եկե-  
5ա ղեցումն կթաղէր, ինչ որ բաղա [մ]ն գրած է, թող անէ, որժամ  
որ չը թողուն, այն ժամանակն || պիտի ձեռ վեր առաց: Յետոյ  
թէ գանգատ անեն, գիտեմ, պարոն մեծաւորին դիտաւորու-  
թէ գանգատ անեն, գիտեմ, պարոն մեծաւորին գիտաւորու-  
թիւն [ն] բարի է, բայց ոչ են արժան բարութեան: Այս երկրի

հայերն կարծեն թէ պատրոց յուժն պակսել են, վ[աս]ն այն մեզ հնազանդում են\* և իրանց ձեռի հրամանն իրեանք են կոտորում, այսպէս անելն լաւ չէ, այս քաղաքիս նման մին անօրէն տեղն ամէն կարգն սոքան են կատարում:

Աստուծոյ շնորհին մին տէր Վարդանէս անուամբ թարվիզեցի տէրտէր էկաւ մեր եկեղեցին, լաւ հաստատ ուղղափառութիւն է անում, ոչ օվ չը կարէ խոսել այն բազմամին ահուն, որ Մ (50) թուման ջառիմայ է գրած, գիտեմ որ մին սաւատն էլ տեղտ է: Ո՛հ, աստուած տար, որ ես տեղտ լինէյի. և յոյս ունիմ բազման ճանփա տանօղ պիտի, թուղտն զօրութիւն շունի, այսպէս իմանաս:

Եխպայր, վասն Արութիւն Չէլէպուն համար մին բան շինէ, խանին արզ արա, որ սրա վարպետութիւն քանց նրանն աւելի է, թէ գուզէ մին գրէ զրկէ տեղիս նայիպին վրա և մին իրղար էլ անէ, որ մինչի սրա դալն թէ այլն գայցէ, չը ընդունի, քանզի սա տեղես թէ լաւ թէ վատ տեղն տաքացուցել է, վեր կենա գայ տեղտ իր տնօվ և դայ ուրիշն կայնացնէ, սրա շատ վնաս գլնի: Այսպէս իմասցէս և այս կերպիւս խանին հասկացուր, թէ գլնի՝ շուտօվ ինձ գրես, ես կողարկեմ: Էլ լաւ գլնիր, թէ խանն մին շափառ զրկէր և շափառութէնօվ տանիր տեղիցս, յետո տունն ես կողարկէյի: Գրիս պատասխանն շուտօվ զրկես:

Ապովմսեհին և Մալխասին, նազարին միահաղոյն եխպայրց ողջոյն տացցես բանիւ իմօվ:

Որ եմ անպիտան և խոնարհագոյն ծառայ էլիյեսս Մուշեխանց:

Մելիքիսեթէս ընկալարուք ողջոյն:

Այս գիրն գրեցի իւր նմրա 13 գրի պատասխանն, և Ղաւամբարենց էրզրմցի ժամեշէն Արութիւնի գիրն միատեղ կրնբեցի և տվի թիֆլիսցի Հախավերտիուն, որ տանի Գանճան, տայ գանճայեցի տիրացու Յուսէփին: Յունվար 21:

Ապրիլ 12: Գանճայու մին գիր եկաւ շաթրօվ, էրզրմցի Շահանիցն ինձ հասաւ էրզրմցի Քիրիշի որդի Գալուստի ձեռնօվն՝ Գանճու խանին ասկար ժողովելն, որ գնալազկուն վրա:

(բ. 9ա)

44. ԹԱԴԵՈՍԻ ՆԱՍԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1721 հունվարի 9)

6ա || № 25. Մարտի 2 շահի բանակիցն մին գիր էկաւ պ[արոն] Թաթէոսիցն, լաթինեար գրած էր, որ թարգմանի այսպէս.

Իմ պատուէլի եղիաս

Առաջմէ հրամանուցտ ծանուցի, որ էլի շատ նեղութենօվ գալացուկ էյի բանակն նոր հրաման առնելու պարոն տիրոշն համար, որ կարօղ լինի հրօվարտակներ տալու շահին, որ նոր էկել է սրբազան փափիցն, իմփէրատօռիցն, ֆռանցէղ թագաւորիցն պարսից՝ թագաւորին համար, քանզի առաջի հրօվարտակքն, որ տվեց շահին, իրանն բան չունէր, որօվհետեւ հրամայեածն կտայր էլիտիմա Գօվլէն: Իմ երկրորդ դառնալս առ Սպահան այս բանն եղաւ, ես ասի թէ հերուան և այս տարուան հրօվարտակած, յեւթ պատասխանն ես կտանիմ Ֆռանկիստան, վասն այնորիկ ուռուսի դեսպանիցն գիր առի, որ ուռուսի ճանապ[ա]րհօվն գնամ, բայց առաւել գուզէյի, թէ հնար էր գնալ օսմանցու յերկրիցն, որ շիտակ Ալիկուռնա կամ Վանատիկ գնայի, որ լաւ գլնէր ինձ համար, որ յետո Հոսմայու յետ դառնալուց լէհու և ուռուսի յերկրիցն գայի Պարսիստան, քանզի թուրքաց յերկրիցն հետ և շուտ գլնէր:

Քո հրամանքտ մտածէ, թէ գուզե՞ս գալ ինձ հետ Ֆռանկիստան, և մտածէ թէ քեզ համար լաւ գլնի թէ ոչ, և թէ մարդ ճարես, որ ինձ համար գիր գրես Թէհրան լաթինեար կամ հայկաբ և քո կամքտ գրես ինձ: Ասացին, որ էկած շափաթ օրն ինձ ճանփու կու դնեն դէպի Սպահան, էս հրամանօվն գնամ Սպահան և յետ երեսուն ատր էլի գու գամ Թէհրան: Իմ և քո բանն աստուծոյ ապսպրէ, որ մեզ լոյս տայ:

6բ Աստուծոյ փառք կու տամ, որ պարոն || և դուն ինձ եղար: Մուսիու Պօռէկարն մեծ զատկին ճանփուցն գու գա Սպահան: Կազաշեմ հրամանուցտ, որ մուղիաթ լինիս իմ տանն վրա, որ է Երեւան, քո անուամբտ գրես Անթոնին, որ լավ պահէ իմ բաներն և ինձնից գրես պարոն Թորոսին, որ լավ պահէ իմ գա-

\* Հավանական է գրչական սխալ է և պիտի լինի «հնազանդում չեն»:

տերն, պալքի կարենամ ոչ էս տարի գալ և նստիլ տունն իմ,  
վասն այնորիկ քեզ կաղաչեմ որ լաւ մուղիաթ լինիս որ քեզ  
ասի: Իմ թուրն դրի Թարուէզ վրացի Գաֆտէլի կուշտն, կաղա-  
չեմ մուղիաթ լինիս, որ չը կորցնէ, քեզ աստուծոյ\* ապսպրեցի  
և քո աղօթքիս մէջն ինձ չը մոռանաս:

Վերապատուելի պատրի քափուցիններուն բարև:

Եւ քո սիրով ծառայ [արոն] Յուսէս Թաթէոս Քուշիսկի  
Յիսուսեան: Եղև Թէհրան քաղաքն. 1721, հունվարի 9:

\* «աստուծոյ» կրկնված է:

45. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԳԱԲՐԻԵԼԻՆՍՔԻ<sup>20</sup> (1721 մարտի 13)

№ 1. Սիրելի և հաւատարիմ եխպօրտ իմ Գաբրելիս

1721 մարտ 13. Թ [ա] ռվէզ:

Ընկալա քո հրամանուց գրեալ համար առաջներորդ  
գիրտ յունվարի 27 ձեռամբ Գաֆտելին, զոր գրեալ էր դեկ-  
տ [ե] մբ [ե] ըի 25՝ ոչ սակաւ ուրախութիւն եղև մեզ, զի գտար  
հաւատարիմ ի բանս քո:

Վասն այդմ իրի խնդրեցիր փութով պատասխանել, սա-  
կայն մինչի այժմ չը գտաք մարդ հաւատարիմ, որ բերեալ  
հասուցանէր գիրն մեր առ ծառայութիւն եխպօրտ, վասն այն  
յամեցաք: Թէպէտ կամքն մեր այսպէս իսկ էր, զոր բերան առ  
բերան խօսեցաք, բայց ոչ եղև || քստ խորհրդո մերո, քանզի  
կարծէաք թէ՛ մինչև ցայժմ Պալիօզն գուր\*, բայց ոչ եկն, զի ոչ  
գիտեմ զինչ եղև, քանզի կամքն մեր այն էր, թէ աղին գալն  
ի բաց մեք գանք այտ ի տեսութիւն եխպայրց, մանաւանդ մեր  
բանին համար, որովհետև ոչ եղև, կամք տեսնոն օրհնեալ եղի-  
ցի: Զի ես սպասեմ աղին գալստեանն, մինչև որ աղէն տեղս  
չը գայ, ես ոչ կարեմ գալ, որովհետև որ ոչ գիտեմ ժամանակ  
գալստեան իմո:

Խնդրեմ հրամանուցէտ, որ ոչ ումեք խօսք տացցես, մա-  
նաւանդ այն անունն, որ գրել ես, թող լինի այլում, եթէ տէրն  
կամեսցի մեր էկած ժամանակն զմեզ ևս ոչ առնէ անտես:

Ողջոյն տացցես բանիւ իմ հոգևոր հարցն և միահամուռ  
ուղղադաւան ժողովրդոց, զի աղօթեսցեն վասն իմ թերևս յա-  
ջողեսցի Յիսուան միածին և առաքեսցէ զիս ի ծառայութեան  
ձերո:

Ամենախոնարհ ծառայիցն ծառա-

էլիյաս Մուշեխանց

\* «զու գայր» իմաստով:

46. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓԻՆՆ<sup>21</sup> (1721 մարտի 23)

№ 12. Պատուելի եկապօրտ մերո պ[ա]ր[ո]ն Յուսէփիս

1721 մարտ 23. Քարվէզ:

7բ Ընկալա գրեանքն մարտ 15, զոր գրեալ էր փետրվար 21 և մարտ մին հանդերձ Միզանտարի գրերին: Կնքեալ առի և ետու ժամաշէն Արութինին, և նաչ պատասխանեց ձեզ շաթ-րօվ մարտ 20, և կսպասէ նորա պատասխանոյն, վասն որո փութօվ ողարկէք յայսր պատասխանն գրոյն նորա և կամ թէ որպէս խորհիք հետ պ[ա]րոն Շահանին || և զրկած երկու գիրտ հասաւ մեզ զափանցի Գրիգոր[ի] ձեռօվն: Երկնչի թէ Թիֆլիսու մեծաւորի գիրն յուշ լինի, քանզի նոքա շահի բանակումն շատ շեն մնալ, միթէ աստուած տաչ, որ շուտօվ զան գրեանքն, թէպէտ պարոն տէրն դեռ ևս ոչ է եկեալ, կարծեմ թէ զատիկն տեղն պիտի լինի: Եւ շահն ևս կամի դառնալ և գալ Սուլթանիս: Ապրաներու Պետրոս Մարտիրոս եպիսկոպոսն փոխեցաւ առ Քրիստոս փետրվարի 25: Օսմանցու էլլուն հետ զրկում են Արտաշիլու խանին տղան, որ երթա առ հունքարն վասն դեսպանութեան: Եւ այլ այնպէս մին խապար չը կա տեղրս ծանուցանելու հրամանուցտ:

Սիրելի, կարի տազն[ա]պի սիրտն իմ տեսանել սիրելի զի ոչ գիտեմ երբ եղիցի: Նազելի հայրտ իմ, սիրօվ համբուրել, աղեկիզեալ սիրտն իմ տեսանել, զի ոչ գիտեմ զժամանակն երբ գայցէ. աղօթեա առ Քրիստոս, որ այնքան յերկարէ կեանքըն մեր, մինչ որ տեսայց զպարտուելիտ և փափագ սրբտիս զօփացուցիչ:

Սիրօվ ողջոյն տաս բանիս իմօվ հոգևոր և պատուելի հարցն մերոց և սիրելի պարոն Մալխասին, պարոն Շահանին, հարիւրապետ Սիմոնին և յիսնապետ Ֆահրաթին, պարոն Ապտուլ Մսէհ բէկին, և եխպայր Նազարին և այլ ամենայն ուղղադաւան եխպայրց ընկալցեն ընդունակ: Եւ աղերսեմ յի-

շատակել ի մաքրափալ աղօթից ձերոց, միթէ տէր Յիսուս յաջողեսցէ զբանս նախ հոգևոր, յետո մարմնաւոր բանն:

Սառա Էլիասիոս Մուշեխանց:

Այս գիրն գրեցի իւր նմրա 14 գրի պատասխանն և տվի թոխաթեցի Քաշիշօղլի Պաղտա [սա]րի որդի Մէլքիսեթին, որ նաչ տվեց զանճայեցի իփակչոց, որ նոքա տանին Գանճա, տան գանճայեցի տիրացու Յուսէփին:  
Մարտ 28:

47. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԼԱԳԱՐԴԻՆ՝ (1721 ապրիլի 2)

№ 1. Վերապատուելի պատրի Լակառտիտ օրհնեալ յաջն  
համբուրեմ հանդերձ ողջունիւ

1721 ապրիլ 2. թ [ա]րվէզ:

Քո հրամանքտ մին քանի խօսք գրել էլիր պատրու գրու-  
մըն, մեզ ասաց, շնորհակալ եմ հրամանոցէտ: Եք քո հրա-  
մանքտ թողութիւն շնորհեա, որ շուտով չը կարացի պատաս-  
խանել, քանզի շատ տրտում եմ վասն մուսի Պօռէկարին բա-  
նին համար, վասն որո խնդրեմ քո հրամանուցէն, որ այս  
գիրն քեզ հասածին պէս, ինկլիս քափիտանիցն լաւ ստուգա-  
պէս տեղեկանաս՝ թէ այս յերկիրն գու գա՞յ կամ թէ ոչ, որ  
ես անոր գորա ֆիքր քաշեմ, շունքի մին տարի և կ [է]ս է,  
քանի գնացել է, հանապազ ինձ գրում է թէ՛ գու գա. այժմ  
գնաց Հալապ, իսկի խապար շունիմ, մնացել եմ առանց օգ-  
նականի, խարչ եմ անում, փող շունիմ, շունքի պարտականե-  
րիցն մին փող չեմ կարել առնուլ, թէ յելնեմ, գնամ, այս տանն  
իքմիններն ո՞ւմ տամ, քանզի շունիմ հրաման: Եւ մինչև ցայ-  
սօր հաւատարմաբար ծառայեցի, այժմ ոչ կարեմ անիրաւութիւն  
անել, || թէ մնամ, այլ այլ ոչ կարեմ համբերել, քանզի բա-  
զում նեղութիւն են տալիս ինձ տեղիս հայերն, զերա տես-  
նում են, որ ուստեքէ օգնութիւն չէ գալիս:

Հայր սուրբ, ամէն բան մի ըստ միոչէ գրել չի լինիլ, ես  
քիչ գրեցի, դուն շատ իմանաս, չեմ գիտել թէ ինկլիս քափի-  
տանն գիտէ՞ որ ես տեղս եմ, թէ ոչ: Որովհետև այսպէս է,  
խնդրեմ հրամանուցէտ, որ այս խօսքերս վրա ֆիքր քաշես և  
ինկլիս քափիթանիցն յիմանաս և շուտով ինձ գրես, ամմա իմ  
բերանովն մի հարցանել, այլ թէ դուն մեղանից կհարցնես:  
Եւ շնորբ անես ֆռանկսիզներին բանին համար գրես թէ՛ ա-  
տուծով հաստատ կլինի բանն, թէ ոչ, որովհետև պ [արոն]  
Մունիէրն ինձ գրեց թէ այսուհետև քո հայրն պ [արոն] կա-

կառտն է, վասն որով վստահացա ծանուցանել հրամանուցտ  
գիմ որպիսութիւն: Եւ մեզ աղօթից ոչ մոռանաս:

Ծառա էլիաս Աստուածատուրեան Մուշեխանց:

Այս գիրն գրեցի և տվի Աւաք նօթարին, որ տա պատրուն  
և տան Այվազ շաթրին թարվիզեցո, որ տանի Սպահան տա  
ֆռանցեզ պ [արոն] կակառտին: Ապրիլ 2:

48. ՊՈՌԵԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ ՀԱԼԵՊԻՑ (1721 փետ. 20)

№ 28 (17). Ապրիլի 11 էկաւ այս գիրն ձալապա վերո իմ գրե-  
րու պատասխանն մին շաթրով, որ գրած էր փետրվարի 20, որ  
թարգմանի այսպէս.

Երկու օր կա, որ էս գիրն ինձ ղրկեցիր, ինձ հասաւ Ֆրանս-  
սիղի ձեռովն, և Սպահանա ղրկած գրերտ միատեղ ինձ հասաւ,  
ուրախացանք լսելով որ էն վրդովմունքն եղաւ Պարսիստան,  
քանզի յուս ունիմ, որ թագաւորութիւնն էլ լաւ գլնի և յոյս  
ունիմ մեր ճանաչ միբղա Մօմինին բանն էլ յառաջ կգնա: Թէ  
Թարվիղա մեծութիւնն տան, եկածին պէս մին ընծայ կու տաս  
նրա, որպէս իւրեանն արժան է, յետոյ կաղաչես նրան, որ ինչ  
մեզ տալու է, շուտով տայ:

Ֆրանսիղն ինձ ասաց թէ՛ նրանն խան արին Շամախու:  
Թէ որ այսպէս է, մին փայեկ բռնես, ղրկես Շամախի: Ինձ-  
նից բարև մատուցանելույն յետ, գրես թէ՛ ես յետ 20 աւուր  
Հալ[ա]պա գելնեմ, գու գամ Թարվէզ: Յետոյ նրա կաղաչես,  
որ մեր պարտն տայ, որ այտ փողն գտնում Թարվէզ հասա-  
ծիս պէս:

Ինձնից ողջոյն կու տաս մղտսի Սարքսին և նրան կասես  
թէ՛ ես շատ տրտում եմ, որ մինչև ցայժմ նրան փողն չը հա-  
սաւ, շնորք արա մինչի այժմ համբերելն, ևս շնորք անէ փոքր  
միուս ևս համբերէ:

Տբ || Լալ կանես՝ թէ ինչ որ փող քեզ՝ կհասնի նրան, տաս և այն-  
պէս անես, մինչև որ ես գամ, որ նրան փողն իրան հասնի ա-  
ռաչի փողիցն, որ կառնումք:

Քեզ կապսպրեմ, թէ չը տրտմիս էն խօսքերիցն, որ մեր  
թշնամիքն քեզ կասեն. ժամանակ գտնվի, որ նրանք փոշիման  
լինին, համ[էլ] այսպէս բանին համար փոքր համբերութիւն  
պիտի:

Էլի քեզ կասեմ, թէ թախիխ 20 աւուր յետև տեղիցս գել-

\* «քեզ» կրկնված է:

նեմ պ[արոն] Մունիերին հետ էրղրմա համար: Էս գիրն որ  
քեզ կհասնի, ինձ գրես մղտսի Ղազարին վրա, որ գտնում էր-  
ղրում հասծիս պէս, որ իմանամ ինչ խապար կա մեր տեղտ:

Նրանք որ մեզ տալու են, իմացնես թէ շուտով գու գամ,  
թէ շանեն, ինչպէս պիտի, ես կանեմ: Բայց դաւի շանես, մինչի  
ես գամ:

Մալին, որ գու գա Թարվէզ, դաստուր տվի, և վարձն  
տվի, շիտակ գիմանաս թէ հետն որչանք փող բերեց: Ինձանից  
շատ բարև կանես պ[արոն] Բեռնարտոսին, պարոն Յովհան-  
նէսին, մուսի Պօսօնին:

Ալէփ. 20 փետրվարի 1721:

Մառա Պօռէկար:

49. ՊՈՌՌԵԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ՝ ՀԱԼԵՊԻՑ (1721 մարտի 13)

29 (18). Ապրիլ 11. մին գիր էկաւ աղիցն Հալապա վերո Ֆռանսիզ շաթրովն, որ թարգմանի այսպէս.

Մին քանի օր կայ, որ քեզ գիր գրեցի, ապսպրեցի Ղազարին, հիմի Ֆռանսիզով էս գիրն քեզ կը գրեմ, որ յիմանաս, որ շկարացի յեղնել: Էն գրովն, որ քեզ գրեցի, անճախ կեղնեմ զատկէն յետ, պարոն Մուներին հետ:

Մինչի իմ գալն քեզ կապսպրեմ, որչափ որ կարես\*, այն փողն, որ մեզ տալու են, առնես առանց տաւա: Թէ կու տան, լաւ կանես թէ Խ (40) թումանի տիֆտիկ առնուս և իստակես ինչպես տեսար, որ ես արի:

9ա || Զը մոռանաս միրզա Մօմին գրես և ինծանից բարե գրես և շնորհօք աղաչես, որ մեր տալուքն տա:

Զորս գամի ինկլիսիցն էկաւ լօնտոս, դարայ ղուրղուշուն և փոքր ծաղիկ բերին, լինի թէ էկաւ, այլվի էս ապրանքներն թանկ է, քանզի Ֆռանկիստան էլ թանկ է, ֆռանսիզներին գումբանիայն շատ տեղ ափեցին և շատ կանեն:

Եւ Սպահանիցն մեզ գիր էկաւ, թէ նաւ էկաւ Փունթիշերումն, որ տեղերն ափեն, որ ֆռանսիզներին է:

Եւ շատ բարե կանես պարոն մեծաւորին և իւր յընկերին, մղտսի Սարքսին և մեր բարեկամներին:

Հալապ, 13 մարտ 1721, հին տօմար

Մտոս Հօնօնէ Պօնէկար:

\* Բնագրում «կարեմ»:

50. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀԱԿՈՒՎ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ (ապրիլի 13)

№ 7. Վերապատուելի սուրբ հայր Յակոբ վարդապետիտ օրինեալ յաջն համբուրեմք հանդերձ ողջունիւ

1721 ապրիլ 13. Թ [ա] լվէզ:

Նամակ օրհնութեան քո ընկալա մարտ 4, որ գրեալ էջիր փետրվար 3, որով հրամայեցիր ծառայիս թէ՛ Ասլանին ապրանքն ղրկէ: Այսպէս պատասխանեմ հրամանա, որ Ասլանին ունեցածն մեր աղային կուշտն է, թէպէտ տեղս էլ ուներ, բայց այլոց վրայ, որ դժուարաւ բուսուցանել զլնի, ի հասանիլ գրոյլս մեր աղա Պալիօզիցն յուզես՝ թէ որ տվեց, լաւ է, թէ որ խարճին պակաս լինի, կարէ ոչ տալ, մնա, և ինձ գրես, ես տեղս ամենայն հասապն տեսնում աղին հետ և կողարկեմ հրամանուցտ:

9բ Խնդրեմ հրամանուցէտ, որ լաւն ընդունելութիւն անես աղին մեր տանն մէջն, և աղէն որ գայ մեր տունն, մարդ նրանից յերես չը պահէ՝ թէ աղչիկ, թէ կին, իբրև զիս խնամ տանին, այնպէս համարին, թէ՛ ես եկեալ եմ. թէ օտարականի նման համարին, նրան սիրտն կվիրաւորի, քանզի || աղէն իւր սրտումն այնպես տպաւորեալ ունի, թե մեք նորա եմք և նայ մեզ, վասն այնորիկ ծանուցի՝ հրամանուցտ, որ պատուիրելով պատուիրես մեծի և փոքու:

Եւ ողջոյն մատուցանես բանիւ իմ եխայր Արուսիին, և զայս ասես աղին մտած օրիցն մինչի յելած օրն ամէն ծառայութիւնն ինքն անէ հաւատարմաբար և չը թողու այլ արկանեն դձեռս նոցա, և որչափ որ նրա բարեարութիւն կարօզ է անել, արասցէ, համարի թէ ինձ է արել, եթէ իցէ երկիւղ ինչ հայիլ ի նայ, մի արասցէ, քանզի ոչ կամիմ վնաս բարեկամաց իմոց, այլ բարեկամութիւն կամիմ սիրելեացտ:

Մտոսյ էլիյաս Մուշեխանց

51. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՌՏՈՒՄԻՆ (1721 ապրիլի 15)

10ա || № 40 (28). Իմ պատուելի և ազա մուսիու Պոռտուգալիսին

1721 ապրիլ 15. Ք[ար]վէզ:

Աղայ, քո հրամանուց առաջի գրած փետրվ[ա]րի 20 և մարտ 13-ի գրած գիրտ առի միատեղ ապրիլի 11: Միրզա Մոմինի բաներն սուտ էլաւ. մինչև ցայժմ Քիֆլիս է, մին երկու անգամ վալին արզ արաւ, մին բան շէլաւ, բայց այսօր հինգ օր է, որ նրա Ջիմշիտ զուլն թալիղա տարաւ Քիֆլիս միրզա Մոմինին համար, որ գայ և գնա օրտուն, քանզի շահն յուզել էր, պալքի քո հրամանքտ նրան տեսնուս տեղտ:

Տեղս Մղտսուն մատուցի բարեն քո. չը համբերէ, ինչ անէ, նայ էլ տեսնում է, որ չեմ կարել պարտքերն բուսուցանել: Իմաց կանեմ պարտատէրներուն, բայց ոչ կը հաւատան, թէ գու գաս, Մալին դեռ ևս չէ էկել:

Աղա, հրամայեցիր թէ՛ տաւա շանես. տավաջով չը կարացի առնուլ, առանց տաւա երբ կարեմ առնուլ: Շատ անգամ հրամայեցիր թէ՛ տֆտիկ առնում, բայց փող չունէյի, թէ լինէր, կառնէյի առանց քո գրելոյտ, քանզի ոչ մոռացա բերանօվտ ապսպրելտ:

Տեղս լեզակի քալլայն 16 թուման էլաւ, թէ կարես առնուլ, բերես, շահ կանէ, թէ չը կարես առնուլ, մարդու շասես գինն:

Մեր տֆտիկն, որ Ղազարն զրկել էր Հաննայի հօրն վրայ, մեր բարեկամներն ստուգեցին թէ՛ իրան վատ տվտիկն խառնել է մեր տվտիկին հետ, վասն այն էժան է ծախել: Թէ կամիս գրել Հալապ, որ նրան թանապէհն անեն և աւելի փողն առնեն:

Եւ խօճա Հաննան, որ տեղտ է, մեր Ղազարէն 80 մառչիլ աւել է առել, քանզի նրա [ն] տալու էր ԸՃ (800) մառչիլ, տվեց, շառաւ և անիրաւաբար աւելի սառֆ հեսապ արաւ և պ[ա]րաթ արաւ Հալապ:

Ահա մղտսի Սարգիսն գու գա տեղտ, քեզ իմաց կանեմ, որ շաւատաս, մեր բարեկամ չէ, և ոչ ումեք խորհուրդտ շայտնես, մինչև որ բարօվ տեսնում քո յերեստ և բերանօվ պատմեմ ամէն մարդու արարմունքն, յիմանալով զարմանաս և ոչ պ[ա]տուես նոցա, քանզի ոչ են արժանի պատուու: Եւ քեզ 10բ կասեն թէ՛ այսինչ այնինչ մարդու յընծա տուր, չը տաս, || որ կորուստ կը լինի, (այսպէս ասողաց պատասխան կու տաս թէ՛ Այժմ լաւ գատ չունիմ, համ խարճիս պակաս է, գնամ թարվէզ և կողարկեմ լաւ գատեր, գուզեն թէ քու փողօվտ այլոց լաւ մարդ դառնան. թողութիւն շնորհես, թէ հաճոյ թի, կատ [ա]րես, թէ ոչ՝ կամքն քոնն է)\*: Քանզի Ղօնտաղչի Արուսթիւն [ից]\*\* մեզ լաւ բարեկամ չը կա, նրա [ն] ապսպրեցի, որ քո ամէն ծառայութիւնն տեսնու և նայ յօժար է առ ի ծառայել հրամանուցտ:

Եթէ զիս քեզ փոքր եխպօր տեղ կամիս ընդունիլ, մեր տունն համարիս իբր քոնն, զոր ինչ րր կարէյիբ առնել քու տանն, հրամայես մերոց, քանզի՛ պատրաստ են ծառայել, եթէ ոչ անես, այնպէս գիմանամ որ զիս չես ընդուներ զթիւ պաշտօնէյից: Որչափ որ պաշտօնեայ քեզ պէտք լինի, առնուս Արզրումա, քանզի տեղտ շուտ կճարվի. լինի թէ թարվէզոց հոտն քո դռնիցն կտրվի:

Վալուն գնաց 60 000 մարթօվ լազկուն վրա, որ կոտորէր շահն րազամ զրկեց թէ՛ դառնայ: Յետ դառնալոյն լազկին էկաւ Շամախի Մէյսարու զեղն, տարաւ 300 մարդօվ: Յետնէ գնաց Հուսէյին խանին տղան, կոտրվեցաւ և վիրաւոր դարձաւ:

Էսօր խապար էկաւ թէ՛ Մահմատ Ալի խանն բռնեցին: Շահն ուզում է գնայ Սպահան: Օսմանցու էլչին մօտերս պիտի գա տեղս Արզրումու համար:

Աստուծոյ կարողութեամբն զիմացա մինչև ցայժմ և կղիմանամ մինչև որ գաս: Եօթանասուն լիար ավտիկ ունէյի, մղտսին սապապ եղաւ, որ չը ծախելի կամ զրկելի, հանապազ ասում էր՝ իմ բեռին հետ կղրկեմ, ես կտանիմ, հիմի չը բերեց, վախեմ ցեց յընկնի: Ակար մղտսուն տեղտ փող տալու լինիս, զապղ առ, որ զրա հեսապն ես տեսնում տեղս:

Մինչև ցայսօր մարդից փող չը կարացի առնուլ, քեզ

\* Փակագիծը բնագրինն է:

\*\* «Արուսթիւն» անունը կրկնված է.

գրածներինցս յետև անձախ կառնէլի, որ խարճուիլ լինէր և  
այլ կսպասէ գալստեան քո:

Ամենախոնարհ ծառայից ծառա էլիաս Մուշեխանց:

Այս գիրն գրեցի, ներքո գրին հետ մօճրեցի և տվի Խա-  
լաֆին մայիսի 6, հայկար գրեցի իւր նմրա 29 գրի պատաս-  
խանն:

52. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՌԵԿԱՐԻՆ (1721 մայիսի 6)

11ա || Իմ պատուելի և աղա մուսիու Պօռէկարիւ

1721 մայիսի 6. Խլիջան:

Քո գրերու պատասխանն գրեցի, որ պիտի զրկէլի մղտաի  
Սարքսին հետ ֆռանցիլ լեզուաւ, բայց ոչ եղև վասն իմ ծօւլա-  
ցեալ մեղացն, քանզի ապրիլի 15 օրն, շափաթ արև ծագածէն  
յետ երկու սահաթ, մինչ դեռ ժամն կայնած էլինք, սաստիք  
շարժեցաւ և բլաւ քաղաքն ամէն. քո սուրբ աղօթիւն զհրձա  
անվնաս: Մեր եկեղեցումն միայն հողի տակն մեռաւ Կոս-  
տանն, պ[արոն] Օհաննէան վիրաւորուեցաւ, քանզի պատարաք  
կմատուցանէր: Աստ անտեղի էր պատմել, բայց ասեմ թէ՛ մե-  
ռան ՔՃՌ (200 000) հոգի և ոչ մնաց ամենեկին շինուացք մի,  
որ ոչ բլաւ և մնացողքն ցրուեցան ամէն. գիրս բերօղն պատ-  
մելոց է<sup>23</sup>:

Ապրիլ 16 պատրիքն և մուսի Տուֆրէնն ցգեցին ամէն  
տուն և գնացին Սպահան: Ես մնացի անձարակ և միայն Ղա-  
զարն բերին իմ կուշտն. ինչ որ հողի տակիցն կարացի հա-  
նել, վեր առի, ապրիլի 21 եկի Խլիճան Նաղու տունն, շատրօվ  
նստած եմ պաղն: Վասն այն այս տղան զրկեցի, հրամա-  
նուցն, զոր ինչ խօսք ունին, հայկար գրել տան պ[արոն] Մու-  
նիերին, որ իմանամ:

Մղտրսի Սարգիսն և Մովսէսն յելին ապրիլի 18, որ գան  
էրզրմ: Այս տղան ինքն զուզէր գալ և ես զրկեցի, որ ծառայելով  
հետո գա: Եւ երկու օր առաջ զրկես, որ մեք յիմանամք: Եւ  
քո հրամանքտ էլ կարես, որ գաս տեղս. նոր յուզում են նորո-  
գել քաղաքն: Չի, աւելի կարես, բեր, որ մեզ բաւական լինի:

Պատրու տունն թալանեցին և հանեցին ամէն ապրանքն  
և տարան հայք և սարվաններն: Աստուծոյ փառք, վաճառա-  
կաններինցն միայն թէ երեք-չորս մարդ զայ եղաւ, մնացեալն  
ամէն յելին և վախան: Մեր բաներն կորաւ: Գաֆտելն և Մա-  
մաջանն էլ փախան, գնացին, անձախ առի 14 հազար դի[ա]ն

փող, որ խարճի արի ապրանք հանելու: Այս էլ իմ մեղացէն  
եղաւ: Քո գլուխն սաղ լինի, ինչ անեմք, տանն զատերն, ա-  
մէնն, ինչ որ հանեցի, բերի գեղ. ես և Ղազարն նստած եմք և  
կապասեմք գալստեան քո:

Ղազարն, Նաղին և Ալին յոյժ սիրով ողջուն կմատուցա-  
նեն հրամանուցս:

11բ Օսմանցու էլլին էկաւ, Անախաթու գեղն նստաւ մայիս  
մինումն, յետ երեք աւուր կամի վան գնալ, քանզի վանեցի յէ:  
Ազա թողութիւն շնորհէ, աւելի || բան չը կարացի գրել, քանզի  
տրամութենէս գլուխս խելք չը կար: Ընկալ և ընդունել այս  
դուզնաքեա քարտեզս:

Ի տրուպ ծառայիս ծառ[ա] էլիաս Ա[ստուա] ծատուրեան:

Այս գիրն գրեցի և վերոյ գրին հետ կնքեցի և տվի Խլի-  
ջանցի Խուտապաղչի որդի Խալաֆին, որ տանի էրզր[ու]մ,  
տայ իմ աղա մուսիու Պօռէկարին կամ էրզրմցի ղօնտաղչի  
Արութինին: Մայիս 6:

53. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ (1721 մայիսի 6)

11բ. || № 18. Սիրելի եխպայր Արութինիս

1721 մայիս 6. Խլիջան:

Սիրելի եխ[պ]այր, շունիմ ժամանակ ամէն խօսք գրել,  
բայց քո եխպայրն և Արութին[ն] զերծան այս պատուհասէն,  
աստուծոյ փառք:

Տեսնամ քեզ թէ ի՞նչպէս լաւ ընդունելութիւն կանես մեր  
աղին: Եւ իմ գրած գիրն ասէ, որ պատրուն կարգալ տայ: Թէ  
պատրին տեղտ չը լինի, դուն առանձին կարգաս և որ թէ կա-  
մի, պատասխանն գրես դուն:

Եւ այս գիր բերող տղան մեր նօքարն է, տունն մեր նստի,  
մինչի աղէն գայ, լաւ պատուեն: Աստուած մի արասցէ, թէ որ  
դեռ ևս աղէն էկած չի լինի, կամ թէ յոյս չը կայ գալու, կամ  
թէ էլի Պաղտատա ճանփօվն յետ դառցած լինի, մեզ յիմաց-  
նես, թէ ոչ՝ այս տղան տունն պահեն, մինչև որ աղէն գայ: Եւ  
խօճա Հաննա որ Ղազրէն Զ (80) դուռ առել է, առանձին  
պատմես աղին:

Եւ մեզ հարցանողաց, մանաւանդ պ[արոն] Մունիերին  
ողջոյն տաս ինձանից և Ղազարիցն: Եւ այլ մեզ աղօթից չը  
մոռանաք, որ ապագայիցն աստուած ամենայնի փրկէ:

Մտառայ էլիասն Մուշեխանց:

Այս գիրն գրեցի, և վերո գրի մէջն գրի և տվի Խալաֆին,  
որ տանի էրզրմ տա էրզրմցի ղօնտաղչի Արթինին: Մայիս 6:

54. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՎՍԵՍԻՆ (1721 իուլիսի 6)

13բ || № 17 (49). Սիրելի եկապորտ խոյ պարոն Մովսէսիս

1721 յուլիս 6. ի գիտուն հլիջան:

Քո գրած նմրա 75 առանց թիւ գիրտ մայիսի 31 մեզ հասաւ: Այսօր էլ տեղս մին թարվիզեցի երէց էկաւ քեզանից բարև բերեց. էր շէյիր մին գիր գրել, քանի որ ան սային ղրկել էմ, մինչի այս կէտս մին խապար չէ եկել և ոչ գիտեմ թէ սային առողջ մտաւ էրզրմ, թէ ոչ: Անցեալ օրերս ֆրանսիզն քաղաքիցն էկաւ, ինձ խապար բերեց ասելով թէ՝ էրզրմ յենկիշարիք եկին տեղս, ասին թէ՝ աղէն Ժ (10) օր էք, որ էրզրմ դախլ էր եղել որ մեք յելանք, չեմ գիտել թէ ղօրթ ասաց, թէ սուտ: Հալպաթ դուն էլ տեղանքտ մին լաւ խապար առնուս, մեզ գրես: Լսեցի թէ դուն սայի ես ղրկել, չիմացանք ինչ պատճառ է և այն քու ղրկած սային, որ գու գայ, ամէն էհուալըն մեզ գրես: Ապրիլի 25 Հալպա աղէն ինձ մին գիր գրել էր թէ՝ առաւօտն գելնում, այնուհետև էլ աղիցն ինձ խապար չէ էկել:

Հին ինքմիներս յորն կորաւ, յորն ասոր անոր տվի, դուն ողջ կացիր, նորն կորէ, մի հոքալ, աստուած մեծ է և իւր ողորմութիւն շատ: Դուն՝ Օրտվար, մղտսին՝ նախշուան շատ կմնա՞ք, կամ թէ ի՞նչ բանի մնացիք՝ մի ըստ միոչէ մեզ շուտով գրես թարվէզ օթուրաղ մանչերուն վրան, նրանք ինձ կհասուցանեն: Դուն տեղտ ճանփու վրայ ես, պիտի որ քանց ինձ լաւ խապար առնուք, հալպաթ ինչ խապար որ լսէք, ինձ գիր պակաս շանես: Մղտսին տուն է՞ր չը գնաց, պատճառն ի՞նչ է:

Մին վալանտիզի շաթր էկաւ Հալպա, ասաց թէ՝ աղէն Անթապ տեսա, բերանով ապսպրել էր թէ՝ գնա նազրին ասա թէ՝ պարխանան աղրուղն կթողում ես և Օվանէսն սալթ գու գամ

Թարվէզ, որ մինչի պարխանին գալն թարվէզու բանն տեսնում: Այսօր 2 ամիս և 9 օր է, որ այն շաթրն աղին՝ \* Անթապ է; ա թողել, չեմ գիտել թէ գլխուն ինչ էկաւ, մին գալօղ ալ չը կայ էրզրմայ, որ շիտակ խապար յիմանամք, մնացել էմ տարակուսաց, մին շիտակ խապար կնայիմ, որ ասոր գօրա ֆիքը քաշեմ:

Այս գիրս մին լաւ էխտիպարի մարդու յետ ղրկես Գանձայ: Նօքար շունիմ, թէ Մելքիսէթի գրած թոխաթցի տղան տեղտ լինի, նա ղրկես, և այլ ողջ լեր ի փառս Յիսուսի:

Մառայիցն ծառա էլիաս Մուշեխանց:

Այս գիրն գրեցի յուլիս 6 և ներքո գրերիս հետ մօհրեցի և տվի խլիջանցի Քովսարին, որ տանի թարվէզ տայ Հայրումի որդի Մուքայիլին, որ նայ ղրկէ Օրտուար և (տա) եխպայ(ր) Մովսէսին յուլիս 6, նոր [ա] 75 գրի պատասխանն:

\* «աղին» կրկնված է:

55. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓԻՆ (1721 հուլիսի 6)

14բ || № 1. Պատուելի սուրբ հայր պ[արոն] Յուսէփ Մարիայիտ օրհնեալ յաջն համբուրեմք հանդերձ ողջունիւ

1721 յուլիս 6. ի գիտուն հլիջան:

Ընկալ[ա] նամակ օրհնութեան սուրբ հօրտ մերո յուլիս 9, զորն գրեալ էր յունիս 12, որով հրամայեցիր ծառայիս ծանուցանել նաւերու և մեր որպիսութիւնն:

Այն նաւերուն ուրախութիւնն, որ արարինք, մեր սարքարի նաւերն են, բայց աստուծով հաստատուն լինելոց է ֆռանկսիզների գումփանիայն, քանզի հէրվանից 3 նաւ յելել է Ֆռանցայու, զնացել է Հինտիստան, որ անտի զան Բանտար: Յետ նորա 9 նաւ կո[ւ] ի ևս զալոց են վասն պարսից թագաւորին օգնութեան, ստուգիւ գիտեմ որ այսպէս է: Աստուծով, այս նաւերս հարկիւ պիտի գան աշնան ժամանակիս:

Մուսիու Պօռէկարին ճանապարհին մտիկ եմ, որ գայ, Աստուծով, այս քանի օրումս պիտի գայ տեղս, քանզի Բ (2) ամիս և 11 օր է այսօր, որ Հալապա յելել է: Մինչև որ տեղս չը գա, մեր բանն մին կողմ լինելն չեմք գիտել, քանզի պիտի գայ տեղս և զնայ Սպահան, յետ նորա տեսնումք թէ՛ մեզ ի՞նչ տեղ ողարկելոց են: Բայց իմ խորհուրդն է, որ խնդրեմ քափիտանէն, որ մին պալիօզ զրկէ Գանձա, թէ ոչ զիս ողարկեն տեղտ: Այս է իմ կամքն վաղուց, եթէ աստուած կամի կատարել, բարի է:

Հայր սուրբ, մի՞թէ ժամաշէն պարոն Արուսիս ձեր հրամանուցն չը պատմեց թէ՛ մեք այս գիտլը մնացել եմք մինչի մուսիու պօռէկարի գալն, նայ գիտակ էր: Հայր սուրբ, ծառայս շատ ջանացի տեղտ գալու, բայց ոչ եղև այնպէս. առաւել կարօտ եմ Գանձայու, քան թէ հայրենեաց իմոց. միթէ տէր Յիսուս աղօթիւ քօվ կատարեսցէ կամքն մեր, ևս առաւել ձեր հրամանուցն եղիցի, ամէն:

Ողջոյն մատուցանէ սիրով պ[արոն] Անդրէյին և պ[արոն] Հերմոնիոսին:

Ամենախոնարհ ծառայիցն ծա[ռա] էլիասն Մուշխանց:

15ա || Այս գիրն գրեցի յուլիսի 7, վերո գրերի հետ կնքեցի, որ զնա Գանձա, հասնի վանքին մեծաւոր պ[արոն] Յուսէփ Մարիայի ձեռն. յուլիս 7, իւր նմրա 1 գրի պատասխանն:

№ 1. Պատուելի հայր պ[արոն] Բեռնարտոսիս

1721 յուլիս 9. Ի գիւղն Խլիջան:

Քո հրամանքս ինձ մին գիր դրկել էյիր ֆռանցուզի ձեռն, ինձ հասաւ յունիս 8: Կարացի ոչ հրամայածտ կատարել, քանզի մինակ եմ: Թող թէ մինակութիւնս, մինչի ձեր գիրն հասնիլն, ամէն իքմինն հանել և տարել էին. ոչ թէ միայն ապրանքն, այլ և փայ[տ]ն և քարն ևս քանտում են և տանում: Ճշմարիտն ասեմ թէ՛ այն լօթիներուն, և այն քո գիտեցած հայերուն և դիւանբէկուն մինչև որ մին լաւ թամպէ՛հ շանէք, ո՛չ կարեք ապրանքն առնուլ և ո՛չ կարեք գալ և բնակիլ այսր:

16ա եւ մուսիու || Դուֆրէն մին գիր գրեցին և կրկին վէքիլ արինք շար վարդանն, որ տանն մնացած իքմիններին ևս մուղիաթ լինի, այնուհետև Ե (5) մեծ գիրք և 4—5 փոքր գիրք ինձ հասան, որ կշտիս պահում եմ: Ամէն խօսքն գրել պէթք չէ, Քրիստոսի խօսք Թարվիզու համար չէ՝ «Բարի արարէք ատելեաց ձերոց». Մ (50) տարի է, որ բարի կանէք և վատութիւն կձարէք: Թէ զուզէք Թարվէզ նո[ր]ից կրկնապատիկ շարին շար հատուցէք, կամքն ձերն է, այնուհետև օգուտն ձեր զուք գիտէք: Մուսիու Պօռէկարն այս մին քանի օրումս գու գայ, այսօր խապար էկաւ: Քաղաքի է՛հուալն այս է, որ շինում են, ամէն մարդ իւր տունն շինում են:

Ողջոյն կու տամ պ[արոն] Զանապատիստին, պ[արոն] Լակառտին և պ[արոն] Թաթէոսին:

Վերո պատուելոյտ ամենախոնարհ ծառա էլիջեաս Մուշեղանց:

Այս գիրն գրեցի յուլիսի 9 իւր նմրա 1 գրի պատասխանն և վերո պ[արոն] Թաթէոսի գիրն, և մուսի Դօֆրէնի գիրն, և Հալպա էկած մուսի Կառտանի գիրն, և պ[արոն] Բեռնարտոսին համար գրած գրերն միատեղ կնքեցի և տվի իմ հօրախպօր որդի Ղազարին, որ տանի Սպահան, տայ Թարվիզու յառաջնորդ պ[արոն] Բեռնարտոսին: Յուլիս 10:

17ա || 14. Սիրելի պարոն Յովսէփիս

1921 սեպտեմբերի 14. Սակզապատ գեղն:

Գիտութիւն լիցի հրամանուցտ, որ մուսիու Պուղարն Հալպայ էկաւ Թարվէզ, շուն որ բնակելու տեղ չը կար, ինձ հետն վեր առաւ, գնում եմք Սպահան, որ նոր հումքօլ ինձ ողարկեն Թարվէզ:

Էստու յառաջ ամէն որպիսութիւն ձեզ գրել եմ, Թարվիզու եկող համատանեցուցն առնուք, մեր յեւած օրն նայ էլ յեւլաւ Թարվիզու գէպի Գանճա: Ձեր գրերու պատասխանն գրել էյի շատուց, բէրօղ չէղաւ, յետո տվի այն համատանցիներուն, առնուա:

Պատրուն շատ բարև արայ: Շուտօլ մին գիր հասուցանէ մուսիու Գառտանին, քանի որ տեղն եմ:

Աչքերտ լուս, 4 նալ յէլաւ ֆռանսիզներուն համար, 4 էլ յետո գալացուք է, աստուծով, շատ և շատ լաւ զինի մեր բաներն: Մեք էլ ինկլիսներիցն յեւանք, գնում եմք մուսի Գառտանի տունն, որ ֆռանսիզի գումբանիցն լինիմք:

Բաւ է, զի էյի ճանապարհորդ:

Ողջոյն եխպայրց: Յիշեցէք մեզ ի մէջ սուրբ աղօթից ձերոց վասն աջողութեան ծառա էլիասիս: Մածուկ լինի այս խօսքերն մէջ եխպայրց:

Գրեցի, մօհրեցի և տվի գանճայեցի ներքի մահլացի Հախվերտի ջլօվտարին, որ տանի Գանճա տայ տիրացու Յուսէփին:

\* «Յովսէփին» անունը կրկնված է:

58. ՀՈՎՍԵՓԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ՝ ԳԱՆՁԱԿԻՑ  
(1721 նոյեմբերի 6)

Մեծագունեղի և սիրելի եղբորդ իմոյ Էլիասի

1721 նոյեմբեր 6. Գանջա:

Հետ բազում ողջունի, յայտարարութիւն լիցի վեհանձնութեան շի քում, զի նոմոսն քո, որ ի Սուկղա պատրեաւ եհաս, և պատասխանն նորին իսկոյն ծրեալ եղև ի մէնջ և ի մեծաւորաց տեղոյս: Եւ որ հրամայեալ էիր թէ՛ մեծաւորն ինչ կամք և զիտաւորութիւն որ ունի, գրէ. մինչդեռ ես Իսպահան եմ, ահա ամենայն որպիսութիւն գրեցաք և յղեցաք ի ձեռամբ զաման ջլովդարին, որ է եղբայր պօրբչի Ալի Մարդանին, զոր և պատուիրել եմ որ հասուցանէ՛ հրամանուցդ և պատասխանն բերցէ: Եւ ևս մէկ լաւ շէջմակ եմ ապսպրել, որ պարտիս չղել:

Մին էլ գրել եմ զուլուղիդ թէ՛ որովհետև ձեր հրամանոց զամքն եկեալ են, ևս զալոց են, եթէ ապրանքն էժան լինի և շատ և թէ լիցի հնար կամ ուղարկելու տեղս, կամ թէ խապար անես, որ տեղեացս մարդ զրկեմք տեղդ, որ փոքր ինչ ապրանք զրկէք տեղս, որ ծախվի, մայէն ձերն, թէ մին Բ գրամ շահ լինի ձեր զովլաթէն մեղ, և թէ չէ՛ հնար, մնայ:

Ապա այժմոյս մեր պարոն Մարգարէն, որ է մղղէսի Յովսէփի եղբոր ներսէսի թոռն, որ կարծեմ հրամանքդ լաւ ջանաչես, որ ի տղայութեան Իզմիր, Իստամբուլ շատ սաֆար ունի, և լաւ սուր հեռապէ վասն վաճառականութեան կողմանէ, լաւ կարդացող և հմուտ ռազամի, այսինքն համարողութեան արհեստի, նաև մեր մեծաւորացն յոյժ սիրելի և բարեկամ. և յոյժ հաւատարիմ, յամենայն ժամ կու գա մեծաւորաց մօտն, սէր շատ է, բայց վերջն աստուած բարի արասցէ: Սա մին Բ տարի յառաջ Պարդայ դուքան ունէր, ճոթ կու ծախէր, լազկին յանկարծ եկաւ, Պարդայ չափմիշ արաւ, քուլլի ապրանքն տարաւ սորայ. գիտես որ տեղս էնպէս դաւվաթուր մարդ չկա, որ մարդոյ քումագ անէ փողով. մին էլ չէ թէ իսպառ դատարկ է, էլվի քո հրամանոց զովլաթէն ունի լաւ մահլայ, Դ Դ

պաղէր, բալբի Ե 2 ճաղացնէր. մին երկու, նհայեաթ ձեռացն, քուլլի սարմայճայ ունէ, որ յառաջին նուազին, բանացնէ, ապա որովհետև բանդ այդ բազում անգամ ասացեալ էյի թէ՛ տեղս բալբոզ պիտի գայ, կամ հրամանոց զրի ահվալն որ թէ՛ գամիք էն եկել որ պիտի այլուհետև ֆրանկ թագաւորին մարդն դադիմի նստի Իսպահան: Սորա լսելով բան հանդիպեց, որ պիտի փոքր ինչ արբիշումով գա դէպ Քաշան: Բայց երկու մեծաւոր պագրի Յովսէփն առանձին, ասաց թէ՛ այսպէս խորհուրդ ունիմ գնալոյ, բալբի ճանապարհս ընկնէ Իսպահան, ևս գնամ, մէկ մատն թուղթ տաս, որ տեղն ցոյց տամ: Թէ որ տեղեացն մարդ լինի գալոյ դեղս դանդայ նոցունց վաքել լինիմ այեշվէրիշին: Եւ այլն պատրին թուղթ գրեց սենեօր մուսու Բուլեղարին վերայ, այս զորս գրեցի: Այժմոյս խնդրիմ ի բէն, որ ի հասանելն դորայ առ քեզ՝ եթէ թարվէզ, եթէ Իսպահան պատրոյ գիրն հասուցանես սինեօր մուսի Բուլեղարին, եթէ հնար է՛ մին փարայ ապրանք մայեայ տայ դորայ՝ թէ թարվէզ կու նստէ, թէ կու գայ տեղս, մաթլապ որ իւր ձեռաց տակն լինի, բօլաքիմ մէկ հոգի գտնուի: Եթէ հաջոյ լիցի՛ բարի և թէ չհաջիք՝ կամք ձերն լիցի:

Եւ ևս խնդրեմ, մեծաւորաց բանին մուղայեաթ լինել և զմեղ աղօթից մի մօտանալ, զի ես եմ ծառայ մշտնջենական Յովսէփ Եսայեան:

59. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԳԱԼՈՒՍԻՆ (1721 նոյեմբերի 8)

2. Իմ սիրելի պարոն Գալուստ

1721 նոյեմբ [ե]րի 8. Սպահան:

Այսու ծանուցանեմ հրամանուցտ, որ հոկտեմբերի 9 մտինք Սպահան և իշինք տունն ֆռանսիդ էլչուն: Առմու էլած օրից մինչի այսօր հիւանդ եմ: Մին քանի օր շատ տկարութիւն քաշեցի, յետոյ, աստուծով, լաւ եմ. թէպէտ ոտից վրայ եմ, բայց այնքան չեմ լաւացել, բայց եխպայրց աղօթիւն վերջս բարի է, հոգս մի քաշել:

Քո հրամանուց գրած նմրա 1 գիրտ ժամանեաց առ մեզ նոյեմբ [ե]րի 7 նոր տօմարին, շնորհակալ եմ քո հրամանուցէտ. ո՛չ թէ միայն ես, այլ ևս աղէն առաքէ բազում ողջոյն: Ամմայ չը գրեցիր մեզ թէ սանդուղքն կնքեցի՞ր թէ ոչ, կամ թէ ամէնն ածեցիր մին տուն և դուռն կնքեցի՞ր թէ ոչ:

Պատրոց բանին համար, որ գրել ես, չի լինիլ որ դարտակ, առանց գրի և հրամանաց գան: Էլչին փոքր բան ունի, պրծնու, որ նրանց բանն շինէ: Շատ չի քաշել, իմ բանն կտեսնու  
18ա || նուն յետ սակաւուց, հետս կբերեմ պատրիքն, փոքր համբերեցէք:

Գինուն համար, որ գրել ես, թուրքմանու մին գիր գրեցի և տվի Իսմի խանին, որ նայ տար թարվէզ Մուքայելին: Եւ էն գրումն գրեցի Մուքայելին թէ: էն կարաս և կէս գինին ծախէ, որ քացախ չը դառնայ և նրա փողովն նոր քցէ, չեմ գիտել թէ գիրն նրան հասա՞ւ, թէ չէ, թէ որ հասաւ, է՞ր շարաս: Ինչպես գրեցի, թի որ գիրն չէ հասել, ինձ յիմացնես: Կէս կարաս գինին խմեց ներսէսն, պէլքի կարծեց, թէ ես էլ թարվիզ չեմ գալ. գու գամ աստուծով և լաւ գու գամ:

Լեղակիցն ձեռ քաշեցէք, որ շատ կայ տեղս, սովտայ են դնում: Մաղիկն յառաջ 12 թումանով էր ծախուել, հիմի իչաւ 9 թուման, առնող չը կայ: Լօնտա շատ կայ ինկլիսներին, ամմայ թարվէզ չեն զրկել, զերա թարվիզու ձեռ վեր առին, որ

վէքիլ չը զրկեն: Լօնտոի ալիշվերիշ արէք, ամմա շատ մէջ մտնուլ, զէրա երկու կամ երեք ամսէն յետ երկու նալ պիտի ելնու ֆռանսիդիցն: Եւ էս գիրն մին լաւ մարդու ձեռով զրկես պ [արոն] Մունէրին: Եւ այլ տեղիտ էհուալիցն մեզ գրես: Եւ այս շաթրին ինչ որ կու տաս, իմ հետսպն գրէ: Եւ այս գիրն նշանց տաս, իմ ախպէր Մովսէսին, որ նայ էլ կարդայ: Ասհուվան՝ ԳՌ (3000) դին: Թէ որ Մովսէսն էկած լինի, ներսէսի տղան բերէ կշտին պահէ և կարդացնէ: Իրիցուն շատ բարև արայ, որ շուտով իմ պատկերս նորոգէ, որ ոչ մոռանամ վարձըն տալ:

Խնդրեմ աղօթել վասն մեղաւոր և յետնեալ ծառայ էլիաս Մուշխանց:

Մեզ հարցանող եխպայրց մատոյ բազում ողջոյն:

Այս գիրն գրեցի իւր նմրայ մին գրի պատասխանն, ներքոյ գրերն և աղին գրած 2 գիրն Մովսէսին և Շահանին վրայ, և մուսի Գառտանի գրած պարոն Մունէրին վրայ, և էրզրմու էկած 2 գիրն իմ ախպէր Մովսէսին համար և մին գիր Քուշի Չախալին համար, այս 9 գիրն միատեղ մօհրեցի և տվի Սպահանցի Գարատաղ մահալցի Նահաֆի որդի Աամպար շաթրին, որ նայ տանի թարվէզ, տայ էրզրմցի Քիրիշի որդի պարոն Գալուստին կամ իմ Մովսէսին, կամ էրզրմցի պարոն Չախալ Սաֆարին: Նոյեմբ [ե]րի 10:

3. Փետրվարի 12: Մին գիր էկաւ թարվէզու շաթր Նահաֆի որդի Աամպարի ձեռովն իմ նմրա 2 գրիս պատասխանն ուռուսին լազկին շարթելն և անգ բերթ շինելն և այլն:  
(թ. 20ա)

տին կամ եկապար իմ պարոն Մօլլախին. եթէ ես ոչ իցեմ Քարվէզ, նորա առաքեն Սպահան իմ ձեռն: Երբէք ոչ մոռանամ հրամանքտ, և դու ևս մի մոռացիս:

Մտռայ էլիասն Մուշեխանց:

Այս գիրն գրեցի իւր նմրա 11 գրի պատասխանն, դրի վերո Գալուատի գրի մէջն, որ նայ զրկէ էրզրմ պարոն Մուշեխին կամ պարոն Ղազարին: Կնքեցի և մօհրեցի նոյեմբ[ե]րի 10:

60. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՒՆԻԵՐ ԼԵՈՆԱՐԴԻՆ (1721 նոյեմ. 8)

10. Իմ պատուելի Մունիէր Լեոնարդոսիտ

1721 նոյեմբ[ե]ր 8. Սպահան:

Սիրելի սուրբ հայր, քո հրամանուց գրած առանց թիւ գիրտ մեզ հասաւ նոյեմբ[ե]րի 7, որով իմացուցիր իմ պակասութիւն, որ չը գրեցի հրամանուցտ: Իրաւի մեղայ, բայց խնդրեմ ներումն շնորհես պակասութեանս:

էն ժԴ (14) զուռուշն, որ մուսի Դուֆրենն ավեց Ղազարին, որ տայ քու հրամանուցտ, թէ որ մուսի Դուֆրենի գրերն շաթրով զրկեցիր, || Հալապ, նայ առնուա մեր Ղազարիցն: Էն ժԴ (14) զուռուշն թէ որ քարվանսով ես զրկել գրերն Հալապ, էն եմ (5000) զինն առես Ղազարէն որ դարձուցանէ առ մեզ, որ մեր հատուցանեմք մուսի Դուֆրենին:

Եւ մեր հասանք Սպահան հոկտեմբերի 9 և իշանք տունն մուսի քոնսուլին և յոյս ունիմ, որ զիս շուտով դարցուցանեն Քարվէզ: Փոքր տկարութիւն քաշեցի, բայց այժմ լաւ եմ, աստուծոյ փառք քոյին սուրբ և մաքուր աղօթիւն: Գիտեմ ջաֆատ և նեղութիւնտ շատ է, բայց Յիսուսի սիրտ համար է: Հետս կը բերեմ պարոն Դուվանն, որ նեղութիւնակից լինի հրամանոցտ: Էն ի՞նչ մարդ է, որ մուսի Գառտանն քեզ գրեց և ինձանից հարցուց անունն, ես չէյի գիտել, խնդրեմ, որ նրա խնդրած մարդու անունն ինձ գրես և ինձ ապսպրես մուսիու Գառտանին: Քանզի 5 տարի է, որ աշխատեցայ մուսիու Պօռէկարին համար, ամէն ունեցածս դրի նրա բանին վրայ և շահեցար ոչինչ. փոխանակ շահի և օգտութեան, գտայ բազում նեղութիւն և վիշտ, մանաւանդ նախատինք և եղէ տեղի ծաղերձ: Լինի թէ այս նեղութիւնս և վշտիս վերջն լինի բարի, որպէս պատմէ քեզ բերանօք պարոն Ղազարն:

Եւ ինչ որ գրեցի հրամանուցտ, մի՛ ումեք ասել: Եւ պատասխան գրոյս առաքես Քարվէզ Քիրիշցոնց պարոն Գալուա-

28. Իմ հայր պարոն Ղապարիս

1722 յունվար 2. Սպահան, նոր տօմարիւ:

Քո հրամանուց տեպտեմբ[ե]րի գրած գիրտ մեզ հասաւ պ[արոն] Հերմոնիմոսի ձեռովն դեկտեմբ[ե]րի 23. ինչ որ գրել էյիր, այնպէս չէր: Բայց նոր գնաց [ի] շահի կուշտն, դեռ խօսք բացել չեմ, մեր բաներն դեռ ևս ոչինչ չեղաւ, քանզի չորս գին թշնամին պատել է, շահն շատ տրտում է նախարարիքն հանդերձ:

Եւ ապրանքի համար որ գրել ես, ինչ որ լսեցի, սուտ էլաւ, դեռ ոչ նավ և ոչ ապրանք է յեղել, յոյս ունին թէ մարտի ամսոյ գելնի, գիտելին աստուած է:

19ա Խնդրեցիր, որ իմ ամէն բանն քեզ գրեմ: Այժմ ոչ գոչ մին այնպիսի կատարեալ բան, որ ծանուցանեմ, կսպասեմք || նաւերուն, յետ նրա զոր ինչ կերպ լինելն ծանուցանելոց եմք:

Անանիա Չէլէպունմէ խապար առինք, մինչի գատիկն տեղս գլնի հանդերձ Սարգիս Չէլէպէի, բարեկամաց նոցա տացցես ուրախութեան ողջոյն: Եւ ձեր ամէն որպէսութիւնիցն և պ[արոն] Մունիէրի որպէսութեանիցն շուտով գրէք Քարվէզ և անտի Սպահան: Եւ թէ պ[արոն] Մունիէրն տեղտ իցէ՝ ողջոյնս ս[ի]րոյ մատուցանես: Պիտի գրէյի պարոն Մունիէրին, ամմայ չեմ գիտել ի՞նչ տեղ է, քանզի վատ խօսք լսեցինք տեղս: Եւ քու գրել տված խօսքերտ գրել տաս պարոն Մունիէրին, այս քու Երևանայ պատրուն վրայ և մէկեկներին էլ որ քեզ սաել եմ:

Ամենայն մեզ հարցանողաց եխպայրց ողջոյն մատուցանես, մանաւանդ ծնող մայր նանայիս և մօրքուրիս, զի ոչ մուսանան աղօթել վասն խոնարհ և յետնեալ ծառայ էլիասին:

№ 3. Իմ սիրելի պարոն Գալուստ

1722 յունվար 3. Սպահան:

Քո հրամանուց գրած համար 2 գիրտ հասաւ մեզ նոյեմբ[ե]ր 18 պատի շաթր Մահմուտի ձեռովն: Շատ շնորհակալ եղէ հրամանուցէս, որ ամէն ապրանաց գինն գրեցիր, լաւ էր թէ ձոթինն ևս գրէյիր, քանզի ամէն մին ժամանակի գինն կփոխվի, թէպէտ այժմ էտ բաները չը կայ, բայց լինելոց է ձեռն մեր աստուծով: Աժտար կոթ դանակներն, որ յուզել ես, չիմանամ՝ թէ դանակն հետն լինի, թէ միայն կոթն, աստուծով, ես գալիս կբերեմ:

Եւ թէ իմ որպիսութիւն հարցանես, այսօր ուզեմ գալ, գու գամ, բայց պատճառ շատ կայ, ամէն բան գրել չի լինիլ, քեզ պատմելոց եմ բերանով, բայց ուրախ լեր, աստուծով, իմ բանն լաւ գլնի:

19բ Հալպաթ էրզրմու և տեղիտ որպիսութի [ւն] իցն, Մօլսէսիցն, մղտսի Սարգսիցն և Մէլքսէթի և Մինասի էհուալիցն գիր պակաս շանես: 2 թուման որ տվել էյիր պատրուն, էկած օրիցըն յետ 8 աւուր մեզ տվեց, և քեզ շատ ողջոյն ունի, ամմա քեզ || կապսպրեմ, որ մին էլ այդպէս բան չանես:

Մին չոկ լուլայ գիր եմ տվել այս շաթրին, քեզ՝ վրա եմ գրել, առնուս և տաս միրզա Մուսիինն այս գրիս միչի գրովն, թէ ոչ իցէ տեղտ, տաս Հուշանկ աղին կամ աղայ Գահիրին, որ չը կորցի: Եւ այս գրիս մէջն ապսպրեցինք որ քեզ լաւ մուղիաթ լինի: Եւ թէ քեզ գիր տայ, քու ձեռովն ղրկես մեզ, ամա խապարտար կաց, որ թէ քեզանից փող ուզեն, տաս ոչ:

Նաղին առանց հրամանաց փախաւ մեզանից, նրա ամէն որպէսութիւնիցն մեզ գրես: Թէ մեզանից խապար առնու կամ թէ յուրիշներն, ասես թէ շուտով գու գայ էլիասն հանդերձ մուհասիլիս: Իրաւի է, որ թէ յուզենամ, շուտով գու գամ, ամ-

մա ուզում եմ փոքր տաքն յընկնի. ինչպէս և իցէ, աստուծով,  
նարուզին տեղտ գլնիմ:

Խլիջանցի Քօվարիցն հարցանես Նաղու էհուալն, շուն որ  
նայ էն գեղն է, ամէն բանն լաւ գիտէ և քեզ կասէ: Խապար-  
տար լինիս, որ տանն եղած ապրանքն դայ շանէ և փախչի:

Այն բու պատրուն տված փողտ տվի Անապատցի Եղիաշի  
որդի պարոն Սողոմոնին, առնուս. սրանք էլ ջրօրհնէնքն կա-  
նեն և գելնուն, մեր պատրիքն էլ այս քարվանին հետ գու զան  
հանդերձ այլ ուրիշ պատրիներով:

Ինչպէս յառաջ գրել եմ քեզ, այժմ ևս յիմաց կանեմ, որ  
ծաղիկն տեղս յիշաւ մինչի 7 թուման, էլ առնօղ չը կար, հի-  
միկա փոքր առնու մին 7½ մինչի 8 թուման: Եւ լեղակիցն ձեռ  
քաշէ, առաջմէ յերես շունէր, հիմիկա մին ինկիլիսի նաւ յելաւ,  
800 հակ լեղակ ունի, յետքն աստուած գիտէ: Եւ ինչ որ գրեմ  
քեզ, նշանց տաս Մօվսէսին և այլ մարդու չը յայտնես:

Նաղուն ինձանից բարեւարայ, ասայ ֆիքր շանէ և իւր բա-  
նին լաւ մուղիաթ լինի, և մղտսի Սարքսին փողն տայ մինչի  
են գամ: Եւ այլ ամէն բարեկամաց սիրով ողջոյն մատուցա-  
նես ի բերանէ:

Յետնեալ ծառայ էլիասէն:

Այս գիրն գրեցի իւր նմրա 2 գրի պատասխանն, մեր գրած  
միրզա Մումինի գիրն, վերո աղին գրած Հալապայ 4 գիրն,  
Գանձայու գրերն և պ[արոն] Հերոնիմոսի գիրն, և Գուզտա-  
պ[ա]ն Մօվսէսի գիրն, որ մուսիու Պօռէկարն ինձ գրել տվեց,  
այս ամէնն մօհրեցի միատեղ և տվի շաթր էքպարին, որ տա-  
նի թարվէղ տայ պարոն Գալուստին: Գնքեցի յունվարի 13,  
և միուս միրզա Մումինն համար գրած կլօլակ գիրն շոկ վրան  
գրեցի Գալուստին, որ նայ հասուցանէ միրզա Մումինին:

63. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԳԱԼՈՒՍՏԻՆ (1722 մարտի 23)

Սիրելի եխպայր պարոն Գալուստ

1722 մարտ 23. Սպահան:

Առաջ քան զայս գրեցի հրամանուցտ շաթր Մահմուտի  
որդի էքպարի ձեռովն և զրկեցի հրամանուցտ հանդերձ այլ  
գրիուք, գիտեմ այժմ հասած գլնի: Գեկտեմբ[ե]րի 8 գրած  
համար 3 գիրտ մեզ հասաւ փետրվարի 12 նոր տօմարիւ, և  
փետրվարի 4 գրած համար 4 գիրդ մեզ հասաւ այս թղթա-  
բեր շաթրօվս մարտի 21: Բազում շնորհակալ եմ հրամանու-  
ցէտ, որ տեղիտ ամէն որպիսութիւն մեզ գիմացնես: Բայց  
ինդրեմ ևս, որ յիմացնես թէ՛ պարոն Մունիէրն էրզրում է՞,  
թէ ոչ, և մեր Մօվսէսիցն մին խօսք չը գրեցիր՝ թէ ի՞նչ տեղ է:

Պատրիներն տեղիցս վեր կացան փետրվարի 23, ձեզ շատ  
մխիթարութիւն գլնի: Բայց մեր մխիթարութիւն փոխեցաւ  
տրտմութեան, քանզի Միրվէլիսի որդի Մահմուտն 5—6 Ռ-  
(5 000—6 000) մարդով էկաւ<sup>24</sup>, Սպահանու երեք աղած հե-  
ռու նստաւ: Յելին քաղաքէս ամենայն օմարէք և որչափ որ  
ձեռիցն բան եկօղ որ կային, ասացին թէ՛ մինչի 2 Ռ (80 000)  
մարդ, թէ կէսն սուտ լինի, շիտակ՝ 40 Ռ (40 000) ընտիր մարդ-  
կանց կային<sup>25</sup>, Մարտի 8<sup>26</sup>, յետ կէս աւուր կովեցան, ոչ կարա-  
ցին դիմանալ: ॥ Կոտորումն մեծ եղև պարսից, փախան, մի-  
այն թէ Ղուլլար աղասին 5—6 Ճ (500—600) մարդով դիմա-  
ցաւ և սպաննեցաւ<sup>27</sup>: Մնաց 24 թօփ, 30 բեռ արճիճ, և հրա-  
փող, և այլ ամէն զանծ, վրան և ամէն իբմինն ի ձեռին ա-  
ղուանից: Քուչաբանտ արարին քաղաքն, նստան: Մարտի 10,  
հանեց\* շահն իւր մեծ որդին, անունն Ապաս միրզայ, որ իւ-  
րեան տեղն նայիպութիւն անէ: Տեսան, որ շատ զօրեղ և հզօր  
էր, մարտի 12 կրկին դրին ներս: Մարտի 15 հանեց միուս  
որդին՝ քան զայն մի տարով փոքր, անունն Սէֆի Միրզայ՝ ոչ

\* «հանեց» կրկնված է:

Թէ շահ է, այլ թէ փոխանորդ շահին: Այս փոխանորդ Սէֆն Միրզաս մարտի 18 յեկաւ, օրտուն զարկեց Չարպաղն և նստաւ, որ սան տեսնու, կրկին գնա կռիւ: Բայց յերկնչին և կսպասեն թէ շուտով հասանին զօրքն իւրեանց առ ի օգնութիւն տալ և մինչև ցայսօր ոչ ոք էկաւ օգնել քաղաքիս: Այս մարտի 19, ինքրն Մահմուտն, ամենայն զօրօք էկաւ մտաւ Ֆարապատ և Ջուղայ և նստան անդ: Եւ նեղեն Ջուղայու եղեալ քրիստոնէյիցն<sup>28</sup>: Բայց Ջուղայու միշի եղեալ ամէն պատրիքն եկին քաղաք առաջ քան աղուանից գալն, միայն թէ մնացին Ջուղայու մէջին պ[արոն] Թաթէոսին և պ[արոն] Ֆիլիպն: Ոչ ոք կարէ Ջուղայու գալ քաղաք և քաղաքէս գնալ Ջուղա: Եւ մենք ոչ կարենք յելանել քաղաքէս. մնացինք աստ, մինչ որ տէր աստուած օգնէ պարսից և հալածեն թշնամիս իւրեանց, այնուհետև թէ տեսնումք մեր բանն: Երկալարք, աղօթեցէք առ աստուած, որ մեզ ազատէ այս կրակիս միշին: Գրելով ոչ բաւի, այլ եթէ տէրն կամեսցի ազատել զմեզ, բերանով պատմեցից զամենայն անցանքն:

Պատրոց և եղպայրց ամենից սիրով ողջոյն մատոյ, և պատասխան թղթիս և ամենայն տեղիս որպիսութեանիցն գրես շուտով Մառա էլիասիս:

Աղէս քեզ և ամէն բարեկամաց ողջոյն մատուցանէ: Այս խապարս, որ քեզ կհասնի, գրես էրզրմ, քանզի մեր ձեռն չը հասաւ:

Այս գիրս գրեցի իւր համար 3 և 4 գրի պատասխանն, կնքեցի մարտի 23 և տվի վերո Տուխուրղանցի Մահմատին Ահմատջանի որդի, որ այժմ թարվէզ Սրխապի մահլէն կկենա, որ նայ տանի թարվէզ տայ վերո Գալուստին:

20ա || Յունվարի 6 մին գիր էկաւ վերո էրզրմցի Թորոսի որդի Սարգսիցն իւր որպիսութիւնն և նեղութեան մէջ լինելն, և գրել է թէ լսեցինք, որ ասում են թէ հայոց եկեղեցին ողջ մնաց և ֆռանկացն բլաւ իրանց վրայ: Եւ խնդրել է, որ գրեմ որպէս լինելն և քանի մի խօսք գրել է Պեկլարի որդի պարոն Մինասին համար:

64. ԵՂԻԱՅԻ ՆԱՍՍԱԿՐ ՂԱԶԱՐԻՆ (1722 մարտի 31)

21ա || Իմ հոգևոր հայր պարոն Ղազ[ա]րիս

1722 մարտ 31. Սպ[ա]հան:

Գիտութիւն լիցի, քանի որ Սպահան եկել եմ, գրեցի մին երկու գիր թարվէզ Գալուստին վրա, որ նա հասուցանէր հրամանոցս. գիտեմ որ հասել են: Եւ քեզանից իսկի մին գիր շառի նոցա պատասխանն, միայն թէ՛ մին գիր որ գրեցիր, էլ չի պատրի Հերոնիմոսի ձեռովն Երևանա:

Իմ թարվեզու փողերուն համար բանն շինվում էր մօտերբս, որ պիտի գայի, բայց աստուած չը կամեցաւ, քանզի Մերվէյսի որդի Մահմուտն էկաւ Քիրման, կողոպտեց և անցեալ էկաւ յնզտ, նմին նման կողոպտեց: Եւ այս լսելով ոչ առաջեցին ազգն պարսից ընդդէմ աղուանից, մինչոր աղուանք եկին Սպահանա վերա, 3 աղաճ հեռու նստան: Մարտի 3 յելին քաղաքէս ամենայն զօրքն պարսից, էհտիմալ Դօվլէն և ամենայն օմարէք, մինչ զի ոչ ոք մնաց Սպահան զօրաց պարսից, մինչ որ քաղաքացիք եկին պահել շահի դուռն պահպանութիւն գիշերո, և յաւել եկին գեղականք հետևակաց և ժողովեցան եզր քաղաքին, ամենեքեանն՝ մինչև զի ՁՌ (80.000) աստանց: Եւ գնացին աղուանից վրայ մարտի 8: Յետ կէս աւուր պատերազմեցան, և կոտորվեցաւ ազգն պարսից, եղեն փախըստական, և լի ամօթով եկին և մտին քաղաք գիշերով և կապեցին ճանապարհն քաղաքին և նստան: Իսկ աղուանք օրըստօրէ թալանելով գեղերն, հասաւ Ջուղայ մարտի 17: Ոչ կարեմ պատմութիւն յերկարել թէ ի՞նչ պատահեցաւ Ջուղայու, զի անտեղի է աստ: Եւ թողեց ոմանց զօրացն Ջուղայու մէջն և ինքն գնաց նստաւ Ֆահրապատ: Երկու-երեք օրն մին անգամ գեղնեն դէմադէմ եզր գետուն, և կու տան պատերազմ միմեանց: Ամէն պատերազմի առաւել աշողութիւն գլնի աղուանից զօրացն, քան թէ պարսից: Անկաւ թանկութիւն: Եւ ոչ

կարեմք յելանել քաղաքէս, և ոչ կարեմք տեկել, և մնալ, և տե-  
սանել և լսել ողորմելի նեղութիւն Զուղայու: Բայց առաջ քան  
Մահմուտի գալն, ամէն Զուղայու միշի եղեալ պատրիքն փա-  
խուցինք, բերինք քաղաք<sup>29</sup>: Եւ այսպէս մնացինք և կսպասեմք  
որ օգնութիւն գայ շուտով պարսից, որ կոտորեն աղուանից:  
21բ || Միթէ տէրն կամեսցէ և լինի այնպէս: Եւ այլ ամենայն երկա-  
րապատում խօսքերն զիմանաք այս թղթաբեր շաթր Այվա-  
ցիդն: Երբ որ տէրն մերժի այս մեծ փորձութիւնն, շուտով գու-  
գամ թարվէզ:

Շահն հանեց իւր որդին, որ փոխանորդ լինի ինքեան, յետ  
միոյ աւուր գրին ներս, և հանեցին միուսն: Յետ քանի աւուր  
ինչ սայ ևս գրին ներս, և հանեցին միուս որդին, որոյ անունն  
է Քահմազ միրզա, որ այժմ բանակեալ և նստեալ կայ Չար-  
պաղումն, որ [ոչ] թէ թագաւոր է, այլ փոխանորդ թագաւո-  
րին: Բաւեսցի սակաւ բանս առ ի իմանալոյ պատճառն իրաց:  
Եւ սիրով ողջոյն մատուցանեմ ծնօղ մօրս և մօրբուրիս: Միթէ  
տէրն Յիսուս աղօթուք եխպայրց աղատեսցէ ի փորձութիւննէս:  
Մտայ էլիսան:

Այս գիրն գրեցի մարտի 31, կնքեցի և ավի վերոյ թարվի-  
զեցի շաթր Այվազին և Շահնազարին, որ տանին էրզրմ, տան  
մեր տունն Ղազարին:

Ապրիլ 2:

65. ՊՈՒՌԵԱՐԻ ՆԱՍԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1722 մայիսի 27)

Իմ սեպալ դովաթ աղայիս մուսի Պուղարին, իմ աչաց լուս և իմ  
աչաց լուս և իմ պարձանկ Եղեհն

Միրով կարօտի հարց և բարև իմ վերոյգրեալ սհապիս: Յայտ  
լիցի ձեր հրամանուցն, որ քո օրհ [ն]եալ շաղաթլաման եկաւ և  
չայտնի եղաւ ձեր հրամանուցն ավհալն. աստուած յօգտէ ձեր հրա-  
մանուցն և ազատէ փորձանաց, ամէն: Ի՞նչ հարցանեմ ձեզ ի բա-  
րին և թէ կամս արարչին: Եւ թէ անարժանս հարցման արժանի առ-  
նէք, պահեալ է աստուծոյ ձեռին սուրբ և արժանաւոր աղօթիւք:

Մալում լինի ձեր հրամանուցն, միրզա Մէմի խան եղաւ, տաս  
օր խանութիւն էրաւ, քաղաքացոց կպաւ, յասաց թէ՛ Երեք-չորս թու-  
ման փող տվէք, եայ գնացէք Ըսպահան կոխ: Դէմ կայնեցան քա-  
ղաքացիք, ոչ փող տվին, ոչ դօշուն, ասին թէ՛ Դու մեզ խան մի յե-  
ղիր, շենք չուզեր: Տիւան բակին խան էրին, երեք օր խանութիւն  
էրաւ: Միրզայ Մէմին մարթ զրկեց, Աբաայլարէն խանութիւն ա-  
ռաւ: Կրկին քաղաքացիք դէմ կանգնեցան, շուղեցին. քաղաքին կէսն  
միրզա Մէմին գուզէ, կէսն՝ Դիւան բակին: Միրզա Մէմին յինաս  
էրաւ, ալ խանութիւն չի էներ: Դիւան բակին էլ վախեցաւ, ան ալ  
խանութիւն չի էներ:

Քաղաքն աթաշարսու պազար շկայ, քաղաքն խանակութեան  
մէջ է: Մօսէս աղբարն օրտրվարու եկաւ տեղս: Միրզա Մէմին յի-  
մացաւ, յասեր էր, կանչեց տարաւ քօվն, յասաց թէ՛ Աղան շուղում  
տապանչայ բերեր է, գեղն է, գնայ բեր: Մօսէսն գնաց, հանեց բե-  
րեց, ավեց միրզա Մէմինին: Յայժմուս Մօսէսն օրտրվարէ գու գայ:  
Այվի տեղս մալում լինի ձեր հրամանուցն, որ պատրիքն եկե-  
ղեցին շինեն օր ըստ օրէ, քեվերն լաւ է: Էս գրովս քեզ հինգ գիր  
զրկեցի:

Քաղաքիս ալիշիւրիշն հարցանես, ոչ առ, ոչ տուր. դահվան ինք  
չապասի բանդ է եղեր:  
Մալում լինի ձեր հրամանուցն, վաղտանկին ավհալն հարցա-

ողորմածութեամբն: Բայց մեղանից յետ մնացող տկար մարդ  
և ձի, հասին վրան աղուանք: Եւ տարան մեր խանին մաֆուաշ,  
թամպալեթ, ձի, մարդ և ուղտ: Ոմանք գերծան և եկան և  
պատմեցին մեզ զգործսն: Ամէն ճանփին վրա սիպայ են կա-  
պել աղուանք, և պահում են և բռնեն անցորդս ճանապարհաց:

Մեզնից յառաջ որ մին մեծ քարավան յելաւ, թալանվեցան  
աղուանից, միայն թէ գերծան նոցանէ՝ օվ որ որ լաւ ձի ունէր  
և այլք ըստ այսմ սարասի իմանիլ մարդիք: Վերջ:

Իմմէ խոնարհագոյն ծառա էլիաս Մուշեք:

Այս գիրն գրեցի և տվի ջուղայեցի Խարտալէնց վէթիլ  
պարոն Յովհաննին, որ գիպուկ ժամու առաքէ Սպահան ֆուան-  
սիզ թագաւորի տունն, մուսիու Պօռէկարի ձեռն: Յունիս 24:

67. ՊՈՌԵԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1722 հունիսի 28)

### Պարոն Եղիային

Ի Քրիստոսի ծառա մուսի Բուլղարէս բարև հազար բարև հասցէ  
ու հարցանեմ զքո հրամանք ի բարին ժիր և առողջ խաղաղութեամբ:  
Եւ թէ մեր աշվալն հարցանես, գոհութիւն Քրիստոսի, մինչի այս  
թարիդս սաղ եմք: Մալում լինի քո հրամանոցն որ տեղս լսեցինք  
թե՛ միրզա Մօմինին հրամանաւ են որ ղօշուն վեր առնի գնա Ար-  
դաւիլ, թէ որ էս ողորդ է, պարտիս որ Թավրիզու մին դասիզ բըռ-  
նես, ողորկես միրզա Մօմինի կուշտն ու իմ տված գիրն նրան ո-  
ղորկես և մին արզա դու էլ գրել տաս որ մին սֆարիշլամի գիր ո-  
ղորկի իւր նայիբին վրա, որ ինչ որ առնելիք ունինք, տեղտ առնու  
և քեզ տա:

Քո տեղէս դուրս գալէն հետ, աղվաններն զեղերն շատ խարաբ  
են անում և ինչ տեղ որ հասնում են ազուղէն, ցորեն թէ գարին կրակ  
են տալիս, երում են: Հիմիկս մին ավազա են վեր հանել, թէ բախ-  
տիարն գալիս է էՌ (7 000) ղօշումով և ճանապարհում շատ աղվան  
են սպաներ, ղէրազ էս էլ ասում են շորս դիհիցն շատ ղօշում ա գա-  
լիս, սուտ և ողորդն աստուած գիտէ:

Թէ հարցանես Հաղիբեջանա սարդարն մանզուլ ա եղեր, սար-  
դարութիւն Վրացտանու վալուն են տվել, Թավրիզն իւրեան են տը-  
վել, ուրիշ տեղ էլ շատ են տվել, շահն թաջ և թօմարն ողորկել ա,  
որ ԲՌ (2 000) թուման կարժէ, մին ջաւայիբէ թուր, որ ԲՃ (200)  
թուման կարժէ, էստուր հետ էլ մին ձեռք լաւ պատուական խալաթ:  
էս խաբարն էտեղ աշքարա մի աներ, որ առաջի սարդարն մեզանէ  
աղրդա շիինի: Ինչ խաբար որ գեղտ կա կամ լսում ես, ողջ ինձ գրօվ  
ձանուցանես:

Հալբաթ էն փողն որ քեզ ապալրեցի, շուտօվ ողորկես, որ իմ  
պարտքերն տեղս տամ, համ ինձ խարջլուզ անեմ: Բանդարու խա-  
բար ա եկել թէ՛ Սուրաթու մին ֆրանցիսու գէմի Սուրաթու գալու ա  
իմ բանիս: Պատրոցն շատ բարև արա, հալբաթ ա, իմ բաներն լաւ

մուղայիթ կենաս, որ թեզ կատարվի. աղա Մօմին հալա չէ գնացեր,  
աստուծով էս էրկու-երեք օրումս կճանապարհվի:

Գրեցաւ թիւն 1722 յունիսի ամսոյ ԻԸ (28). Սպահան: Աւարտե-  
ցաւ գիրս: Ողջ լեր:

Աստուծով հասցէ գիրս H. Beauregard Թավրիզ ի ձեռն արդ-  
րումից պարոն Եղիայ Մոշէկի ձեռն, տանողն աստոծոյ օրհնի:

68. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԲՈՒՐԳԱՐԻՆ (1722 հուլիսի 20)

23ա || Մուսիու Պօռէկարիտ

1722 յուլիսի 20. Թարվէզ:

Յուլիսի 14 ողջ և առողջ ձեր սուրբ աղօթիւն մտայ Թար-  
վէզ և նստայ պատրիների կուշտն: Քո ամէն ապսպրած խոս-  
կերին պատասխան չեմ գրել, քանզի միրզա Մումինն սպան-  
նեցին յունիսի 25 Ալվէրտի գեղն Ամարա ճանփին: Պատճառն  
է գիւանբեկին, և միրզա Յուսուֆն, և միրզա Աթան և այլք  
քանիք, էձ (700) թուման խոստացան սարտարին՝ եթէ սպան-  
նէր միրզա Մումինն: Եւ վնասն, որ գրեցին ծածուկ սարտա-  
րին, այս էր թէ՛ միրզա Մումինն կամի քեզ սպաննել, և խրա-  
տել է ժողովրդեանն, որ ոչ թողուն զքեզ մտնուլ քաղաք, որ  
ամենեկին սուտ էր:

Նաղին<sup>30</sup> էկաւ քաղաք, զրկեցի որ մեր ապրանքն գեղիցն  
բերէ, պատասխանեց թէ՛ չի բերել, մինչև որ ես գեղ չը գնամ:  
Ես չէյի կարել գնալ, քանզի լօթիներն կամին սպաննել ասե-  
լով թէ՛ «լաւ ժամանակ է, որ ո՛չ շահ կայ, ո՛չ խան»: Կարծեմ  
թէ՛ նաղին, որ ստիպում է ինձ տանել գեղ, նրանց հետ խօսք  
կապեց, թէ գան գեղ, զիս սպաննեն, որ ապրանքն ուտեն՝ այ-  
սու կարծիքով, թէ աղուանն կառնու Սպահան և ձեզ կջարդեն:  
Այսօր Օվանէսն զրկեցի գեղ, և բարեկամք արգելեցին՝ որ ես  
գեղ չը գնամ: Առաջ գիւանբեկին մեզ թշնամի էր, այժմ՝ ևս  
առաւել, քանզի նրա գրեցին Սպահանա թէ՛ ֆոանկներն զան-  
կատ արին քեզանից: Տեղս իրանք ասում են թէ՛ ես սօվրա-  
ցուցի պատրիներին, որ գիւանբեկու համար զանկատ ա-  
նեն, ասելով թէ՛ պատրիքն լեզու և բան չեն գիտել, ես գիտեմ:  
Տես թէ կարե՞մ մնալ առանց օգնութեան, որ այժմ քաղաքիս  
տէրն է և ամէնն նրանից կվախեն, լաւ ֆիրք քաշես:

Գաֆտեւն, Մամաշանն գնացել են Թրֆլիս: Տեղս այն-  
չափ սովորաբար չէ մնացել, ամէնն փախել են լազկու աճիցն:  
Եւ ալիշվէրիշ իսկի չկայ, լօնտուան 19 շահի ծախվել է մին  
քանի օր յառաջ, այժմ ոչ առնօղ կայ և ոչ ծախօղ:

23բ լազկին Արտաւիլ ջարթեց և թալանեց, մնաց || 17 օր, որ-  
ժամ լսեցին թէ՛ վրացի եկել էր Քոռու դրազն, յեկան Արտաւիլու  
և փախան, գնացին Շամախի:

Ասում են թէ՛ օսմանցուցն 5 փաշայ պիտի գայ Թարվէլու  
վրայ, ոմանք ասում են թէ՛ պարսից օգնութիւն գու գայն, ո-  
մանք ասում են թէ՛ կռու համար է, քանզի ասում են թէ՛ Հա-  
սան փաշան թային են արել Սպահանու վրա 7 փաշայօվ, և  
էրզր [ու] մա փաշան թային են արել 5 փաշայօվ Թարվիլու  
վրայ: Ասում են թէ՛ էրզրմա փաշան լազկին պիտի ջարթէ, Հա-  
սան փաշան՝ աղուվանն: Ոմանք կայ, որ ասում էն թէ՛ էրզրմու  
փաշան մինչի Ղազպին պիտի գաֆտէ, և Հասան փաշան՝ գենն  
որչանք յերկիր որ կայ, ճշմարիտն՝ աստուած գիտէ: Բայց քեզ  
ասում են թէ՛ 2 օր կայ, որ էրզրմու մարդ էկաւ գիր բերին, որ  
օսմանցու մարդիկքն ապրանքներն առնուն և յետ գնան: Այս  
երկու օրումս մեր էրզրմայ տղերքն իրանց ապրանքն բառ-  
նում են, որ յետ տանեն էրզրմ: Եւ ասում են թէ՛ էլլի էկաւ օս-  
մանցուցն Վախտանկ խանի կուշտն թէ՛ Լազկուն հետն բան  
չունիս, յետ գաս, տեղտ նստիս:

Այսօր գնացին միրզա Մումինի տունն: Միրզա Մումինի  
կնիկն խապար դուս ղրկեց ինձ Ջիմշիտի բերանօվն թէ՛ որ գու-  
զեն որ իրանց փողն չը կորչի, վեզիրութեան բաղամն միրզա  
Մումինի փոքր ախպօրն անուանն շինեն: Միրզա Մէհտուն  
խնդրեցի իմ շեշխանա թուֆանքն, և թուրն և տապանչան, որ  
տան ինձ, պատասխանեցին թէ՛ որժամ սպաննին միրզա  
Մումինն, նոյնժամայն սարտարն քաշեց, տարաւ էտ իբմի-  
նանին:

Եւ միրզա Շէֆին շատ բարեւ է անում, հրամանուցէտ  
խնդրում է, թէ՛ այս թղթաբեր մարդուն որչանք որ փող պետք  
լինի, տաս, քանզի ինձ համար մանսուպ է առնում աղա Մու-  
մինին հետ:

Մօվսէսն Օրտուար է, պիտի գնա էրզրմ: Մղտսի Սարգիսն  
գրեց մին գիր, որ խնդրում է իրան փողն շուտօվ տամք, քանզի  
շատ տաւայ են արել, և շատ փող են առել և դեռ ևս պրծել չէ:  
Տէր Բարդամի գիրն էկաւ իրան տղին վրայ, որ գրեց թէ՛ շու-  
տօվ ինչ ապրանք որ ունիք, առնուք յետ գաք: Եւ Գալուստին

էլ գրեցին այնպէս: Ասում է Նաղին թէ՛ ապրանքն հողի տակն  
է դրել, քանզի լազկուցն վախում է: Եւ լսեցի թէ՛ սանդուղներն  
շատ անգամ բացել է և պազի ինքմինն ծախել: Օվանէան յետ  
2 ատուր գնում են էրզրմ, և իրան փողն յոժով յուզում է:

Որչանք որ քարվան է էկել էրզրմ, չեն թողել որ տեղս  
գան գրել են թէ՛ այնքան շատ վաճառական է եկել էրզրմ,  
որ մահալլեքն, տներումն են իշել:

Ճանապարհիցն 2 գիր են գրել հրամանուցտ, մինն՝ Հօ-  
նօմդարայու վրացի շափառներօվն, մինն՝ Քաշանայ ջուղայե-  
ցի Օվանօվն:

24ա Նոր որ գիրս կնքում էյի, շաթր էկաւ էրզրումայ, և գրե-  
ցին թէ՛ Գարիշ աղեն կամ Ուզուն Մուստաֆէն պիտի || գան  
էլլութիւն: Եւ հունթբարիցն նոր ֆարման է յեկել թէ՛ դօշուն  
հազր լինի Աճամու յերկրին համար, ամա քանի որ Սպահան  
շահի ձեռն է, թարփանմիշ մի լինիք, երբ որ Սպահան աղուա-  
նի ձեռն յընկնի, շուտօվ գնաք Աճամի յերկիրն զաֆտէք:

Օվանէան յետ էկաւ գեղիցն դատարկ: Նաղին մեր  
ապրանքն չէ տվել, ասում է թէ՛ ԳՌ (4000) լիտր տիֆ-  
տիկ են տվել, ժն (15) թուման էլ հէրու խարճել են, հէսապ  
անէ, յետո ապրանքն տանի: Եւ ասում է թէ՛ քեզ գիր է տվել,  
իրան մօհրօվն այս ապրանքին համար, թող իմ գիրն բերէ և  
իրան ապրանքն տանի: Վերչի խօսքն այս է, որ չի ուզում  
տալ:

Ահայ ամէն բանն քեզ ծանուցի, ֆիքր քաշես: Չունքի իս-  
կի մարդի խօսքի աւկաճ չես դնել: Վասպինճ որ քեզ ասի թէ՛  
Գալուստն տանի քաղաք, չը թողիր, հիմկս անես, ինչ որ կա-  
րօղ ևս շուտօվ և ինձ տեղս սարգարտան չը թողնուա: Եւ այլ  
ողջ լեր ի տէք:

Խոնարհագոյն ծառայ էլիաս Մուշեխ

Այս գիրն գրեցի ներքո գրին հետ, կնքեցի և տվի հողևոր  
տիրոշ շաթր երևանցի Ալավերտուն, որ նայ տանի Սպահան,  
տայ մուսիու Պօռէկարին, օգոստոսի 6, քանզի Միրզի մարդ  
աղա Տահիրն յետ տվեց գիրն և ինքն չը գնաց:

69. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԼԱԳԱՐՏԻՆ (1722 իուլիսի 21)

Պատուելի սուվերօռ պ[արոն] Լակառո

1722 յուլիս 21. Թարվէզ:

Շատ նեղութիւնիցն յետ, առողջութեամբ հասայ Թարվէզ ձերին սուրբ և մաքուր աղօթիւն յուլիսի 14, նստա պատրոց կուշտն: Եւ ամէն որպիսութի[ւ]ն կլսես մուսիու Պօռէկարի գրիցն, վասն այն չը գրեցի միուս անգամ, զի ոչ գոյր ժամանակ:

Պարոն Մունիէրն լաւ կայ նստած էրզբմ: Եւ Շամախու մին ճանանչ մարդ էկաւ. Շամախու պատրիքն տեղն նստած են անվնաս, այս ճշմարիտ է:

Մեր խօճայ Սիրմալին շատ բարե անես, իրան ջոկ գիր չը կարացի գրել, քանզի ձեռս չը հասաւ, այսուհետև որ ֆըրսանտ լինի, կգրեմ իրեան ամէն որպիսութիւն:

Եւ խնդրեմ հրամանուցէտ, որ տեղիտ ամէն որպիսութիւնիցն և ամէն անցանգիցն, զոր ինչ անցաւ ինձանից յետև, կամ թէ ինձ համար մին խօսք անցաւ, կամ ինչ խօսեցան, շնորք անես քո օրհնութեան՝ գրիւն գրես, որ իմանամ: Եւ խնդրեմ, որ մուսիու Գառտանն մին օգնութիւն տայ ինձ, որ տեղիս || փողերն կարողանամ առնուլ և այնու առևտուր անել, քանզի մնացի անճարակ, ձեռս փող և ապրանք չունիմ, որ առևտուր անեմ և ապրեմ, քանզի չունիմ մին փող խարչուիս որ խարճեմ: Խնդրեմ որ ինձ համար մին ֆիքր քաշէք:

Եթէ լազկին կամ օսմանցին տեղս գալու լինի, մեք պիտի որ փախչեմք Թիֆլիս, զի պատրոց հետ այսպէս խորհեցանք, որ քան զայս՝ էլ ուրիշ հնար չը կա գերծանելոյ:

Ես յոյս ունիմ, որ պ[արոն] Թաթէոսն և պ[արոն] Դուվանն հիմի ճանապարհուան են, որ գան տեղս, տէր աստուած նոցա բարի ճանապարհ պարգևէ:

Ողջոյն սիրով մատուցանեմ պ[արոն] Դէհէլին, պարոն Դիոնիէսոսին, պ[արոն] Արքանճիլօյին, պ[արոն] Ռէյմունին, պ[արոն] Տօստին, պ[արոն] Ֆիլիպ[ի]ն, պ[արոն] Հէրմիոսին, մունսինիօսին և այլ ամենայն մեծի և փոքու առ հասարակ ողջոյն մատուցանեմ, չիցի ընդունակ:

Պարոն Ներսէս, քո հրամանուց տված գիրն կողարկեմ Թիֆլիս մին խաթրջամ մարգու հետ. ձեր վրացոցմէնէ քիչ մարդ կայ տեղս, նրանք էլ քանի օրումս գնում են, չունքի վախում են տեղս մնալ: Ամէն Շէրիմանցոց ողջոյն կտամ:

Ամենախոնարհ ծառայիցն ծառա՝ էլիաս Մուշէխ:

Այս գիրն գրեցի և ներքո գրին հետ մօհրեցի, որ հասնի Սպահան, ջէզվիտի վանքն, մեծաւոր պ[արոն] Լակառտին: Յուլիս 21, և մին օրինակ ևս գրեցի և ներքո օրինակին հետ տվի խիէվանցի հաճի Կիլաքին:

70. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԻՐԱՆԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ  
ԳԱՌՊԱՆԻՆՆ<sup>31</sup> (1722 իուլիսի 21)

Պատուելի և զերպապանձ զերյարգոյ և պայապատ մուսիու Գառուան

1722 յուլիս 21. Գարվէժ:

Յրդձալոյտ մատուցանեմ սիրոյ քարտէզս խոնարհութեան  
և սիրոյ, քանզի քանի ժամանակ հօվանացա շաք տեհառն ի-  
մոյ և եթէ անձա ինչ անարժանութեան, խնդրեմ թողութիւն  
շնորհես, քանզի որ լաւ հմուտ շէյի օրինաց ձերոց:

Պարոն, գիտութիւն լիցի հրամանուցոյ, որ յուլիսի 14 ժա-  
մանեցի Դավրէժ և այն խորհուրդ և գիտատրութիւն որ ունէի  
տպեալ ի սրտիս, ամենեին ոչնչացաւ: Յաւել ևս ոչ կարեմ  
կատարել, վասնզի սպաննեցաւ միրզա Մուսիին ի սարտարէն  
խորամանկութեամբ և պատճառի ոմանց թարվեղեցոց, զի  
յայտնեցաւ նոցայ թէ՛ ամենայն Հատրբէժանու յերկիրն և  
զօրքն կամին հնազանդիլ նմայ և հարկիւ ևս յաղթելոց էր  
թշնամեաց թագաւորին, վասն այն նենկութեամբ, սպաննին,  
25ա զի մի բարձրացի անունն նորա: Վասն այս || պատճա-  
ռիս ոչ կարեմ փող առնուլ պարտատիրաց և հանդարտ նըս-  
տիլ և տեսանել զբանս իմ այս քաղաքիս, եթէ ոչ օգնեսցէ մեզ  
վերապատուելիտ, որովհետեւ այսպէս է: Ժտեմ թախանցանօք  
ի տէրութեննէ քումմէ, զի եթէ կամիս օգնութիւն տալ մեզ,  
որ մեք այս յերկիրս նստեմք ապահօվ և աներկիրուլ ի թըշ-  
նամեաց, մանաւանդ որ մեր պարտն կարողանամք առնուլ ի  
պարտատիրաց և այնու առևտուր անել:

Կամիս իմանալ որպիսութիւն յերկրիս ի գրէն մուսիու  
Պօռէկարին, զի մի ըստ միոչ գրեալ եմ նրան:

Այս ժամուս, որ այս գիրն գրում էի, մին փայեկ էկաւ  
տեղիս վաճառականաց վրայ, թէ նոր հրովարտակ էկաւ

հունթարէն, որ պատրաստ լիցի զօրքն վասն յերկրին  
պարսից, բայց ոչ գնան, մինչ որ յիմանան թէ Սպահան շահի  
ձեռիցն գնաց, նոյն ժամայն արշաւեն և բռնեն զերկիրն, եթէ  
ոչ՝ մնան ի տեղիս իւրեանց:

Եւ մարդ են ողարկել օսմանցիք լազկոց վրայ թէ՛ էլ ձեռք  
չը տաք և շաիրէք, որ այտ յերկիրն իմն է:

Քո հրամանուց տված գիրն շաթրօվ ողարկեցինք էրզրում,  
պ[արոն] Մունիէրին վրայ, և այն առաջի քո գրերն, որ տեղս  
բացած էր, միրզա Մուսիին էր բացել՝ թէ Սպահանու շիտակ  
խապար յիմանայ, զի ոչ կաւատար թուրքերու գրերին և խօս-  
քերին: Բայց պարոն Բեռնաոտոսն կարդացել էր և ինչ որ  
պետք էր ասելու, ասել էր և այն, որ ծածուկ էր՝ թաքուցել: Եւ  
գրերն ամբողջ առել և զրկել Հալապ: Եւ այն թղթաբեր փայեկ  
Այվազն մեղ չունի, քանզի միրզա Մուսիին ճանապարհին  
մարդ էր դրել, որ ինչ գիր գայ, բռնեն: Անհոգ լինես, որ հրա-  
մանուցտ գրերն օտար մարդու ձեռք չի լքնկել:

Տեղս առևտուր չը կայ, քանզի վաճառական չի գալ, և որ-  
չանք որ Հալապայ և Իզմիրու գալացօղք կային, էրզրումու չէն  
թողուլ որ գան, մնացել են անդ: Ոչ ոք էլ շինութիւն չի անում  
այս լազկու և օսմանցու խապարն լսելու, կիսահոգի նստած  
կսպասեն կատարած իրին:

Votra très humble et très obéissant

(Զեր ամենախոնարհ և ամենահպտարիմ

serviteur Elias Muchek.

ծառա ելիսպ Մուշեղ):

Այս նմրա 1 գիրն գրել տվի ֆոանցիզի գրի և բանի պա-  
րոն Օվանէս Մկրտչին: Եւ ներքո գրերն, և միատեղ, և մօհրե-  
ցի, և վրան գրեցի և տվի հոգևոր տիրոջ շատր Ալավերտուն  
օգոստոսի 6, որ տանի Սպահան, տայ ֆոանցիզ մուսիու ղուն-  
սուլ Գ[ա]ռտանին: Եւ այս գրիցս մին օրինակ եմ գրեցի յու-  
լի[ս] 21, և ներքո գրերուն հետ տվի վերո հաճի Կիլաքին, որ  
է ամթեցի, այժմ տեղս է: Օգոստոսի 15:

25բ || № 2. Սիրասնունդ և ամինչոց եկապօրտ և բարեկամիտ իմոց մուսիու Տուֆրէն

1722 յուլիս 21. Քարվէզ:

Մանուցումն լիցի հրամանուցտ, որ յուլիսի 14 հասայ Քարվէզ և նստայ պարոն քափուչինների տունն: Ինչ խորհուրդի համար որ եկի տեղս, ամենեկին փշացաւ, շունքի միրզա Մումին սպաննեցին, էլ մին փող կարել չեմ առնուլ պարտքերիցն, մնացի այնպէս խեղճ և ողորմելի: Թէ որ սարտարն չէք սպաննել, միրզա Մումինն հիմիկա լազկին ֆաթ էր արել և գու գէք տեղդ, շունքի ամէն ժողովուրդ և մեծամեծ յուզում էյին և հնազանդ էյին իրան: Ամայ մին քանի թշնամի խոտացան փող տալ այն ազա՛ սարտարին թէ՛ սպաննէ: Եւ ինքն սարտարն ևս ունէր նախանձ ի սիրտն իւր, զի հարկի գիտէր թէ՛ միրզա Մումինն մեծ էր լինելոց: Որպէս և իցէ, սպաննին և սպանմանէ նորին ինձ վնաս եղև:

Եւ գիր էկաւ էրզրումայ, որ տեղիս օսմանցու սովտաբարն դառնան իրանց ապրանքօվն էրզրում, քանզի գօրքն օսմանցոց հաւաքվում են գալ տեղս: Բայց հրամանք է թագաւորէն թէ՛ որքան որ Սպահան շահի ձեռն է, չը գնաք, յորժամ որ լսէք, թէ Սպահան բռնեցաւ ի աղուանից, դուք գնացէք բռնեցէք ամէն պարսից յերկիրն: Եթէ այսպէս լինի, մեք հաստատեցինք գնալ Քիֆլիս պատրուց հետ, և այլ ամէն միուս խապարն քեզ գրում է պարոն Զան Պատիստն, վասն այն ես չը գրեցի:

Եւ շնորք անես իմ ողջոյնն մատուցանես պատուելի մուսիու պատ[րին]երուն: Եւս քեզ կաղաչեմ, որ մուսի պատեւուցն գատ, մարդու շասես թէ քեզ գրեցի:

Vostre tres humble et tres obeissant-serviteur Elias Muchek

26բ || № 30. Հոգևոր հայր պարոն Ղապարիտ

1722 յուլիս 28. Քարվէզ:

Գիտութիւն լիցի հրամանուցտ, որ յուլիսի 14 նոր տօմարի հասա Քարվէզ, աստուծոյ փառք՝ ողջ և առողջ. համարէք թէ նոր աշխարհ եկի, երկարապատում լիցէք թղթաբեր Օվանէսիցն: Բայց յիմանաս, մեր գալն, որ ունիմ փաթէնթայ մեծ էլուցն, եթէ աստուած տայ, որ աղուանն պարտի, աստուծով լաւ գլնի մեր բանն, եթէ ոչ՝ կամք տեսան օրհնեալ եղիցի, քանզի շատ առաւել սիրօվ սիրեաց զիս էլչին և շատ ումեզս տալօվ զրկեց զիս Քարվէզ՝ ասելօվ թէ՛ «Գնա մուսի Պօռէկարի բանն տես, մինչի էս բանն պրծնու, քեզ չեմ մոռանալ»: Այժմ նստած եմք և կսպասեմք թէ՛ Սպահան մին լաւ խապար գայ:

Մեր մեղացն, միրզա Մումինն սպաննեցին, եթէ ոչ՝ մեր Քարվիզու ամէն բանն լաւ գլնիր: Ես այսպէս շուտօվ շուտօվ չէյի գալ, Քարվէզ պիտի մնայի, մինչի որ աղուանն պարտիր, ամմա միրզա Մումինն շափառ զրկեց Սպահան թէ՛ հալպաթ Եղիան գայ, որ ես իրան ամօթուն յելնեմ, ընտուր համար այս կրակի ժամանակն յելայ էկայ. խօջ բանն այսպէս եղաւ իմ մեղացէն, աստուծոյ կամքն օրհնեալ լիցի:

Եւս թողութիւն շնորհէն բարեկամք, որ ոչ կարացի ջոկ գիր գրել իւրեանց, վասն այնորիկ ամէն բարեկամաց մերոց սիրօվ ողջոյն մատոյ, մանաւանդ ծնօղաց իմոյ՝ մօրս և մօրաբուրիս, եխալայր Արուսիինի և նորոգեալ բարեկամ և ազգին մերոյ պարոն Մօվսէն Դուզտապանին: Խնդրեմ, որ շուտօվ ձեր որպիսութիւնիցն և տեղիտ խապարներիցն գրէք...

Որ եմ խոնարհ ծառայ էլիսա:

73. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՒԵԿԱՐԻՆ (1722 հուլիսի 29)

45. Մուսիու Պօռէկարիս

1722 յուլիս 29. Թարվէզէ

Յուլիսի 21 գրեցի հրամանուցտ հոգևոր տիր[ո]չ շաթ-  
րօլն հանդերձ մուսիու Գառտանի գրիւն, որպէս այս օրինա-  
կըն, որ այս գրի մէջն, թէ նա կորչի, այսու իմացես, զի ա-  
մենայն պէտքական բանն գրեցի, զոր ինչ անցաւ:

Յուլիս 28 չափառ էկաւ Մարաղու ասեւօլ թէ՛ Պլպաս  
բուրտն Մարաղի շորս զին պատել է: Այսօր դիւանբէկին Թար-  
վիզու ղօշունօլն և ամէն մահալի մարդօլն գնում է Մարա-  
ղու օգնութիւն: Եւ այսօր ամէն օսմանցու վաճառականք գնա-  
ցին, մնաց մին 2 մարդ, չը կարացին գնալ, քանզի պարտք  
ունէլին տալու:

Այսօր վրացու չափառներն եկին տեղս, որ ասում են թէ  
Վախտանկ խանին համար թաճ ու թումար են տանում: Եւ  
խապար բերին թէ՛ աղուանն դուս հանեցին Ֆահրապատու,  
ուրախացանք, բայց չեմ գիտել ի՞նչ պատճառ էր, որ գիր չէիք  
գրել մեզ, որ ձեր որպէսութիւն յիմանայաք, Քանզի կաղոգին  
եմք յիմանալ: Օվանէսի փողն չը կարացի տալ, գիր տվի, որ  
շահօլն տամ զիպուկ ժամու: Ձին ծախեցի մին թուման:

Եւ այսպէս ֆանտ կանեմ տեղս, թէ պէլքի միբղա Մումի-  
նի մօրիցն, ախպորիցն գիր առնում, թէ պարտն նոցայ հաճոյ  
է և քեզ վրա գիր գրելու կու տամ իրանց մօհրօլն, որ ձեռտ  
սանատ լինի, այսպէս յոյս տալօլ թէ՛ դուն տեղտ փող կու  
տաս, որ վէզիրութիւն առնուս նրա ախպորն համար: Մին գիր  
գրել տվի և տվի հոգևոր տիրոջ շաթրին, որ Սպահան տայ  
աղայ Մումիին, քո գիրն նրա գրի մէջն [է], մուղիաթ լինիս,  
առնուս յառաջ, քան գիրն աղայ Մումիին տալն, բանաս, քո  
գիրն առնուս: Աշխատում եմ թէ մին այլ ուրիշ գիր գրել տամ,  
որ թէ մինն կորչի, մինն ձեռտ մնայ: Քանզի պատի Մահմուտ

շաթիրն նաթանդու դէսն ինձ պատահեցաւ, որ մեծ գիր ունէր  
մուսիու Գառտանին վրայ, այսօր յետ էկաւ Մահմուտն, ասաց  
թէ՛ աղուանի ձեռ[ն] յրնկաւ գրերեն և ինք փախաւ, մտաւ ջրի  
հորերն, յետ 3 աուր յելաւ, էկաւ տեղս: Բայց մուսիու Գառ-  
տանի գիրն ամբողջ բերեց, ուզեցի որ ղրկեմ, չը տվեց, փող  
է ուզում, || շատ աշխատեցայ, բայց մինչի այսօր նաղին ապ-  
րանք չը բերեց, թէ դիւանբէկուն արդ անեմ, մնացածն էլ նայ  
կուտի, թէ ես բռնեմ, զօրութիւն և կարողութիւն շունիմ, մնաց  
այսպէս: Իսկի մարդից մին փող կարել չեմ առնուլ, որ օր ա-  
ուր խարճեմ: Ի՛նչ առնող կայ, և ի՛նչ տվող և՛ ոչ վաճառական.  
շորս-հինգ ջուզալեցի և շորս-հինգ վրացի կան տեղս, այլ  
մարդ չը կայ քարվանսարայներն, այսուհետև ի՞նչ պիտիմ  
անել: Ինձ յիմաց անես շուտօլ և տեղիտ որպէսութիւն, զոր  
տէր Յիսուս ազատեսցէ զձեզ և զօրութիւն տացցէ զօրաց  
պարսից, որ շուտօլ յաղթեն իրեանց թշնամին, զոր կամիմ:  
Եւ այլ ողջոյն կու տամ հրամանուցտ և այլոց ամենեցուն, մե-  
ծի և փոքու, զորս չեն մոռացել:

Մտայ խոնարհագոյն էլիասն:

Այս գիրն գրեցի և գրի վերջ առաջի գրած օրինակիս  
հետ, որ ղրկեմ Սպահան, մնաց, ևս օրինակեցի և ներքո գրի-  
հետ ղրկեցի Սպահան մուսիու Պօռէկարին, օգոստոսի 15, հա-  
ճի կիլաբին:

74. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՌԵԿԱՐԻՆ (1722 օգոստոսի 6)

№ 46. Մուսիու Պոռէկարիտ

1722 օգոստոս 6. Քարվէզ:

Քո հրամանուց գրած յունիսի 28 գիրտ առի այսօր, քանզի այս վրացին յետ էր մնացել ճանփին, այսօր էկան: Քեզ գրեցի թէ՛ միրզա Մուամինն մեռա սարտարիցն: Հոգևոր տէր Ալահվերտի շաթրին գիր տվի, առնուա, և միրզա Մուամինի ախպօրց գրած գիրն առնուա աղա Մուամինի գրի միչիցն, որ ձեռտ տանատ լինի, քանզի ես գրել տվի այն գրերն:

Դիվանբէկին խանութիւն անում է, գնաց Բլբաս քրտին վրայ յուլիսի 29. դեռևս խապ [ա]ր չէկա թէ ինչ արին: Շամախու թէ Արտաւիլու թալանօղ լազկիքն, որ կամէյին գնալ Տաղստան յերկիրն իրեանց հանդերձ իրեանց ավարան, Շամախն ԵՌ (5 000) ուռուսով ճանփան բռնեց, կոտորեց, յետ դարձան, մտան Շամախի: Ողորդ խապար է, շորս-հինգ մարդու այսպէս գիր էկաւ, ամէնուն գիրն մին կերպ էր գրած:

Վախտանգի որդին գալիս է Երևան, որ գայ Սպահան:

28ա նաղին Հաճի Գարէշին թապունայ է եղել, գնաց կռիւ, մեր ապրանքն մնաց: Թէ դուզես որ մեր բանն լաւ լինի, մին րաղամի սաւատ խնդրէ մուսիու Գառտանէն և մին թալիղայ, որ իմ օֆտայիցն ը գրել տաս շուտօվ, որ քանի այս յերկիրս շատ չի խառնուել, մին ինքմին կարենամ առնուլ, թէ ոչ՝ մին փող շես կարել հանել, քանզի ինձ երևում է թէ՛ վերջն էլ վատ գլնի:

Խապար էկաւ թէ՛ էրզրմայ և Վանայ թօփխանէքն դուս են հանել, ահայ քեզ իմացուցի, կամքն քոնն է: Թէ որ մին օտար մարդու օֆտայիցն թալիղա հանես, պիտի որ մեզ շատ բարեկամ լինի, թէ ոչ իրանք կուտին, մեզ ոչինչ չի հասնիլ: Միրզա Մուամինն սաղ չէ, որ մեզ համար լաւ բան շինէ:

Վերշապէս, ինչ որ կամիս, կարես անել, արայ վաղվաղակի, մինչ դեռ ֆրասնտ է: Եւ շուտօվ այս գրիս պատաս-

խանն զրկես: Եւ այլ տէր աստուած ազատեցէ ձեզ և զմեզ այս պատուհասէս: Ընկալ համախոհիւրքս հանդերձ ողջոյն:

Սառայ էլիաս Մուշխանց

Այս գիրն գրեցի և տվի պատրուն, որ դրեց վերո Մահմուտին հետ բերած մուսի Գառտանին գրի մէջն և տվինք Մահմուտին, որ իրան լընկեր թուրքին տվեց, որ վերո Ալահվերտի շաթրին հետ գնան Սպահան, տա մուսիու Պոռէկարին: Կնքեցի և տվի օգոստոսի 7: Եւս օրինակեցի սայ և վերո գրերն և տվի ջոկ Ալահվերտուն օգոստոսի 14:

№ 37. օգոստոսի 9. էրզրումու մին գիր էկաւ Ղաղարիցն, գրել է բերթին շինելն, օսմանցու գալն Պարսից վրայ և յետ նստին, և մղտսի Սարգսի բանի համար, և մօրս լալանք գրելըն և այլք՝ շաթր Այվազի ձեռօվն:

28բ Իմ հոգևոր հայր պարոն Ղազարին

1722 օգոստոս 9. Թարվէզ:

Քո հրամանուցն գրեցի տէր Բարդամի որդի Օվանէսին յուլիսի 28, զիտեմ աժմ ձեզ հասած գլխի: Այսօր ձեր գիրն առի շաթր Այվապիցն: Ահա ես գրեցի մահտեսի Սարգսին, դուք միք վախիլ, ես նրայ պատասխանն կու տամ, անճախ որ գրել ես թէ՛ ես մին գիր գրեմ թէ՛ ես բաժան եմ, գլխի գրել, ամայ առանց վկայ չի լինիլ, յետ ձեզ սուտ կհանեն. մի՞թէ օսմանցու շարիաթն չէք գիտել, որ ախպօր պարտքն ախպօրիցն չեն յուզել: Ես նրայ մին գիր տվել եմ թէ՛ յերբ որ մղտսի Սարգսի փողն մուսիու Պօռէկարին վրա կորցւի, ես տամ, դեռ խօշ չէ՞ կորնլ, մուսիու Պօռէկարն չէ՞ մեռել, ամմա պաղի ժամանակ բանն այսպէս գնկնի, որ գուշանա, հոգս չէ: Դուն նրայ պատասխան տուր այսպէս թէ՛ դուն մուսիու Պօռէկարին սառաֆն էյիր, պէլքի նրա փողն քեզ վրայ յաւել է, օվ գիտէ, ո՛ւր է քու վկան, որ յիմանամք թէ Պալիօղէն փող գուզէյիր: Յերկրաշարժն չէլաւ, Պալիօղն տեղն չէր, դուն փախար էկար, յորժամ Պալիօղն նախջուվան տեսար, թէ որ առնելիք ունէյիր, ինչի՞ շառիր, ում տվել ես, գնա առ, մեք ոչ տալտ գիտեմք և ոչ անուլը, ինքն Սպահան է, նրա վէքիլն Թարվէզ, գնա, հեսապտ տես: Ես դուք ասացէք թէ՛ Եղիան Շամխի ջօկվեցաւ ախպօրցըն, մէնէ գնաց, Պալիօղին նօքար մտաւ, հայ դուն, հայ Եղիան:

Տէր Մելքունին շատ բարև անես, ձեռս չը հասաւ, որ գրէյի: Անճախ նրան տեղս ունի մին յեօրդան, մին բարձ, ես շատ մարդու աղաչեցի, չը բերին, ինքն մին մարդու ապսպրէ, ես տամ նրան, որ բերէ, տայ իրան:

Ես ողջոյն կու տամ հոգևոր հայր պ[արոն] Մունիէրին. ծնօղ մօրս, և մօրքուրիս, և պարոն Ղևոնդին և այլ մեզ սիրող սիրելի բարեկամաց, ամենեցուն լիցի ընդունելի:

Ծանի՛ր, մայր իմ սիրելի, ինձ մին քանի խօսք ես գրել, մի՞թէ չես լսել, որ ես դադդադայ շատ ունիմ, իմ սիրտս ևս առաւել, քան զքոնն կցանկանայ քեզ և բարեկամք տեսանել, ամայ իմ ձեռս չէ, ես էլ դուզեմ՝ այս քանի ամսուս, դուն ինձ մխիթարէ, յետո ես քեզ շատ կմխիթարեմ, որ բազի լինիս: Աստուծօվ, յոյս ունիմ, որ ես քեզ տեսնում մարմնաւոր աշօք և փափաք սրտիցս մերո կանցուցանեմք, միայն թէ աղօթեայ վասն ծառա էլիասին:

Այս գիրն գրեցի իւր նմրա 37 գրի պատասխանն և տվի պ[արոն] Բեռնարտոսին, որ իրանց գրին հետ մօհրեց և տվեց Պուտաղ շաթրին, որ տայ պ[արոն] Մունիէրին, որ նայ տայ պարոն Ղազարին: Օգոստոս 9:

իմով ողջոյն տաս պատրիներին և ամենայն բարեկամաց մե-  
րոց:

Մտայ էլիսս

Այս գիրն գրեցի և տվի գորեցի Յենկոյի որդի Քրիստէսին,  
որ նայ տանի Քիֆլիս, տայ Մամաջանին կամ Գաֆտելին:  
Փոստոսի 10:

76. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՖՏԵԼԻՆ՝<sup>33</sup> ԵՎ ՄԱՄԱՋԱՆԻՆ՝<sup>34</sup>  
(1722 օգոստոսի 10)

29բ || № 2. Պարոն Գաֆտել և պարոն Մամաջան

1722 օգոստոս 10. Թարվէզ:

Գիտութիւն լիցի ձեր հրամանուցտ, որ էստի յառէջ ձեզ\*  
մին գիր գրեցի իմ էհուալիցն դարսեցի Տաքտեղ օղլու ձեռովն  
և այնու ծանուցի ձեզ թէ՛ ժՆ (15) թուման պարաթ արի ձեզ  
վրայ, գիտեմ հիմի տված գլնիք: Յորժամ փողն տաք, պարաթ  
առէք և յետկուան ձեռք դնել տաք Տաքտեղ օղլուն և պարաթն  
լաւ պահէք, որ մեր հասպումն անց կացնէք:

էս թղթաբեր Քրիստեսեայն ինձ մին գիր բերեց աղիցն,  
որ գրել է թէ՛ 3 նավ մեր սարքարին համար Պանկալու դու է  
էկել, յոյս ունիմ, որ հիմիկա՝ Պանտար հասած կլնի:

Եւ յերեկի օրն դասիտ Այվազն էկաւ Հալապու, աղին շատ  
գիր բերեց: Եւ գրեցին թէ՛ 3 նավ ապրանք և 9 նավ կովի գա-  
լիս են Պանտար մեր սարքարին համար շահին քօմակ: Այս  
խապար մեք լսելով շատ ուրախացաք, գրեցի, որ դուք էլ ու-  
րախանաք և մեր ամէն բարեկամք: Անճախ աստուած աղա-  
չեցէք, որ շուտով Մահմուտն վարթարաֆ լինի: Շուտով ապ-  
րանք գու գա տեղս, որչանք որ կարենամ ծախել:

Տեղիտ էհուալէն մեզ գիր պակաս չանէք, համ գրեցէք թէ՛  
վրաց ղօշունն գու գա՛յ, թէ՛ ոչ, և ես էլ ձեզ գիր պակաս չեմ  
անել տեղիս ամէն էհուալ էն:

Երբ որ լսեմ թէ՛ Մահմուտն վարթարաֆ էլաւ, շուտով ձեզ  
դասիտ կողարկեմ, որ գաք տեղս: Համ մուղիաթ կենաս՝ ինչ  
խապար որ օսմանլուիցն լսես ինձ գրես:

Եւ փոքր դաղի թեպուր դրկես, դալամ շունիմ: Եւ բանիւ

\* «ձեզ» կրկնված է:

77. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՎՍԵՍԻՆ (1722 օգոստոսի 10)

30ա № 50. Միրելի Եխպայր Մօվսէսիտ

1722 օգոստոսի 10. Թարվէզ:

Յուլիս 14 հասա Թարվէզ, իջեան կալա պատրուց տունն, կսպասեմ, որ մին լաւ խապար գայ Սպահանայ, հետո ինձ համար տեղ շինեմ: Տաքտեղ օլլի Եղիային հետ ապսպրեցի քեզ, թէ կարես գալ տեղս, եկ, թէ ոչ՝ գնայ, իսկի մին խապար էլ չարիբ: Հալպաթ, էս գիրն քեզ հասնելուն պէս քու ամէն էհուալէն ինձ գրես, որ յիմանամ, յետոյ էս քեզ գրեմ իմ էհուալն:

Նոր Սպահանա ինձ մին գիր էկաւ աղիցն, գրել է թէ՛ 3 նաւ գալիս են Բանտար Հինտիստանու ապրանքօվ: Այսօր շաթր էյվազն Հալապա խապար բերեց թէ՛ Յոանկիստանու շորս նաւ լիքն ապրանքօվ և այլ կոտի նավեր դուրս դուա յեւան, որ պիտի գան Բանտար: Այս խապարներս ստուք է, ամմա ի՞նչ անեմ, որ Սպահան փորձութեան մէջն է յընկել, աստուած տայ, որ շուտօվ այս բանն պրծնի: Մեզ լաւ գլնի աստուծօվ թէ ոչ, կամքն տեսոն օրհնեալ եղիցի:

Ողջոյն տաս բանիւ իմօվ մեզ հարցանող բարեկամաց, և այլ ողջ լեր և վեր յընկալ:

Ամենախոնարհ ծառ. Էլիասէս:

Այս գիրն տվի վերո Քրիստեսիային, որ տանի Օրտուար, տայ իմ ախպօրն՝ Մօվսէսին: Օգոստոսի 10:

78. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՏԱՔՏԵՂ ՕՂԼԻ ԵՂԻԱՅԻՆ<sup>35</sup>  
(1722 օգոստոսի 10)

№ 1. Պարոն Եղիայիտ ողջոյն

1722 օգոստոսի 10. Թարվէզ:

Մանիր պարոն, քո հրամանքտ մեզ գիր չը տվիր, հէմ գնալիս մեզ չը տեսար. խուպ դուն ողջ կացիր: Անճախ քեզ կսպսպրեմ, որ մեր խաթրին համար լաւ մուղիաթ լինես, համարիս թէ մեզ քու քսակէն կու պաղջնես: Եւ կաղաչեմ, որ շուտօվ ինձ մին խապար ղրկես թէ՛ եղա՞ւ, || թէ չեղաւ, որ էս շուտօվ դոցա ֆիքրն տեսնում: Եւ տեղիտ էհուալէն ինչ որ լսես, շուտօվ մեզ գերս թէ՛ վրացտան ղօշունն գու գա՞յ Սպահան. թէ ոչ:

Եւ բանիւ իմօվ ողջոյն տաս ֆոնթօյանց պարոն Բէժան բէկին, պարոն Էլիպարին, պարոն Ամիրի որդի Յուսէփին, Քալամաչի Ներսէսի ախպօր Գաբրիէլին, թոխաթեցի Պաղտասարին, Չիթաղենց պարոն Մելքումին և այլ մեզ հարցանողաց, մանաւանդ ամենայն ուղղափառ եխպայրց:

Եւ նոր մին գիր էկաւ Սպահանա աղիցն և գրել է թէ՛ Բանդարա դասիտ էկաւ, 3 նաւ Հինտիստանու յեւէլ է ապրանքօվ մեր սարքարին համար, որ պիտի գայ Բանտար: Եւ այսօր դասիտ էկաւ Հալապու, նայ էլ լաւ խապար բերեց: Աստուծոյ փառք, որ մեր բանն լաւ գլնի, որ տեղս շուտօվ ապրանք գայ: Եւ այլ քո մին օրն հաղար:

Մտոայ Էլիաս Մուշէն:

Այս գիրն գրեցի և տվի վերո Քրիստեսիային, որ տանի Թիֆլիս տայ Ղարսեցի Տաքտեղ օլլի Եղիային: Օգոստոսի 10:

30բ || № 3. Սուրբ հայր պ[արոն] Լակաոտիտ օրհնե[ա]լ յաջն համբուրեմ հանդերձ ողջունի:

1722 օգոստոսի 14. Քարվէզ:

Գիտութիւն լիցի վերապատուելոյցա, որ այս գրիցն յառաջ մին գիր քո հրամանուցա և մուսիու Դուֆրէնին գրեցի և դրկեցի հոգևոր տիրոջ շաթր Ալահվերդու ձեռն յուլիսի 21 և համատիպն ևս նորոգեցի, զի եթէ կորչի մինն, իմանաս միուսովն: Եւ աւէ [լ] ևս այս գիրս գրում եմ սրբութեանդ, զի էրզրմա պ[արոն] Մուսիերիցն մին գիր էկաւ ինձ և մին գիր պ[արոն] Դուվանին: Իմ գրումն գրել էր թէ՛ շուտով պ[արոն] Դուվանն դրկէ, աւատալով թէ՛ իմ հետս էկաւ: Եւ պ[արոն] Դուվանի գիրն պահեցի տեղս, գիտեմ, որ այժմ ճանփումն են պարոն Քաթէոսին հետ, շունքի մուսիու Պօռէկարն ինձ գրեց թէ՛ առաջին գալողներուն հետ գու գան: Հ[ա]լ[ա]պա դասիտ էկաւ, մուսիու Գառտանին համար և մուսիու պատրու համար գիր ունի: Մուսիու Շալիերի գրերն փոքր է, բայց մուսիու Գառտանի գրերն մեծ: Եւ բերանով պատմեաց մեզ այս դասիտն թէ՛ յունիսի գլխիցն յելել են Յոանկիստանու 9 կովի նավ, և 5՝ ապրանքով, որ գան Բանտար՝ 5 նավ գումբանի նավ է, և 9 նավն Մաշկետու համար. որ ամէն նավերում 1500 մարդ և 200 թոփ դրած է, շունքի դասիտն շի գալ, մինչև որ մին լաւ խապար չհասնի՝ թէ՛ ճանապարհներն բաց է: Վասն այնորիկ հարկ եղև մեզ գրել, ծանուցանել տիարցդ մերոց: Մուսի Գառտանին և մուսիու Շալիերին տուր աւետիս ուրախութեան, զի մնան մէջ ուրախութեան, մինչ որ գրերն հասնի: Յառաջ պիտի որ օսմանցին գար տեղս կոխ, բայց այժմ նոր խապար հասաւ մեզ՝ թէ՛ դափուշի պաշի էկաւ, հունքարէն, արգելել է զօրաց, որ չը գնան պարսից վրա, ստուգ է այս խապարն:

Վրաց տան իշխանին որդին յետ գնաց Թիֆլիս, ասելով թէ՛ ճէճէլ է, շի պաշարել, ամայ Վախտանկն ինքն գու գայ 30 000 մարդով: Եւ իւր ախպէրն սարտար կարգեց, առաքում է լազկուն վրայ: Եւ նոր լսեցինք թէ՛ նոր մին էլչի էկել է Թիֆլիս որ պի[տի] գայ Սպահան: Եւ թարվէզու զօրքն, որ գնացին Պլպաս քրտին վրայ, մինչի այսօր մին խապար չէկաւ, քանզի Պլպասն կողոպտել էր Մարաղայ և գնացել էր ի տեղիս իւր: Եւ լսեցի, որ երկու նավ Հինտիստանու գու գայ Բանտար, շատ ուրախացայ: Խնդրեմ, որ այս խապարներս ասես մուսիու Շալիերին և մուսիու Դուֆրէնին՝ հանդերձ ողջոյն տալով բանիւ իմօվ: Եւ մեզ չը մոռանան, քանզի միւրդա Մումինն մեռաւ և 31ա մեր տունն աւերեցաւ: ॥ Կրկին կսպասեմ թէ՛ մուսիու Շալիերն և մուսիու Դուֆրէն ինձ համար մին բան շինեն և գրեն, որ գամ կամ որպէս որ լաւ լինի ինձ համար և իրանց հաճոյ, արացէն այնպէս: Եւ գու, հայր սուրբ, մի մոռանալ անձաւորս: Եւ ամեն խապար որ լինի, մեզ գրես շնորբ կանես:

Եւ բանիւ իմով ողջոյն տաս պարոն տիրոջն, պ[արոն] Դէեհին, Փիլիպպոս վարդապետին, առհասարակ պատրիններին և շէրիմանցոց: Եւ ողջոյն տաս այս խապարներովս մուսիու Գառտանին, մուսիու Քափիթանին, մուսի Սիրանին, մուսի Ժօզեփին, և մուսիու Ներսէսին, մուսիու Եռմէթ, և մուսիու Անդրէյին և այլ առհասարակ մեծի և փոքու, և մեզ հարցանողաց ամենեցուն յոյժ և յոյժ սիրով ողջոյն կու տամ: Բաւեցի իմաստութե[ա]նտ և վեր յընկալ:

Ի ծառայ էլիաս Մուշեխանց:

Նոր մին խապար էկաւ Կիւանու, գրած է թէ՛ մին ուռուսի շափառ նավ յելաւ, որ պիտի գնայ Սպահան, և գրած է թէ՛ լազկուցն էլ յերկուղ չը կայ, շունքի ուռուսն գնացել է լազկուն վրա, որ կոտորեն:

Ողջոյն մուսիու Սպերանսին:

Այս գիրն գրեցի, և վերո գրի օրինակն հետն մօհրեցի, և տվի ներքո մուսի Պօռէկարին, զի որ տանող շափառներին, որ տանեն Սպահան և տան պարոն Լակաոտին: Կնքեցի օգոստոսի 14:

80. ՊՈՌՏԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1722 իուլիսի 12)

№ 33. Օգոստոսի 12: Սպահան մին գիր էկա մուսու Պօռէկա-րիցն ֆրանսուզի ձեռովն, որ թարգմանի այսպէս.

Պարոն Էլիաս Մուշեք

Ի Սպահան. 12 յուլիս 1722:

Պ [ա]րոն, էն գրովտ, որ գրեցիր Քաշանա, կտեսնում, որ սալամեթ անցար. մեք տեղս էլ վատ եմք, որպէս դուն տեսար, քանզի լիտր հացին կարժէ 10 ապասի, համ էն էլ քիչ կգտնվի ձեռն փողով, էս պատճառից աղքատք շատ նեղութիւն կբաշեն և ամեն օր քաղցած մեռնում են:

Ես քեզ գրեցի մին գիր վալի շահառուին յունիս 28: Էս շահառներն մինչի այսօր չէլան, քանզի աղուանք ձանփէն կապեցին. էնչաղն որ էն գիրն ձեռտ կհասնի, կտեսնու թէ քեզ ինչ կասեմ, որ անել պիտի, շուտ կանէս էն բաներն:

31բ || Վրացու իշխանն սարտար արին լազկուն վրայ, միրզա Մումին հարկիւ նրան նայիպ գլնի, ընտուր համար յոյս ունիմ, որ հեշտութենով կտեսնու մեր բաներն նրա օգնութենովն. երբ որ յանձիշխան գլնիմ, քեզ կողարկեմ բանակիցն հրաման, որ քեզ պետք լինի՝ քեզ տալով, որ ինչ պիտի անես թարվէդ: Մին քանի բան մոռացայ, որ ներքո գրում եմ, և միտաների հետ շարք ցգես իբր թէ.

1. Մուղխաթ կացիր մին գիր յետ առնուս նազու գիրն, որ մղտսի Սարգսի կուշտն է, որ գրած է թէ՛ ամէն նազու ապրանքն իմն է և լաւ էտ գիրն պահես և նրան չես տալ, մինչև որ իմ բանն պրծնիս ողջ նրան հետ, յետոյ կու տաս:

2. 5 փեթակ որ տվել եմ նազուն, Գ (4) տարի է, առաջի տարին մինչի տասն յելաւ, այս ոտովն հսապ անես յետ առնուս, յետո ծախես:

3. 4 թուման կառնուս Ամպրումիցն, որ մեր տապանչէքն տվեց շեխ Մուրատ Սուլթանին:

4. Փող առնելից դանակ շինող Ալահվերտուցն խանչարի դաստի համար, էլի նրանիցն գուգես 2 ապասի, որ ինձ տալու է:

5. Ուզանկու օսմանլույի բան կառնուս, որ տվիր քու ճանանչին և նրանց կպահես, որ ինձ պէտք է:

Ինկլիսների շաթրիցն մին գիր առաւ մեր գունսուլի ախպերն Բանտարայ նալի քափիթանիցն: Էս գրում գրած է թէ՛ ֆրանսիզների գումբանիցն 2 նալ Բանկալիցն յելան Բանտար գալու համար, պիտի որ այժմ հասած լինին: Եւ քափիթանն ասում է գրումն թէ՛ որչանք որ ֆրանսիզ կայ պարսից յերկիրն, ասայ որ իրանց ապրանքն պահես, որ նոր Հինտիստանու խարձ է, ընտուր համար որ ժամանակ է այժմ բան տեսնելու համար, շուտով բանտ տես և որչանք որ կարող ես փող ղրկելո, ղրկես որ էն փողն բանտար ղրկեմ կամ տեղս բանացնեմ ընդուց ջոկ, որ շատ պետք է խարձելոյ համար, քանզի մուսի քափիթանին հետ ուտում եմք և մեր խարձն շատ է թանկութիւնի համար: Եւ քեզ կապսպրեմ, որ շուտ նուշ առնուս և շուտ ղրկես ինձ:

Մուսի պատրին շուտով գուղէ յելնել գնալ, որ իրան գլինի ղրկէ Բանտար, ամա շունքի ամէն ձանփէն կապ է, պիտի որ մեզ հետ համբերէ: Եւ ինչ որ խասպար լինի, ինձ գրես: Եւ բարես հասուր պ [արոն] քափուշիններին: Պ [արոն] Գուան, պարոն թաթէոսն ֆրասանթի կնալի յելնելու համար: Եւ քեզ բարե կուտան, որպէս որ այլոց քու գրովն ողջոյն մատուցիր:

Պիտի թէ աղա Մումինն յելաւ, քանի օր է, որ նրան չեմ տեսնու: Շատ բարե արա միրզա Մումինին: Որժամ Արտաւելու դառնայ և ասայ նրան մեզ բարեկամ լինի, որպէս էյաք և որպէս եմք:

32ա Եւ եմ պարոն քու յօժար ծառայ Հօննօի Պօռեկարտ:

Գուն տուր ֆրանսուզին 2 թուման ոսյիձ, որ ինձ տվեց և իմ ձեռնագիրն յետ կառնուս, որ ես տվի իրան: 14 յուլիսի:

Կասեն թէ՛ հիմայ որ Ալի Մարտան խանն պախտիարին և այլ զօրքով շարթեցին աղուանին 2 անգամ: Համա Մահմուտին էնչանք քիչ մարդ կայ, որ յուժ անում է ջուղահեցոց, որ նրան տան ԲՅ (2000) մարդ: Վերջ:

№ 47. Մուսիու Պօռէկարիս ողջոյն սիրոյ մատուցանեմ

1722 օգոստոսի 14. Թարվէզ:

Պարոն.

Էն գիրն որ գրեցիր ֆրանսուզի ձեռովն, մեզ հասաւ օգոստոսի 12, իմացա ինչ որ գրել ես: Ամայ յիմացիր թէ յինչ բան անցավ տեղս, որ ծանուցի բեզ հոգևոր տիրոջ շաթրովն, յետոյ խորհէ՝ թէ ինչ անել պիտի, արա վաղվադակի և ես արարից:

Ղազարիցն գիր էկաւ էրզրմայ, գրել է ինձ թէ՛ մղտսի Սարգիսն լսեց թէ միրզա Մուսիինն սպաննեցին, ասում է՝ Եղիան էլ կսպանեն, ես իմ փողն կառնում Ղևոնդիցն և Մօվսէսիցն. և ֆիքր ունի մղտսին, որ իմ տունն քանտէ: Ի՞նչ կամիս ասել, ֆիքր արայ ի՞նչ պիտիմ անել: Ինչ որ ունէյի, քո ճանապարհումն խարճեցի անխնայ, միայն թէ մնաց ինձ մին տուն, որ մայրս միջումն նստած է, թէ որ կամիս նայ էլ տամք մղտրտուն, կամն քոյ [է]:

200 թօփ Ստամպօլու զրկել է հունթբարն այս յերկրի կովին համար: Էրզրումու բերթն շինում են: Եւ օրտուն պիտի դուրս գար Հասանղ[ա]լան, նոյն օրն մին դափուչի գու գայ ֆարմանով՝ թէ էլ կոփու չը գնան, և ֆարմանումն գրած է թէ՛ Մահմուտն Սպ[ա]հան էլ բռնի, էլի չը գնաք: Այս նոր ֆարմանն գալով, յետս շորան || օգոստոսի 9:

Էյվազն Հալ[ա]պայ էկաւ ինկլիսի համար, ամմայ մուսիու բունսուլին համար լաւ գրեր բերեց: Ֆոանկիստանայ այս խապարներովս ողջոյն կուտաս մուսիու Գառտանին: Եւ Այվազն ասում է թէ՛ 9 կովի նավ, որ ամէն նավումն Ռեձ (1500) մարդ ունի և 200 թօփ մասքէթի համար և 5 նավ ապրանք՝ գումբանի համար, որ գալիս են Բանտար, յունիսի գըլխիցն լէլել են Ֆոանկիստանայ: Այվազն գրերն չի բերում

ասելով թէ՛ Պալէօզն իրան դատադա արավ թէ՛ մինչի Սպահանու ճանփէն չը բացվի, չը գնաք, որ էտ գրերն պէտքական գրեր են, զայ չը լինի, վասն այնորիկ հարկ եղև մեզ շուտով ծանուցանել ձեզ և մուսիու գունսուլին այս ուրախութեան խապարն, որ ուրախ մնաք, որ մինչի լաւ ճանփայ լինի, որ Այվազն գրերն բերէ: Թավրէզու ղօշունիցն մինչի այսօր մին խապար չէկաւ՝ թէ ի՞նչ շինեցին քրտին հետ:

Եւ Նաղին մինչի այսօր մեր զատերն չը բերեց, շունքի ինքն գնաց սաֆար: Վրաց տան իշխանին տղան յետ դարձաւ, շունքի հայրն այսպէս կամեցաւ, թէ նա շէհն է, բան չի պաշարել, դրեց իրան տեղն և ախպէրն սարտար շինեց, զրկեց լազկուն վրայ: Եւ ինքն Վախտանկն ԼՌ (30 000) մարդով գալիս է Թարվէզ: Եւ լսեցինք թէ մին ուռուսի էլի էկել է Թիֆլիս, որ պիտի գայ Թարվէզ և Սպահան:

Շատ աշխատեցա թէ միրզա Մուսիինի մօրիցն և ախպօրիցն մին ձեռնագիր առնում, չէլաւ: Անճախ հոգևոր տիրոջ ղասիտին տված գրէրուն լաւ մուղխաթ լինիս, որ բեզ պէտք է: Իմ թուֆանկն և թուրն, որ միրզա Մուսիինի կուշան է, ես խապար առի թէ՛ տեղս է, թէպէտ իրանք ասոմ են թէ՛ սարտարն տարաւ:

Իմ հալն բեզ յայտնի լինի, որ վասն երկուզի թշնամեաց շեմ կարել դուրս յելնել և մին փող շունիմ, որ խարճեմ: Եւ շուտով մին ֆիքր քաշէ, լաւ դօրաւոր գիր զրկէ, թէ որ գուզես բան շինեմ, թէ ոչ՝ շեմ կարել տեղս մնալ և զուլսս կորուցանել քո բանին համար: Աստուծոյ խաթերն համար լինի, ողորմեաց բում անձնաւոր և մեղապարտ ծառայ էլիսսիտ:

Կիլանու մին գիր էկաւ որ գրել է թէ՛ մին շափառի նաւ էլաւ ուռուսիցն, որ շուտով պիտի գնայ Սպահան: Եւ գրել է թէ՛ էլ լազկուցն միք վախել, որ ուռուսն գնացել է շարթէլու: Եւ այլ շատ խօսք կայ, կարել շեմք գրել, յետ միտջ ամսոյ գիմանաք: Մըթով օղլի Ալին ողջ[ոյ]ն կու տա հրամանուցտ:

33ա

|| Այս գիրն գրեցի ի վերոյ երկու օրինակն միատեղ, կնքեցի և վերո Քրիստեօփայի ձեռովն տվի վրացի շափառներին սօմխեթեցի Աղրութի և Զավրոյի որդոցն, որ նորա տանին Սպահան, տան մուսիու Պօռէկարին: Օգոստոս 14:

1722 սեպտեմբ [ե]րի 13. Թարվէզ:

Էստից յառաջ քեզ մին զիր գրեցի գորեցի Քրիստէսիայի ձեռովն, դուն տեղտ շես եղել, վասն այնորիկ չէ հասել: Եւ քու գրած գիրտ մեզ հասաւ: Էտ ինքմիներն, որ յուզում ես, լսեցի թէ Այվազն գու գայ, նրա կապսպրեմ, որ առնու, ղէրս պաղար շեմ յելնել: Գու նոր ելիջան գնացիր, սնտուկն բացիր, էլի կնքեցիր, թէ ոչ, ինձ գրես:

Եւ իմ որպիսութիւն այս է, որ աղուանն Սպահան էկած շը լինիր, ինձ համար շատ լաւ գլնիր, ամմա մեծ էլչին և ամէն ֆռանկներն ինձ շատ ընդունեցին, մանաւանդ մեծ աղէն, և ինձ շատ ումիտ տալով ողարկեցին թէ՛ քանի որ միրզա Մուսիին խան է, գնայ ամէն փողերն բուսուր, իմ մեղացէն նրան էլ մեռած տեսի: Այժմ կսպասեմ Սպահանայ խապարներին, եթէ աստուած կկամի, որ Սպահան պրծնի, ինձ համար շատ լաւ գլնի, աստուած թէ ոչ կամի, տեսոն օրհնեալ եղիցի:

Եւ խապար էկաւ թէ 3 նաւ մեր սարքարին համար էկել է Բանտար Հինտիստանիցն և 5 նաւ էլ Ֆռանկիստանիցն յելել են, որ զան Բանտար, աստուած մի արասցէ՛ թէ որ Սպահանա բանն փշանայ: Իմ խորհուրդս այս է, որ գնամ Թիֆլիս, և կարծեմ որ զուր էլ պիտի որ գաք տեղն, ղէրա բանն ուրիշ կերպիւ է, գրել չի լինիլ: Անճախ լաւ քննելով տեղեկանամ և քեզ կգրեմ ճերմակ թղթին վրայ, որ ջուրն ցգես, կարդաս, միտտ պահէ, այն գրի մէջն ևս կգրեմ թէ ինչ պիտիս անիլ: Ունիմ մեծ էլչուցն փաթենթայ, որ ֆռանսիզաց պալրաղի տակն եմ. ինչպէս գրելն կտեսնու, որ փաթենթի օրինակն այս գրիս մէջն է, դուն կարթաս և գիմանաս և մարդու շես ասիլ, մինչև որ իմ բանն մին ղի՛ճ լինի:

Այսքան ժամանակ աշխատեցի քրտնաջան և անուն հանեցի ֆռանկաց մէջն, այժմ որ շատն գնացել է և քիչն է մնա-

ցել, թէ ցգեմ, կկորչի իմ անունս, պարտ իմ մին քանի ամիս էլ համբերել, որ բանի վերջն հասնիմ՝ կամ այսպէս, կամ այնպէս, յուսացել եմ աստուած, գիտեմ որ ինձ չի թողուլ առանց վարձոյ, որոյ ողորմութեամբ վարձատրեսցին ամենայն եխպայրք և նոցա փոխարէնն ծառայ էլիասն:

Այս գիրն գրեցի իւր համար 76 գրի պատասխանն, տվի շաթր Այվազին, որ տայ Հախպանտին, որ տանի Օրուար տայ իմ եխպայր Մովսէսին ձեռն: Սեպտեմբ [ե]ր 16:

№ 15. Սիրելի եխպար պարոն Յուսէփիս

1722 սեպտ. 3. Թարվէզ:

Գիտութիւն լիցի հրամանուցաւ, որ յուլիսի 14 նոր տօմարիւ հասայ Թարվէզ ձերին սուրբ և մաքուր աղօթիւն, քանզի յորժամ որ ելի Սպահանայ, պիտէր երկու թև, զի այս թևօքս հազիւ կարէլի զերծանիլ ի ձեռացն աղուանից, վասն զի այնպէս սաստիկ և պատրաստ կաղմեալ կպահէին ճանապարհն, այլ աստուած փրկեաց զիս, որպէս այժամն՝ ի որոգայթէ որսողաց:

Գիտեմ, որ ամէն խապարն Սպահանայ մի ըստ միողէ լսել էք, վասն այն ոչ հարկաւորիմ մի ըստ միողէ պատմել: Բայց իմ ելած օրն հացի լիտրն 6 ապասի էր և այլն ըստ այսմ սարասի:

Ձուղայեցոց հասաւ մեծամեծ վնաս ի աղուանից, և այլք, որ փախել էլին քաղաք ֆոանկաց տներն, եղին լուր ի վերա նոցայ՝ թէ հայերն պատճառ են, որ աղուանք եկին: Այսպիսի բանպասելով այնքան խոռվեցաւ ժողովուրդն, որ մինչև շահին հավանացուցին թէ՛ ստոյգ է, որ հայերն ապստանբեցան ի քէն և պատճառ են զալըստեան աղուանից: Եւ շահն ավատալով, հրամայեաց կոտորել զամենեսեանն: Յորժամ էկին որ հայերն հանեն մեր տնիցն, ասելով թէ՛ հրաման թագաւորին է, որ ցրվեալ հայքն ամէնն ժողովեմք միտեղ և պահեմք զգուշութեամբ: Զայս լսելով մուսի Գառգտանն ծանեաւ շար խորամանկութիւն ի հնարն պարսից, պատասխանեաց մոսիու կօնսուլն թէ՛ այս տուն Յրանսիզ թագաւորինն է, ով որ մտանէ աստ, պիտի խաղաղութեամբ լինի և ապահով, մեք կարող չեմք տալ ձեզ: Եւ գիտութիւն լինի ձեզ, որ մեք բարեկամք եմք թագաւորին բարեկամաց և թշնամի եմք՝ թշնամեաց, այժմ որ հայերն մեր ձեռն են, ստուգիւ քննելոց եմք՝ եթէ իրաւ լիցի զոր ինչ ասեն, մեք ինքնին կոտորելոց եմք, եթէ սուտ լիցի,

33բ

մեք ոչ կամիմք որ իզուր լիցի կորուստ հայերուն ի վնաս թագաւորութեան: Այսպիսի պատասխանաւ թուլացան: Եւ այս օրինակաւս պատասխանեցին ինկլիսք և վալանտիզք: Ո՛հ թէ յիմանային սուպահերն իրաւի եխպար՝ որ թէ ֆոանկաց տներն չը լինէլին, վաղուց ի մահ մատնեալք էլին, զի ես ինքս տեղն էլի և այս բանս իմ կշտին եղև: Ինձանից յետ երկու անգամ էլ յուզել են կոտորել, բայց ոչ թողին:

Եւ ինձնից յետև շատ պէս պէս խապարներ եղև, չի լինել զրել, զի ոչ գիտեմ սուտն և իրան: Բայց ասացին լիտր հացին եմ (5000) դիան յելաւ և ոչ է գտնուամ: Եւ բազումք կոտորվեցան, և օրըստօրէ կոտորվում են: Բայց ստոյգն այս է, որ թէ վրացու զօրքն չը գնան օգնութիւն, դժուար է Սպահանա բանն:

Եւ թէ լսեցիք թէ՛ Քաշանայ շորս դին աղուանք պատեցին, միք ավատալ, թէպէտ ողորդ է, որ մին քարավան թալանեցին և մին գեղ, բայց ոչ են աղուանք, այլ են զող զօրացն պարսից: Մին հաճի Հաշուամ անուամբ կայր թարվիզեցի, որ հարիւրապետ շինեցին և զրկեցին Քաշան Շահապտին հետ. և Շահապտէն սրա էձ (700) մարդ տվեց այս հաճի Հաշուամին թէ՛ գնաց Ղօհրուա ճանփէն պահեր: Որժամ Շահապտէն Ղումու վեր կացաւ դէպ Ղազպին, նայ եկել է Քաշանա՝ շորս դին կողոպտել և քարվանն զարկել և դարձեալ գնացել Ղօհրու:

Շահապտէն ասում են պիտի գայ Թարվէզ, ոմանք ասում են պիտի գնա Արտաւէլ:

Պլապաս քուրտն էկա Մարաղա կողոպտեց: Երբ խապարն հասաւ տեղս, յելին տեղիցս շատ ժողովուրդ, մինչ զի իրանք ասում էլին թէ՛ քսան հազար, գնացին յուլիս 29 և փախստական եկին մտան քաղաք օգոստոսի 16: Ամէն բանն զրելն ձանձրութիւն է, բայց այն օրն որ քուրդն դէմ յելաւ, որ կոբուտայ, առաջ քան կոբու սկսելն, յերես դարձուցին և փախան. այնքան հապճէպ փախչում էլին եղել, որ բազում ձիանք ճազվեցան փախած ժամանակն, իրանց զրեհն և զգետն թափելով գնում էլին, այնքան, որ վրանին մի շապիք մնում է եղել: Եւ ծոցի քսակով փողն է ցգել յետս՝ աղաչելով և երդելով թէ՛ այլ մի՛ գալ յետնէս, որ վրաս բան չի մնաց: Այնքան խելա-  
34ա գարեալ փախչել եմ, որ յետ՝ չի մտիկ անել՝ թէ օ՛վ է, որ յետնէրն գու գայ: Այսպէս խայտառակ դարձան և ամօթալից և զաղտագողի մտան քաղաք օգոստոսի 16-իցն մինչի 20:

Կանցին թէ մին ուռուսի Ջափառի նալ յելաւ Կիլան և գնաց Սպահան էլչութեան: Եւ լսում եմք թէ ուռուսն վեր է կացել պարսից վրայ, որովհետև Շամախի ձեզ մօտիկ է, ստուգն մեզ գրես, և քո հրամանուց «Ակն հոգեկան» գիրքն ինձ ղրկես, եթէ հաճոյ է:

Ես եկի Ֆրանսուզ բունսուլի փաթենթայօվն որ տեղս նրատիմ, ամմայ իմ մեղացէն այսպէս խառնեցաւ այս յերկիրս, խիստ տրտում եմ, աստուած վերջն բարին անէ: Պատրուցն ողջոյն սիրո մատուցանես բանիւ իմօվ ևս ժամաշէն պարոն Արութինին, նանային և այլ Ապտուլ Մըսեհ բեկին և պարոն նազարին և այլ մեզ հարցանօղաց, ամէն բարեկամաց յոյժ և յոյժ սիրօվ ողջոյն մատուցանեմ: Լիցի ընդունակ: Շնորք անես շուտօվ տեղիտ որպիսութիւն մեզ գրես Արութենից, թէ որպէս անց է կենում, և իրան ասայ, որ ինձ մին գիր գրէ իրան բաներուն վրայ, կսպասէ պատասխան գրոյս:

Մտոայ էլիասն Մուշեխանց:

Հալապայ մին խապար էկաւ թէ՛ Ֆրանցէզ թագաւորն ղրկել է 9 կովի նալ և հինգ նալ ապրանք, որ պիտի զան Բանտարապաս, որ Մաշկէթի յերկիրն առնուն: Ապրանքօվ նավերն մեր գումբանի համար[է]: Ասում են ամէն կովի նավումն Ռեճ (1500) մարդ և 200 թօփ, երկու ամիս և կէս է, որ Ֆրանկիստանայ դուս են: Խանի դուլ Լօվրազ բէկին շատ բարև անես. ասա իրան թէ՛ քեզ հետ եկօղ Ֆոսնկ Յեահիյեայ բէկն քեզ շատ բարև կանէ, նա ինձ կճանաչէ և քեզ ապսպրեցի նրան, որ լաւ մուղիաթ լինի Ապտուլ Մսեհեկին հանդերձ:

Այս գիրն գրեցի և գրի պատրոց գրի մէջն և տվինք գորեցի էստատի որդի պարոն Զօրապին, որ նայ տանի Գանձաչ տայ վերո զանձայեցի պարոն Յուսէփին: Սեպտեմբերի 3:

84. ՊՈՌԵԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1722 սեպտ. 9)

34բ || № 34. Սեպտեմբերի 9 մին գիր էկաւ Սպահանայ մուսիու Պօռէկարիցն շաթր Փարանտայի ձեռօվն. վերո երկու գրի օրինակն և նոյն թղթին վրա ևս գրել էր, զոր ինչ անցաւ այնուհետև, որ թարգմանի այսպէս.

Օրինակն էս գրօվս քեզ գրեցի, որ ինչ անելու ես և քեզ կրկին կապսպրեմ, որչանք որ կարօղ ես փող ղրկել վասն իմ բաներուս, որ գիտեմ շինել, որ այժմ Ֆրսանտ կայ, փող ղըրկելու, եթէ ոչ, առժամայն պարաթ կամ ունկրուղ ոսկի ղրկէ:

Թօխաթու էրզրում տորուն դու գայ ջոկ ջոկ պապաթ և գներն այլ և այլ, ես քեզ կասեմ՝ զարամանու տորունն կժախվի Թօխաթ 80 կամ 90 ղողու զանթարն, միուսն որ քալազա կասվի, նրա զանթարն կժախվի 40 կամ 50 մառչիլ: Էս պապ[աթ] թ ապրանքիցն շատ ուզում են Հինտիստան: Ես քեզ կաղաչեմ, որ ինձ համար առնուլ տաս էրզրմ երկու հակ՝ երկու պապաթիցն և ղրկես ինձ: Էն չաղն, որ դուն կտեսնուս, որ մեք պրծած գլնիմք աղուանից, տեսնում ես եթէ շահ գլնի, տորունիցն, յետոյ քեզ կապսպրեմ, որ շատ առնուս:

Եւ քու ամէն բանն շուստ արայ, նշի համար, որ քեզ ապրսպրեցի, հազար լիտր նուշ եթէ կարես, մին էնչանք էլ աւել առ: Էս գիրն քեզ հասածին պէս, կտանիս կուտաս միրզա Մումինին և ինձ գրէ, զոր ինչ պատասխան կու տայ: Վասն նշի շառնուս, մինչ որ լսես, որ մեք Մահմուտիցն պրծած լինիմք, ամմա եթէ կտեսնուս որ միուս սօվտաքարներն կառնուն, դուն էլ առ, վախեմ թէ պրծնի, յետոյ քու ձեռն չը յընկնի: Ինձ ղըրկէ պարաթ, եթէ վատ լինի, էլի փողն յետ կառնումք Թարվէզ:

Ես եմ պարոն քու շատ յօժար պաշտոնեայ Հօնսօռէ Պօռէկարտ: Յուլիս 24:

85. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊԱՇՏՈՒՆ ԵՎ ԼԱՆՎԼԱՏԻՆ  
(1722 հոկտ. 3)

№ 3. Վերանպատուելի պ[արոն] Պաշօթ և պ[արոն] Լանկլատ

1722 հոկտեմբ[ե]րի 3. Թարվէզ:

Միրելի հարք իմ, հանապազ միք աղէկիզեալ որոնել որպիսութենէն ձերմէ և ոչ որ էր, որ մեզ ճշմարիտն բացայայտել՝ թէ ձեր տէրութիւն [ն] առողջ էք մնացել և անվնաս ի ձեռաննէ անօրէն բարբարոսաց, թէ ոչ: Այժմ հաւաստիւ տեղեկացաք, որ ձեր տէրութիւն [ն] էյիք Շամախի: Աստուծոյ փառք և գոհութիւն, և մեր աչքն լուս, ոչ սակաւ ուրախութիւն եղև մեզ: Եւ խնդրեմ Յիսուս միածնէն, որ շուտով ձանփայ բացվի և գրեմ ձեր խապարն Սպահան, լսեն և ուրախանան: Որպէս մեք յուլիսի 23-իցն մին գիր ունիմ Սպահանայ, որ գրած է թէ՛ դեռ ևս պաշարեալ կայ քաղաքս, այնուհետև մեզ էլ գիր չի հասել՝ թէ որպէ՛ս եղև նոցայ բանն: Միթէ ինքն ամենողորմն աստուած ողորմի նոցայ: Այս պատուհասն որ եկաւ, մեք ևս Սպահան էյաք, յետ շորս ամսու յելաք Սպահանայ և եկաք Թարվէզ: Աստուծոյ փառք, որ յառաջ քան թէ

36ր Միրվէյսի որդին || Սպահան գալն, ամէն պատրիքն և իրանց եկեղեցու զարդն բերինք Սպահան մուսիու քունսուլի տունն: Հայր սուրբ, աստ անտեղի է և անվրէպ ծանուցանել ձեզ որպէսութիւն մեր, բայց խնդրեմ ձեր հրամանուցէն, որ դուք հաճիք ի փառս Յիսուսի, զոր ինչ ձեզ գրեց պատուելի պ[արոն] սուրբիօրն, և մեք մեծանալով աստուծով բարձրացուցանեմք խաչն Քրիստոսի և ծառայեմք նմայ և երբէք ոչ մոռացայց ձեր բարերարութիւն:

Յոյս ունիմ թէ թագաւորն Մօսկօֆու գու գայ Շամախի և դուք նորա տեսութիւն կգնաք: Եւ կամ թէ լինի նրայ բանակումն մին մեծ ֆոանկ, ծանուցանէք նմայ վասն իմ, եթէ իմանաք, որ լաւ գլնի մեզ համար: Գրոյս պատասխանն շուտով առաքել մաղթեմ: Եւ թէ մեզ յուզեն, շուտով պատրաստ եմ

գալ, եթէ տէրն կամեսցի: Որպէս ունիք յօժար ջանիւ խնամել հոգոյս, նոյնպէս եթէ կամիք ջանալ վասն կեցութեան մարմնոյս:

Զի ես եմ ամենախոնարհ ծառայ էլիաս Մուշեխանց:

Այս գիրս գրեցի և պատրոց գրին հետ կնքեցի և տվի Գաֆաելին, որ տվեց Ղազպինու եկող վրացի շափառ զինտար Զօրապին, որ տանի Շամախի տայ պ[արոն] ջեզուլիթ պ[արոն] Պաշօթին կամ պ[արոն] Լանկլատին: Հոկտեմբեր 3, գնացին հինգ [ին]:

№ 35. Հոկտեմբերի 18: Համատանա մին գիր էկա մուսիու Պոռեկարիցն շաթրով, որ միշումն էր մուսիու Գառտանի գիրն, որ թարգմանի այսպէս.

Պարոն Էլիաս Մուշեք

Սեպտեմբերի 7. 1722 Համատան:

Պարոն, էս գրով գլնի քեզ խապար տալ, որ Սպահանու յելայ օգոստոսի 9 Կիլանու խանին հետ և մուսիու պատրին և շատ պարսք, որ ամենս գլնէլինք 400 մարդ: Բայց յելնելուցն յետ մին ժամու աղուանք թափվեցան մեր վրան: Պարսքն փախան, և ես կայնեցայ, որ նրանց կռուանել տալու համար: Եւ իմ նօքարն ճանփա ցգելուա, մինակ մնացի: Էն ժուկն 12 աղուան իմ վրան թափվեցան և ինձ խոցեցին նիզակով միշացէս: Էս խոցիցն թամամ չեմ լաւացել: Եւ էն շաղն իմ զարաբինան նրանց վրայ դատարկեցի և ցրվեցան, և ես հասայ իմ յընկերտանցն, որ կրկին լցնեմ իմ զարաբինէն, բայց նոյնժամայն իմ ձին յընկաւ, յետոյ որ յուղեցի նորէն հեծնում, թամքն շրջեցաւ, և կամէլին նոր շինել, էնշաղն || ինձ վրա հասան երկու աղուան, և մինն գուզէր վարնել նիզակով: Եւ ես, որ դիմեցի, որ ինձ չը վարնէ, ինքն մնաց տեղն: Նոյնժամայն նրայ վրա քցեցի իմ թափանշան մօտիկ, և իրան յընկերն որ մօտեցաւ թէ իրան յըն [կ]երն դարցուցանէ, ես պրծա նրանից: Յետոյ ձիուս ղուանն բացի, որ թամքեմ, բայց ոչ կարողացայ, քանզի վրան մին մեծ խուրճ կար, որ ծանտր էր, նրան բաց թողի և հետևակ փախայ դէպ նաճաֆապատ, տեղն մնացի անդ մի քանի օր, որ որոնեմ իմ պաշտօնեայն, որ հեծել էր յետխտանին վրայ, թէ որ նայ պրծաւ, մուղիաթ կաց, պահէ մինչի ես գամ: Ով ոք որ ապրանքն պրծուց աղուանից, կթալանվէլին գեղարէնքում ի ձեռանէն պարսից: Վասն այն ծախեցի իմ ղնրբինան և իմ վրայի հանդերձն շատ էժան, չունքի

կտեսնէլի, որ ապրանքն պատճառ գլնիր սպանման իմոյ. յետո վատ շոր հագայ: Իմ կերպն փոխելու համար և ճանփէն գնացի հետևակ խունսար: Որ հասայ, լսեցի որ մուսիու պատրին երկու օր էր, որ գնացել էր Շիրազ Լօռիստանայ ճանփովն, շատ բախտաւոր գլնի, որ եթէ առողջութենով կարէ հասնիլ Շիրազ: Ամէն նրայ ապրանքն կորաւ և քանի պաշտօնեայ մուսիու Գուֆրենն և պարոն Գէհէն և պարոն Լակառոն նրա հետ էն: Խունսարա, որ էլայ, ընկերացայ գեղեցոց հետ և էլ վարցու կալայ մին աուր համար: Եւ տեղն մնացի մինչի որ յընկեր լինէր, քանզի ամէն ճանփէքն կապ են ի ձեռանէն աղուանից և պարսից, շատուց է, որ էս ճանփիցն քարավան շի գնալ, ընկերացայ թուրքաց հետ, որ պրծել էլին Սպահանայ և շընկանք ի ձեռն ավաղակաց, քանզի ուղիղ ճանապարհն թողաք և մուրտան գնացաք: Որժամ մերձեցաք Համատանա մերձ երեք աուր ճանփայ, 20 մարդիկք էինք մերկացած աղուանից: Որժամ հասա Համատան, անտ գտա պ[արոն] Զօղէփն Կարմէլիթանն և շնորք արաւ ինձ առավ իրան տունն: Որքամ որ տեղիցս մինչի թարվէլ շատ գիժար է, տեղա կմնամ մինչ որ լաւ ֆրսանտ ճարեմ և փող որ շոր առնում, զէրա պատրին փող չունի:

38ա

Տեղս հասայ և լսեցի շատ մարդից, որ սարտարն միրզա Մուսիինն սպանեց, աստուծ տայ, որ սուտ լինի, թէպէտ թէ ինձ կալատացնեն, թէ ողորդ է, ամա շաւատամ, կավատամ թէ սուտ խապար է, որ || նրա թշնամիքն կասեն: Ամայ եթէ էս խապարն շիտակ է, դուն վոազ փողերն հաւաքէ, զոր ինձ պարտ են և կառնուս նրանց ժառանգիցն, ինչպէս որ թարվէլու խանութին տվին իշխանին վրաց, նրան հարկ է, որ մին փոխանորդ կարգէ, կարծեմ նրա կուշտն մին քանի վրացի գլնի և այնպէս անեն, որ մեր պարտքերն առնուն մեզ օգնելով և որ մեր բանին վրայ լաւ մուղիաթ լինին նրանց դահիք կու տաս և մուղիաթ գլնիս, որ մեր բանին շուտով տեսնուս: Եթէ իմ իքմիներն որ նաղու կուշտն շափր, շուտով առ և թէ ինքմին պակաս գլնին, գրէ, որ որժամ հասանիմ, առնում: Ինչ որ ինձ և մղտսուն տալու է, կտեսնուս որ չը կարես առնուլ, նրան ձեռնագրերն ծախէ հաճի Գաւրիշին, եթէ կարես, շահօվն առ և ինքն որ կարենայ լաւ առնուլ, էն գիրն էլ կու տաս Հաճուն, որոյ միշումն գրած է թէ՛ նաղուն ամէն ապրանքն իմն է, որ աւել կարողութիւն տաս Հաճուն, նրան վէքիլ արայ, որ լաւ բուտուցանէ իմ պարտն: Եթէ Հաճի Գաւրիշն

այժմ փող չը տայ, կամի տֆտիկ տալ, առ, եթէ գիտես, որ վնաս չի հաննիլ և կպահես մինչի ես գամ: Տեղս ասում են թէ՛ վրաց իշխանն վրացի ղրկում է Սպահան վասն օգնութեան, եթէ շիտակ է, եթէ նուշ շառիր, առ, եթէ սուտ լինի վրաց գնալն Սպահան, մի առնու: Թէզ ինձ գրէ ամէն խապարն, որ Թարվէզ լսեցիր, որ ինձ հասնի տեղս կամ ճանփին:

Սպահան խապարն այս է, որ յետ 10 աւուր որ ես յելայ, հացի լիտրն 12 հազար դին, ամէն ճանփէքն այնպէս կապել են աղուանք, որ ոչ ինքմին գելնու և ոչ իքմին կմտնու, եթէ կարող էյի իմ ամէն ապրանքն պրծացնել և գալ Թարվէզ, շատ լաւ իմ բաներն կտեսնեյի, քանզի ունէյի մին լաւ հրօվա [ր] - տակ թագաւորէն պարսից: Եթէ բաներն լաւ գլնի, շուտօվ այլ հրաման կառնում: Եւ իմ ողջունն տուր պատրոցն, որոյ կարգալ կու տաս իմ գիրն:

Եւ ես քո խոնարհ ծառայ Հօնօէ Պօռէկար:

87. ՊՈՌԵԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ (1722 սեպտ. 18)

№ 35. Միուս գիրն որ սարայ հետ էր, թարգմանի այսպէս.

Պարոն Էլիաս Մուշեք

Համատան. 18 սեպտեմբերի 1722:

38բ

Պարոն, էն չաղն, որ գրեցի էս ամսի 7-իցն և ֆրսանտ չեղաւ, || որ ղրկէյի, յընկեր արի այս գրիւս և այսու քեզ կգրեմ շատ, թէ ինչպէս անել, որ իմ բաներն թամամես Թարվէզ: Յառաջ քան Սպահանա քեզ գրեցի թէ՛ ճշմարտապէս մեզ խապար էկաւ թէ 3 նավ գու գար Հինտիստանու Բանտարապաս մեր ֆոանցէզ գումբանի համար, ընտուց երկու լցվիլ է Բանկալու ապրանքիցն և մինն Ֆոանկիստանու, մեծ բաժինն շուխայ է, գուման շունիմ թէ էս նաւերն հասան Բանտարապաս, չափտամ թէ էս բաներն լսելօվ կարենան ապրանք ծախել անդ, ամայ ումիտօվ թէ Սպահան շուտ կպրծնի, կիմանան անդ մի քանի ժամանակ, ըստուց յետե կարծեմ թէ մասլահաթ կանեն թէ գնան Պասրայ, որ ապրանքն յետ չը տանին Հինտիստան:

Քանի որ կայ, որ Պաղտատու վաճառականք եկին և խապար տվին թէ՛ Պասրա հասան ֆոանկի նավերն և շատ Պաղտատու պազրկանք գնացին Պասրայ, շունքի խապար էլաւ թէ՛ շատ ապրանք կայ, ես, որ տեղս մօտ եմ, կաւատամ թէ լաւ կանեմ գնալ Պասրայ, որ անդ կարենամ լաւ բան շինել ինձ համար և ծառայեմ գումբանիային, զէրա տեղն թարգման չը կայ, որպէս Բանտար:

Եւ այլ ուրիշ կերպ ֆիքր արի, թէ էս ճանփէն պատճառ գլնի, որ իմ Թարվէզու բաներն յետի գլնի, ամմա յոյս ունիմ թէ Սպահան շուտ կպրծնի: Մուսիու գունսուլին գրեցի, որ քեզ օգնութիւն տայ, եթէ քեզ պէտք գլնի: Այս կարես նրան գրել, որ քեզ մին թալիղայ կամ մին սըֆարիշլամայ, ամայ եթէ կարես փէշքաշօվն շինել իմ բաներն, առանց օգնութեան մուսիու գունսուլին, կարծեմ թէ էլ շուտ գլնի:

էնչաղն որ Թարվէլ կհարցնեն քեզ ինձ համար, կասես թէ շահն զրկեց, որ գնա Ղազպին հազր անէ թօփերն, ամա չը կարացի գնալ աչն ճանփօլն, որ իմ իբմինն կորուցի տեղս եկի, որ լսեցի, թե շահգատեն գու գէր Համատան և կսպասեմ, որ գայ այս ասլօլ էլ լաւ մտիկ կանեն քեզ: Եւ եթէ ասես թէ ես գնացի Պասրայ, մեր բաներն տեղտ գերկարէ:

Ինչպես որ տեսնում եմ թէ շատ յուշ գլնի տեղս շահ տեսնուլ գուզեմ, որ իմ ապրանքն ծախես էստուց ջոկ որ գրում եմ ներքո իբր թէ: Ամէն իմ գրեանքն և իմ գրերն, մին շիշ, որ կոթն 39ա || արծաթ է, տապանչէքն որ քեզ տվի, և զալայ դիփթն, և քանոնն, զալամթրաշ զալամ, և լաք և իմ ֆոռանկի շորերն և պաճիճներն, 2 փոքր շաքուններն և զալամներն, որ երկու թանաքի զութումն են ևս աճամի շէնք դանակներն և այնք, որ ծախիլ չի լինիլ և որ կտեսնուա որ ինձ պետք գլնին և այլքն կծախես, քանի որ կարես թանկ ծախել: Էն շաղն որ մօտ էյի Սպահանու յելնելու, Նօհբէկ Շահսեանն որ առաջմէ Ղազպինու միրզայ Մումինին հետ էկել էր, որ ինքտ նրան լաւ կճանաչես, ինձ աղաչեց, որ ինձ հետ նրան բերեմ, որ տեսա որ ինքմին շունի և քաղցած մեռնում էր, քանի մի փող տվի նրան ինչպէս ներքո գրած է իբր թէ երկու թուման 21 ապասի նրանից հեսապն գուզես, տվի երկու ոսկի, որ տալու էր փոքր, մատեան որ նրան համար առի երկու թուման, մին թամբ՝ 5 ապասի կամ 200 դիան, ամէն կանի երկու թուման 42 մահմուտի: Փողիցն ջոկ իրան տվի քանի մի իբմին, որ նրան ձիու վրան դնէր, նրանից յետ առ իբր թէ իմ ձիգ թուֆանկն, և փալասխան, և իմ շամ թուրն և 3 ձիու շկամ օսմանլուցի մին զին փուշ շուխայ մուտախլ կամ նաղաշի և մին սալուր պասմայ շուխայ, մին ձիու շապիք և մին ճոթ շախշուրցու լօնտուայ, մին ֆարսի գիրք և շատ ֆիշակներ և այլ ուրիշ ինքմին որ մոռացայ, կարես հարցանել և առնուլ:

Եթէ նուշ առիր, որպէս ապսպրեցի, զրկես Պասրա Համատանու և Պաղտատու վրայօլն, և այն իմ ինքմիններուն հետ, որ վերո գրեցի, թէ չը ծախես, և նրանք կու տաս մին լաւ իխտիպարու մարդու հետ և զամին կառնուա և կսպասարես քու բարեկամաց վրայ, որ Պաղտատ են, ամմայ էտ խարճն որ կանես, 40 հակիցն պակաս մի առնուլ: Եթէ կտեսնուա որ Համատանա ճանփեն լաւ չի լինիլ, նրանք զրկէ Դիարպէքիրու վրայօլն որ Շաթ գետին գայ մինչի Պասրա: Մին քանի օր կայ, որ Թարվէլու քարվան էկաւ, խապար առի, որ շխտակ միրզա

Մումինն մեռաւ, շատ տրտմեցայ, պիտի որ շատ փող դատեցաւ, որժամ որ խան էր, աչպէս ըշտայէ, որ պարտն առնուա: Եթէ կտեսնուա, որ դիժար գլնի առնուլ, բանեցուր միրզա Շէ-39բ ֆին և աղայ Մումինն և այնք, որ || գիտես քեզ կարօղ են օգնութիւն գալ էս բանին համար, եթէ չը կարես փող առնուլ, որպէս որ նրա մուլք ունի իլիջան, որոյ առաջմէ ինձ գուզէր տալ, եթէ քեզ տայ, գուզեն և Հաճի Դարիշն կառնու իրան գնօլն կամ տֆտիկօլ, առ, թէ ոչ մի առնուլ: Եթէ շուղեն որ ոչ մին կերպի քեզ փող չը տան, շուտօլ հաքիմօլ առ և խարճ արայ, եթէ պիտի, ամա մուղիաթ կաց, որ քեզանից շառնուն միրզա Մումինի գրերն, որոյ տունն էն գրի մէջն գրաւ է գրած: Եթէ մինչի հիմի նուշ շառիր, լաւ կանես, որ շառնուա, եթէ առիր, ինձ զրկէ, որպէս վերո քեզ գրեցի և յաւեցած փողին տֆտիկ առ և իստակել տուր, որպէս որ ես կանէյի կամ էտ փողն խրիտ կանես ուրիշ ապրանքի, որ խարճ գլնի Իզմիր: Եթէ էտ ապրանքտ կտանիս Իզմիր, փող մի տալ Մղտսի Սարքսին, մինչ որ ծախես ձեռիտ ապրանքն և կու տաս մղտսուն փողի գուլան, շահն ես կու տամ: Էսոնք որ կանես, յաւելի փողն տանիս Թոխաթ և տորոն առնուա, որն որ էժան է, որ կծախվի 40 կամ 50 զուշ դանթարն և կտանիս Դիարպէքիր և շաթ [ը] օլն գու գաս Պասրայ և ինձ անդ կգտնուա, քանզի ես տեղն կբանիմ այնքան, որ գուժբանիցն լինիմ և կամ մինչի պարսից յերկիրն հանտարտի: Եթէ կտեսնուա, որ Ամպրումն փող ունի, մինակ տապանչի փողն մի առնուլ, որ տվեց Շխամուրատ սուլթանին և զարպապի փողն ևս առ, որ ինք տարաւ տվեց Մահմատ Ալի խանին և ինքն զամին յելաւ թէ փող բերէ, եթե փող շունի, տաւա մի՛ անել, որ կտեսնուա որ՝ անշահ է:

Դրեցի մուտիու գունսուլին և գիրն աստ գրի, որ զրկես, երբ ճանփէն բացվի Սպահանայ և քեզ կողարկեմ պատկերն առանց կնիք, որ նրա զրկես և նրան կողարկես ևս Մկրտչի ախպօր սանատն 3 թումանի, որ փողն առնու: Որժամ նրա գիրն զրկես և որ քեզ պէտք է օգնութիւն, նրանից գուզես, ինչպէս որ քեզ պետք է իմ բաներն տեսնելու համար:

Լինի թէ ամէն բանն քեզ գրեցի թէ ինչ պիտիս անել, ամմայ որպէս որ բանն կփոխվի, ամէն ժամանակ ըստ բերման իւրոյ, քու խելքի վրա կթողնում որ անես, ինչպէս որ գիտես և կտեսնուա, որ աւել շահ գլնի ինձ համար միայն թէ երեք 40ա բանի վրայ մուղիաթ կաց, որ փող առնուա, որ ինձ || պարտ են և իմ փողն բանեցնես ապրանքի վրայ, որ քեզ գրեցի, եր-

րորդ, որ էտ ապրանքն բերես Պասրայ, պիտի որ շատ մու-  
ղիաթ լինիս իմ շահի համար, որքան ճարես և որ խելօք երևիս  
բաներիս վրայ և պատճառ գլխի, որ մեծ գլխիս եթէ շանես,  
պատճառ գլխի, որ քեզ վնաս կհասնի: Եւ այլ ուրիշ պատճառ  
պիտի, որ քեզ սիրտ տայ Պասրայ գալու, որպէս փշացաւ  
պարսից առևտուրն, նոյնպէս փշանալոց է օսմանցու առև-  
տուրն, այսպէս մին սառֆ կու անես ինձ համար, քո շահն  
կճարես, էլի կտեսնուս շահ, քու ախպէրն Մովսէսն կարօղ է  
տեսնուլ, զերայ գիտես թէ որչանք մեծ է հնդկաց շահն, քան  
թէ պարսից և օսմանցոց աւել գլխի, էն շաղն որ կարօղ գլխին  
ծանօթք ձեզ բանացնել մասն որոյ ունին և որ կարօղ գլխին  
շաֆախաթ անել առևտրի վրայ: Եթէ յետ առնելուն յետև իմ  
ամէն մեծ պարտքերն, պիտի որ շատ մնաս միուս խուրտա  
պարտքերուն համար, որ ինձ վնաս գլխի, ընտունք թող որ յե-  
տ ուրիշ ֆրսանտօլ կառնուս:

Եթէ քու ախպէր Մովսէսն Քարվիզ է, ինձանից բարև ա-  
րայ և նրա հետ մուշաւարայ բաներուս վրայ և ամէն բարեկա-  
մաց ողջոյն մատոյ, մանաւանդ էրզրմու բարեկամաց: Երբ գիր  
գրում լինիս, շատուց կայ, որ պատրի Մունիէրիցն խապար  
չունիմ, ինձ գրէ շնորք արայ, նրա խապարիցն եթէ գիտես և  
ինձանից գրէ բարև, եթէ էրզրմ է: Եթէ խեղճ Գաբրիէն ողջ և  
առողջ Քարվէզ կհասնի, ինձ ծառայից մին տարի և նրան տվի  
մին հազար և էլ նրան կու տաս 12 հազար և ձեռնէն գիր կառ-  
նուս և դաստուր կու տաս, որ գնայ Իսպահան Սինոնն մին թու-  
ման ինձ տվեց և նրան յետ տվի 10 ապասի և մնացած 8 հա-  
զար դիանն կու տաս և նրանից գիրն կառնուս: Շուտօլ, որ-  
քան կարես, ինձ գրէ:

Ես եմ քո խոնարհ ծառա Հօնօռէ Պոռէկար:

էն շաղն, որ Սպահանայ յելար, քեզ ապսպրեցի թէ՛ ինձ  
փող զրկէ պարաթօլ, եթէ զրկեցիր, քեզ իմաց կանեմ, թէ  
չհասաւ յետ կառնուս, ինչ որ տվիր:

Իմ մօհրն կորաւ, իսկի էն մօհրն դապուլ շանես, միայն  
թէ իմ ձեռնագիրն չը տեսնուս, մի՛ ումէք ասել թէ՛ քեզ ա-  
պսպրեցի թէ՛ եկ Պասրայ: Եւ ինձ զրկէ նուշ որքան որ կարես.  
Եթէ կարես շատ և շատ առնուլ, դուն բեր փողն որ կաւելնայ,  
էն ապրանքիցն առ, որ գիտես որ Հինտիստան շատ լաւ  
կանցնի:

88. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՌԵԿԱՐԻՆ, ՀԱՄԱԴԱՆ ԿԱՄ ԲԱՂԴԱՏ  
(1722 հոկտ. 21)

40բ || Մուսիու Պոռէկարիտ

1722 հօկտեմբերի 21. Քարվէզ:

Պարոն, էս գրիցն յառաջ 4 գիր գրեցի հրամանուցտ ա-  
մէն որպիսութենէն որովհետև չը հասաւ և բան [ն] այսպէս  
եղաւ. պէտք չէ կրկնել անցեալն: Յուլիսի 14 առողջ մտա  
Քարվէզ: Մեր պատուելի պատրիքն ինձ ընդունեցին և իրանց  
կշտին տեղ տվին, և կամ աստ մինչի այսօր:

Եւ լսեցի, որ սպաննեցին միրզա Մումինն. ես որ եկայ  
Սուլթանիայ, լսեցի նրա մահն:

Նազուցն յուզեցի մեր ապրանքն, չը բերեց. ասում է՝ ես  
գիր եմ տվել աղային այս ապրանաց համար, գիրն բեր և ապ-  
րանքն առ. շատ աշխատեցա, չը կարացի առնուլ: Նրա ֆիքրն  
այս է, թէ քեզ տեղն կսպաննեն և զիս տեղս և ապրանքն  
կուտէ:

Լսեցի թէ՛ ինչ որ փողի մօտիկ ինքմին կայ, ամէնն ծա-  
խել է, թէ՛ խանին արդ անեմ, ինչ էլ որ մնացել է, մուհասիլն  
կուտէ: Եւ մին ինքմենին երեք-չորս գին կղնեն և դահիչէկ գու-  
զեն, շունիմ որ տամ, և թէ ունենայի շեմ կարել տալ:

Մամաջանիցն հազար կուլօլ փող առի շորս թուման կէս,  
ֆրանսուղի պարաթի փողն և ճանփուս բերած պարտքն տվի:  
Մամաջանն գնաց, Գաֆտիլն էկաւ. վաճառականաց մէջ տարի  
մին փող չը կարացի առնուլ, ասում է ձեր փողն Մամաջան [ն]  
պիտի տայ, թամասուկն տեղս չէ, որ յուժ անեմ: Շատ անգամ  
գրեցի և ապսպրեցի մղտսի Սարքսին, որ գրերն զրկէ, չը զըր-  
կեց:

Յուզում է մղտսին, որ իմ ախպէրքն բռնել տայ էրզրում,  
իմ տված գրովն փողն առնու, ախպէրքս խօշ փող չունին, մի-  
այն թէ՛ մի տուն է մնացել իմ հօրիցն, վախեմ թէ նայ էլ էս

բանն վերայ գնեմք և չը պրծնումք. Եթէ այսպէս լինի, այլ քո գլուխն ողջ լինի:

Քաղաքիս մէջն այսօր շատ խառնակ էր. երբեմն լազկու ահիցն և երբեմն օսմանլուիցն: Լազկու և օսմանցու երկուղն պրծան, այժմ վրացու և ուռուսի երկուղն են քաշում. իսկի մարդ մարդու վրայ հոգս չի քաշել, հուսահատու ևն իրեանց թագաւորութեան վրայ, քանզի Վախտանկն յիսուն-վաթսուն հազար մարդով յեւա Վրաստանայ դէպի Շամախի<sup>36</sup>: Ուռուս թագաւորն երկու հարիւր հազար մարդով էկաւ Տաղստան, լազկին շարթեց և Վախտանկ խանին համար ոսկի խաշ զրկեց: Եւ զուղեն մինսմին տեսնուն Շամախի, պատճառն չեմք գիտել թէ ուռուսն ի՞նչ բանի համար ա գալիս. պարսից բարեկամութիւն է նշանց տալիս, և մէջտեղն այնպէս խօսք կայ, թէ պիտի գնան օսմանցու վրան:

41ա Օվանէսի փողն չը կարացի տալ, պարաթին վրայ ձեռք գրի, որ շահօվն տամ, միաջն թէ ձիս տվի իրան գնաց էրզրում: Ես տեղս գիր գրել տվի ֆանտով քեզ վրայ միրզայ Մումի-նի ախպօրցն թէ՛ միրզա Մումինի պարտն իրանց զապուլ է, անճախ աշխատէ, որ վէզիրութիւն նրանց համար առնուս, վասն այն այս գիրն քեզ գրել տվի, քու ձեռն թամասուկի պէս լինի, ամայ որ քեզ չի հասել, քո գրած Համատանա գիրտ մեզ հասաւ ամսուս 18 շաթրով: Լսեցինք որ ամբողջ պրծար, աստուծոյ փառք, ջհանդամ ապրանքն:

Մզոսի Սարգիսն նազու սան [ա]տն զրկեց հաճի Դարիշին վրայ և վէքիլ արալ, որ էն փողն առնու նազուցն: Գրել ես թէ՛ կարես փեշքաշով առնուլ մեր պարտն. ես թէ փող ունե-նայի, վանքըն չէ՛յի մնալ, որպէս պատուիրեցիր, այնպէս կա-նէ՛յի՝ քարվանսարայն նստելով: Էս խանի քուլու էխտիարն միրզա Յուսուֆն է և մեր թշնամին, շունքի Մումինն սայ սպաննել տվեց, նազին փէշքաշ է տվել միրզա Յուսուֆին և գիւլանբեկուն, նոքա խրատ են տվել թե՛ ապրանքն մի տալ, նայ մեզ արդ կանէ, մեք չեմք թողուլ: Եւ խրատել են՝ թէ գնա էլիաքին հետ կռիւ արայ, և եկ մեզ գանկատ արայ, որ բռնեմք ջառիմայ առնեմք, չերկարելն պէտք չէ, անճախ յիմանաս, որ յահուա դուս չեմ կարել յելնել: Էտ խրատն, որ ինձ գրեցիր, թէ ասեմ թէ՛ պարտիս գնալ Շահգատի կուշտն, թօփշութիւն անել, պիտի որ դուն էլ տեղտ բերանով ասէ՛յիր, զերա քո ամէն բանն տեղս գրեցին Համատանայ և էլ լաւ կանէ՛յիր թէ՛

դուն մին գրէ՛յիր տեղս խանին վրայ թէ՛ ես շահի ծառայու-թիւնի համար ելայ, ամայ թաւնվեցայ և վիրաւորեցայ, շահի գլուխն ողջ լինի, անճախ մեր վէքիլն տեղտ է, նրա բանն տես և շուտով զրկէ Ղազպին, որ շահի զուլուղն յետ չի մնայ, մին-չի որ իմ վէքն ողջանայ: Այսպէս գրելով լաւ գնիր, զէրա ա-նունա մեծ էր: Թէպէտ մեք տեղս այսպէս համբաւ հանեցաք, բայց օգուտ չունի:

Նօհ բեկն տեղս եկել չէ, ոչ ձայնն կայ: Այսօր 12 օր է, որ աղա Մումինն եկել է թարվէզ, 45 օր Կեզա գիւղն է կացել: հազիւ ճանփա ճարեցին, որ եկան մերկ:

Քու խապարն Մումինն բերեց, թէ թաւանվեցաք, քանզի Գաբրիէլն որ կփախչի, գու գայ գեղ և կպատմէ աղա Մումի-նին և աղա Մումինի հետ մինչի Քաշա գու գայ, էլի չի կարել զալ, քանզի հետեակ էր մինչի այսօր: Գաբրիէլն չէկաւ:

Ո՞րպէս կարեմ առնել միրզա Մումինի պարտքն, որ խա-նիցն մի թալիղա հանեցին թէ՛ շուն միրզա Մումինն մեռաւ, մարդ նրան պարտքն շուգէ: Աղա Մումինին ասում եմ, կասէ՛ տեսնումք թէ՛ այս յերկիրս ի՞նչպէս գլնի, մին բինա կղնեմք:

41բ Հալապայ շատ գրեք եկին մուսուլու Գառտանին, ամայ որ ճանփայ չը կայ, տեղս պահած կայ,՝ երբ ճանփայ լինի, այս քու գրերն էլ միտտեղ կողարկեմ: Եւ այս ը շաթր Այվազն ասաց թէ՛ 9՝ կուլի նաւ 14 000 մարդով մայխի գլխիցն յելին Յոան-կիստանու, որ գնան Մասքէթին վրայ: Մեզ գիր չը կէր, ամա Ա.[յ] վազն ասաց թէ՛ Հալապայ Պալէօզն բերանով ասաց ինձ՝ էն շաղն, որ գեւնէյի և ապսպրեց թէ՛ մինչի Սպահանա ճան-փէն լաւ չը բացվի, մի գնալ, որ այս գրերս պէտքբական գրեր են:

Ինձ ապսպրեցիր երեք բան և այլն իմ խելացս թողիր պատասխանեմ:

Առաջնոյն՝ որ էս ժամանակիս փող չի բուսնիլ, դուն լաւ գիտես:

Երկրորդին պատասխանեմ թէ՛ ապրանք չը կայ, որ բե-րեմ Պասրայ: Եւ ահայ 7 տարի է, որ քեզ շահի համար դա-տեցայ և ես վնասեցայ. փոխանակ մեծութեան, փոքրացայ այնքան, որ այսօր քան զիս ցած մարդ չկայ: Մինչի այսօր որ խելօք չերեցայ, ե՞րբ պիտիմ խելօքանալ: Խնդրեմ, որ ան-տուած տայ ինձ աւելի խելք, քան զայս, այլ մեծ վնաս ի՞նչ պիտի հանդիպի ինձ, որ ասում ես թէ՛ որ շանեմ, ինձ վնաս

գլնի. թէ որ չէյի անել մինչի այսօր, այս նեղութեան մէջ չէյի մնալ և սպասել քեզ:

Երրորդին պատասխան կու տամ, որ Պասրա գու գամ, ամա յառաջ ինձ մին ձիու գին պիտի, որ գամ. հիմիկս գու գայի, ամայ գրել ես թէ՛ ապրանքով եկ Պասրայ: Ես ապրանքն չը կարացի առնուլ, թէ՛ գրած լինէյիր թէ՛ դարտակ եկ, պատրաստ էյի, էս գրիս տեղն ես գու գայի և մին ձիու գին պարտք կրերէյի քեզ վրա: Կսպասեմ այս գրիս պատասխանին, ինչպէս գրես, այնպէս կանեմ: Քանզի քեզ իմացուցի ամէն էճուարն տեղիս, հիմի էխտիար ունիս, ֆիքր քաշես, թող թէ ապրանքն, մեր գրերն և դաֆտարներն մնաց նազու ձեռն: Իմ ախպէր Մօսէան Օրտուար է, ես նրան չը տեսայ, գնացի էրզրում: Պարոն Մուներն էրզրում է, բայց քարվանսարայն է կենում և այս մօտերս շատ փորձութիւն էլաւ էրզրում ընդդէմ ուղղափառաց. 12 քիսա ջառիմա տվին:

Այսօր որ դաթիւն պրծաւ, մին քանի աւուր խանն պիտի գնայ Սպահան: Շամախու պատրիքն շաղ են, բայց թալանվեցան լազկուցն: Եւ Մօֆրեր Անոփն մեռել է: Քուրտն որ Մարաղա թալանեց, թարվեզոց զօշունն գնացին՝ քսան երեսուն հազար մարդ, փախան, յետ էկին: Ժամանակի խանն գիւանբէկին է: Արազու դէնն ինչ յերկիր որ կար, Վախտանկի գաֆտն անցաւ, ամայ Թարվէզ չէ, զերա ինքն հագիւմ կարգեց գեղարէնքին վրայ, և մարդ է հաւաքում: Եւ հրաման տվեց հայերուն, որ գնան կռիւ նրանց վրա. մին գլխաւոր կարգեց և պայրազ զրկեց, ասում են թէ՛ մինչի տաս-տասնհինգ հազար հայ է ժողնել:

Եւ մին մեծ էլլի օսմանցուցն պիտի գար 1 500 մարդով, որ աղուանն հաշտեցնեն շահին հետ, ամայ էրզրումայ յետ տարին էլլին: Եւ մին նոր խապար կայ թէ՛ նոր կռիւ ինփերա-  
42ա || թօռի հետ, զերա էրզրում ճառ է կանչել, որ զօրք ժողովի, որ գնան:

Եւ տեղիս ապրանաց ծախսն այս է. խամ շաքարն՝ 8 ապասի, դանտ՝ 12 ապասի, դահուան՝ 12, զանճաֆիլն՝ 17, տաքտեղն՝ 12 ապասի, և այլ ամէն պահար ալաթին այսօր գօրայ: Օրըստօրէ գներն յաւելանում է. Լօնտոան՝ 22 շահի, ծաղիկն՝ 4 500, կարմիր և բանաւ[ու] շ պաղամն՝ չորս ապասի և այլն: Եւ յորժամ քու վերն կառողջանայ և յորժամ որ Համատանա գելնուս, ինձ գրես, և այլ ինչ որ կամիս, որ ես անոր գօրայ ֆիքր քաշեմ, թէ ինչ պիտիմ անել: Գաֆտելի ախպէրն

տեղս չէ, Թիֆլիս նստած է: Պատրիներն ողջոյն կու տան հրամանուցտ:

Զի ես եմ ամենախոնարհ ծառայ էլիաս:

Այս գիրն գրել տվի իւր համար 35 գրի պատասխանն պ[արոն] Օվանէսիս ֆռանցէզի լեզուաւ: Եւ պ[արոն] Բեռնարտոսի գրած գիրն միատեղ մօհրեցի և տվի համատանեցի Աբրահամին, որ իւր գրի միչօվն զրկէ իրան մարդոց, որ նոքա տան մուսիու Պօռէկարին Համատան կամ Պաղտատ: Կնքեցի հոկտեմբերի 21. Կարմելիթան պատրի Յօղէփի գրի մէջն գրի:

49. Պատուելի մուսիու Պոնէկարիս

1722 հոկտեմբերի 28. Թարվէզ:

Էստից յառէջ գրեցի հրամանուցտ համատանցոց ձեռնովն ամէն որպէսութիւն տեղիցս: Յետ[ոյ] շատ խօսք ողարկեցի միրզա Մումինին կնկանն, բայց մի կատարեալ խօսք ինձ չը տւիին: Եւ գնացի աղայ Մումինի կուշտն, ասաց՝ Գրէ աղին, որ շահազատիցն մին մուհասիլ զրկէ: Գնացի միրզա Շէֆու կուշտն, նա ևս պատասխանն տվեց և ասաց թէ՛ Ես կնկանն հետ խոսեցայ, մին փող վիզ չեն առնուլ, մինչև որ մուհասիլ չը լինի:

Եւ ահա միրզա Շէֆին մին քանի աւուր յետ պիտի գնա Ղազպին, և գուզէ ինձ հետն տանիլ, քանզի գիտէ թէ՛ դուն Ղազպին գու գաս: Որպէս որ ես ասի, և այս գիրն նրան գրած է, անձախ ես քեզ կասեմ, թէ, որ գիտես, որ ողորդ Պասրա նաւ յելել է, և թէ որ քեզ տեղն շատ շահ գլնի, գնաս. դուն գիտես թէ որ ճշմարիտն շես գիտել, ինձ այսպէս կթւի թէ գայիր 43ա Ղազպին || շուտով մին մուհասիլ զրկէյիր տեղս, որ ես փողերն հաւաքելի, և դու ապա թէ գնայիր Պասրայ, շատ լաւ գլներ, զերա այսպիսութիւնով էս ժամանակին մին փող առնուլ չի լինիր բուռուցանել: Այս յերկրիս հիմի դուն լաւ գիտես, լաւ մտածէ քու օգուտն, զոր ինչ աստուած տնօրինէ, այնպէս արայ: Եւ ես կսպասեմ այս գրի պատասխանին, որ տեսնում ի՞նչ կամիս առնել, որ ես չիմանամ քու կամքն, և ինձ ի՞նչ ճանփա կղնես, որ անեմ: Քաղաքիս խանն այսօր յելաւ, որ գնա Սպահան և իրան տեղն նայիպ կարգեց իւր մարդն: Եւ այսպէս աւարտեմ զբանս:

Պարոնիտ ծառայ ամենախոնարհ էլիաս Մուշէք:

52. Իմ սիրելի պարոն Մովսէսիտ

1722 հոկտեմբերի 26. Դավրէժ:

Էս գրիցն յառէջ քեզ գրեցի էյվազի ձեռնովն և նրան տվի 3400 դին, որ յուզաց ինքմիններա առնու և բերի, հսպան տես: Եւ այնուհետև աղիցն մին գիր էկաւ Համատանայ, որ սեպտեմբերի 7 գրած էր: Եւ գրել էր թե շահն նրան զրկեց, որ Ղազպինու թօփերն տանի Սպահան, հետ զօրացն պարսից, բայց Սպահանա յելնելն ի բաց աղուանից, զօրքն, կթափվին վրան, փոքր կուր կու տան, յերբ որ կուզէ փախչի, ձին կնկնի և թամբն կդառնայ, յետո որ կսկսէ նորէն թամբել, կրկին երկու աղուան կթափվին վրան, մինին կսպաննէ, և մինն իրան կզարնէ միշտցէն նիզակով և այսպէս վիրաւոր կփախչի մինչի Համատան: Եւ ինձ գրեց թէ՛ աստուծով շուտով կլաւանամ և կգան Ղազպին շահազատի կուշտն և իմ ամէն բաներ կը շինեմ և գու գամ Թարվէզ, ամմա ես յանձա շառի գնալ: Եւ մին էլ գրել էր թէ մեր սարքարի նավերն յելել են Բանտար, տեսել են, որ բանս այս կերպիս է, գնացել են Պասրայ, երկու նավն Բան- 42բ կալի ապրանքով է, մինն՝ || Ֆռանկիստանու: Եւ գրել էր թէ Սպահանու հացի գինն հացի լիտրն մինչի ժՌՌ (12000) դին է յելել, և շատ բաներ է գրել, ամմ մեզ չէ փոյթ պատմել:

Այն օրն, որ ձեզանից արձակեցա, միւս օրն եկի թաւրէզ: Ինձ համար գիր էր գրած էրզրումու մին բարեկամից թէ՛ շուտօլ յել այդ երկրէտ և գնա: Որ այդ խապ [ա]րն այլոց պէս չէ, քանզի օսմանցին պիտի գայ հարկի տեղտ: Եւ այլ շատ տեղաց խապար առի, որ պիտի գան այս յերկրին վրան երկու փաշա, Պայազիտու բրտօվն պիտի գան թաւրէզ: 5 փաշա՝ Երևան, Գանձա, Շամախի և Դարպանտ: Հասան փաշան՝ Սպահան. այսպէս յիմանաք, որ ձեր ֆիբրըն քաշէք: Եւ մին խապար յիմացա թէ՛ Վախտանկն երկու վրացի և մին մեր պատրինեբիցն զրկել է իմփերատօս թագաւորին գանգատ: Իմփեռատօսն չափառ էլլի է զրկել Հունթբարին թէ՛ Դուն ինձ հետ ուխտ զրիր, որ առանց իմ հրամանին ոչ մին ազգի վրան չգնաս կռիւ, այս ի՞նչ է որ լսում եմ: Ուրացել է հունքարն թէ՛ Ես օտար յերկիր բռնել չեմ, սուտ է, միայն թէ զօրս ինչ առաքեցի սինօոնեբն որ իմ յերկիրն պահեն: Յետ է դառնել էլլին: Յետոյ ուրիշ հայ սօվտաքար գնացել են գանկատ թէ՛ օսմանցին մեր յերկրին վրայ գալիս է: Կրկին չափառ կողարկէ նամցան հունքարին վրա թէ՛ ինձ երևում է, թէ դուն ինձ խափում ես, իմացիր և բու ֆիբրն քաշէ, որ գալիս եմ:

Այսօր երկու օր է, որ գրերն ուղարկեցի:

Մեր էլ յետ քանի աւուրս գնում ենք, բայց բաղնեց բանն մնաց. 3 օր է, որ դոներն գնաւ: Վոտից յընկանք, մեծամեծք և ձեր դատաւորքն սարտարիցն վախում են. եթէ գուզէք որ ձեզ լաւ դուլուղ անեմք, պիտի որ իմ արզան տաք թագաւորին և թագաւորիցն մին հրաման գայ, որ մեր բաղնիքն տերութին անեմք, մինչի որ նրա տէրն գայ, մեր փողն տայ, և մեր մեր րեհն տամք նրա, յետոյ ինչ գուզէք՝ արէք: Մեր զրկած Բ (2)

դասիտն Հալապա եկաւ և Պալէօղիցն գիր բերին թէ՛ Երբ որ  
գու գաք, ձեզ համար նան պատրաստ է:

Միրզա՛, պիտի որ շուտով իմ արդէն թագաւորին տար և  
մի ըստ միոջէ հասկացնէք, որ մին ըստ մանք, որ այս հա-  
մամին հետ ոչ օվ ձեռ շունենայ. մեզ և ձեզ մեծ ամօթ է այս  
բանն, որ մին լօթի մեր ձեռանէն համամն առնու, մեք կարել  
չենք այս բանիս համբերել, եթէ ոչ նրա մին լաւ թանպեհ շի  
լինի: Մին աստծոյ համար տեսէք թէ այնք [ա]ան վկան որ  
անց է կացուցել նրան, յորն Զուղայու եկաւ թէ Մանուէլն  
մեռաւ ԺԱ (11) տարի կայ, այդ բաղնիցն Շահապասի զօվ-  
րօվն խոճա Շահֆուզն է շինել և նրա վարիսներու ձեռնէն  
մինչի այսօր Բ (2) վարիսն Վանատիկումն են. վասն թագա-  
ւորի գլխին խաթերն, պիտի գան որ մեզ ուրախացնէք, բաղ-  
նիքն մեզ տար:

Քու հրամանուց գրած գիրն տվի Մահմատ Բազա բէկին,  
3—4 անգամ պատասխան յուզեցի, չը տվեց. փողն առինք այս  
թղթաբերի ձեռովն առաքեցինք քու հրամանուցն. 13 թեր [թ]  
թուղթ, եթէ հաւանիս, էլ կողարկեմ: Միրզա Մահմատ Թաղի  
միրզա Մուսային և այլ քո համախոհին Մանսուր խանին,  
ազա Շարիֆ Դիւրթտարին, Մահմատ բէկ նազրին: Եւ այլ  
այս գիրն կարթա էհտիմա Դովլին կուշտն և այլոց մի՛ ասել  
թէ՛ Ես գրեցի: Ամենեկին քեզ չեմ մոռանալ, և դու մեզ մի՛ մո-  
ռանալ: Իմ մարդն շուտ ճամփա գցիր, որ դրա ճամփին եմ  
մտիկ անում:

Այս գիրն գրել տվի մի մօլա Մօսինին պարսեար, և շահի  
արդէն պաղնիքիցն համար, և էհտիմալ Դովլինն, և 13 թեր [թ]  
կոկած թուղթ և տվի ներքո Դաւուտին հետ, որ նայ տանի շա-  
հի բանակն, տայ Մոնշի մօմմալեքին՝ միրզա Ալի նազուն,  
Սեպտեմբերի 22 կնքեցի իմ և պատրու կնքօլն:

113. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՍԵԹԻՆ, ՀԱՎԻ ԲԱՆԱԿ  
(1723 սեպտեմբերի 23)

15ա || № 2. Սիրելի և պատուելի պայապատ Սեթ աղիտ ողջոյն

1723 սեպտեմբերի 23. Դավրեժ:

Ս [իր] ելի, այսօր երեք օր է, որ տեղս հասել եմք, առա-  
ւօտից մինչի ճրարվառուն դռներն եմ ման գալիս վասն հա-  
մամին համար. յորն խաթր է պահում, յորն վախում է ճանա-  
պարիցն: Թէ դիւանբէկին, թէ նայիպն ինձ ասում են վերչի խօս-  
քըն թէ՛ Գնամք օրտուն, դիւան անեմք, թագաւորն մեզ հրա-  
ման է տվել թէ՛ տեղս շինեն գրանք. ինձ օրտուն են առա-  
քում: Ճարս հատաւ, արգա գրեցի և զրկեցի շահին և էհտիմալ  
Դովլին թէ՛ մինչի այս բանն չը շինէք, ես չեմ կարել յուրիշ  
բան տեսնուլ: Քո հրամանքտ էլ որբան որ կարես, խօսէ և  
գրանց ամաչեցուր, ասելով թէ՛ Ես վկայ եմ, որ ճ (100) թու-  
մանի գրաւ է և գրտեմք, որ Մանուէլն չէ մեռել, լինի թէ Մա-  
նուէլն մեռաւ, մինակ նրան խօշ չէ ԺԱ (11) ռասաթ է, նա թէ  
Մանուէլին դաւում է, մէկ էլ ոնց խոշ չէ, դաւում: Եւ կարես  
ասել թէ՛ էտ համամն թագաւորին ապրանքն էլ լինեք, պիտի  
որ նրանց պաղշէյիք, այնքան տեղ չէ: Մուղիաթ լինիս, որ  
տղէն շուտ ճամփու դնել տաս: Սիրելի, տեղս խառնակ խա-  
պար շատ կայ, մինն ստուգ չէ, որ գրեմ: Պատրիքն և պարոն  
բալանթարն հրամանոցտ սիրօվ ողջոյն կուտան մանաւանդ:

Մառա էլիասն Մուշեխանց

Այս գիրն գրեցի և կնքեցի սեպտ [ե]մբերի 23 և տվի ջու-  
ղայեցի Օվանէս վարդապետի որդի Դաւիթին սեպտ [ե]մբերի  
24, որ տանի շահի բանակն, տայ ջուղայեցի ժամաշէն Սահա-  
կի որդի պարոն Սէթ աղին:

114. ՌՈՒՍԱԿԱՆ ՍՊԱ ԴԱԼԱՆՍՈՐՆԻ ՆԱՄԱԿԸ ԵՂԻԱՅԻՆ  
(1723 սեպտեմ. 12)

15բ || № 1. Սեպտեմբերի 29 Կիրանու մին գիր եկաւ մուսի Տալան-  
սօիցն մին վրացու ձեռով վերո իմ գրի պատասխանն, որ  
թարգմանի այսպէս.

**Պարունք**

Յէրէկ մեզ հասաւ ձեր գրած գիրն, էն ժուկն գնացի մու-  
սի սպարապետի կուշտն, ինքն մեզ խոստացաւ թէ՛ առաջի  
նաւն, որ գէլնու, ձեզ տեղ կու տա և նրա վրան և ճանփու գիր  
կու տա: Եթէ հանապազ էտ մտքումն էք, որ էս ճանփումն  
գաք, մտածեցէք, որ ժամանակն չը կորուսանէք, շուտով գաք,  
որ ձմեռն դժուար գլնի ծովն: էս տեղն որ կհասնիք, ձեզ կա-  
ղաչեմ, որ իմ տունն չիշնուք, քանզի ինձ շնորք գլնի հանա-  
պազ ձեզ ծառայել, եթէ կարօղ եմ:

Մինչի ձեր գալն՝ ձեր ծառա՝ ժան Յուլի Տալանսօն:

Ռէշտ, 12 օգոստոս 1723:

Ձեզ կաղաչեմ, որ բարե տաք Իսլամ թարգմանին:

115. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՊԱՐԱՆԵՐ ԿՈՉՎՈՂ ԿԱԹՈՒԿ ԳՅՈՒՂԻ  
ՀԱՄԱՅՆՔԻՆ (1723 հոկտ. 13)

16բ || № 3. Պատուելի քահանայից և առհասարակ ժողովր [դ] ոցա  
ամենեցուն ողջոյն սիրո

1723 հոկտեմբ [ե] րի 13. Դարվէժ:

Յայտ լիցի ձեր հրամանուցն, որ մեք կամէլինք ձեզ հա-  
մար մին երկու բաղամներն նորել տալ թագաւորին, այն որ  
շատ հարկաւոր պէտք էր ձեզ, բայց շահն յանկարծակի յելաւ  
բաղաբէս, և մեք գնացինք Վասպինձ մին այլ բանի համար թէ  
տեսնումք և յետ գամք, յետո թատառութիւ գնամք շահի կուշ-  
տըն և ձեր և մեր բաներն տեսնումք, բայց էլ չը թողին մեզ,  
որ յետ գալինք քաղաք, 26 օր հետերն ման ածեցին մեզ, յի-  
տոյ արձակեցին, եկինք տեղս, որ պիտի գալինք. ձեր տեսու-  
թիւնն և ամէն բանի վրայ խորհուրդ առնէլինք և անտի գա-  
լինք Շահի կուշտն, բայց այլ կերպիւ բան պատասհեցաւ մեզ,  
որ գրել չի լինիլ: Բայց, աստօւլ, ձեզ և մեզ մեծ ուրախու-  
թիւն է լինելոց, պատճառն այս իմ գրելոյս ձեր ծառայութիւնն:  
Որ ձեր միշէն մին քանի խելօք մարդ հաւարվեցէք, օվ որ որ  
ձեր յերկրէն է ծնեալ և սնեալ թէ քահանա, թէ աշխարհական,  
և այլ օտար յերկրէն եկօղ մարդ չիմանա, և մին լաւ մուճալլա  
շինէք, ինձ վաքիւ անէք, թէ ինչ որ անեմ, ձեզ զապուլ է, և  
ինչ որ կխօսին, ձեր բերանէն կասեմ, այնպիսի մին լաւ մու-  
ճալլա շինէք, որ արժան լինի քրիստոնէից թագաւորած և  
սուրբ փափին նշանց տալու: Որովհետեւ ձեր բանն իմ վիզն  
ցգեցիք, բանի որ կենդանի եմ, ձեզ համար կաշխատիմ մին-  
չի որ ձեզ համար մին հանգստութիւն ճարեմ: Խոստովանանք  
լինի ձեր մէջն, և բաւեսցի իմաստութեան ձերում:

Եւ շնորք արէք այն մապլաղն, որ ձեզնից գուղեմ, մօհ-  
րէք և տաք այս թղթաբեր զասիտին: Եւ այս շաթրն մին օր յա-  
ւել չը պահէք: Եթէ ձեռ չը տա ձեզ, որ մին օրումն այդ բանն  
շինէք, այս զասիտն ճանփու արէք, յետո լաւ շինեցէք ձեր

17ա || քանն և ձեր մարդովն ողարկեցէք, որ ինչ տեղ որ լինիմ, ինձ հասցնէ: Բայց մին և երկու գեղի մարդով շանէք մուճալլան, ամէն ուղափառ գեղի քահանայքն և իշխանքն գրեն և կնքեն: Այս գիրն գրեցի, կնքեցի և տվի շաթր Մահմուտին, որ տանի Ապրաններ տալ գեղի գլխաւորաց և քահանայից 13-ումն, որ գնա. 14-ումն:

116. ՊՈԼՍԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԲՈՒԱԿԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՂԻԱՅԻՆ (1723 օգոստոսի 23)

№ 1. Հոկտեմբերի 14 մին գիր էկաւ Իստամպուլու Մուքէլի ձեռովն ֆրանսիզ պալիօզ մուսիու Պօնաքիցն իմ դրկած գրիս պատասխանն, որ թարգմանի այսպէս.

Քոստանդինօպլ. 1723 օգոստոսի 23:

Պարսն. քո գրած գիրն յուլիսի 4 ինձ հասաւ և կարդացի այն խապարներն, որ գրեցիր մուսի Գառտանիցն և այլոց վաճառականաց, որ գումբանիցն էին, տրտմեցա որ պիտի էս խապրներու համար զնաս Ֆրանկիստան և էս խապար տանիս և որ նոր հրաման անուս, ամա էս խառնակ ժամանակիս շատ դժուար է ինձ, որ հրաման անում վազիրիցն քեզ համար, որպէս որ կարծեցիր և թէ էս հրամանն ուզեմ, կարծիք կիմանան էս քանին, բայց ես կաւատամ և քեզ կաւատացնեմ, որ կարօղ ես յեղնել Աճամու յերկրէն որպէս արաւ մուսիու || Պօռէկարն, նրանից պակաս ընդունելութիւն շես ճարել Օսմանցու յերկիրն, որպէս որ նրան ընդունեցին Պաղտատումն և որ կարօղ գլնիս գալ անտի Հալապ կամ Իստամպուլ և որ քո կամքն հաճի, եթէ Դիարպաքիրու ճանփօլն կամիս գալ անտ, կճարես պատրի քափուշին, որ քեզ օգնութիւն կու տան ամենայն կերպիս: Ես շուզեցի ինձ թեթեացնել վասն միոյ հրօլա [ր] տակի մին մարդո համար և որ յոյս շունէյի որ տան, ընտուր համար Դոնիցն յուզեցի, որ հրամայեն ամէն փաշաներուն և բակերուն վրա որք են սինոններումն, որ պատուեն մեր ամէն ֆրանկներուն և քափիթաններուն, որ գու գան Օսմանլույի յերկիրն և ճշմարտապէս գիտեմ, որ այս հրամանն յեղաւ և յոյս ունիմ, որ պակաս չի լինիլ քո պատին, քանց մուսիու Պօռէկարինն: Քու խապարներիցն գուզեմ երբ որ ինձ կգրես ամէն Աճամու լաւ խապարներիցն, շնորք անես ևս ստուգես մուսի Գառտանի խապարն, քանզի Ֆրանկիստան գուզեն նրա խապարն չիմանալ:

Գումբանի նաւերու մինն Պասրա հասաւ և տեղն ընդունելու թիւն ճարեց, վասն այն առաջմէ ես մուղախաթ եղա ևս երկու նաւ պիտի գան Պասրա: Քեզի կաղաչեմ, որ ողջոյն տաւ պարոն Յօհաննէս Մկրչին Ռօշֆօուցի, շատ կայ, որ նրան կճանաչեմ և որ լսեցի նրան լաւ բաներն:

Պարոն, քո սիրելի Դիսօն Պօնաք:

Շնորք արա գրէ մուսի Միր[ա]նիցն, քանզի ես սովիւ նրան, որ նրանն թարգամ և դպիր լինէր:

Վերնագիրն էր այսպէս. Պարոնիտ պարոն էլիաս Մուշեղ աճենթ, այսինքն փոխանորդ ժողովին արեւելից և հնդկաց վաճառականցն: Թարվեղ:

117. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԱԼԻ ՆԱՂՈՒՆ, ՇԱՀԻ ԲԱՆԱԿ  
(1723 նոյեմ. 9)

19բ || № 2. Մեր պատուելի միրպա Ալի Նաղուտ ողջոյն

1723 նոյեմբ[ե]րի 9. Արտաւիլ:

Ծանուցումն լիցի հրամանուցտ, որ քանի մի օր յետացանք Թարվէզ վասն երկու պատճառի՝ մին որ բաղնեց բանն մնացել էր, մին էլ որ համբերեցինք թէ Իստամպուլու դասիտն գար: Աստուծոյ փառք, փայեկքն եկին և էլլուցն գիր բեր[ին], որ գրել էր թէ՛ էստուց յառաջ մին ֆարման հանեցինք հունքարէն և ղրկեցինք Պաղտատ մեր ամէն ֆոանկներուն համար, քանզի մեր նաւերն Բանտարապասու դարձան, եկին Պասրա, երբ որ ձեր գիրն ինձ հասաւ, կամեցաւ մի նոր բաղամ հանել ձեզ համար, ամա վախեցա թէ յիմանան, վասն այնորիկ չկամեցաւ և դիժար գլխեր: Եւ մեզ գրեց՝ թէ՛ կաւ գլխի որ գնաք Պաղտատ և այն բաղամի սաւատն առնուք, գաք տեղս: Եւ գրեց թէ՛ Շատ ուրախացա, որ մեր քափիտաններու բանն գրել էյիք, վասն այնորիկ քեզ հրաման կու տամ, որ շուտով գաք թագաւորի կուշտն տեղիտ ամէն բաներն ծանուցանեք, քանզի տեղս շիտակ խապար չենք լսում:

Եւ ես խորհեցա, որ շիտակ ճանփայօվն շէյի կարել գնալ, քանզի այնքան յուշացուցիք, որ ամէն մարդ իմացաւ Թարվէզ: Թէ գնայինք Պաղտատ, շատ հեռու գլխի և երկուզ կար մեզ անցնելու, քանզի ղօշուն շատ կայ Պաղտատու սինօններումն, վասն այնորիկ եկինք Արտաւիլ, որ Կիլանու գնամք, համ խաթրջամ է, համ Պաղտատու ճանփօվն գնալուն հետ պարապար գլխի:

Եւ առաջմէ մեր մի ղասիտ ղրկեցինք Կիլան ուռուսի մեծ սարտարին վրա, և նայ մեզ պատասխան գրեց թէ՛ Շուտով

\* Բնագրում՝ «մեզ գրեց մեզ»:

եկէք, ձեզ համար մին նաւ կու տամ, աստուծով շուտով կգը-  
նամք:

Աստուած թագաւորին յերկար կեանք տայ, թալիղայ էր  
ղրկեր, բաղնիքն մեզ տվին, ամա թիանն կոտրատած էր և  
բաղնիքն բաթիլ էր արած, և մեր թագաւորի բանն չէյինք թո-  
ղուլ, որ բաղնիքն բանի ցգէյինք, այնպէս ղֆլեցինք դունն և  
եկինք:

20ա || Եւ այն մուհասիլն, որ դիւան բէկին ղրկել էր, մեղանից  
տասը թուման դահիյեն առաւ, մեր հին թագաւորաց բաղամ  
ունիմք, որ ամենեկին ոչ դահիյեկ և ոչ խարճ կու տամք. քանի  
մի փող մեզ խարչուի տվիք, էն էլ մուհասիլն առաւ, էխտիար  
ունիք և խաթրջամ կաց, որ մեր էս ճանփովն էլ լաւ կգնամք,  
քան թէ օսմանլույի ճանփովն:

Ինձանից ողջոյն տուր Մանսուր խանին, միրզա Թաղուն,  
միրզա Մուսային, Ալի բէկին, Նօհ բեկին, միրզա Շարաֆ դա-  
ւաթտարին:

Շնորք անես այն մատենն, որ քեզ տվի, ճոթեն բուսու-  
ցանէք, որ ում որ գրեմք, տաք նրա ևս մեզ աղօթից չը մոռա-  
նաք, որ աստուած մեզ մին բարի ճանապարհ տայ, որ թա-  
գաւորի ծառայութիւն տեղն հասուցանեմք և յերես պարզ գամք  
ձեր տեսութեանն:

Այս գիրն գրել տվի պարսեար և երկու արղա՝ մին դիւան-  
բէկի հաճի Ալի Ղուլի խանին՝ վասն բաղանեացն համար և  
մին արղա ևս էհտիմալ Դօվլին վասն բաղանեացն համար, և  
այս գիրն ևս միատեղ կնքեցին, հանդերձ պարոն Օվանէսի-  
իւն և տվինք Արտաւիլու մութաւալի վալի Մահանմատ Քեր-  
[ուա] Սպահանցի էշիկ աղասի պաշի որդին էր, որ նա շուտօւլ  
ողարկէ թագաւորի բանակն՝ միրզա Ալի Նազի մուշի մօմալե-  
քի ձեռն նոյեմբեր [ե]րի 10-ումն:

118. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՊԱ ԴԱԼԱՆՍՈՒՆԻՆ  
(1723 նոյեմբերի 22)

20բ || № 2. Մեր սիրելի Մուսիու Տալանսոնիտ

1723 նոյեմբեր [ե]ր 22. Կասկար:

Քո հրամանուց գրած համար մին գիրն օգոստոսի 12, մեզ  
հասաւ\* սեպտ [ե]մբ [ե]րի 29: Մեր ուզում էյինք գնալ Հոսմա-  
տանու վրայօվն, բայց սպասում էյինք քո հրամանուց գրին,  
որժամ հասաւ գիրտ, հաստատեցինք գալ, քանզի շնորք էր ա-  
րել մեզ սպառապետն և խոստացել էր մեզ տալ գիր և նաւ,  
վասն այն ուղիղ գալիս եմք քո հրամանուց տեսութեան:

Որժամ հասանք Աստառա, անդ գտինք մին ծառա թագա-  
ւորին, որ ըմբռնեալ էյին՝ Կասկար անունն Կոստանդին, Ֆետ-  
րի որդի, սիպիրցի, Սիլանու գնտիցն և մեզ հետ բերում եմք:

Քո հրամանքն մեզ գրեցիր թէ՛ մեր գամք քո հրամանուց  
ծառայութիւն, և մեր յօժար կամօք դու գամք և խնդրեմք հրա-  
մանուցէտ, որ մեզ այս գրի պատասխանն գրես թէ՛ ձեր և  
պարսից մեջն եթէ երթեակ կայ, ուղիղ գամք ձեր կուշտն, եթէ  
ոչ, գնամք Ռաշտ, մէր բանն տեսնումք, հաւասար և ապա  
գամք ձէր կուշտն. եթէ հնար է, որ մէր մարդն կամ մեր կա-  
րեմք գնալ քաղաք և գալ ձեր կուշտն, դու գամք, թէ՛ ոչ՝ քաղաք  
գնամք: Եւ այլ ամէն խօսքերն և խապարներն բերանօվ պատ-  
մելոց եմք, յորժամ բարօվ տեսանեմք ձեզ, մեր կմտնումք  
Ռաշտ ամսուս 25 կամ 26-ումն:

Եւ մեր պարոնիտ ծառայ պարոն Օհաննէս և էլիասէս Մու-  
շեխանց:

Այս գիրն գրել տվի պարոն Յօհաննեսին ֆեռանսէզի լե-  
գուաւ մեր երկուսի բերանէն և տվի մեր պաշտոնեայ Խօսրօ-  
վին, որ տանի Ռաշտ ուղուսի բանակն, տայ Մուսիու Տալան-  
սօնին նոյեմբերի 22, որ գնա 23-ումն:

\* «մեզ հասաւ» կրկնվում է:

119. ԴԱԼԱՆՍՈՆԻ ԵՂԻԱՅԻՆ ՈՒՂԱՐԿԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ  
ՈՒՇՏԻՑ (1723 նոյեմբերի 24)

21ա || № 2. Նոյեմբերի 24. Վերո գրի պատասխանն էկա Ռաշտու Մուսիու Տալանսունիցն վերո Խոսրովի ձեռովն ֆոանսեար, որ թարգմանի այսպէս.

Պարոն. ուրախ եմ որ դուք մտածեցիք [ք] այս կիրանովն գալ, քանզի պատճառ գլնի, որ ձեր հետ խօսիմ և ինձ ուրախ կանէ, քանզի շատուց է, որ մի համշարի մարդո հետ շեմ խօսել: Վեց շաբաթ կայ, որ իմ հին տեղն թողի, քանզի պրծա իմ ամէն բանն, որ ունէլի անդ, հիմի մեր պոկիատիէրի կուշտն եմ, այսինքն սպառապետ [ի]: Եթէ գուզէք իմ կուշտն գալ, ինձ շատ շնորք կանէք, բայց ձեր խօսքին պատասխան տալու համար, փոքր հեռու եմ քաղաքէն և կաւատամ, որ դուք բան ունէք քաղբացոց հետն, վասն այն ոչ որ ձեր կուշտն չի կարել գալ առանց հրամանաց սպառապետին: Եթէ այս կերպիս ազի էք, շնորք արէք իմ կուշտն եկէք, եթէ հաճո չէ ձեզ, այս կերպիս շնորք արէք մեզ իմացուցէք, որ գամ ձեր տեսութիւն և ինչ ժամանակ որ գուզէք, ձեզ կտանիմ մեր սպառապետի կուշտն, և ձեզանից շնորհակալ է, որպէս վասն այն սալտատին, որ բերում էք մեզ:

Մինչի գալն ձեզ կասեմ: Որ ձեր խոնարհագոլն և սիրով պաշտոնեայն ձեր Մ. Տալանսուն

Եւ վերնադիրն է. Պարոն Օվանէսին վրա, քանզի երկուսիս բերանովն գրեցինք:

Թիւն է 1723, Ռաշտ, նոյեմբ [ե]րի 13, հին տօմար:

120. ՈՒՇՏԻ ՎԵՋԻՐ ՄԻՐՉԱ ՅՈՒՍՈՒՖԻ<sup>50</sup> ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՂԻԱՅԻՆ (1723 նոյեմբերի 25)

21բ || № 1. Նոյեմբերի 25 մին գիր էկա Յումինու Ռաշտու վեզիր միրզա Յուսուֆիցն թարվիզեցո, Քասմանա յեկած օրիցն, որ զալիս էլինք Յումին, ճանապարհին, պարսեար, որ թարգմանի այսպէս.

Ալու նման մեծ և բարձր պատուելի և անուանի բարեկամ, զի ուղղապէս սիրո և միաբանութեան գիտեցող, մեծագին, բարձր, կարող, փարթամ, անուանի, գովութեան և պատուից անպէտ ղեսպանիտ առողջութիւն, բարեկամաց բարբօլն լիք և կամքն ձեր կատար:

Շատ սէր և պատիւ և միութիւն գրելոյս յետ, քո ուրախ կամացո և ազիզ սրտիտ գրեցինք և ողարկեցինք, որ էս ժամուս քո ուրախ խապարն և գալն քո մեզ հասաւ և մեր կամքն էլ ուրախութեամբ մի եղև. բարօվ, հազար բարի էկիք, բարեկամութեան և սիրո ճանապարհն այս է, որ էս ճանապարհօվն դաք, մեզ և ձեր մէջն տեսութիւն և բարեկամութիւն լինի: Յետ այնորիկ քո կամացն յետնէն գնաք: Հալպաթ ինձ յայտնի է, որ իմ ուզածին պէս յայտնի է, որ քաղաքի ճանապարհն այս ճանփօլն բռնես, որ լաւ և շատ լաւ գլնի: Հալպաթ որ պէտք է որ առաջ բարեկամութիւնն մեր գոչանա, որ տեղս գաք, մեզ հետ ուրախութիւն անէք և աստի աստուծով գնաք մինչի անտի տեղս գալն, և մեք ձեր ծառայութիւն հասնիլն, ինչ ծառայութիւն որ լինի մեզ, գրես, որ մեք բարեկամաբար այն ծառայութեան տեղն հասուցանեմք: Հանապազ բարեկամութիւն, միութիւնտ և սէրտ անպակաս լինի:

Կնիքն է. Ապտուլ Վահապի Ապտուհու Մահանմաս Յուսուֆ

Դեկտեմբերի 5 մին գիր էկաւ շահի բանակիցն վերո իմ գրած գրի պատասխանն վերո միրզա Ալի Նաղուցն մունշի մօմալէքիցն Մուստաֆա խան սարտարի շաթարօվն պարսկե-վար, որ թարգմանի այսպէս: Եւ մէջն մին գիր կար էհտիմալ Դօվլիցն: Եւ այս միրզայի գրի թար[գ]մանոթիւնն այս է.

Հաւանած և ընտրելոցտ ի մէջ յընկերացտ քրիստոնէյից ազգէն հաւասարէն մեծ պարոն Յուվանէս և Յեահիյա բէկ: Յետ առաքելո սէրն մեր, որ ձեզ յայտնի լինի, որ էս տեղն ձեք տեղն շատ դատարկ է և ձեր տեղն մեզ յայտնի էրևում ա:

Եւ ձեր գիրն մեզ հասաւ, շատ, շատ և շատ ուրախ եղար, ձեր գիրն, գլուխն կնքած, շահի ծառայութիւնն հասուցի, թա-գաւորն իրան մաքուր ձեռօվն կնիքն բացեց, կարգած և իմ կուշտ զրկեց, և հրամայել էր էհտիմալ Դօվլին, թէ նրա պա-տասխանն շուտով գրէք: էհտիմալ Դօվլին ինձ հրամայեց, նրա բերանէն, նրա գիրն գրեցի և ինքն մօհրեց և զրկեց ձեր ծառայութիւն:

Թագաւորն և էհտիմալ Դօվլին այսպէս հրամայում են թէ՛ էս ծառայութիւն, որ ձեր վրա կարգեալ եմք, աստուծով, լաւ տեղն հասուցանէք, յետոյ ձեզ լաւ արժանաւոր պարգև հա-սուցանելոց եմք և ձեզ այնպէս պատիւ լինելոց է, որ հաճիք և շնորհակալութիւն մատուցանելոց էք:

22բ || Բաղնեցն դիպց բաժա թալիղա գրել տվին, որ ոչ ումեք բան չունենա ձեր բաղնեցն հետ և նրա բանվորին հետ մարդ բան չունենա, բաղնեցն դիպց աներկբա լերուք:

Եւ փողերուն դիպց, որ գուզէք էս յերկրիցն, մուհասիլ կարգեցաւ ի զօրուցն, որ առնուն: Եւ ում որ էհտիպար ունէք, գրեցէք, որ տան: Եթէ ինձ էհտիպար ունէք և իսկապէս գիտէք, որ թէ ես ձեր ապրանքն շիմ ուտել, գիր գրէ, որ ես առնում և պահեմ, մինչի որ դուն գաս աստուծով: Ընդէ՛ր ձեր գիրն մեզ յետի է գալիս, պիտի հանապազ ձեր գիրն և թուղտն մեզ հաս-նի. ըստուց յետ հալպաթտ ա՛ մէն որպիսութենիցն օրըստ-

օրէ, գրէք, իմ կուշտն զրկէք: Օսմանցու էհուալն՝ էն ժամանա-կըն որ Գանձակու յերկրին վրա որ եկել էյին, որ Գանջա բըռ-նեն, քաղաքացոց և օսմանցոց մէջն, 7 անգամ կոխ անկաւ, ամէն անգամ օսմանցին կոտոր կերաւ: Նրանց թօփխանան պարսից ձեռ անկաւ: Եօթն կովումն էն (7 000) մարդ օսման-լուիցն կոտորվիլ է: Էն ժամումն Մահմատ դուլի խանն էլ հա-սել է: Էրզրամ Իպրահիմ փաշան ամա՛ն են կանչել և փախել, մինչևի որ իմ եխպար միրզա Մահմատ Հուսէյին Գանձու Մըս-տօֆին 3 մարդ օսմանցուցն բռնել է: Այժմ մեր թագաւորի բանակն նախիջևանու յերկիրն է:

Այսօր, որ երկուշափթի օր է, սաֆար ամսի 23-ին, էս գիրն ձեզ գրվեցաւ:

Հալպաթ, շուտով, պատասխանն շուտով գրէք և իմ կուշ-տըն զրկէք: Պիտի որ շուտ շուտ ձեր գիրն իմ կուշտն հասնի և ինչ ծառայութիւն էլ որ ունենաք, գրեցէք: Վերջ:

Եւ վերջումն կնքել է իւր կնքան, որ է այսպէս.

Բանտայի Շահիդին Ալի Նաղի

ՃՅա || № 1. Դեկտեմբերի 5 էհտիմալ Տօվլի գիրն, որ վերո միրզա Ալի Նաղի գրի մէջն է, միրզա Ապտուլ Քարիմ էհմիտալ տօվլի գիրն էր, որ թարգմանի այսպէս.

Իմ զրկած գրի պատասխանն, նրա՝ որ գրել տվի, համատիպն աստ չը գրեցի, քանզի պարսևար օրինակն պահեցի:

Ընտրեալցա, ընկերացա և իրանց հաւասարիցն մեծ պարոն Օվանէս և Յեհաճիյեա Աստուածատուրի որդի Մուշեխանց, փոխանորդա բալիօզին Ֆռանցիո: Այս գիտացէք, որ էս ժուկն արզաներն և գրերն, որ գրել էյիք, բարձրատեղ թաղաւորի ծառայութիւնն զրկել էյիք, մեր հոգին նրա անուանն մատաղ լինի: Մին բանի խօսք էլ ինձ գրել էյիք, որ ես նրա դռանն ծառա մեծիցն մեծ միրզա Ալի Նաղու կուշտն զրկել էյիք, ամէնն թաղաւորի առաջիկան անց կացուցինք: Բաղնեցն զիաց թալիզա գրեցինք, Սեթ աղա ժամաշենին մատուցինք Սահակեան, որ էստուց յետ ոչ ումէք ամենեկին պատճառօք բազնեցն և իրան պաշտոնէլիցն հետ բան շունեանս և չը նեղին: Եւ ձեր փոխերն ևս կարգեցինք հրամանօվ, որ պաշտոնեալքն բուսուցանեն ամենակատար և ում որ ասէք տան, որօվհետև ձեզ մեծ ծանայութիւն կարգեցաւ: պիտի որ որպէս պետք էր տեղն հասուցանէք, յերեսներտ սպիտակացնէք և ձեր աշխատանքն յայտնէք, այնպէս գիտացէք և ճշմարտի գիտացէք: Յետ կատար հասուցանելոյն ամենիտ առաւել քան որ կարէք խորհի, պարզելից և ընծայից և խլաթից, համարիցն յաւել լինելոց է, առաջիցն աւել լինլոց է, այ [ն] պիտի ձեզ շնորք և սէր է լինելոց, որ ոչ ումեք խորհուրդիցն անցած չը լինի և այնու շատանաք և շնորհակալութիւն մատուցանէք: Ձեր բանին վաղ կացէք և աշխատեցէք և ինչ որ կամք ունիք գրեցէք: Վերջ:

Գրեցաւ սաֆար ամսոյ 1136 թվազանին:

Կնիքն էր. Լա իլհա իլ Ալլահ Ալհարիմ ըլ Քարիմ

Իմ սրտով սիրեցեալ պարոն Եղիային պազում սիրով ողջոյն մատուցանեմ: Յայդտ լինի քո հրամանացդ, որ ես Ասպահանից կալ շարաթ ելնում եմ, որ երթամ Արզրում: Ինկլիս կափիթըն և մուսեուր Ռենչ, որ ինձի հետ շատ դոստութիւն ունին, իրանց խարճօվ ինձ տանում են չուրի Մերզին քաղաքն, էնտեղանց կերթամ Արզրում, որ ժե (15) օր անճախ հեռու ա: Պատրի Թաթէոս գալիս է ինձ հետ Արզրում, կու մնայ չուրի կայ ուրիշ ընկեր իմ մխտարութեան և իմ օգնութեան համար: Մոնսիուր Բերկար երթում է էնկլիսներուն հետ չուրի Հալապ, ասում այ, որ էլ գու գայ Թաւրէզ: Կիտե՞լ շեմ շիտակ ո՞րն ա իր կամքն և իր գիտաւորութիւնն: Երկու թէ երեք հետ խոսեց մեր քօնսուլին, որ քեզ էստեղ կանչի, իմ խոսք զապուլ ա արել, եթէ որ իմացան, որ իմ հոգևոր որդի էյիք և ինձ մերիֆաթ ունէյիր առևտարի համար: Նոյն վաղթ, որ մեր նաւերն Ալպեթթէ հիմի Ինդաստան են հասել, կու գան Բանդար, իրենց հրաման առնուա քիչ պահում, որ քեզ դնեն մէկ բանի վերա: Խաթերչամ կացիր և ֆիքր արա՝ մէկ հայրն կարում չէ իր որդին մոռանայ: Պատրի Լահար իմ տեղ կու նստի եթէ որ կերթամ Արզրում քեզ տեսնելու և կանչելու Թարվէզ, երբ որ գալիս էր մեր քօնսուլի հետ: Ամմայ հիմիկ ստուգապէս իմացել ա իմ սէրս կուզի քեզ լաւութիւն անել, քանի որ ֆուրսաթ ունիմ, ընդուր համար քո որպէսութիւնն գրէ իրան, որ կամքդ իմանա և քեզ համար մին բան շինէ, ամ էլ ուղի լինի:

Պատրի Թաթէոս քեզ շատ բարեւում ա, նոյն վաղտ քեզ աղաչում ա, շունքի քեզ հետ գալիս ա Արզրում, որ դիր առնուա պարոն Թաթեևսիցն մէկ բանի թօման, որ իրան ձեռնին պիտի ու մէկ թուղթ գրես իրան, որ էն փողն քեզ հասուցանէ: Ողջ լիք:

Պ. Լ. Մ.

Գրեցաւ Ասպահանում ղեկտեմբերի Բ (8):

124. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՈԼՍԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ  
ԲՈՆԱԿԻՆ (1723 դեկտեմ. 9)

24ա || № 2. Գերազանց բոնսիլեր Դիսոն Պոնար

1723 դեկտեմբերի 9. Ռաշտ

Յանուցումն լինի հրամանուցտ, որ քո հրամանուց օգոստոս 27 գրած գիրտ մեզ հասաւ հոկտեմբեր 14-ումն, որ մեք այն ժամումն հաստատել իմք գնալ ուռուսի յերկրիցն. քանզի յառաջ մեր բանն թաքուն բռնեցինք, որ մարդ չիմանա, յետո որ շատ յերկարեցին, յայտնեցաւ ամենեւեմ, վասն այն պատճառին գնացինք այս ճանփովն: Բայց յետի հասանք կիլան, որ էլ նաւ չէր բանում, վասն այն կսպասեմք մինչի մարտի ամիսն, որ առաջի նաւովն գնամք Հաշտարխան, որպէս որ խոստացաւ սպառապետն ուռուսաց: Եթէ պատեճ համարիս յիմացնես իմփոռատօին էլլուն, որ նա մեզ համար մին ֆիբր քաշէ, որ ուռուք մեզ շարգելեն իրանց անպատեճ սովորութեամբն, որ շուտով հասնիմք թագաւորի ծառայութիւնն:

Ժամանակիս Աճամու յերկիրն այսպէս է, որ շահն ման գալով զօր է հաւաքում: Էս գրիս գրած թուումն, նախըտվանէ օսմանցիք, որ Թիֆլիս առին և անտի եկին Գանճա: Այս Գանճու վրա եկող օսմանցոց զօրքն կոտորվեցան պարսից: Նմանապէս խապար հասաւ թէ՛ վիրք կոտորեցին Թիֆլիսու զօրքն՝ օսմանցոց, այնք, որ դուսն էյին, միայն թէ՛ բերթն մնաց օսմանցու ձեռն: Եւ աղուանք դեռ ևս Սպահան պահած ունին: Այնպէս մին պինտ կապել են ճանապարհն, որ ոչ ոք չի կարում գալ, որ մին լաւ հաստատ խապար գրէյի հրամանուցդ մեր մուսի Գառտանեցին և այլոց. որպէս առաջմէ որ գրեցի հրամանուցտ, այնուհետեւ էլ խապար շունիմ: Յառաջ քան Մահմուտին Սպահան բռնելն, մուսի Միրանն գնացել էր իկլիս աճենթի կուշտն, այնուհետեւ չեմ գիտել: Թագաւորն մին

24բ

սարտար կարգեց Մահմուտին վրայ, մինչի 20 Ռ (20 000) մարդով գնաց, կոտորվեցաւ, կրկին կամի գնալ: Ուռուսաց զօրքն կակզիստան շատ են, էս մօտերումս ԺՌ (10 000) լակզի կոտորեցին: Ուռուսներն ևս այս կիլանա յերկրումն կայ ժ, ԺԲ Ռ (10—12 հազար)՝ Ռաշտ, Անդալի, Փիբապազար, Սալիան, Պարու և այլք: Բայց ոչում չեն վնա[սի]լ, իրանց խարճովն || նստած են իբրև մին վաճառական. և ոչ վնասեցին պարսից մինչև ցայժմ, այսուհետև աստուած գիտէ: Ոչ օվ նոցա խորհուրդն չէ յիմանում՝ թէ ի՞նչ բանի համար էն եկել պարսից յերկիրն:

Աղա՛յ, պիտի որ մին հօրախալօր որդի պարոն Ղազարն գնա Հոսմ ուխտ, երբ որ գայ քո ծառայութիւն, շնորք արա յանձնէ մին լաւ մարդո, որ ճանապարհովն կամի գնալ զրկէ վեննա:

Եւս պարոն Յօվան [ն] էսն, որ է իմ յընկերն, սիրով ողջոյն կմատուցանէ հրամանուցտ:

Այս գիրն գրել տվի պարոն Յօհաննէս Մկրտչ[ի]ն ֆռանսից լեզուաւ գեկտ [ե] մբ [ե] ըի 9-ում և կնքեցի իւր համար մին գրի պատասխանն և դրի Մօվսէսին համար 65 գրի մէջն և զրկեցի, որ նայ զրկէ Ղազարին, և նայ զրկէ Իստանպօլ Յոանսիզ էլլի մուսի Պօնակին: Դեկտ [ե] մբ [ե] ը 16:

125. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՍՏԱՖԱ ԽԱՆ ՍԱՐԴԱՐԻՆՆԵՐԻՆՆԵՐԻ  
(1723 ղեկտեմ. 9)

**Մեծ և պատուելի Մուստաֆիան սպարապետին ողջոյն**

1723 ղեկտեմբերի 9. Ռաշտ:

Յետ մատուցանելո ողջունին մերո, գիտութիւն լիցի հրամանուցտ, որժամ հասանք Կասկար, մեզ շատ պատիւ արաւքո փոխանորդ Միր Ազիզ Սուլթանն, որ էլ պակաս տեղ չը մնաց. շնորհակալ եմք քեզանից և նրանից:

Որժամ մտանք Ռաշտ, միուս օրն գնացինք տեսութիւն ուտուս սարտարին, լաւ պատիւ և ընդունելութիւն արաւ: Եւ ինչ որ պատվիրեցիր, ամէնն խօսեցանք, դաս՝ զԱնզալու բանն, դապուլ արաւ: Փոքր նեղացել էր Մուսա խանին բանիցն, մանաւանդ այս բանի ուտուսիցն, որ բռնել էլին: Ինչ որ պէտք էր, խօսեցանք, խաթրն առինք, և խաթր նշան արինք ամէն բանն: Եւ ծանուցինք թէ՛ ձեր պատճառէն մեր թագաւորին վնաս է հասնում, էլ էն առաջի եկքն չի գալ, որպէս առաջին: Պատասխանեց թէ՛ Աստուած մի արասցէ, որ մեք շահին վնաս տամք. 25ա իրանց ॥ թամամ իրանց թագաւորի փողն առնուն այց, որք են վրակացու թագաւորին բանին: Եւ շատ խօսք անցկացաւ մեր մէջն, ամէնն գրել չի լինի, զխաջաւութիւն զինի: Բայց Աէֆի Ղուլի բէկն քեզ կասէ:

Երբ որ մեք այս բաներն կատարեցինք, կամք ունէլինք որ առաջ այս բռնած մարդիքն պրծացնեմք, յետո թէ սկսեմք խօսիլ Անզալու բանն և այլք որք պա [ր]տք էլին վասն թագաւորաց, բայց ուրիշ մարդիք ձեռք խառնեցին այս բանիս մէջն, և ուտուսի գերիքն մեր կուշտն չը դրկեցին:

Մեզ փոյթ է՛, դու որ էս յերկրի տէրն ես, քննէ: Բայց ֆիրք շանէս, թէ մենք բէտամաղ եղանք. աստուած մի արասցէ, բանի որ կենդանի եմք, թագաւորի բանին վրա կաշխատեմք: Մտիկ կանեմք թէ այս բանն ինչպէս անց կու կենա, յետո կսկսեմք խօսիլ Անզալու բանն, խաթրչամ լինիք, ինչ որ

մեր ձեռանցին դու դայ, թախսիր չեմք անել, աստուծով: Որժամ որ մեք տեղս հասնեիք, 4, 5 աւուր յետ, Փարսատանն բէկն գնաց Շահիջան իրան բանին համար: Քեզ բարե կու տա:

Մեզ ինչ որ կարիք է, բարեպէս չեն տալ. ունեմ՝ 20 մարդ 9 ձի, ինչ որ թագաւորին լայեղ է, հրամայէ մեզ տան, քանզի պակաս է մեր խարճուխն, ձեզ յայտնի է, մեք յառաջ գաղապիտի գնայինք շափառվար օսմանցու ճանփօլն, երբոր շատ յետացաւ բանն և աշքարա եղաւ, թէ գնայինք, թշնամու ձեռն կանկանէլինք և թագանորի բանն յետ գնկնէր, վասն, այն էս ճանփօլն եկինք, որ խաթրչամ լինի, թէ ընտուր համար յառաջ մեզ շատ փող պէտք չէր այն ճանփօլն, բայց այս ճանփօլն շատ զարուր գլնի, էխտիր ունիս, այնպէս լինի, որ շահի անուան յալեղ լինի, քանզի նրա անունօլն եմք գնում:

Ողջոյն կուտամք մեր եխպայր Ամրասիպ բէկին: Մեզ աղօթից միք մոռանալ:

Մեզ համար նաւ յուզեցինք սարտարէն, իրդար արաւ, բայց ասաց թէ՛ ժամանակն չէ, կվախեմ, Բ (2) ամիս համբերէք, յետո դուք ընտրեցէք նաւերն, յորն որ հաւանիք, տարէք: Թէ այժմ ուզեմք գնալ, նաւ կու տան, բայց չի լինիր գնալ, էլ լաւ է որ Բ (2) ամիս յուշ լինի, միայն թէ թագաւորի բանն լաւ ճանփա գնա: Էն խնամատարն, որ մեզ տվին Շիպա խանն, մեղնից յառաջ դու գեր գեղընք, կփախցնէ և մեզ մաթար կթողուր, ինչ որ գուզէր, կառնուր, մեր անունն բետնամ կանէր: Երբ որ լսեցի, նրան թանպէ՛հ արի, թողութիւն շնորհես:

Այս գիրն կնքեցի ղեկտեմբերի 11, ներքոյ գրին հետ զրկի, որ հասնի Աստառա զանկանցի Բակդիլի վերո Մուստաֆա խան սարտարին: Գրել տվի պարսևար:

126. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐ ԱԶԻԶ ՍՈՒԼԹԱՆԻՆ  
(1723 ղեկտ. 12)

25բ || № 1. Պատուելի Միր Ազիզ սուլթանիստ ողջոյն

1723 ղեկտեմբերի 12. Ռաշտ:

Գիտութիւն լիցի հրամանուցտ, որ սարտարն մեզ պատվիրեց թէ՛ այն բռնած ուռուաներին համար լաւ խալաթ կարել կու տամ, ես գնալիս կողարկեմ: Այժմ մեք լուաք թէ՛ խալաթեցիք և ղրկեցիք: Լաւ արիք, ամայ էտ բանն ո՛ւմ հրամանան արիք՝ սարտ[ա՛]յրիցն, թէ՛ ձեզանից:

Մին էլ լուաք թէ՛ սոքա ձեզնից ապրանք են յուզում, մեզ ճշմարիտն գրես, թէ՛ ո՛րչանք ապրանք կայ դրանց ձեր կուշտըն: Էս բանն յառաջ մեր վիզին ցգեցիք, յետոյ այլ կերպիւ արիք: Այսուհետև դուք լաւ գիտէք, ինչ գուզէք, արէք: Շուտով այս գիրն ղրկես սարտարի կուշտն և սրա պատասխանն մեզ հասցնես:

Ողջ լեր:

Վերո Մուստաֆա խանին գրած համար մին գիրս ղրի այս գրի մէջն, և տվի պաշտոնեայ Սուլէյմանին, որ տանի Կասկար, տայ Միր Ազիզ սուլթանին, որ նայ ղրկէ Աստառա Մուստաֆա խանին: Դեկտ[ե]մբեր 12 գրել տվի պարսեար և կընքեցի, որ գնա 13-ումն:

127. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐԱՅ ԱԼԻ ՆԱՂՈՒՆ  
(1723 ղեկտեմբերի 14)

26ա || № 3. Պատուելի միրպա Ալի Նաղի

1723 ղեկտ[ե]մբերի 14. Ռաշտ:

Յետ մատուցանելոյ ողջունին մերոյ, յայտնի լիցի հրամանուցտ, որ քո գրած գիրն կնքած մեզ հասաւ, մեք ևս շատ ուրախացանք, որ մեզ չէք մոռացել: (Եւ էհտիմալ Դօվլի գիրն մեզ հասաւ): Թագաւորն, էհտիմալ Դօվլէն մեզ հրամայեցին, որ այս ծառայութիւն լաւ տեղն հասուցանեմք. մեք անկար եմք, բայց աստուծով այնպէս ծառայեմք, որ ձեր կամքըն հաճի և շատ ուրախանաք: Մեզ խոստացաք մեծամեծ պարգև. մեք վասն պարգևի ոչ կարօտեմք, այլ վասն սիրո թագաւորին: Աստուած թագաւորին յերկար կեանք տայ, մեք նրա գլուխն սաղ գուզեմք և թշնամիքն՝ կորած:

Աստուած երկար կեանք տայ թագաւորին, որ համամին համար նոր հրաման տվեց և մեր փողերուն, վասն այն մեր բնական նօքար Պայրամն ղրկեցի, որ այդ փողն շուտ բերէ, որ ամէն թատառուքն լաւ տեսնումք, քանզի այս ճանապարհն Օսմանլույի պէս չէ, որ թաքուն գնամք. պիտի աշքարա գնալ և այնպէս անել, որ արժանի լինի թագաւորի անուան:

Միրպա, գրել ես՝ ընդէ՛ր ձեր թուղթն շուտ շուտ չի գալ: Պիտի մին լաւ բան լինի, որ գրեմք, անպատեհ տեղն ձեզ գըլխացատութիւն տալն լաւ չէ: Օսմանլույի կոտորելն լսեցիք, շատ և շատ ուրախացանք, աստուծոյ հազար փառք, աստուած թագաւորին է՛լ աւելի կարողութիւն տայ, մէկին՝ հազար:

Եկինք Մուստաֆա խանի կուշտն, մեզ շատ լաւ պատիւ դրեց: Եկինք, Ռաշտ հասանք: Ուռուսի սարտարն մեր կուշտն մարդ ղրկեց: Միուս օրն գնացինք տեսութեան: Շատ պատիւ արաւ: Մեզ համար մին նաւ պահել ին մինչի հինգշաբաթ, երբ որ յուշացանք, ղրկել են: Եւ մեզ խոստացաւ թէ՛ Առաչի նաւն

որ գնա, դուք ընտրեցէք յորն որ հաւանիք, տարէք: Էս գրիս թարեզէն մինչի 40—50 օր վախտ է գնալ. էն գլխէն նան գու գայ. բայց էս գլխէն չի գնալ, քանզի սառուց է: Էս քանի օրումըս 7 նաւ էկաւ դօշուն, պիտի 13 էլ գայ: Էս վազիրն տեղս նստեն լայեղ չէ, բան շատ կայ, գրել չի լինիլ: Միրզա, քաշքա թագաւորին ամէն իշխանքն քեզ նման և էհտիմալ Դովլի նման թագաւորասէր լինէյին:

26բ

|| Իմպուատօրն և մեր թագաւորն միացան, Մուստաֆա խանն քանի մի խօսք ապսպրեց, նրա պատասխանն գրեցինք իրան:

(Միրզա, յուզում էյի թագաւորին արզա գրեմ, որ էն մին մարդն մինչև որ վարթարաֆ չը լինի, թագաւորին բանն լաւ չի լինիլ, բայց քեզանից յերկնչեցայ, գերա քանի անգամ քեզ ասի, դուն թագաւորին շասիր, հ[ա]լպաթ որ՝ մին պատճառ կայր ընտուր համար չը գրեցի: Ամայ սիրտս ցաւում է, գերա նրան մին օրէն կենդանի մնալն հարիւր տարվան թշնամու շանք վնաս ունի թագաւորին):

Ուոռուի շատ դօշուն Ազաղու գեն է գնացել, էս մոտերումըս Դարպանտու կշտի տասը հազար լազկին ջառթել են ուոռաներն: Մեք շատ թահտի նաւ եմք յուզում, նոքա վախում են իրանց նաւէն և մեզնից, քանզի ծովի վատ ժամանակն է, վասն այն համբերեցի՝ քանի մի օր յետ լինի, սալամէթ լինի:

Որովհետև մնացինք, մեր խաթերն համար, պիտի որ էտ փողերն շուտով բուսցնէք և իմ մարդն շուտով դրկէք, գերա մեզ քալամաչի պիտի ուոռաներուն համար: Թէ որ թագաւորն շաֆախաթ անէ, էտ մեր փողի թանխան գրէ, որ վազիրն տայ և մուհասիլն բուսցնէ և աւանդէ գանձարանս թագաւորին: Մեր ամէն սանատներուն սաւատն դրկեցի, թէ որ թագաւորն շաֆախաթ անէ, որ վազիրն տայ մեր ամէն փողն, մեք սանատներու ասլն կու տամք նրան կուշտն: Մին ջուխտ լաւ տապանշա դրկեցի թագաւորի դուլուղն, անց կացնէք թախսիրն պաշխէ. յուրիշ արժանաւոր բան չը կար: Էն գիրն, որ Սէֆի Դուլի բէկն քեզ կասէ, շուտ դրկէք, որ շատ պէտք է ճանփօլ գնալու համար:

Այս գիրն գրել տվի պարսեար մեր միրզա էքպարին վերո համար երկու գրի պատասխանն, ևս էհտիմալ Դովլի համար գրած գիրն գրի սրայ մէջն և տվի ախլցխեցի Զօրայի որդի Արութինին, որ նայ տանի օրտուն տայ Մուշի մօմալէք միրզա Ալի նաղուն:

128. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼ ԱԲԴՈՒՍԻՆՆ<sup>53</sup>

(1723 ղեկտ. 14)

27ա || № 21. Գերապանձ Էպարքոս Ապտուլ Քարիմ

1723 ղեկտեմբերի 14. Ռաշտ:

Ծանուցումն լիցի հրամանուցտ, որ քո հրամանուց գրած նամակն մեզ հասավ, շատ շնորհակալ եմ ձեր պարգևիցն, որ նոր հրաման տվիր բաղնեցն համար և մեր փողերն բուսուրցանիր, վասն այն առաքեցաք ձեր ծանոթի, որ է Քարխան Բայրամն, որ մեր ամէն բանն տեսնու և շուտով փողն բերէ, որ մեր ամէն պատրաստութիւնն տեսնուք ըստ արժանոյն: Որովհետև մին քանի բան հրամայեց մեզ Մուստաֆա խանն և մեք ասինք ուոռու սարտարին թէ՛ Ձեր պատճառիցն Անդալուցն վնաս է հասցնում շահին, քանի որ դուք էկել էք, թագաւորի համապաղորդական կանծն չի գալ: Պատասխանեց՝ Աստված մի՛ արասցէ, մեք պատճառ չեմք, իրան փողն կատարեալ խնդրեն այնց, որոց յանձնեալ է թագաւորն, մեք բան չունեմք: Թէ վէզիրն լաւ մարդ է, է՛ր չի գար իրան տեղն նըստիլ, նենգաւոր են իրանց թագաւորին, մեք ի՞նչ անեմք. մեզ պատճառ են գնում, իրանք ուտում: Ինչ որ ձեզ պատմում է Սեֆի Դուլի բէկն, մեզանից կասէ, գրել չի լինիլ. բայց երկուսին իլաճն էլ կանեմք, աստուծով, խաթրջամ կացէք: Մեզ այնպէս երևում ա թէ, ուզում է սարտարն, որ մեք յառաջ գնամք իրանց թագաւորի կուշտն, յետո թէ՛ մեր թագաւորին. թէ որ այսպէս լինի, մեզ հրաման կու տա՞ք խօսք խօսիլ թէ ոչ, քանզի մեզ հարցին թէ՛ Մեր թագաւորին վրա գիր, խօսք ունե՞նք, ասինք՝ Չէ, միայն թէ մեր թագաւորին համար գրի պատասխան եմք տանում: Ամմա ձեր մարդն յայտնեց թէ՛ Մեզ զրկեցիք էլշութեանն և այլքն ծանուցանէ քեզ միրզա Ալի նաղին...

129. ՄԻՐԱԶԻՉ ՍՈՒԼԹԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ  
(1723 ղեկտ. 14)

27բ || № 1. Դեկտեմբերի 14 մին գիր էկա Կասկարու պաշտօնեայ Սուլէյմանի ձեռովն Միրազիղ սուլթանիցն իմ ղրկած համար մին գրիս պատասխանն, պարսկար որ թարգմանի այսպէս.

Աստուծով մինչի կամարն յերկնից առանց փուշ վարդենի յերկրի յերեսն վարդարող հանապազ քո կենացտ պարտիղի ծառն պտղաբեր լինի ըստ կամաց քոց: Մրրկաց, հողմոց, վատիցն ձեզ աստուած պահէ:

Բարեկամութեան և միութեան աստիճանիցն յետ, քո սիրուն խորհրդեանտ յայտնի լինի, որ պատվելի թուղթտ ժամանեաց լաւ ժամանակին, որովհետեւ ընտուր շարադրութիւնն քո առողջութեան կեանքն յայտնում էր աւելաւ և աւելցուց ուրախութիւնն մեր և կնքեալ թուղթն մեծ աստիջանաւոր բարձր տեղվոր պատուելի խան սպարապետի շատ կարող խանի ծառայութեան գրած էր ղատաղան և շուտ շափառով ղրկեցինք քանի անձն ուռուսի ազգն ղրկելու համար աստարաբել իր: Թրէն է, որ ձեզ իմացնել ինչ է, որ հարկիւ դուք գիտէք, որ խանի կամքն և հրաման չեղած, մին բան թամամի չի հասնի, էս ժուկն խանի հրամայածին պէս, էտ ազգին խլաթ տալով, խնամտար կարգելով, մեր մարդովն ձեր ծառայութիւն ղարկելու համար ճանապարհն կապ էր, էս թողութեան բարձր անուն բարձրաստիճան վազիրի կուշտն առաքեցաք, որ ձեր շատ ուրախ առջն բերեն, որպէս որ խորհրդի մօտիկ գիտենայիք, այնպէս անէլիք:

Եւ նավի ապրանացն համար, որ Պաքուլի կուշտն կոտորված լինի, ընկղմելու հասած լինի, վերստէն էկած պատուհաս եղած լինի, իսկի լեզուաց բերանաց չի ասվիլ թէ շսեցինք: էս քանի մի մերկ անձն բանվորիցն ջոկ էլ ինքմին եզր ծովուն չէ հասել:

130. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՎՍԵՍԻՆ (1723 ղեկտեմբերի 15)

№ 65. Սիրելի պարոն Մօվսէսիտ ողջոյն

1723 ղեկտեմբերի 15. Ռաշտ:

Էստուց յառաջ իմ համար 64 գիրն տվի մղտսի Աբդուլլային, որ բերէր էրզր [ու] մ: Յետո, քու գրած էրզրմա համար 95 գիրտ մեզ հասաւ Դիլանի ձեռովն, շատ ուրախացա քու գալն, որ վախտին հասար: Հալպաթ հասանիլ գրոյս շուտով դաս տեղս, զերա ամէն խոսքն գրել չի լինիլ, խոսքեր շատ կայ: Եւ թէ լաւ ձի ճարես, թէ ունիս՝ մին երկուսը բերես: Եւ թէ օսմանցու մարդ կայ նօքարի համար, երկու երեք տղա բեր, քանի մի դաստա թուղթ:

Տեղս լօնտան, մահուտն լաւ է: Այս գիրն ղրկէ Ղազարին մին էհտիպարի մարդով: Այս գրի մէջն գրել եմ էլլուն, որ Ղազարին տիրութիւն անէ և լաւ մարդու հետ ղրկէ իմփրաթօռի փայթախտն: Աստուծով, տեղս մինս մին կտեսնումք: Եւ գրէ Ղազարին թէ՛ որ լաւ մարդ ճարէ, որ էս գիրն շուտով հասցնի Իստամպոլ ֆռանսուղ էլլուն, լաւ է: Թէ որ չը կարենա շուտով ղրկել, ինքն տանի: Ամմա գրէ, որ շուտով ինքն էլ գնա և ապսպրէ, խարչուխն պօլ տան, որ մեզ ամօթ չը լինի: Թէ որ էս գիրն յառաջ ղրկէ և ինքն յետև գնա, զարար շունի, || քանզի ինքն գնալիս բերանով կարէ ասել էլլուն, թէ ես էլիասի հօրախպէրն եմ, որ գրել է հրամանուցտ. լաւ ազաթ կճարէ և իրան ղինճ կողարկեն ուր որ կամի գնալ: Եւ այլ բաւ է գրել պարոնիտ:

Ծառա էլիասէս

Վերո մուսի Պոնաքի գիրն ղրի այս գրի մէջն և տվի աբուլեցի Դանիէլին, որ տանի Թարվէզ, տայ իմ եխպայր Մօվսէսին ղեկտեմբերի 15: Գրեցի և կնքեցի, 16-ումն գնաց, ևս՝ ներքոյ Քասմանու տարուղա աղա Շարիֆի գիրն:

131. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԹԻՆ, ՇԱՀԻ ԲԱՆԱԿ  
(1723 ղեկտ. 15)

№ 4. Պատուելի պարոն Սէք աղիտ ողջոյն

1723 ղեկտեմբերի 15. Ռաշտ:

Յետ մատուցանելոյ ողջունիս իմոյ, ծանուցումն լիցի  
հրամանուցտ, որ քոյին սուրբ աղօթիւն հասանք Ռաշտ ողջ և  
առողջ: Քեզ յայտնի է, որ ժամանակս գնալ չի լինիլ, վասն  
այն կսպասեմք առաջին մատուցին: Այն օրերն, որ մօտ էինք  
Թարվիղու յելնելո, թալիղաներն էկաւ, շատ աշխատանքով  
համամն զաֆթ արին, յետո որ փող պետք եղաւ, սկսանք յու-  
ղել ուստա Հատուցն, այն անիծածն ոտն յետ քաշեց. ո՛ւր է  
այն առաջի մարդիքն և այն խոսքերն, որ ասում էյին՝ «Մեր  
զլուխն կծախեմք, կու տամք հարիւր թուման, երկու հարիւր  
թուման խարճը, երկու օր զաֆտ անցկացուր մին անուան  
խաթրին համար, յետո թէ էլ յետ առնուն, հոգս չէ»: Այս ա-  
մէն խօսքերն յետ կերան և յետս շոքան, մնացի անձար: Մու-  
հասիլն փող է յուզում, ես շունիմ և մարդ մին փող չէր տալ:  
Հազար մուննաթով մին տաս թուման քալանթար Արութինիցն  
տալ տվինք մուհասիլին և մնաց այնք, որ մինին ձի էյի խոս-  
տացել, մինին՝ այլ և այլ ինքմին: Քեզ յայտնի է, որ մեք աշ-  
քարա փող չէյինք կարել տալ և նոքա չէյին առնուլ, շուն Հա-  
տին հազար անգամ ասաց թէ՝ «Մինչի Ծ (50) թուման ոըշ-  
վաթ տուր, ինձ զապուլ է», յետո որ բանն զլուխ տարինք, մեզ  
ստեց, մեք էլ դուռն բաղնիցն և կապեցինք, եկինք: Մեզանից  
յետ գնացել է այն հալետոր պատրու կուշտն, խափել է այն  
պատրին, հրաման է տվել, որ բանեցնէ: Պարո՛ն, դուն լինիս իմ  
տեղն ի՞նչ կանէյիր. էտ դրիստա աշխատանքն ես քաշեմ, վատ  
մարդ ես դառնամ, իշխանաց մուննաթի տակն ես մնամ, փեշ-  
քաշն ես իրդար անեմ, ուրիշն՝ հազր օղուլ պապասի լինի, էտ  
զինի՞:

Առաջի գրումն արդ արինք, մեզ գրեց էհտիմալ Դօվլեն,  
թէ նոր թալիղա տվի: Ահա մեր վեքիլ Պայրամն գու գայ ծա-  
ռայութիւնտ, էտ նոր թալիղէն տաս իրան, որ գնա Թարվէզ,  
բաղնիցն մին լա սարանջամի դնէ: էտ բանն յայտնի լինի  
տաճկաց, ի՞նչ կասեն. Ո՛չ թէ միայն ձեր անունն, ամէն քրիս-  
տոնէից վնաս գնի: Վախենում էք, թէ մեք ուրիշ ֆիքր անենք  
զաթար տվինք, որ մին ժամանակ մի անց կենա, բանն հնա-  
նան՝ հլպաթ տա, որ Մեհրալին քան զմեզ լաւ էր: Բաւ է  
այսքան իմաստութեան քո:

Քո հրամանուց նօքարն էկաւ տեղս, ոչ բերանօլ բարև  
գրեցիր և ոչ թղթօվ. թէ մեզ մոռացար, մեք քեզ չեմք մոռա-  
նալ, բանի որ կենդանի եմք: Ողջ լեր ի տէր: Մեզանից ողջոյն  
տուր օրտուին մեծաց և փոքուց, որք են մեր բարեկամ:

Որ եմք խոնարհագոյն ծառա էլիաս Մուշեխանց:

Այս գիրն գրեցի և տվի վերո Արութինին, որ տանի շահի  
բանակն տայ ջուղայեցի ժամաշէն Սէթ աղին: Դեկտեմբերի  
15 կնքեցի, որ 17-ումն գնա:

132. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՍԱՖԱ ԽԱՆԻՆ  
(1723 ղեկտ. 15)

№ 2. Գերապատիւ Մուստաֆա խանիտ

1723 ղեկտեմբերի 15. Ռաշտ:

Այսօր երեք օր է, որ քո հրամանուց համար գրած գիրք ճանփու արի Միրազիդ սուլթանի կուշան, որ շուտով հասուցանէ ի քո ծառայութիւն. ամէն խապարն տեղն զրել եմ, գիտեմ, այժմ քեզ հասած զլնի:

էս քանի օրումս օրտուիցն գիր էկաւ, և մեզանից շուղապ ուղեցին, գրեցինք, ևս մեր քալամաշի Պայրամն և Սուլէյմանն ևս զրկում ենք, որ շուտով մեր գիրն օրտումն հասցնեն և մեր բաներն տեսնուն: Խնդրեմք քո հրամանուցէն, որ մին լաւ մարդ հետերն դնես, որ շուտով հասցնեն օրտուն և զապզ բերէ քեզ, որ մեր խաթրջամ լինիմք՝ թէ Մեր մարդն սալամէթ հասաւ, թէ ոչ: Եւ այլ ողջ լեր:

Այս գիրն գրել տվի մեր միրզա էքպարին պարսեար և տվի վերո Արուսթինին, որ տանի Աստառա տալ վերո Մուստաֆա խան սարտարին: Կնքեցի ամսուս 15-ումն, որ զնա 17-ումն:

1. Գիտութիւն լիցի քեզ աղա Շարիֆ, որ տեղս լաւ գինի չենք ճարում լսեցի, որ Չիման լաւ գինի կայ, շնորք արա մին բեռ տեղիցն զրկէ քու մարդովն և ինչ որ ծախան է, գրէ մեզ փողն տամք և այլ ողջ լեր:

Այս գիրն պարսեար գրել տվի և բաց տվի վերո Դանիէլին, որ տանի Քասման տալ տեղի տարուղա աղա Շարիֆին:

133. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՎՍԵՍԻՆ (1723 ղեկտեմբերի 16)

30ա № 66. Սիրելի պարոն Մօվսէսիտ

1723 ղեկտեմբերի 16. Ռաշտ:

Համար 65 գրումն գրեցի թէ շուտ գաս, ահայ մեք մեր կողմանէն զրկեցինք օրտուն ախլցխացի Արուսթունն, որ մեր բանն տեսնու, բայց դուն նրան բանն տես, որպէս որ հարկ է, ինչ որ նրա գրումն գրած լինի, որժամ օրտուիցն յետ դառնայ, ամեն նրա բանն պատրաստ գտանէ: Յետո՞ դուն ևս նրան հետ կամ էլ յառաջ գաս տեղս և ինչ որ նրան ձեռն բան կայ իմ բանիցն, թաքուն խրատ տուր, աշքարան՝ հետու կաց: Ամմա շլինի թէ ասես թէ՛ էսչանքն առ, էս շանքէն ձեռ վերուր, որպէս որ հանապազ ինձ գրում էջիր, գրած ինքմիններս և այլ ինչ որ գիտես, որ մեզ հարկաւոր պետք է, զրկէ: Ողջ լեր:

Ծառա էլիասէս

Այս գիրն կնքեցի և զրի վերո Արուսթինի գրի մէջն, որ զրկէ Քալվրէզ իմ եխպայր Մօվսէսին: Գեկտեմբեր 15, զն [աց] 18-ումն:

№ 1. ՍԵՖԻ ՂՈՒԼԻ ԲԵԿԻՆ<sup>54</sup>

1723 դեկտեմբերի 19. Ռաշտ:

Գիտութիւն լիցի, որ իմ մարդն զրկեցի և բո անունն գրեցի, գիտեմ, որ գիրս հասածին պէս քեզ գուզեն, վասն այնորիկ քեզ իմաց արի, որ շուտով գնաս, քանզի հարկաւոր է բու գնալն: Ինչ որ քեզ ասի, գրումն չեմ գրել, միայն թէ գրեցի, թէ Սեֆի Ղուլի բեկն քեզ կասէ հալպաթ, շուտ գնա, որ շատ վրազ է բանն: Եւ այլ ողջ լերի տէր ամէն: Նախ Մուստաֆա խանի կուշտն գնաս և անտի օրտուն: Եւ Իսմայիլ բեկ դեսպանն ձեր թէ որպէս ընդունեցին, ամեն հեքիաթն, կողարկեմք հետո: Աստուծով ամեն բան լաւ գլնի, բայց դուն շուտով գնաս:

Այս գիրն պարսեար գրել տվի ու կնքեցի և տվի խնամատարի մարդ Զաֆարին, որ տանի Ֆումին, տայ շահի ծառա Սեֆի Ղուլի բեկին: Ամսուս 20-ումն:

30բ ||

№ 1. Դեկտեմբերի 21 մին գիր էկաւ Ֆումինի Զաֆար ձեռովն վերո իմ համար 1 գրի պատասխանն Սեֆի Ղուլի բեկիցն պարսկեվար, որ թարգմանի այսպէս.

Քեզ հաւաստեալ ուզող և սիրող: Յետ փափաքն յայտնելոյն իմոյ և կարօտ քաշելուցն, յետ սիրալի եմ սրտիս յայտնի կաննէ թէ՛ բու մեծ անուանի գիրտ մեզ հասաւ, միչի եղեալն յիմացանկ: Ես որ քեզ սիրող եմ, էս պատճառիցն, որ ոմանք թագաւորական բանի համար էս դիս ունիմ երկու երեք օր մնալուցն, յեփ կըզնամ մեծ բանակն թագաւորին և կարծեմ թէ ձեր մարդիքն ճանապարհումն կտեսնում: Եթէ չը տեսնում, տեղն կտեսնում և ինչ որ պիտանացու ծառայութիւնէ տեղն կհատուցանեմ և ապսպրանք հրամայել ես, հարգ գիտեմ: Մինչի մին էլ քեզ տեսնուլն, ինչ ծառայութիւն որ ունենաս, յիմաց անես, որ տեղն կատարեմ: Կենացտ և պատվի օրերտ ուղածիտ պէս լինի աստուծոյ միութեան խաթիրն համար:

Կնիքն է. Տարաթ ումիտի շաֆաաթ ազնապի Սեֆի Ղուլի

№ 1. Դեկտեմբեր 21 Սեֆի Ղուլի բեկի գրին հետ մին վրացևար գիր էկաւ թիֆլիզեցի Ղուզայեց Փարսատան բեկի որդի Ռաֆայելիցն վրասևար, որ թարգմանի այսպես.

Ռաֆայելի մեծութեան, աստժո ողորմութեան պարոն. պարոն դարձեալ առաւել ձեր հրամանուց պատուելի գլխին արժան հարցանելն, ձեռն պաշել բարև մատուցանէ: Հիմի էն ժամանակիցն, որ էկել իմ, աստուած գիտէ, որ թէ ես, թէ Սեֆի Ղուլի բեկն, թէ Ապտուլ Ղաֆար բեկն վեզ[ր]ին հետ ձեր հրամանուց խարճին համար կոխ ինք անում, հիմի գիրն ձեր հասաւ, տվի Սեֆի Ղուլի բեկին, նրա պատասխանն էս գրի մէջն, մեք էլ երկու երեք օրումս ձեր ծառայութին կհասնիմք: Հիմիկս խապ[ա]ր կայ, որ շահն ղօռչի պաշի Մուրթազա Ղուլի խանի գլուխն կտրել է:

33ա || № 1. Դեկտ [ե] մբ [ե] րի 25 մին գիր էկաւ Աստառայու վերո սպառապետ Մուստաֆա խանիցն՝ վերո մեր գրած համար մին գրի պատասխանն: Ղրկել էր Մօմին միրզա Յուսուֆ վագիրին վրայ, նայ ևս ղրել էր իրան ներքո գրած գրին հետ մին բսակի մէջն և կնքել, իրան մարդօվն ղրկել: Պարսևար էր, որ թարգմանի այսպէս.

Պատուելի և բարձր և մեծ աստիճանաւորք պատրութենից և շնորքից իմաստունք բարձրագինք պատրիներ և Յեահիեա Մուշխ, Յուհաննա:

Յուզելուցն յետ ձեր ազնիւ սրտին գիմացնեմք, որ էս ժուկն ոմանց կամացն համար գրել և ղրկել էյիք, շարադրանքըն իմացանք, բանղի բարձր բանակիցն խապար հասաւ թէ՛ մեծ աստիճանաւոր թագաւորն, որ է թագաւորն օսմանցոց, բարիշուքեան հիմ գրել է և բարեկամութիւն և բնական սահմանքն որպէս որ կար, այնպէս կապել են, և նրա ղօրքն, որ Գանճա կոտորվել էյին և կորել էյին, մնացած ղօրքն ամէն տեղաց յետ է դարցուցել և բարեկամութիւնն նորել և ամուր են արել: Մեք էլ երկու բարձր անուն թագաւորի մէջն բարեկամութիւն լինելու համար էս կարծեացն, որ արեան արբու ղօրքն որսորդ թշնամեաց, աստղահամար ղօրացն եզր ծովուն, որ հանապազ խնդրեն կոխ և փոթորկի, այլայլութեան հաւաս են և ոչ յրնտրեն ղթշնամիս և ղբարեկամս, չը լինի թէ առանց իմ հրամանին խառնեն և պարտաւորին և պատճառն լինին որ երկու թագաւորած մէջն խոժովութիւն ցգեն, վասն այն մեծագին Իսմայիլ բէկին՝ իմ հաւատարիմ և բնականն, կասկար կողարկեմ, որ մեր յարի ղօրքն պահէ անպատշաճ յիրար գալիցն: Էն մեծ պատրի աստիճանաւոր ինչ կամք ամէն կերպիցն որ ունենան, յիմացնեն (այսինքն Իսմայել բէկին) որ բարեկամութեան ոճն ամէն երկու գիհիցն ամուր լինի, որ առանց իմ գիտութեան և այլ մին բան որ վնաս լինի բարեկամութեան, երկու գիհիցն ղլուխ չը տա: Էլ խապար, որ բարձր

33ր բանակիցն հասաւ, էս է, որ թագաւորն՝ որ զլուխս նրան մատաղ լինի, զօղի պաշու վիզն զարկեց մին մեղանշական բանի համար ॥ և ինքն մեծությամբ եզր երասխ գետուն, որ է Մուղան կամք ունի. Վախտանկ խանին համար խլղաթ և հրովարտակ զրկել է և ողջոյն: Մուրթուզաղուլի զօղի պաշու մեղանշական գործն է՝ ասվում թէ թագաւորի կուշտն յայտնել է թէ՛ օսմանցոց հետն միացել էր:

Յաւել և յաւել լինիք:

Կնիքն է.

Ուֆաավեզու ամպրի  
Իլլալահ Անպտուհու  
Մուստաֆա Ղուլի

138. ՄԻՐԱ ԱՅՈՒՍՈՒՖԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ:

(1723 ղեկտեմբերի 25)

2. Գեկտեմբերի 25 վեղիր միրզա Յուսուֆի գիրն է, որ թարգմանի այսպէս.

Մեծ և բարձր և առաւել աստիճանաւորք, պատուելի և մեծ բանաւորք մեծագինք Յեահիշեա Մուշեղ և պարոն Յոհաննա, ողջ և անուշ լինիք: Գովութիւն վերջ լինելուցն յետ մինս մինի տեսնելու փախարիցն յետ, ձեր ազնիւ սրտին զիմացնեմք, որ այն օրիցն, որ Ռաշտ զնացել էք, մինչի այսօր մին գիր ձեր բարձրագունիցն մեղ չի հասել, ձեր որպէսութիւնիցն չիմաց չէք արել, այսուհետև հանապազ իմ մարդն քո կուշտն կայ, շատուց պիտէք, որ ձեզնից մեղ գիր հասնէր:

էս ժամուս բարձր անունն խանիցն մին գիր էկել էք, որ ձեզ համար զրկէջեաք և զրկեցինք: Նրա պատասխանն զրկէք, որ աստուծով խանի կուշտն զրկեմ պիտի, որ շատ ժամանակ ձեր որպիսութիւնիցն չիմացնէք, և թէ մին բան էլ որ ունենաք, աստուծով թագաւորի բախտիցն տեղն կկատարեմք: Վերչն ձեր բարի:

Կնիքն է.

Իլահի ազ Լութվի թու Յուսուֆ Ազիզ ասա

(p. 33p)

3. Դեկտեմբերի 27 մին բանաւուշ քիսակօվ երկու գիր էկաւ Յօմինու վերո վեզիրիցն, թուղթերն կնքած և քսակն առանց կնիք, մինն միրզա Յուսֆի գիրն է, միւսն՝ Կասակարու նոր նայիպ Իսմայիլ բէկի գիրն էր: Վեզիրի գրի թարգմանութիւն է այսպէս.

34բ Բարձր և մեծ տեղաւորք պատուելի և մեծ աստիճանաւորք քրիստոնէյից գերագոյնք մեծագին ֆռանք պատրիններուտ մութարիֆ օլան թարալուֆաթներիցն յետ զարդարել թերն զարդարեց զայս գիրս, որ այժմուս մեծագին բարձր աստիջան շատ հաւատարիմ Իսմայիլ բէկ Կասակարու այժմուս նայիպն մին ուռուս || բռնել էյին ծովեզրի պահպանքն առել էյին ձեռիցն և զրկել են տեղս, ես էլ զրկեցի Ռաշտու տարուղու Մահմատ Ղասուամ բէկի կուշտն, որ ձեր կուշտն բերէ, բարեկամութեան ճանփեն այս է, որ շնորք անես և այս ուռուան զրկես իրանց սարտարի կուշտն և յանցնես նմայ, որ մէջտեղն բարեկամութիւն և միութիւն ամուր լինի և աւելու բարեկամութիւնն, որովհետեւ հարկ էր էս երկու խօսքն գրեցինք հանապազ ծառայութիւն որ լինի, մեր կողմն գրես զրկես, որ էն զուլուղն աւարտ անեմք և բարեկամութեան դաշն առաջ գայ, օրերտ լինի ըստ կամաց քոց:

Մեծագինք, էս բանն մեծագին սարտարին ծանուցանէր թէ մեք նրանց սերտ բարեկամութիւնիցն ջոկ ուրիշ միտք չունեմք, թագաւորի հրամանն էլ այսպէս է, որ բացի բարեկամութենից ջոկ բան անօղ չեմք, էս խոսքերս էս բաներս բարեկամութեան ծառի պտուղն է, եթէ այլ իմն կերպ լինէր, ուրիշ կերպ էր լինել և ողջոյն:

Կնիքն է. Իլահի ազ լութվի թու Յուսուֆ Ազիզ ասու

№ 1. Դեկտեմբերի 27 Կասակարու նոր նայիպ Իսմայիլ բէկիցն մին գիր էկաւ վազիրին զրկած համար 3 գրին հետ, որ թարգմանի այսպէս.

35ա Հանապազ սէրտ և բարեկամութիւնտ և միութեան ծառն բարեկամաց ուղածին պէս պտղաբեր լինի: Աստուծոյ էյութեան յուզելու աստիջանիցն յետ, ձեր սիրելի սրտին յայտ կաննեմք, որ քանզի ամէն ժամու միաբանութեան և բարեկամութեանն հիմն գերանուն պարսից և գերանուն ուռուս || թագաւորաց մէջն խիստ հաստատ կայ միաբանութիւն էլ առաւել անհասանելի մտաց մարդկան: Եւ էս ժամուտ, որ քանի մի ուռուտի ժողովրդիցն Ռաշտու յերկիրն հասան, իրաւի որ հուր են և ամէն տեղն հուրն ազնիւ է և նրանց պատուելն և սիրելն մեզ հարկ է, քանի մի ժամ էստուց յառաջ Կասակար յերկրի նայիպութիւնն մեծագին բարձր աստիջան Միրազիզ սուլթանին հետ էր: Մին ուռուտի նաւ Անզալու կուշտն կորուրել էր, քանի մի յանձնէն նաւի բանւորներիցն, շատ նեղութեամբ, ծովի նեղութենիցն պրծած եզր ծովուն ման գու զան եղել, քանի մի մարդ մեզնից կպատահին նոցա, այն քանի անձ բանվորներն կրունեն և սուլթանի կուշտն կբերեն: Որովհետեւ էս խօսքն խանի մաքուր ականջն յրնկաւ, շատ առաւել նեղացաւ, առժամայն հրամայեց նոցա խլաթել և զրկել: էս պատճառիցն սուլթանն քսոսրեց իւր աթոռէն և ինձ, բարեկամս զըրկեց նստիլ յաթոռն Կասակարու և զուարճացոյց: էն ժուկն, որ Կասակար հասայ, էլ մին ուռուս եզր ծովուն բռնել էյին, իմ կուշտն բերին, որովհետեւ սէր և բարեկամութիւն կար ի միշի մերում, պիտ էր, որ ընդունէյաք վրան այն ուռուսն առ ժամայն ծառայութիւն ձեր զրկեցայք, որ նորանց կուշտն տանին: էս պատճառէն պիտի որ սէր և բարեկամութիւն յառաջուցն աւել ամէն կողմէ գոյանա. մին տեղ որ Բ (2) գերազանց թագաւորաց մէջն բարեկամութիւն և միաբանութիւն ամուր լինի,

ալլոցն էլ աւելի պիտի: Պիտի որ շատ ժուկ ձեր առողջ որպիսութիւն և մեր կողմի ծառայութիւն լինելն զրէք, զրկէք, որ բարեկամութեան և միաբանութեան աստիճանն էլ աւել լինի վերջն ձեր բարի:

Կնիքն է. Ղուրպանի Քալբա Միրովաթ Իսմայիլ

141. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՒՍԱՖԱ ԽԱՆԻՆ  
(1723 ղեկտեմբեր)

36ա || № 3. Ապառապետ Մուստաֆա խանիտ ողջոյն

Մանուցումն լիցի հրամանուցտ, որ այն օրէն, որ քո հրամանուց ծառայութիւնիցն ջոկելի եմք, քեզանից մեզ գիր է հասել ղեկտ [եմբերի] 25, բա [յ]ց առանց կնիք. դրած էր մին մանաւշ ծաղկատար քսակի մէջն և քսակի բերանն վաղերի մօհրովն էր էրած, քանզի նրա գիրն էլ միշումն էր: Մեք քո հրամանուցն զրկեցինք այս գրովն 3 գիր է և հանապազ և դաստուրովն կողարկեմք ծառայութիւնտ. ևս լաւ զլնի, որ քո հրամանքտ էլ քո գիրն ջոկ զրկես մեզ, գլուխն կնքով, որ ոչ օվ շիմանա՝ թէ մեք քեզ ինչ զրեցինք, կամ դուն՝ մեզ, քանզի ժամանակիս մարդուն աւտալ պետք չէ, բաւ է իմաստութեան քում:

Եւս լաւ արիր, որ դատադանօք պահում ես քու մարդն, շահին համար, լաւ է. ևս կրկին կաղաչեմք, որ սզուշ լինիս քու մարդէն, որ սրանց խաթր շաւիրես: Մուրթուզա զուլի խանի բանն ես այն ժամանակէն յիմացայ, որ շահն հանեց Թավրիզու:

Եւ մեք շափաթն մին անգամ գնում եմք սարտարի կուշտրն: Խօսք անգաւ քեզ վրայ և ինչ որ մեր ձեռիցն գու գար, գօվեցինք, աստուծոյ յայտնի է, ևս ասինք թէ՛ կամք ունիս, որ սրան հետ բարեկամութիւն անես: Պատասխանեց թէ՛ Ես չեմ ճանաչել զնա, քանզի որ ես էկի՝ տեղս չէր. երբ շահն էս յերկիրն նրան է տվել, պիտի որ ինձ յիմաց անէր, և ես ուրախ եմ և պատրաստ նրա հետ սէր անել: Կրկին ծանուցինք, թէ շահի փօղն չէ դալիս և նայ պատասխանեց, որպէս յառաջն որ գրել եմք քեզ: Ես ասում էր շահի ամէն ինչի վերջի փողն խնդրեն այնց, որք են վերակացու, մեզ չէ ի փոյթ և մեք պատճառ չեմք: Յետոյ Անզալու բանն ասինք, թէ պիտի որ նրա մարդն գայ նստի: Ասաց՝ թող գայ նստի որպէս յառաջն,

36բ

իրանց խարչն առնու, և ձուկն, որ մին փողով են ծախում, իմ մարդուն Բ (2) փողի տեղ տան, և թէ իմ մարդն մին մարդից մին փողի դատ առած լինի առանց փող և կամ թէ մին փող թագաւորի կալուրին վնաս տայ, իմ մարդն, որ իրանց յայտնի լինի, մեզ յիմացնեն, մեք մեր մարդու պատուհասն կուտամք շուտով, քանզի մեր թագաւորիցն կրկին հրաման եկաւ, որ մարդու նեղութիւն չըտաք: Եւ այլ շատք խօսք անցկացաւ, որ պետք չէ գրել: Հիմիկա քո հրամանքն քու մարդն ղրկէ, որ գան, գնան Անգալի նստին: Եւ մին լաւ գիր գրէ սարտարին վրայ և մին ինքմին փէշքաշ, որպէս որ կամիս և որ քեզ արժան է: || Քո հրամանքա մեզ գրեցիր թէ՛ Ձեր ամէն բանն գրեցէք Իսմայիլ բէկին, քանզի իմ հաւատարիմն է. թողութիւն շնորհես, մեք այսպէս շեմք, բանն ամէն հաւատարիմի շենք յայտնել, քանզի լաւ չէ, մեք մեր խօսքն քեզ գրեմք և դուն մեզ գրէ:

142. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՍԵՓԻՆ (1723 դեկտեմբերի 28)

№ 16. Պատուելի պարոն Յօվսէփ ծերունոյոյ ողջոյն

1723 դեկտեմբերի 28. Թարվէզ:

Նոյեմբերի 6 գրած գիրտ մեզ հասաւ զեկտեմբերի 3 նոր տոմարիւ, բացած հասաւ, թէպէտ բաց էր, բայց յիմացա զոր ինչ գրեալ էջիր տեղիտ որպէսութիւնն, բազում շնորհակալ եղէ հրամանուցէտ: Եւ գրել էջիր թէ՛ «Այսուհետեւ ամեն ցեղ խապարն քեզ գրելոց եմ»: Գիտակ լեր, որ այնուհետեւ ինձ էլ գիր չէ հասել քո հրամանուցէն, մտածեալ, եթէ ղրկեցիր՝ ո՛ւմ ձեռովն որ ղրկեցիր, շնորք արա մեզ իմացուր, որ մեք որոնեմք: Եւս այս նոյեմբերի 6 գրած գիրտ ո՛ւմ ձեռով ողարկեցիր, մեզ իմաց տուր, որ նրա պատիժն աստուծով հատուցանելոց եմք, քանզի այս գիրն, որ այսպէս բացած մեզ տվին, շատ խնդրեցի՝ թէ օ՛վ բերեց այս գիրն ինձ, շասին. կամիմ ստուգել և իմանալ քո գրիցն: Եւ որ կամիս ինձ գրել, վրան ֆռանկեար գրել տուր ևս հայեկար, գրե թէ հասնի Թարվիզու պատրոցն, բաւական գլնի, իմ անոնն հայեկար վրան մի գրել:

Մուհարրամի 16 Մահմուտն մտաւ Սպահան, բայց իմայ, որ շահն ինքն ողարկեց իրան մեծամեծ իշխանքն, որ գնացին Մահմուտն բերին Սպահան: Եւ շահն իրան գլխի ճղէն գրեց Մահմուտի գլուխն ասելով. «Դու ես իմ որդին, զոր ինչ կամիս առնել, արայ»: Թէպէտ մեզ գիր չը կայ, բայց Քաշանայ գրեցին այսպէս և լսեցինք թէ՛ մեր ֆռանկներին շատ ընդունելութիւն է արել Մահմուտն, Ջուղայու մեծությունը տվել է ֆռանկներին: Եւ այլ շատ խապար կայ, որ մեզ պետք չէ գրել գրով և շատ կայ որ անպատեհ և սուտ խապարներ են:

Նոր շահ թահմազն պիտի գայ Թարվէզ էս քանի օրումս: Ինձ այսպէս կթվի, թէ փախաւ Ղազպինու, քանզի պատճառն այս է, որ իրան նոր էհտիմալ դովլաթն գրել է Մահմուտին

36ա կուշտն, թէ՛ «Խաթրչամ կաց, էս տեղի ժողոված զօրքն ես կցրվեմ և դու առաքէ փոքր ինչ զօրաց քոց, ես ըմբռնեալ մատուցանեմ ի ձեռին զօրաց քոց այս նոր շահն և այնուհետև աներկիրուղ վարեմք թագաւորութիւնն, և ոչ ոք իցէ, որ դիմագարցի կամաց քոց: Այս գիրն երբ կընթեռնու Մահմուտն, իսկոյն հրաման կու տա երկոտասան հազար զօրաց և ընդ նոսին կարգի գլխաւոր և սպառապետ Լուսիվալի խանն: Տեսանելով զայս ամենայն, խան Մահմատ խանի որդին և Ջանի խանի որդին, իսկոյն մտանեն առ Մահմուտն և խոսեն՝ «Ընդէ՛ր է այսքան զօրաց ժողովելոց, գրեալ մեզ հրովարտակ, ևս տուր մեզ այն գիրն, որ գրեց է՛տիրմալ Դօվլէն, և մեք գնացուք դադտ յառաջ քան զօրաց գալն և ըմբռնեսցուք շահպատեն և բերցուք առանց ձանձրութեան, քանզի է՛տիրմալ Դօվլէն, որ կամեսցէ հարկիւ տալ մեզ, եթէ ստէ, այնժամ կարելի է զօրաց մարտնչիլ, որ զկնի մեր գալոց են»: Այսու կերպիւ արձակեալ այս երկու խանի որդիքն երկոտասան մարդով, շեշտանկի եկեալ ուղիղ մտանեն առաջի շահին և ցոյց կու տան այս գրերն: Եւ նայ զի՛հի հարեալ, կոչէ առ ինքն է՛տիրմալ Դօվլէն և սունկ կանէ: Եւ շուտով դուս գու գայ Դաղպինու հանդերձ ութ կամ ինն հազար մարդով: Եւ հետն բերում է է՛տիրմալ Դօվլէն: Այս է պատճառ գալստեան շահին:

Եւ էրզրումա փաշան զորաժողով անելն ստուգ է, բայց շիտակ խօսք չեն յայտնում. երբեմն ասում են թէ՛ Պիտի գան Երևանայ վրեն, երբեմն կասեն իրանց սինօսումն պիտի մնան, բայց ես կարծեմ թէ այսպէս խաբելով գու գայ Թիֆլիս, զոր աստուածն ամենայնի խաբանէ նոցա շար խորհուրդն:

Եւ այսօր Կիրանու մարդ էկաւ, և շատ մարդու գրած էջին թէ՛ Սալիան, Կասկար, Լանքառան շատ ուռուսի զօշուն դուս են յելէլ ստուգիւ և կոտորում են սունին, և շահի ուհաթին ոչինչ չեն յուզում, միայն թէ՛ տուն զլուխ մին ձի և այլ անշահ խօսքերն գլխացաւութիւն գլնէր հրամանուցտ, վասն այն շէ գրեցի, թողութիւն շնորհես:

Եխպա՛յր, Ֆոանսիղ թագաւորի մեծ էլլին՝ Մուսիու Գառտանն մեզ շնորհեց և փաթենթա տվեց, որ Թավրիզու վերելութիւնն մեք կատարեմք, բայց ոչ եղեև, քանզի իմոնեցաւ այս յերկիրս. կամք տեսուն օրհնեալ եղիցի: Ես մտածեցի գալ վրաց իշխանի կուշտն և ծառայել ի փառս Յիսուսի և պարծանաց սրբոյ խաչին, աստուծով բազում բանից կպիտոյանամ ի մէջ բանակին քրիստոնէյից, բայց անդ, որ ոչ ոք չունիմ

36բ ճանաչել, այսպէս մնացի, եթէ պատեհ || քո հրամանքտ մեզ գրեցիր թե՛ Ձեր ամեն բանն գրեցէք Իսմայիլ բեկին, քանզի իմ հաւատարիմն է: Թողութիւն շնորհեա, մեք այսպէս չեմք, բանն, ամէնէ՛հաւատարիմի չեմք յայտնել, քանզի լաւ չէ. մեք մին խօսքն քեզ կգրեմք և դուն մեզ գրէ:

էս ժամուս Իսմայիլ բեկիցն մեզ մին գիր էկաւ, ևս՝ մին ուռուս, որ զրկել էր թէ՛ Մեր գուշտն գայ վագիրի ձեռովն՝ վեզիրն զրկել էր տարուղին, որ տարուղան մեզ տար, յառաջ քան գիրն մեր ձեռն գալն, ուռուսներն քաշել էյին և առել:

էս գիրն գրած ժամուն քո գիրն ուշացի Ռամազանի որդի Իպրահիմի ձեռովն հասաւ, սարտարն տեսնումք և հետն խոսեմք, յետ երկու երեք արուր նրա պատասխանն և էլլի Իսմայիլ բեկի բունկն թարգմանեմք, միատեղ կողարկեմք հրամանուցտ:

Այս գիրն կնքեցի և զրի ներքո գրին մէջն և տվի պաշտոնեայ Ամիրգունա բեկին, հանդերձ համար 2 Մուստաֆա խան թղթաբերին, որ տանի Կասկար տան նոր նայիպ Իսմայիլ բեկին, որ նա զրկէ Աստառա վերո Մուստաֆա խան սպառապետին: Կնքեցի ամսուս երեքումն և գնացին:

143. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՊԱՇՏՈՒՆՆԵՐԻՆ՝ ԵՎ ԼԱԳԱՐՈՒՆ  
(1723 հոկտեմբերի 3)

36բ || № 3. Վերապատուելի պարոն Պաշոթ և պարոն Լանկլատ

1723 հոկտեմբերի 3. Թարվէզ:

Միրելի հարբ իմ, հանապազ մեք աղեկիզեալ որոնել որպիսութենէն ձերմէ և ոչ ոք էր որ մեզ ճշմարիտն բացայայտնէր՝ թէ ձեր տէրութիւն առողջ էք մնացել և անվնաս ի ձեռաննէ անօրէն բարբարոսաց, թէ ոչ, այժմ հաւաստիւ տեղեկացաք, որ ձեր տէրութիւնն էջիք Շամախի: Աստուծոյ փառք և գոհութիւն, և մեր աչքն լուս, ոչ սակաւ ուրախութիւն եղև մեզ: Եւ խնդրեմ Յիսուս միածնէն, որ շուտով ճանփայ բացվի և գրեմ ձեր խապարն Սպահան, լսեն և ուրախանան, որպէս՝ մեք:

Յուլիսի 23-իցն մին գիր ունիմ Սպահանայ, որ գրած է թէ՛ Դեռ ևս պաշարեալ կայ քաղաքս, այնուհետև մեզ էլ գիր չի հասել՝ թէ ո՞րպէս եղև նոցա բանն. միթէ ինքն ամենաողորմն աստուած ողորմի նոցա:

Այս պատուհան, որ եկաւ, մեք ևս Սպահան էյաք, յետ Գ (4) ամսու յելաք Սպահանայ և եկաք Թարվէզ: Աստուծոյ փառք, որ յառաջ քան թէ Միր-Վէյսի որդին Սպահան գալն, ամէն պատրիքն և իրանց եկեղեցու զարդն, բերինք Սպահան մուսիու քունսուլի տունն:

Հայր սուրբ, աստ անտեղի է և անվրէպ ծանուցանել ձեզ որպիսութիւնն մեր, բայց խնդրեմ ձեր հրամանուցէն, որ դուք հաճիք ի փառս Յիսուսի, զոր ինչ ձեզ գրեց պատուելի պարոն սուլիերիօրն, և մեք մեծանալով աստուծով բարձրացուցանեմք խաչն Քրիստոսի և ծառայեմք նմայ: Եւ երբէք ոչ մոռացայ ձեր բարերարութիւնն:

Յոյս ունիմ, թէ թագաւորն Մօսկօֆու գու գայ Շամախի և դուք նորա տեսութիւն կգնաք, և կամ թէ լինի նրայ բանակումն մին մեծ ֆռանկ, ծանուցանէք նմայ վասն իմ, եթէ ի-

մանաք, որ լաւ գլնի մեզ համար: Գրոյս պատասխանն շուտով առաքել մախթեմ: Եւ թէ մեզ յուզեն՝ շուտով պատրաստ եմ գալ, եթէ տէրն կամեսցի: Որպէս ունիք յօժար ջանիւ խնամել հոգոյս, նոյնպէս եթէ կամիք ջանալ վասն կեցութեան մարմնոյս:

Ձի ևս եմ ամենախոնարհ ծառա էլիսա Մուշեխանց:

Այս գիրն գրեցի, և պատրոց գրերին հետ կնքեցի և տվի Գաֆտեղին, որ տվեց Ղազպինու եկող վրացի շափառ զինտար Զօրապին, որ տանի Շամախի, տայ պարոն ջեղուիթ պարոն Պաշօթին կամ պարոն Լանկլատին: Հոկտեմբերի 7, զնացի՞ 5:

№ 1. Իսմայիլ բէկ նայիպիտ ողջոյն

1724 թ. յունուարի 3. Ռաշտ:

Քո հրամանուց գիրն հասաւ մեզ զեկտեմբերի 27: Գրեալն իմացանք. շնորհաւոր լինի կարգտ, որ տուաւ քեզ: Բայց սգուշ կաց և պատրաստ պահէ քո մարդն, որ մին անպատեհ գործ չգործեն և պատճառն ձեզանից գոյանայ, և ուրանց խաթերն աւերի [վարուես աշնպէս], որպէս որ խանն քեզ պատվիրել է: Եւ մեզ գրեց թէ՛ Գուն բարեկամութիւն հաստատես ուռուսաց մէջն: Եւ մեք որչանք որ կարող ենք ձեզ համար լաւ խօսել, անտես չեմք առնել: Եւ խանն մեզ գրեց, թէ ինչ որ մեզ պէտք լինի և բան ունենամք, քեզ գրեմք, ևս քո հրամանն էլ ինչ որ բան ունենաս, մեզ գրես: Այն որ || մեր ձեռնիցն զուգա, անտես չեմք առնել:

Այն ուսումն, որ մեզ մոտ ղրկեցիր, լաւ արիր, բայց առաջ քան զքո գիրն մեզ հասնիլն, այնակումն քաշել էլիրք. ուռուսներն խուփ բան չկա, կամքն այն էր, որ իրանց մարդն իրանց հասնէր, հասաւ:

Եւ շնորհք արայ մեզ տաս թուման փող ուղարկիր այս թղթաբեր Ամիրգունա բէկովն, քանզի խարձից պակասութիւն եմք քաշում:

Եւ այս գիրն անբացիկ շուտով ղրկես սարտարին: Եւ թէ խանիցն գիր գայ, կամ զու գիր գրես, կնքով մեզ ղրկէ, ուղիղ Յոմին մի ղրկել. վազիրի ձեռն ա, թէ Կասկարուն մարդն վախում ես ղրկել, ուրիշ մարդով ղրկէ և կամ Միրազիլ սուլտանի ղասիտովն, որ հանապաղ գալիս էր տեղս:

Թէ Միրազիլ սուլտանն տեղտ է, ողջոյն մատո:

Այս գիրն գրեցի իր համար մին գրի պատասխանն և վերո սպառապետի գիրն գրի մէջն և կնքեցի, և տվի Ամիրգունա բեկին, որ տանի Կասկար, տայ նոր նայիպ սպարապետին, որ է Իսմայիլ բէկն: Գնաց ամսոյս երեքումն:

Յունուարի 2, Աստառայու մին գիր էկաւ Ռաշտի որդի Իբրահիմի ձեռովն: Մին գիր էկաւ վերոյ սպառապետ Մուստաֆա խանիցն, որ թարգմանի այսպէս.

37բ  
Յարգևոր և բարձր մեծ աստիճանաւոր հպարտութեան և շնորհաց ճամփայք պատրիներ Յահիեա Մուշեխ, բափուշին Յոհանու փորձութիւնից անսահ մնաք և առողջ լինէք: Աստուծոյ մեծութեան համար, ողորմութեան համար և կարողութեան շնորհացն համար յայտնի լինի ազնիւ սրտոց ձերոց, որ ձեր գիրն, ձեր մարդն որ ղրկել իք, ըստ կամաց խնամատար կարգեցաք ձեր մարդուն հանդերձ ղրէրուն համար, || զերապան՝ բանակը առաքեցաք: Էտ ժուկն էս պատճառին համար, որ կովի և սատանութիւն անելու խնդրող էր և կուր մարդ էր Միրազիլ սուլտանն և բարեկամութեան կերպն և միութեան համար մեր դիւն և զբանց դիւն համար, որ պետք էր, անգետ էր և հնար էր, որ մին բան անէր, որ բարեկամութեան աւերումն նրանից զլուխ տար: Վասն այս պատճառիս իրան յընկերաց նմանեաց մեծ Իսմայիլ բէկն, իմ բնական պաշտօնեայն Կասկար ղրկեցի, պիտի որ զուք փառթամ սպառապետն ուռուսաց մեծագինն, ինչ բան և ինչ ծառայութիւն որ լինի, վերոյ Իսմայիլ բեկին իմացնէք, որ աստուծով, բարեկամաց աւերման տեղն չկատարէ և ինչ ցեղ, որ պետքական որ ձեզ հարկաւոր է, ամէն կերպէ մեծագին Իսմայիլ բէկին ապսպրել եմ նրան, յիմացնէք: Պակասութեան և ձանձրութեան համար մեք հաճոյ չեմք, հալպաթ, օր ըստ օրէ ձեր որպիսութիւնը մեզ յիմացնէք: Եթէ մեծ և բարձր աստիճանաւոր իրան նմանեաց մեծ Փարսատան բէկն եկած լինի, իրան որպիսութիւնն գրէ և փոքր ինչ ինքմին որ ապսպրել էի, մեզ համար որ առնու, թէ որ առած լինի՝ ըղրկէ: Ողջոյն:

146. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐՁԱ ՅՈՒՍՈՒՅԻՆ  
(1723 դեկտ. 31)

35բ || № 2. Միրպա Յուսուֆ վապիրիտ ողջոյն

1723 դեկտեմբերի 31. Ռաշտ:

Ծանուցումն լիցի, որ մեք զրկեցինք քո հրամանուց ծառայութիւն մեհմանտարի մարդ Զաֆարն, քո հրամանուց գրի պատասխանն և որ մեր խարճն բերէր: Եւ զուք հրամայել էյիք թէ՛ զնար Պապունաբեկի կուշտն զապղ բերէ: Այսօր էկաւ, մեզ ջուղապ բերեց թէ՛ Պապունաբեկն հիւանթ է և զապղ չի տալ: Մեք զլուխ չեմք հանել էս բանէս. Պապունաբեկի զապղն քեզ ի՞նչ պետք է, յերկրի մեծատրն դոնն ես, կարօղ ես մին ալ մեհմանտար կարգել և նրանից զապղ ուզել, մանաւանդ որ մեզ մեհմանտար կու տային բանակիցն, մեք ոչ հաճեցանք թէ՛ ռայաթի զուլում չը լինի: Դուն տեղս տարուղա ունիս և մարդ մինին հրայմէ, որ օր ըստ օրէ մեզ խարճ տան, թէ ոչ կամիս՝ շաֆաղաթա մեզ գրէ, որ մեք ֆիքքն տեսնունք:

1. Դեկտեմբերի 31. Քասմանու տարուղա աղայ Շարիֆ խանից մին գիր էկաւ խնամատար Զաֆարօվն պարսևար, որ թարգմանի այսպէս.

Մեծ և բարձրաշուք, պատուելի, մեծաբան, մեծագին, բարձրագին պարոն էլլի բեկիտ, ողջ լինէք: Յետ այնորիկ յայտնութիւն այս է, որ էս ժուկս ձեր գիրն հասաւ, կերպն յայտնի եղեւ. տապը լտրաշանք շահիքար ծառայութիւն ձեր զրկեցինք, գինին համար գրել էյիք, ի՞նչ հարկ է, ընձայապէս զրկեցինք: Յետ այնորիկ ծառայութիւն որ ունենաք՝ ծառայանէք, տեղն կկատարեմք: Վերջն ձեր բարի:

Կնիքն է.

Վաման յաթաւաթ քալ վահուվա ալալահ ալու-  
հաս պուհու ապտուհու Մահմատ Շարիֆ

147. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԱՎԱՍԱՆԻ ՅՐԱՆՍԻԱԿԱՆ  
ԴԵՍՊԱՆ ԳԱՐԴԱՆԻՆ (1724 հունվարի 3)

Գերպանց մուսիու Գառղանիտ ողջոյն

1724 յունուարի 3. Ռաշտ:

Ծանուցումն լիցի հրամանուցտ, որ այս ամսօվս 20 ամիս է, որ քո ծառայութենիցն առաքեցա թարվէզ և թարվղու գրեցի հրամանուցտ ամէն որպիսութենիցն, բայց հրամանուցտ ոչ գիր և ոչ խապար էկաւ: Ես շատ նստա թարվէզ և ծանուցի շահին, ոչինչ օգուտ եղաւ: Մին գիր գրեցի Իստանպօլ մուսի բունթ Պօնաբին և նայ հրամայեց, որ զնամ Ֆոանկիստան, ծանուցանեմ թագաւորին էս || յերկրի բաներն և գումպանիայի խապարներն: Վասն այնորիկ հոկտեմբերի 30 յելինք թարվիղու, ես և պարոն Օհաննէան, և եկինք Կիլան ուռուս սպառապետիցն նաւ խնդրեցինք, որ ուռուսի երկրիցն զնամք:

38ա

Պարոն Բեռնարտոսն մնաց թարվէզ, վասն այնորիկ էս գիրն գրեցի ձեր հրամանուցն, որ ձեր առողջութենէն մեզ մին գիր գրէք, որ մեք զնալիս անդ ձեր որպիսութիւնն յայտնեմք, ևս ողջոյն մատուցանեմք ամեն պատրիներին և բարեկամաց:

Եւս եթէ պարոն թաթէոսն տեղտ է, ողջոյն մատո, եթէ կարէ գալ, որ միատեղ զնամք լիհիստան, եթէ ոչ՝ գրէ իւր որպէսութիւնն: Քալամաշի Յոսէփն եկել էր Կիլան մինչի մեր տեղս գալն, զնացել էր բանակն շահին, շխարացինք տեսնուլ մինդմին:

Այս գիրն գրել տվի պարոն Օվաննէսին Ֆրանսէզի լեզուա և տվի Քաշանու գեղիցն սարիպատուացի հաճի Հեյտաբի որդի Իպրահիմի ձեռն, որ նայ տանի Սպահան, տայ ֆոանսիզ զունսուլ մուսի Գառտանի ձեռն և կամ ինչ ֆոանկ որ տեղն ճարվի:

Կնքեցի և տվեցի ամսուս 4 որ զնայ:

№ 1. Պատուելի պարոն Սահակիտ ողջոյն

1724 յունվար 3. Ռաշտ:

Միրելի մեր ի տեր, էս ժամնակս մին այնպէս խապար չը կար ըստ արժանոյն, որ ծանուցանէյի հրամանուցտ. թէպէտ և խապար շատ կայ, բայց մեզ ոչ է պարտ գրել և քեզ ընթեռնուլ, քանզի ժամնակս վատ է, միայն թէ կարող եմ քեզ գրել քո սիրելի որդեակ Սէթ աղի որպէսութիւնն:

Որ էն ժուկն, որ շահն թարվիզու յելաւ, մեք ևս յելինք մեր բանին համար, քանի որ օրտումն էաք, միջատեղ հաց էյինք ուտում. խիստ լաւ է, միայն թէ ձեզանից կարօտ է և փափաք, զոր տէր աստուած արժանի արասցէ զձեզ միմիջանց տեսութեանն: Երկու ամիս կայ, որ նրանից ջոկնվել եմք և եկել կիլան, բայց հանապաղ մեր գիրն մինմինու գնա և գու գայ, և շահն խաթիրն խիստ ուղում է: Որովհետև որ մեք այս զասիտն զրկեցինք տեղտ, հարկ եղև մեզ ծանուցանել քո որդւոյ որպիսութիւնն, գիտեմ որ հաճո կիլի հրամանուցտ, քանզի || էն տեղաներիցն ոչ գալացող կայ և ոչ ձեզանից խապար եմք լսում:

38բ

Եւ մեք ևս խնդրեմք ձեր հրամանուցէ [ն], որ շնորք անես մեր ազայ բոնսուլ մուսի Գառտանիցն և կամ ամեն մեր ֆոանկաց ազաներիցն, թէ պատրիների որպէսութենիցն որ գրես՝ թէ ինչպէ՞ս եղան. ո՞ղջ են, թէ մեռած, տե՞ղտ են, թէ գնացած, որ մեք յիմանամք: Թէ որ անհնար լինի գրել, բերանով պատմես այս թղթաբեր զասիտին: Եւս գրես ձեր որպիսութենէն Սէթ աղին, զի կարի տազնապի սիրտն ձեզանից խապար իմանալն: Եթէ պարոն Սահակ [ն] ոչ իցէ տեղտ, ինչ քրիստոնա որ այս գիրն կարդայ, վասն Յիսուսի սիրոյն, սրա պատասխանն գրէ կամ բերանով պատմէ: Ողջ լերուք ի տէք, ամէն:

№ 2. Յունվարի 6. Կասկարու մին գիր էկաւ Իսմայիլ բէկիցն Ամիրզոնա բէկի ձեռովն համար մին գրի պատասխանն պարսեար, որ թարգմանի այսպէս.

Հանապաղ ձեր շիմանա կանաչն ստեղծողի ողորմութեան, ամպի ցողերն կանանչանա և զւարչանա, բացի և պրտղաբէր լինի աստուծոյ միութեան համար: Փափակին կերպն յայտնելուցն յետ, սիրալիր սրտիտ յայտ լիցի, որ էս ժամուս բարեկամութեան գիրն որ զրկել էյիր, հասաւ, որովհետև որ քո առողջութիւն յայտնում էր, առաւել ուրախացանք: Գիրն կնքած Ալիճա խանին վրա գրել էյիք Ռամազան բէկին հետ, ողարկեկացու եմք, պատասխանն գալուց ձեզ կողարկեմ, որովհետև մեզ գրած գիրտ յայտնում էր թէ՛ էս բարեկամն որ էս լինիմ, ոռուսի ազգին պատիւ անեմ. ի՞նչ պէտք է էտ գրել:

59ա

Հալպատ ա || որ ընտունք բարեկամն և հուր նրանց պատիւ անելն հարկ է, աստուծոյ փառք, էն ժամուցն, որ Կասկար էկել եմ, էն որ պէտքական պատիւ է նրանց արել եմ և անեկացուք եմ էս պատճառիցն, որ մին տեղ որ բարեկամութիւն մէջտեղ լինի, պատուիցն ջոկ ինչ տեղ ունի: Ձեզ էլ յայտնի եղել է, որ էստուց յառաջ անգիտութեան և առանց հրամանաց սպառապետին, քանի մի յանձն նաւի բանւորիցն եզր ծովուն բռնել էյին մեծագին Միրազիզ սուլթանն քանի մի օր իբրև զհուր պահել էր, դուք էլ տեսիք յաջօք, տեսել էյիք թէ որպէս պատիւ էր արել, ընտուց յետև որ էս խօսքն սպառապետին ծանուցին, հրամայեց հաստատ, թէ նրանց խլղաթ տան և ուռուս սպառապետի կուշտն ողարկեն: էս պատճառիցն որ ընտունք բռնել էյին, սպառապետին մերո բնութիւնն շատ դիժար էկաւ, էս պատճառիցն մեծագին Միրազիզ սուլթանն կարգէն լուծեց և շատ նեղացաւ, թէ պանդխտաց հետ այսպէս անելն ի՞նչ պատճառ ունի: Եւ էս Կասկար հասած ժամուս յետ այնպէս մին բան չէ յայտնել, որ պանդխտաց սիրտն աւերի ին-

ձանից: Աստուծով, այսուհետև ոչ է լինելոց էս ճանփովն որ միութեան և բարեկամութեան սէրն մէջն է, նոր պէտքական սէր է անելացու եմք:

Եւ զրկած գրիտ մէջն գրել էյիք, թէ տասն թուման զրկեցէք: Որովհետև ձեր բարեկամն էս քանի մի օր է, որ կասկար մտել է, մինչի էս ժամուս, բան չեմ արել, պատրաստ փող չը կար, ընտուր համար հինգ թուման էս գիրն բերողին հետ զըրկեցինք, էստուց յետև հինգ թուման զրկելացուկ եմք: Հալպաթ, սիրո և բարեկամութեան աղաքն պիտ որ շատ անգամ ձեր մարդն էս բարեկամի կուշտն գայ, էտտեղի բաներիցն յիմանամք, խաթրջամ է որ ջոկութիւն չիմանալով ուռուս ազգի որպիսութեան և ընտուց խորհուրդն ինչ է և ինչ կամք ունին յիմանալով շիտակն օրստօրէ մեզ յիմացնէք, որ պատճառ լինի սէրն յաւելցնել: Եւ մարդ, որ էս դին կողարկէք, պիտի որ հաւատարիմ մարդ լինի և ինչ ծառայութիւն էլ որ էս կողմն ունենաք, յիմացէք: Վերջն ձեր բարի:

Առանց կնիք էր, միայն թէ վրան կնքած էր:

150. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՀՏԻՄԱ ԴՕՎԼԱ ԱԲԴՈՒԿ ՔԱՐԻՄԻՆ  
(1724 հունվ. 11)

№ 2. Գերպանց եպարքոս միրզա Ապտուլլա Քարամիտ ողջոյն:

1724 յունվարի 11. Ռաշտ:

Յայտ լիցի հրամանուցտ, որ մեր որպիսութիւնն ծանուցի ձեզ իմ վեքիլ Արութենի ձեռովն, մինչի այսօր մին խապար չեկաւ. խնդրեմ, որ շուտով իմ փողըն զրկէք, որ շուտով բանս տեսնում:

Էստից յառէջ մին ուռուսի նաւ յընկել է կասկարու հողումն և կասկարեցիք նաւի ապրանքն առել են և մարդիկն բռնել, հիմիկս ուռուսի սարտարն էն ապրանքն ուզում է և շատ նեղացել է: Մեք սարտարիցն յուզեցինք սիահին և թարգմանեցի և գրեցի թէ նաւն և թէ մէջի ապրանքն ՌԴՃԺԲ (1412) թուման, մին ինքմին յաւել կանէ: Եւ էս բանն լաւ չեն արել, բայց եղել, գնացել է. հիմիկս իրանց համար մին մահանայ բռնած չլինի թէ այս բանիս համար թագաւորին փոքր վնաս հասնի: Ինձ կթվի՛ սրանց ռազի անէք: Հրամայէք, որ այս նաւիս ապրանքն տան և մահանան կտրեն. էս պատճառէն, քանի մի մարդ բռնած են ֆռանկաց, զրուստն պիտի որ գիտենաք, էս պատճառիցն ինչ որ անեն, կանեն, առանց պատճառի կարօղ չեն բան անել, բայց զգուշ կացէք, որ ձեզանից պատճառ չլինի:

40բ || Յառաջմէ քեզ ծանուցի, այժմ գրեմ, որ էս վազիրն հանեցէք, ուրիշն զրկեցէք, որ շիտակ կայ, առանց երկուզ մտնէ Ռաշտ, նստի և իրան բանին մուղխաթ լինի: Մեզ կթուի միրզա Դահիրի որդի միրզա Ռաֆֆին զրկէք, քանզի մեք շատուց նրան կճանաչեմք և նրա թափիաթն գիտեմք, այնպիսի մարդն սրանց հետ լաւ ճանփա կգնա. էխտիարն ձերն է, դուր որն որ լաւ գիմանաք, այնպէս արէք, բայց շուտով զրկեցէք, քանի որ մեք տեղս եմք:

Որ քո հրամանուց կուշտն զրկէաք մեր միրզան, բայց ոչ

որ կայր աստ պատրաստ այնպիսի հաւատարիմ մարդ և մեր ոչ կարէաք այլում յայտնել մեր բաներն, վասն այն ուղարկեցաք ձեր կուշտն մեր պաշտօնեա՝ Ամիրզունա բէկն, քանզի օտար մարդու ձեռով երկեաք տալ մեր գրերն: Խնդրեմ որ շուտով ողարկէք մեզ:

Այս գիրն պատկեար գրել տվի մեր միրզային և դրի ներքն գրի մէջն, որ միրզա Ալի Նազին տա եպարքոս միրզա Ապտուլ Քարիմին, որ է էհտեմա դովլա շահին:

Կնքեցի ամսուս 14, որ գնա. 15-ումն:

151. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՄԻՐՉԱ ԱԼԻ ՆԱՂՈՒՆ  
(1724 հունվարի 11)

№ 4. Պատուելի միրզա Ալի Նաղուս ողջոյն

1724 յունվար 11. Ռաշտ:

Էստուց յառաջ ամէն որպիսութիւն գրեցի ձեզ իմ վէքիւ Պայրամի ձեռքովն, մինչի այսօր մին խապար չէկաւ. շուտով իմ փողն ղրկէք, որ ժամանակաւ իմ բանն տեսնում, ճանփիցն յետ չմնամք. ընդէ՞ր բաներն այսպէս յուշացնում էք. զերա մօտերս զնալացու եմք, էտ փողին խաթերն համար կարող խոշտեղ սարգարտան չպիտի մնամ և թաղաւորի բանն մնայ. թէ լինի, թէ չլինի, պիտի զնամ, ամայ ամօթ է մեզ համար պարտքով գնալ:

Հուսէ՛ն Ղուլի բեկն էկաւ տեղս, ամսուս Ե (5). էկաւ տեղս, մեզ ասաց թէ՛ շահն հրամայեց վազիրին, որ տեղս մեզ փող տայ. մեզ փող չէ տվել, զնաց ամսուս 7, զնաց Մազ [ա] նտարան:

Էս ժամուս խապար բերին թէ՛ կահիջանու մարդն եզր գետուն թօփ են բերել... 4 թօփ դրած են ելել մին տան մէջ, մարդ չկայ ելել թօփերին կուշտն, քաշեցին բերին, գետի ա-  
41ա նուն է Սֆիտ սու, որ այժմ որ յիմացանք, թէ՛ քանի մի ուս||ուս գնացին այն թօփերն բերելու: Վաղիրն, որ այս խապարն կհասնի, գուզէ եղել որ փախչի, յետոյ Ռաշտու մին քաթխուտան գիր կգրե որ խաթրջամ գլին: Մին հաքիմ, որ այսպէս վախուկ լինի, խեղճ ուսմիկ ժողովուրդն ի՞նչ անէ, պիտի որ գար Ռաշտ նստէր, որ ուսաթի սիրտն էլ պինտ լինի: Յետո մեք մին քանի յուզպաշու ասինք թէ՛ «Դուք ասում էք՝ մեր բ[ա]րեկամ ենք, էս ի՞նչ բան է, որ անում էք»: Ասացին թէ՛ «Մեք թշնամի չեմք, ամա նրանք մեզ թշնամութիւն են անում. թէ որ մեզ հետ լաւ են, ընդէ՞ր մեր վրա թօփ են բերում»: Էստի յառաջ ձեզ ղրկեցին Իսմայել բեկի էլշու հեքիաթն, մեք

ասլն ուղեցինք և մեր լեզուով թարգմանեցինք, տեսինք որ լաւ չէր գրած, վասն այնորիկ կրկին ձեզ ողարկեցի:

Ինչ գիր որ դրկէք, այսպէս մի մարդու ձեռովն դրկէք, որ շիտակ իմ ձեռն հասնի, ուրիշներուն ձեռն չհասնի, զերա կբանան:

Միրզա, մին լաւ մարդ ճարեցի, որ իմ նւիսն տան, շատ լաւ գիտուն մարդ է, էխտիպարով, ասլն շամախեցի, Ալիբար անուն. աստուծով, այս մարդն մեզ հետ կոտանեմք, տեղտ հարցէք, միրզա Սատրա, միրզա Անայաթի տղէն կճանաչէ, որ էր շրջանու վագիրն: Սրանից ջոկ 5 տաճիկ և 14 հայ նօքար էլ ունիմք: Եւ այս թղթաբեր Ամիրզունա բեկն մեր մարդն է, ուղարկեցինք ձեր ծառայութիւնն, քանզի օտարի ձեռով շատացինք մեր գրերն ուղարկել: Եւ դուք մի՛ք յայտնէք թէ՛ Մեր մարդն էկաւ ձեր կուշտն, փոքր ինչ ձեր բաներն թագուն արարէք: Միրզա, մեզ վրա երկմտիլ միք, որպէս որ տեսիր, էլ այնպէս եմ, աստուծով տեսանելոց եմք և մեզ աղօթից չմոռանա:

Այս գիրն գրել տվի պարսևար և Մօսքով գնացող շահի դեսպան Իսմայիլ բեկի հեքիաթն, որ ուռուսից թարգմանեցար Ֆրանսեզի լեզու և անտի պարսևար և դրի այս գրի մէջն և վերո էհտիմալ Դօվլի գիրն, միատեղ կնքեցի և տգի շամախեցի պաշտոնեայ Ամիրզունա բեկին, որ տանի շահի բանակն, տայ միրզա Ալի Նաղ[ու]ն Մունշի մօմալիքի ձեռն:

Կնքեցի ամսոյս 14, որ զնա 15-ումն:

152. ՆԱՅԻԲ ԻՍՄԱՅԻԼ ԲԵԿԻ<sup>56</sup> ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ,  
ԿԱՍԿԱՐԻՅ (1724 հունվարի 10)

№ 3. Յունուարի 10: Կասկարու մին գիր էկաւ վերո նոր նախի Իսմայիլ բէկի [ց]ն պարսևար, որ թարգմանի.

Հանապազ սիրալիբ սրտիցն ձերոց հայելին, աշխարհի ժանկիցն և աղտիցն մաքուր մնա բարեկամութիւն: Եւ յուզելուցն յետ յայտ լիցի ձեր սիրելի սրտին, որ էս պատճառիցն, որ սէր և միութիւն ևս էր երկու մեծահռչակ թագաւորաց մէջն, որ պարսք և ուռուսն, լինի սրանց մէջն կայ մինչի այսօր, թըշնամութիւն չէ եղել և ոչ է լինելոց: Քանի ժամանակ է, որ ուռուս թագաւորի սարտարն քանի մի մարդով Ռաշտու յերկիրն եկել է, էս պատճառից չլինի թէ ոմանց վնաս հասնի և անէծքի պատճառ լինի: Էս պատճառիցն Ռաշտու մարդն հանգստութեամբ իրենց բանին յետնէն են, ամա երբեմն փոքր ինչ ժողովուրդ որ Փիրապազարումն են, նրանցից վնասակարութիւն յայտնում է այսպիսի բանիւք: Կասկարու ոմանց աղքատ ժողովրդոց իրենց բանից համար եզր ծովուն կզնան որսալ, նրանցից կբռնեն, նեղութիւն կուտան և նրանց պախրէքն կբտանիր արածել, Փիրապազարիցն լիրբ մարդիցն ուռուսի շոր հագած, ևս քանի մի ուռուսի մարդ նաւի բանւորիցն իրենց յընկերացնում են, և այսպիսի անպատեհ գործ կգործեն: Գիտեմք, որ սպարապետն ուռուսաց այնպիսի գործոց հաճիլ չի, առանց նրայ գիտութեան այնպիսի բաներ կանեն, այնպիսի գործ հեռու է բարեկամութենէն:

Բարեկամաբար էս գիրն որ ձեզ հասնի, պիտի որ սպարապետի կուշտն գնաք և այս խօսքերն յայտնէք. թէ որ մէջտեղն բարեկամութիւն կայ, այսպիսի գործ չթողուն, և չը թողու զու, որ ժողովրդեանն վնաս հասնի, որ մեր բարեկամութիւն 40ա բան զյառաջինն էլ հաստատ լինի, թող թէ նոքա հուր են, հուրն ամէն տեղ ազնիւ է, նրանց պատիւն հարկաւոր, եթէ նրանց մարդ սարտարիցն անգիտութեան, այսպիսի գործ գործեն, մեք ի՞նչ պիտիմք անել, եթէ մեր դիհիցն մին անպատեհ

գործ երևի, նրանք պետամաղ կլինին և գանգատ կանեն: Վաս-  
տըն այն, այս երկու խօսիւքս յայտ արարաք սարտարն՝ իրան  
մարդն շթողու, որ մարդու վնաս տան, որ էս երկու թագաւո-  
րաց մէջն բարեկամութիւն ծաղկի: Եւս գիտեմք, որ այս խօս-  
քերն յայտնելացու էք սպարապետին և պատասխանն շուտօվ  
մեզ յիմացնէք և ձեր կամքն մեղ յայտնէք, որ մեք տեղն կա-  
տարեմք:

Վերջն ձեր բարի:

Կնիքն վերո կնիքի պէս:

153. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՄԱՅԻԼ ԲԵԿԻՆ (1724 իունվարի 13)

42ա || № 2. Իսմայել բէկիտ ողջոյն

1724 յունվար 13. Ռաշտ:

Քո հրամանուց երկու գիրն մեզ հասաւ մինն Ամիրզունա  
բէկի ձեռօվն, մինն քո մարդօվն: Քո խօսքերն ծանուցի սար-  
տարին և սարտարն ասաց մեզ թէ՛ Ինձնից ողջոյն մատոյ իս-  
մայիլ բէկին, ասացէք թէ խաթրջամ լինի, որ ես էտ բանն կո-  
րոնեմ, օվ որ էտպէս գործ է գործել, թէ հայ լինի, թէ թուրք,  
լաւ թամպէ՛հ կանեմ: Եւս շատ ղատաղան արի իմ մարդուն,  
որ ոչում վնաս չը հասուցանեն ոչ թէ միայն Ռաշտու, այլ և  
ամենայն Կիլանու չերկիրն խաթրջամ լինի, մեք քեզ կասեմք  
թէ շատ լաւ գլնի, որ քեզ կանգատ անողն ղրկէ՛ցիր տեղս և  
մեք կողարկեմք, որ գնա Փիրապաղար և այն մարդիքն նշանց  
տար էլ լաւ գլնի, մի վախէք, ղրկեցէք մեր կուշտն, խաթրջամ  
է, նրան շն բռնել: Տեղս խապար բերին թէ լահիջանցին ձեզ  
վրա թօփ է բերում, վասն այն գնացին սֆիտ ոուք էկին վրա  
մին տուն գտան երեք թօփ, քաշեցին, բերին և այս թղթաբեր  
Ամիրզունա բէկն շուտօվ ղրկեցէք սարտարի կուշտն:

Այս գիրն գրեցի իւր համար 2 և 3 գրի պատասխանն և  
տվի Ամիրզունա բէկին, որ տանի Կասկար տայ վերոյ Իսմա-  
յիլ բէկին: Ամսուս 14 կնքեցի, գնաց 15-ումն:

154. ՊԱՊՈՒՆԱ ԲԵԿԻ<sup>57</sup> ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ, ՍՈՒՄԱՍԱՐԱ  
ԳՅՈՒՂԻՑ (1724 հունվարի 18)

№ 1. Յունվարի 18 մին գիր էկաւ Սումասարա գեղիցն մեր  
խնամտար Պապուն բէկիցն խնամտար Զաֆարի ձեռովն, որ թարգ-  
մանի այսպէս.

Հավատարիմ բարեկամ Պապունայիցն ձեր ծառայութիւն փա-  
փաքիցն յետ, որ էս ժուկն իմ ազնիւ Մահմատ Զաֆար բէկն ձեր ծա-  
ռայութիւնն գու դայր, ինձ հարկ չիմացա, որ էս երկու խոսիւրն ինձ  
ձեր միտն ցգեմ: Եւ ես կամք ունէլի որ ձեր ծառայից 3 մեծ ծառա-  
յութիւնն հասնէլի, որովհետեւ իմ ծառան մեռաւ, վասն այն չը կա-  
րացի գալ, մահրում եղա, աստուծով շափաթ օրն ինչ կերպ և իցէ  
ձեր ծառայից ծառայութիւն հասանելոց եմք, յոյս ունիմ որ մինչի  
պարոնաց ծառայութիւն, որ անարժանիս արժան ունիք ուրախաց-  
նելացուք էք, որ աստուծոյ ողորմութեամբն տեղն կատարելոց եմ,  
կենաց և բախտիտ օրերն յաւելի լինի: Աստուծոյ ողորմութեամբն:

Եւ կնիքն է.

Կա իլահա իլլ ալլահ ալ մալաք ալ հախապ մուպին  
Ապտուհու Պապունա

155. ԻՍՄԱՅԵԼ ԲԵԿԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ (1724 հունվ. 29)

№ 5. Յունվարի 29 Կասկարու մին գիր էկաւ վերո Իսմա-  
յիլ բէկիցն պարսեար, որ թարգմանի այսպէս.

Քարձր և մեծ աստիճանաւորք պատուելի, շնորհալի և  
մեծ կարգօք սիրով լի աստիճանօքապէս, հաւանած բարքօք  
պատրիներու յընտրեալք քահանայից մեծ կարգ և պատուելի  
շնորհալի պարոն Յուհաննու Քափուլին և էլիաս Մուշեղիտ սի-  
րով ողջոյն մատուցաք որ առողջ լինելով, բարեկամաց սրտովն  
լինիք:

43բ

Յետ ողջունից մերո չիմացուցաք, որ էստի յառաջ խանն  
էս խապարն լսելուցն համար, որ Միրազիլ սուլթանն բարե-  
կամաբար ձանփա շէր դնալ և փոքր ինչ բան կանէր որ բա-  
րեկամութեան վնաս էր, խանին և ուռուսի սարտարի մէջն և  
երկու մեծ թաղաւորաց մէջն, վասն այնորիկ հանապազորք  
խանին աշաց կերեի, որ հանապազ խնամատար լինի Միրա-  
զիլ սուլթանն, որ այնպէս շէր անել, լուծեց կարգէն և ինձ  
բարեկամս փոխանորդ կարգեց և պատվիրեց սպառնալիօք՝  
որ չը լինի թէ մին բան անեմ, որ բարեկամութիւնն աւիրի:  
էս ժամուս խանն էն կողմի բաներն պրծուց, էս օրերումս գա-  
լոց է Կասկար: Ես գուզեմ, որ ձեր միտն, որք կարօզ լինիք, էս  
կողմն շնորք անէք, գաք իմ ծառայութիւն և բարեկամութիւնն.  
խանին ասէք և հասկացնէք, և վկայէք և չիմաց անէք, հաշ-  
պաթ շնորք անէք անապազ գայք, որ սէրն յաւելցնելու պատ-  
ճառ լինի, որ իմ արած բարեկամութիւնն խանին համար ոչինչ  
չը դառնա, աւել աւել լինիք:

Եւ կնիքն է որպէս վերո:

№ 3. Յունվար 29 Աստառայու մին գիր էկաւ վերո Մուստաֆա խանիցն այս Իսմայիլ բէկի թղթին հետ, որ թարգմանի այսպէս.

Պատուելի բարձր և մեծ աստիճանաւորք, զարմանալի պատրի, ճշմարտութեան և շնորհաց գիտունք պատրիներուն մեծ քահանայից յրնտրած պարոն Յուհաննա Քափուշին և Յեահիյեա Մուշեք ողջ լինելով փորձութիւնից և պատուհասիցրն պահելք մինամինու տեսնելու:

Փափաքն յայնելուցն յետ, զիտութիւն լիցի, որ ձեր գիրն չորեքշափաթ ամսու լուսնի 22-ումն հասաւ, որովհետև ձեր առողջութիւն յայտնեցաւ, ուրախութիւն և խնդումն եղև մեզ, մեք էլ աստուծով մին կերպ այս կողմի բաներուցն պրծել եմ: Եւ Գաղստանու մեծերն, որ Օսմանլուին հետ մեկ էյին, էս ժուկս օսմանցիքն մեզ հետ հաշտեցան և շինեցին որպէս բնականն որ կար: Տաղստանու մեծերն արզաներ գրեցին շահի ծառայութիւնն, իմ կուշտն զրկել էյին նրանց արգէքն, որ գրել էյին թէ՛ Շահին ծառայութիւն անեն, զրկեցի շահի բանակն: Եւ Մուղանու յերկրի բաներն ևս շինեցի, որովհետև

44ա Կասկարու բանն էլ ինձ հետ է էս օրերումս, || հանդարտ եմ և ինչ որ զօրք ունէյի ամէնն բան վրա կարգեցի, ինքս առանցին քանի մի իմ ծառայիցն գլուխ քաշելու համար, և սէյրի, և որսի համար և թագաւորին ապրանացն համար Կասկար գալացուկ եմ: Բարեկամութեան ճանփան այս է, որ յորտ որ կարող էք, մանաւանդ պարոնն գայ՝ մին երկու օր մինամին տեսնելու համար, զաք Կասկար զուլարջանանք, պատճառ լինի հաստատելոյ հիմն բարեկամութեան: Եւ այլ ողջոյն:

Կնիքն է որպէս վերո:

44բ || № 1. Ապտուլ Դաֆար բէկիտ ողջոյն

1724 փետրվարի 5. Ռաշտ:

Անցեալ աւուրն քո հրամանուց պաշտոնեայն էկաւ և քո որպէսութիւնն մեզ պատմեց և մեք մին դեղ հրամայեցինք, որ լաւ էր քեզ համար, այնուհետև էլ քեզանից մին խապար չառինք՝ թէ Օգուտ եղև՝ քեզ այն դեղիցն, թէ ոչ: Շնորք արա քո որպէսութեանն մեզ յիմացուր: Եւս յայտնի լիցի քեզ, որ այսօր 18 օր է, որ մեզ խարճ չեն տվել, Պապունա բէկն իրան մարդն զրկել էր վազիրի մօտն, որ մեզ խարճ բերէր, տեղտ մին միրզաթա կա եղել, նայ գրել է Պապունայ բէկին թէ՛ «Ղօնաղն մին օր, երկու օր գլնի, մեք էլ խարճ չեմք տալ»: Այն գիրն մեզ նշանց տվեց, մեք շաւատացինք: Խնդրեմ որ ինքս բերանօլ վեզիրին հետ խօսէ] և ինչ որ ասէ դուն վկա լինիս՝ թէ տալու, թէ չէ որ վաղվան՝ օրն ուրանա ոչ, շուտօլ մեզ գրես:

Այս գիրն գրել տվի պարսեալար ամսուս հինգումն և տվի խնամատար Զաֆարին, որ տանի Ֆուսին, տայ Շահղուլի Ապտուլ Դաֆար բէկի ձեռն, զնա վեցումն:

\* բնագրում «վաղվան»

1. Փետրվարի 8 Ֆումինու մին գիր էկաւ շահի զու Ապ-  
տուլ Ղաֆար բէկիցն մեր գրի պատասխանն խնամտար Զա-  
ֆարի ձեռովն, որ թարգմանի այսպէս.

Բարձր և մեծ աստիճանաւոր, պատուելի և շնորհալի մեծ  
ճանապարհաւ գովութեան արժանի պարոն բէկ ողջ լինիք:

Յետ այնորիկ ես ողջ եմ օվ ազնուագին, իմ ցաւիցն որ  
հարցել էյիր, միշտ ցաւն էլի կայ և այն դեղն, որ ղրկել էյիր  
օգուտ շարաւ: Եւ այն ծառայութիւն, որ հրամայել էյիր, կա-  
տարեցաք և ձեր ծառայութիւն ղրկեցաք: Եւ այլ ինչ որ բան  
ունենաք, գրէք մեզ բարեկամաց ուղածին պէս, տեղն կկա-  
տարեմք: Իմ ողջոյնն ազնուագին եխպայր Յեահիեա բէկին հա-  
սուր և որ ծառայութիւն լինի, մեզ յիմացնէ:

Կնիքն. Ճա իլահա իլ լահըլ ալմալբու  
ալ հախըլ մուպին Ապտուլ Ղաֆար

№ 5. Միրպա Ալի Նաղի Մունշի մօմալէքիս ողջոյն

1724 փետրվարի 8. Ռաշտ:

Գիտութիւն լիցի հրամանուցտ, որ այսօր Բ (2) ամիս մօտ  
է, որ մեր քալամաշին ղրկեցի, մինչի այսօր ոչ գիր, ոչ խա-  
պար տվիք: Ես ձեզ գրեցի թէ՛ Մինչի 50 տեղիցս վեր կկենամք.  
ահայ այսօր մին նաւ գնաց, թէ իմ մարդն եկած լինէր, մեք  
էլ այս նաւովն կգնայինք: Ահա ձեզ յիմաց կանեմք, որ էս  
գրիս գրած օրիցն մինչի 30 օր վատա կայ, որ միտս նաւն  
գնայ, հալպաթ, շուտօվ մեր մարդիքն ողարկեցէք, որ գնամք:

Այսօր 25 օր է, որ մեզ խարճ չեն տվել, և մին շափառ ձի  
մեզ պետք էկաւ, բռնեցինք, ձեր մարդիքն զնացին ուռուս  
սարտարին մեր ձեռիցն գանկատ արին թէ՛ մեք նրանց էլ ո՛չ  
ձի կուտանք, ո՛չ խարճ. քանզի ձի են բռնում, տեղիս բաներն  
աստ և անդ են գրում: Սարտարիցն մարդ եկաւ մեր կուշտն,  
պատասխան տվի թէ՛ Եթէ էս յերկիրն շահին է, պիտի որ շա-  
հի հրամանն անց կենա, ինչ որ մեզ պետք է՝ տան, թէ՛ ձերն  
է, մեզ ասեցէք, որ մեք մեր խարճն ձեզանից ուզեմք: Պա-  
տասխան տվել էյ թէ՛ Որօվհետե դաստուր է, ես բան չունեմ,  
ձեր մարդն մեզ թամամ ջաշմուտի տեղ յիմացուցին ուռուս-  
ներու կշտին, նրանց անունն յետո գրելոց եմ:

46ա

|| Առաջմէ մեզմից կասկած ունէյին: էս բանին վրա աւելա-  
ցաւ բանն: Յետո մեր մին համշարի ֆոանկ էկաւ և մեզ ասաց  
թէ՛ Շահիցն գիր ունի՞ք ուռուս թագաւորին վրայ, որ ձեզ ճան-  
փա տա: Ասինք թէ՛ Չունիմք: Ասաց, Առանց գիր ձեր բանն  
շատ դժուար գլնի: Վասն այսորիկ ձեզ արզ արի՞ թագաւորին  
հասկացնէք, որ մին գիր գրէ ուռուս թագաւորին վրայ թէ՛ Իմ  
հօրն ժամանակին այս երեք թագաւորացն նամայ էր եկել,  
մեք նրա պատասխանն գրեցինք և իրանց մարդուն տվինք, որ  
տանին, ճանփա տաս, որ գնան, զերա մեք էլ տեղս սարտա-  
րին այս կերպիւս եմք ասել թէ՛ Մեք զնալացու էյին [ք] մեր

յերկիրն: Թագաւորն այս պատասխանի թղթերն մեզ տվեց թէ՛  
Տարէք, քանզի մեր ասել հմբ թէ մեր էլչի չեմք: Թէ որ գուղէք,  
որ բան տեսնումք, ինչ որ ձեզ գրում հմբ, արէք, թէ չէք յուզել,  
մեզ արձակեցէք և յիմացուցէք, հալպաթ: Յառաջ գրերու բանն  
և այս գրիս բանն շուտ պատասխան տվէք:

Այս գիրն գրել տվի պարսեար, կնքեցինք ամսուս 10 և  
տվինք մեր փայեկ Ավաքին, որ տանի շահի բանակն տալ,  
Մունշի մօմալիք Միրզա Ալի Նազուն: Գնաց 11-ումն:

160. ՄԻՐՁԱ ԱԼԻ ՆԱՂՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ  
(1724 փետ. 18)

47 ր || № 3. Փետրվարի 18 մին գիր էկաւ միրզա Ալի Նազի Մունշի  
մօմալէքիցն վերո Արուսիքի ձեռօվն, որ թարգմանի այսպէս.

Յրնկերացտ յընտրեալքտ պարոն Յուհաննա քափուչին և  
էլիաս Մուշիս: Շատ կարօտ հմբ, գրերտ էս ժամուս որ էհ-  
տիմա Գօվլին և ինձ վրա որ գրել էյիք, այնպիսի կնքօք շահի  
կուշտն ղրկեցաք, Յետո շահն էհտիմալ Գօվլին էր ղրկել: Յեա  
կարգալուց՝ մին այնպէս պէտքական բան չը կար, որ շափառ  
ղրկելներտ հարկ լինէր: Առաջ որ քու\* փողիտ համար գրել  
էյիք, որ ընտուր փոխարէն ռաշտու տան, դուք կամիք գիտուն  
լինիլ, էս ի՞նչ տեղաց օրէնք է, որ չը բուսած փողն ումեք փո-  
խարէնն տան, որ մին օր բուսնիլ պիտի: Ձեր ինչ բան կայ  
միրզա Յուսուֆի բանին համար կամ այլոց. թագաւորն ձեզ  
մին ծառայութիւն է հրամայել, որ գնաք, գրերն տեղն հասու-  
ցանէք և պատասխանն առնուք, գաք: Էսքան ժամանակ էր  
դուք գնացել էք տեղն նստել, ամէն օր երբեմն խարճ գուզէք,  
մին մեծութե [ա]ն էք տիրացել, մին մարդ աշխատանք չը քա-  
շած բան ուզել չի կարել, որպէս թագաւորի հրամանան շուտ  
գնաք, ծառայութիւն տեղն կատարէք, աստուծօվ այնուհետև  
ձեր ծառայութեան փոխանակն շնորք լինելոց է:

Ուռուսի ազգիցն մարդ և թարգման ղրկելտ շատ վատ էր,  
մին բան չկար մէջտեղն, թող թէ ղրկէք, նայ էլ ուռուս լինի:  
Հալպաթ ըստուց յետև էլ այսպիսի ոչինչ բաներու համար  
մարդ միք ողարկել: Շուտ գնացէք, ձեզ յանձնած ծառայութիւն  
տեղն կատարեցէք, ընտուց որ ծառայութիւն տեղն հասուցիք,  
աստուծօվ երկու դիաց ձեզ պէտքական հարկ հասանելոց է:  
Վերջն էս է, որ պիտի շուտ տեղն գնաս, էլ մին փուշ բանի  
համար մարդ մի ղրկել: Եթէ մէջտեղն մին հարկաւոր բան լի-  
նի, սարտարն տեղտ է, բան ունենաք, նրան յիմացուցէք...

\* «քոր» փ ո խ.՝ քու

161. ԱԲԴՈՒԼ ՂԱՖԱՐ ԲԵԿԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻԱՅԻՆ  
(1724 փետ. 24)

48ա || № 2. Փետրվարի 24 Կասակարու մին զիր էկաւ վերո Ապտուլ  
Ղաֆար բէկիցն իւր պաշտոնէյի ձեռովն, որ թարգմանի այս-  
պէս.

Առաւտու սուրբ յոյս յելանելն ի յերեսացտ քոց ուրախ  
դիմացտ արժանի ձոխութեան զիր դրկեցի, հանապազ բարե-  
կամութիւն ի միշի մերում հաստատեալ կայ և վարդազվարճ  
գոնսգոնտ հեռու յէ և անուշ հասկացողութիւնտ. դարձեալ  
ի միմիեանց վերա բացուած և ծաղր: Յետ յայտնելոյն սիրոյտ  
կամքն մեր յայտել ի քում ծառայութեանտ, զիտութիւն լիցի,  
որ յետ հասանելոյն գրոյս իմո ի քո ծառայութիւնտ, հասանիս  
գրոյս որպիսութիւնն, որ սպիտակ և մաքուր, պատուական  
թագաւորի ձեռանիցն մեզ հրաման հասաւ սպառնալիօք մեզ  
յերկիրն Կասկար, և մեր հրամանաւ թագաւորին և ինդրողաց  
ապրանացն համար, որ կատարեալ և կատար բանիւ պիտի բու-  
սուցանել Սօսկուլանու ջրի եզրիցն մինչի սահմանն, հրամա-  
նեցի բռնել և արգելել բանտ, և սոցա մեծամեծքն կախեն,  
ծեծեն և շարշարեն, և անում եմք, որ սոցա միշիցն 3 մարդի  
ձեռանէ տանջանացն այնպէս յրնկան, որ ոչ կարծեմ թէ կեն-  
դանի մնան: Այսբան նեղութիւն տալուցն յետ, ոչինչ խոս-  
տացան, և ոչինչ չի լինիլ: Մեր ևս բանից ոչ թուլանամք շար-  
շարել զսոսա: Եւ այս եզեր եղեալ ծովու ժողովրդեան խօսքն  
այս է թէ՛ Հայ վաճառականք, որ այս նաւիս մէջն էր, եզր ծօ-  
վուն եկեալ և ասացեալ են թէ՛ Մուղանու կշտին կոտորվել է,  
որովհետեւ նան կոտորվել է, ապրանքն ածել են ծովն՝ թէ թեթև  
հասնին տեղս, որովհետեւ մրրիկն շատ յուժ է արել, ածել են  
ծովն, մնացեալն փոքր ինչ բերել են տեղս, նայ էլ գրել են  
փոքր նաւակի մէջն և բերել են Փիրապազար: Եւ դուք կանչե-  
ցէք այս նաւի ապրանաց տեար վաճառականքն և յերես առ  
յերես ասեցէք այս խոսքերն, եթէ հաճին ոչ, վկա կացուցա-  
նեն, մեր առնումք և տամք, այսպիսի կերպիս քոսանց վկա-

յի, երկու թագաւորաց համար անէցք չը լինի: Այս բանիս մէջն  
կարծեմ թէ երկու երեք մարդ այս բանիս համար առանց վնա-  
սու մեռանելոց եմք: Մեր կամքն այս է, որ առանց վնասու  
մարդ չը մեռնի, ևս որ դոցա խաթրն մեր մէջն պատուելի է,  
չի լինի թէ այս երկու մեծ թագաւորաց մէջն, որ բարեկամու-  
թիւն փոխանակ օրհնութեան, անէծք գոյանա: Այս ինքմինս  
յայնտեցէք սարտարին և ինչ որ կասէ, մեք նրա համար ա-  
նեմք: Եւս այնպիսի բան չը լինի, որ թագաւորաց անէծք լինի,  
եթէ հնար է, առաքեցէք այս ապրան[ա]ց տէր վաճառական-  
քըն տեղս, որ մեր նրանց հետ բան շինեմք:

162. ԵՂԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՖԱՐ ԲԵԿԻՆՆԻ ԿԱՍԿԱՐ  
(1724 փետ. 28)

№ 2. Պատուելի Ապտուլ Ղաֆար բէկիտ ողջոյն

1724 փետրուարի 28. Ռաշտ:

Գիտութիւն լիցի հրամանոցս, որ քո զիրն մեզ հասաւ, ինչ որ գրեցիր, գնացինք սարտարին ասինք: Պատասխան տվեց թէ՛ ինչ որ նաւիցն ապրանք յելել է, ես այն ապրանքն գուզեմ, յաւելի ինքն մին չեմ յուղել, ես չեմ ասել թէ՛ մարդ սպանէ: Եւ ասինք թէ՛ Մին գիր գրէ: Ասաց թէ՛ նայ պիտի որ ինձ գրէ ամէն բանն, և ես նրա կողարկեմ գիր: Հիմի էխտիար ունիս, գուզես սարտարին վրա գիր գրէ, գուզես մին զիւլիուր մարդտ զրկե գայ տե [ղ] ս խօսի, շունքի մեք հետ երեք շորս աւուր գնում եմք:

Մէր խելքն այսպես կտրում է, որ թէ այս բանս շինես, շահի համար լաւ է, հիմի դուն էխտիար ունիս, որպէս քո խելքտ կու կրտորի, այնպես արայ:

Մնաս բարօլ և մեզ աղոթից չը մոռանաս, որ բարօլ մին էլ մինս մին տեսնումք:

Այս գիրս գրել տվի պարսեար Ռաշտ, զի Մահմատ Լաթիֆին և տվի իւր պաշտոնեա թղթաբեր Սէֆուն, որ տանի Կասկար, տայ Շահզուլի Ապտուլ Ղաֆար բէկին: Կնքեցաք, ամսուս 28 ումն գնաց:

(p. 48 p)

163. ԵՂԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՓԱՐՍԱԴԱՆ ԲԵԿԻՆՆԻ (1724, մայիսի 27)

Իմ հայր պատուելի Փարսատան բէկիտ ողջոյն

1724 մայիս 27. Հաշթարխան:

Յետ մատուցանելոյ ողջունիս իմոյ յայտ լիցի հրամանոցս, որ աստուծոյ տվլութեամբն և քոյին սուրբ ազօթին, մարտի 29 ողջ և առողջ մտանք Հաշթարխան: Մինչի գրոյս գրեալ թուամ տեղս եմք, պատճառն Իսմայիլ բէկ էլին. տեղիս մեծամեծացն ասաց թէ՛ էս մարդիքն մի թողուք որ գնան, զերա իմ շինած բանն կաւիրեն: Եւ ինքն այս կերպիւս արգա գրեց և զրկեց թագաւորին: Եւ մեկ էլ տեղիտ մարդոց արածն չեմ գրել, քանզի քո հրամանքտ տեղեակ եղար, յորժամ որ դեռ ես Ռաշտ էաք: Եւս այն միտան, որ շահին ծառայութիւն է անում, խուպ աստուած ողորմած է, ինչպէս որ կարծեցին, գիտեմ, այնպէս չի լինիլ, ամմայ վերջն տեսնուլ պիտի: Մեք մինչի այսօր տեղս չէաք մնալ, թէ որ առաջմէ լսեցինք, ամա յուշ իմացանք և գրեցինք Մօսքօֆ մեր թագաւորին էլլուն: Աստուծով, եկող շափթուն տեղիցս վեր կու կենամք: Արթին Փետրօվիչն գեռ չէ էկել Հաշթարխան, խաթրջամ լինիք որ աստուծով չեմ ամաշել և թշնամիս քո ոտի տակն կու ցգէմ աստուծով: Ամմա մինչև իմ գալն քո հրամանքտ իմ տեղս վրեժխնդիր լինիս թշնամեացս վրա և այլ ողջ լեր ի տէր: Ողջոյն մատուցանեմ իմ եխպայր Ռաֆայելին բեկի [ն] և Թաղի բեկին և այլ մեզ հարցանողաց: Ողջոյն տուր իւրաքանջիւր անուանէ: Եւս ողջոյն կոտա ձեզ պատրին. խնդրեմ որ ոչ մոռանաս և մի մոռանան նոքա, ևս ձեզ երբէք ոչ մոռանայ հրամանոցս ծառա էլիաս Մուշեխ:

Եթէ էս թղթաբերին մին բան պատահի, օգնութիւն անես:

Այս գիրն գրել տուի վրացեար խատօյի որդի պարոն Դանիելին թիֆլիզեցոյ մայիսի 29 և տվի ախլցիսեցի Սիմաւոնին, որ տանի Կիլան տայ թիֆլիսեցի Ղուլայինց Փարսատան բէկին 31-ումն:

(p. 48p)

Յամի տեառն 1723 ղեկտեմբերի 13, գաւառն Գիւան, քաղաքն Ռաշտ: Ես՝ պալիօզի փոխանորդ էլիասս, այս կտակ արի և տվի ախլցիսեցի Զօրայի որդի Արուսիին, որ գնա Քարվէլ իմ պարտապանացն պարտերն հաւաքէ ներքև գրեալ խրատին իմոյ: Տէր աստուած՝ օգնական լինի նմայ և կամակից, ամէն:

1. Գիտութիւն լիցի քեզ Արուսիին, որ քեզ տվի 31 թերթ սանատի սաւատ և հինգ դիր, որ է մինն Միրզա Շեֆու երկու թումանի պարաթն, երկու՝ մուսիու Պուլղարի վեքիլամի սաւատն, երրորդ՝ Գիւան բեկու հուբի սաւատն՝ բաղնեցն համար, չորրորդ՝ էհտիմա Գովի հուբի սաւատն՝ բաղնեցն համար, հինգերորդ գիրն որ, գրել էլիք բաղնեցն համար: Որպէս որ միուս գրին գրել եմք, այնպէս անևս և 31 թերթ սանատի փողն ջամն է ԳձԿԶ (366) թուման ԲՈՂՃԾ (2650) դին, միուս՝ առանց սանատով փողի ջամն է ժԼ (18) թուման էՌԵՃԾ (7550) դին, որ ամենու ջամն է ԳՁԶԵ (385) թուման ԲՃ (200) դին:

2. Երկրորդումն, երբ որ գնաս օրտուն, իմ գիրն տաս Միրզա Ալի նազի Մունշի մօմալիքին և կասես՝ ձեր հրամանքն գրել էլիք թէ՛ «Ձեր փողն բուսուցանում ենք, վասն այն ինձ ղրկեց, որ փողն տանեմ շուտով», տես ի՞նչ ջուղապ կու տան: Յետոյ ասա. «Թէ որ ուզում էք իմ աղին լաւութիւն անէք, ահայ ամէն սանատի սաւատն բերի հասալ արէք, թէ որչանք փող է, անոր գորա թանխա գրեցէք Ռաշտ վէղիրին վրա, որ նայ առնու, քանզի վտաղ է գնալ, յետոյ դուք էս փողերն շահօւն բուսուցէք և տվէք թագաւորի խաղանա: Աշխատէ որ այսպէս շինես, թէ որ միքին չը լինի, ասա. «Լաւ է, բայց մին մարդ թային արէք, որ մինչի մին ամիս այս փողն բուսուցանէ և ինձ տայ, զերա մին ամիսէն յէւել չեմ կարել մնալ, դուք գիտէք:

3. Իմ բարովագիրն տուր Սէթ աղա Սահաթսաղին և նորա կուշտն մին նոր հուբմ կայ բաղնեցն համար, յուզէ, ինք առ, երբ որ դու գաս Քարվէլ, նրան սաւատն և նմրա 34 և 35 գրերուն հետ տուր այն մարդուն, որ բաղնիքն կու տաս իրան:

4. Ուռուսին բաներուն դիմաց ինչ որ քեզ հարցնեն, ասա. «Ես մին սովտաքար մարդ եմ, էտ բանէն ես չեմ գիտել, և ինձ լայեղ չէ, որ ես այսպէս բանն հարցնեմ և քննեմ և յիմանամ, ամէն մարդ պիտի իրան բանին մուղիաթ լինի, այդ իմ բանն չէ: Մին էլ՝ ուռուսի թագաւորի բանն իրան օմարիքն ևս չեն գիտել»:

5. Յերբ որ օրդուէն յետ դու գաս, խնդրէ Միրզիցն, որ էհտիմալ Գովիցն քեզ համար մի թալիղա առնու, որ խարճ և ռախտար չը տաս, ասա. «Չուն իմ աղէն պազի ապրանք է յուղել, պիտի ղըրկեմ»:

6. Երբ որ փողերն կբուսուցունես, իլթիմասի ականճ մի զնել, մին փող մի պակասացնել, ինչ որ կառնուս, ղապղ տուր մինչև ամեն փողն թամամ լինի, յետո ղապղտ յետ առ և սանատի յետնէն ղապղ արա, ասա. «Էս թագաւորի փողն է, մին փողն չպիտ կորչի, և հանապաղ փողերուն շահն ուզէ սովտաքարի հեսապով, թէ որ ասէն՝ ֆլան մարդն փախել է, տեղս չէ, կամ թէ մեռել է, ասա. «Իրան ազգականից առէք»:

7. Երբ որ Քարվէլ կու գաս, հաճի Ջապարի քարվանսարան նստի, դռանն դիմացի մեծ օթաղն, ինչ որ փող ձեռդ դու գայ, ճօթէն խրիտ արա՝ ապրեշում և սև թիմաճ և այլ [ն], յորն որ քո խելքն կտրէ, թէ որ ձեռդ չը հասնի՝ Մօվսէան քեզ օգնութիւն գու գայ:

8. Ամէն մարդու վաքիլամա նշանց մի՛ տալ, երբ որ յուղեն, ասա. «Ես իմ վաքիլաման էհտիմալ Գովին նշանց տվի, և նոքա ինձ հրաման տվին, որ այս փողերն ինձ հասնի, թէ որ ես վաքիլ չը լինէլի, էհտիմալ Գովին այս հուբմն չէր տալ, թէ շաք ունէք, գնացէք էհտիմալ Գովիցն թախիղ արէք, իմ աղէն ձեր կուշտն չի ղրկել, ինձ թագաւորի կուշտն է ղրկել, հարկիդ մարդու նշանց մի տալ, զատոյ օրդուն: Թէ որ խիստ նաչար մնաս, նշանց տուր, ամա հարկիդ բաղնեց ջահաթիցն մի նշանց տալ վաքիլամէն:

9. Երբ որ հասնին օրտուն, արդ անես Մունշի Մօմալիքին կամ էհտիմալ Գովին, որ հուբմումն գրեն, որ մեր փողերիցն դուուղ և դահիլեկ շուղեն, թէ որ անհնար լինի, տամք դահիլեկ: Երբ որ դահիլեկ տալու լինիս, ղապղ առ, թէ որ չը տան, ասա թէ՛ «Ղապղ չէք տալ, ես աղիս ի՞նչ ասեմ, կարծէ թէ՛ ես եմ գողացել»:

10. Իմ եխպայր Մօվսէսին էս փողերիցն մի տալ, որ ես դապուլ չեմ, թէ որ յուզէ, շուտով տեղս գայ:

11. Թէ որ էհտիմալ Գովան ասէ թէ՛ «Դու ամէն սանատներուն յետնէն ղապղ արա, մեք գրեմք վազիրին, ասա. «Առաջ պարաթն ինձ տվէք, ես գրեմ»:

71բ || Երբ Սպահանու եկի թարվէզ, տեսի որ ամէն ապրանքն, որ  
դրելի պահեստի, գողացել էր, և որչանք որ փող գողէջի մեր  
պարտապանացն, չէլին տար: Շատ աշխատեցա՝ գանգատ և  
դատաստան գնալով, ոչ կարացի առնուլ, քանզի դատաւորքն  
յերեսպաշտութիւն կանէլին, և առնէլի [ն] կաշառս և իմ բանս  
անտես առին՝ ո՛չ թագաւոր, ո՛չ մէծ և ո՛չ փոքր: Մնացի ան-  
ճար, և առանց տեղի և առանց փողի, քանզի Սպահանու մերկ  
յելի վասն աճիցն ազուանից: Եւ եկի նախ յիջևանեցա ի վանս  
Քափուլինաց, որ մեծաւորի անունն է պարոն Բեռնարտոս և  
միւսին [ն]՝ պարոն Յօհաննէս Մկրտիչ: Եւ սիրով ընդունեց  
զիս մեծաւոր պատրին և ընկալաւ, քանզի որքան որ Սպահան  
էլինք, այս պատրին խոստացաւ թէ՛ «Որժամ գաս թարվէզ,  
եկ իմ տունն», քանզի յերկրաշարժն բլուցել էր քաղաքն, ոչ  
գոյր տեղ բաւական:

Յետ երկու երեք ատուր, ասացի պարոն մեծաւորին թէ՛  
«Ինձ ի՞նչ խրատ կու տաս. տեղս նստեմ, թէ՛ գնամ պանդո-  
կրն»: Ասաց. «Ձէ՛, մի՛ գնալ, տեղս կաց, քանզի թշնամի շատ  
ունիս, մի՛նակ նստելն լաւ չէ, քան [ի] որ կամիս մնալ տեղս,  
71 ա մնա՛, || ինձ հաճոյ է»: Քանի մի ամիս որ մնաց [ի], սիրով  
մնաց հետ մեզ, յետոյ օր ըստ ատուր դառնացուց յերեսն, և  
կապեաց նախանձ և թշնամութիւն: Թողումք շատ բանն և  
գրեսցուք սակաւն:

Հարկ եղև մեզ մի փայէկ զրկել Կոստանդինուպօլիս և  
Հալապ թագաւորական բանին համար, որովհետև Օսմանցու  
յերկիրն փոքր ինչ յերկիւզ կայր փայէկաց, և ինկլիսների պա-  
լիօզներն մին գիր էլին հանել և տվել փայէկաց, որ ոչ որ բան  
չունենա: Վասն այն յայն դիրն իմ կուշան էր, ես կամեցայ  
տալ իմ զրկած փայէկներուն, որ աներկիւզ գնան: Եւ այն գրի  
բերօղն էր բնական փայէկ ինկլիւզաց, և բերած բարօլագրերն  
էլ ևս ինձ էր տվել, անունն էր Ֆրանսիզ թավրիզեցի: Եւ կա-

մեցայ այն Ֆրանսիզն այլոց հետ ողարկել Այս պատրին  
խրատեաց և շթողեց գնալ ոչ նրան և ոչ ուրիշի: Յետո սկսաւ  
այլքն ողարկել և այն անձնարական գիրն տալ նոցա: Լսեց և  
խրատեց Ֆրանսիզին թէ՛ «Գնա գրերտ յետ առ»: Նա էկաւ և  
դիմադարձ խօսուք գրերն խնդրեց: Ես յամեցա տալ: Ինքն  
70բ պատրին էկաւ, և սպանալեօք, սաստելով, || այպանելեօք  
խնդրեց և ոչ թոյլ ետ զրկել, յետ առաւ ինձանից և ինքն պա-  
հեց: Յետո ես առաքեցի իմ փայէկքն առանց անձնարարական  
գրք՝ յուսալով առ աստուած:

Եւս Սահակն, որ աղատեցի գերութենէ, թագուն խրատում  
էր թէ՛ «Գորա հետ մի՛ գնալ, քէ կտանի կծախի, թէ հիւանդա-  
նա, չի պահել»: Եւ կամեցա Սահակն թակել, լսեց և ասէ թէ՛  
«Տունս բաստ է, մարդ չեն թակել, թէ թակէ՛՝ իւրեան դուրս  
կհանեմ իմ տնէն»:

Իմ կորած թուֆանկն, որ կորել էր, չը կամեցաւ առնուլ:  
Իրան երկաթէ գործին քաշեց, առաւ մին հային ձեռանէն թէ՛  
«Իմ է»՝ որ երկրաշարժին թողել գնացել էր, և այն հայն փո-  
ղով էր գնել:

Եւ այլ շատ ներհակութիւն արաւ և հակառակ իմ բանին, և  
չարացաւ ի վերա իմ, և բանպատէր հանապազ, և կոտրէր ա-  
նունս իմ և ծածուկ գործն իմ յայտնէր: Եւ ատուր միտմ կամե-  
ցաւ իմ ինքմինս տնիցն դուրս քցել: Եւ ես վասն երկիւղի գայ-  
թակողութեան համբերեցի աստուծով միինչի վերջն: Եւ այլ շատ  
բանք՝ որ բաւ է տեղս գրել:

Այս ամենայն հակառակութեան պատճառն էր իւր յընկեր  
պարոն Յօհաննէսն, քանզի միատեղ հանապազ կուր կանէլին,  
70ա յետ կովիցն պարոն Յօհաննէսն գայր իմ կուշան, || առանձին  
գանգատ կանէր ամէն անձանքին վրա: Եւ սոցա կովի բաներն  
և պատճառն մեզ ոչ է փոյթ գրել: Երբ որ գու գայր իմ կուշան  
գանգատէր, մեծն կարծէր թէ՛ ես խրատ կու տայի թէ՛ «Կուր  
արա»: Բայց ես խրատէլի թէ՛ «Համբերէ»: Եւ մին պատճառն  
այն էր թէ՛ իմ թագուն գործն է, նրա չէլի յայտնել, եթէ յայտ-  
նէլի, ինքն կասէր այլոց, վասն այն ոչ յայտնեցի, քանզի թա-  
գավորական բան էր: Յերբ որ կարծեց և խոհեցաւ, սկսաւ  
յայտնել ամենեցուն թէ՛ ինձ վնաս հասնի, սուտ մարկարէյու-  
թիւն կատարի, քանզի յորժամ կարծեօք չիմացաւ, սկսաւ ա-  
սել թէ՛ «Այսինչ կամ այնինչ պատուհասի գու գաս»: Վերջա-  
պէս քանի անգամ Յօհաննէս կամեցաւ յելանել և գնալ, ես չը  
թողի, ասելով թէ՛ «Մի՛ այնպէս յեղնել, դիմանան և մեծ գայ-

69բ թակղութիւն գինի, քանզի պարոն Հեայցենթոսն այսպէս կրո-  
վօլ յեւաւ և դուն այսպէս յեւնէս, լաւ շի լինիլ, համբերէ,  
մինչի իմ բանն կատարի միատեղ գնամբ, որ համ պատվօլ  
լինիս, համ գայթաղակութիւնն խափանի»:

Եւ իմ բանն այս էր, որ շատ աշխատեցաւ, իմ փողն և իմ  
ապրանքն չը կարացի բուսուցանել: Սկսեցաւ հնարել՝ թէ պար-  
սից թագաւորիցն մին գիր հանեմ ի վերա մեր թագաւորին  
վրա վասն բաղում պատճառաց և շահաւետութեան թագաւո-  
րացն մերոց և պարսից և վասն հաւատոյ քրիստոնէից: Եւ  
գրիսկն գրելն ոչ է պիտո:

Որժամ կատարեցաւ բանն և կամեցաւ նամակն գրել իմ  
անունօվն, ես մտածեցի թէ՛ որօվհետև պարոն Յօհաննէսն  
գալու է, այս գործո մէջն խառնեմ, որ ոչ որ չզգայթակղի և  
պատուօլ գնամբ: Եւ հնարեցի, որ պատրին ևս աշխատակից  
լինի և եղև: Եւ հասաւ կատար բաղում աշխատանօք: Երբ որ  
թամամ եղև և տեսաւ վերո պատրին, խոցեցաւ սիրտն լի նա-  
խանձիրութեամբ և երկուզալի խոսքեր ասէր թէ՛ ձեզ այսպէս կամ  
այնպէս շար է գալոց այդ բանին համար, պէս պէս երկուզա-  
լի խոսքեր, որ գրել շի լինիլ, յետո ջոկ ջոկ մեզ վախեցնէր և  
69ա առանձին պարոն Յօհաննէսին վախեցնէր թէ՛ «Ելիսան քեզ ը  
մին տեղ կցգէ և քեզ կթողու և քեզ վնաս կու տայ» և այլ շատ  
այսպիսի խոսքեր՝ ցանկանալօվ թէ մեր մէջն խօսվութիւն ձգէ  
և մեր բանն ոչնչացնէ: Եւ ինձ համար այլոց բանպասէր և  
ասէր թէ՛ «Հիմ յընկեր պատրին հանում է վանքէն և իմ տունն  
քանտում է»:

Այնքան արաւ, որ պարոն Յօհաննէսի սիրու սիրտն դառ-  
նացուց և վախեցուց ինձանից: Եղև, որ յեւի տնէն, գնացի յայլ  
տուն՝ առ ի տեսանել զբանս իմ: Որժամ սկսեցի ստանալ  
զպաշտոնեայս պիտոյից, գայր պարոն Յօհաննէսն և ասէր՝  
«Դու այդ տղերքն, որ քո անուօլ բռնում ես, ապա ինձ ո՞վ  
ծառայի, մի՞թէ դուն մեծ ես, կամ ես»: Խրատեալ մեծէն,  
գայր կռիւ անէր և վշտացուցանէր:

Թողումք այս պատրու բանն և խոսեմք մեծէն: Կայր  
թարվէլ մին բաղնիք ջուղայեցի՝ Շիրիմանցոց: Եղև՝ զի  
մին հայէ դառցած ջուղայեցի՝ Կոստանի որդի Մէհրալի  
անուամբ, խլեց այս բաղնիքն թէ՛ ինքն աղգակից էր այն բաղ-  
նեց տիրոջն: Քանզի այսպէս սահման կայ ի մէջ պարսից մի-  
ջումն՝ օվ որ քրիստոնա տաճկանա, ամէն հայ աղգականի  
ապրանքն ընտուր կհասնի: Վասն այն ամէն մեծամեծ թագա-

68բ տրին կնքեցին ը մինչի 150 մարդ և զլիաւոր դատաւորաց,  
սարտարն, որ է փեսա շահ Քահամազին, հրամայեց լինել բաղ-  
նիքն Մէհրալուն: Յետո ժողովեցան միատեղ ջուղայեցի Սա-  
հակի որդի Սէթն, և ջուղայեցի Թորոսի որդի Արութիւնն, հա-  
մատանցի Ազիզն և վանեցի Աղախանն, հնարեցին գրել մին  
ձեռագիր, թէ ջուղայեցի Անգրիասն, որ վէթիլ էր համամին Ծ  
(100) թուման պարտ արաւ պարոն Պիղատոսէն և պարոն Օվա-  
նէսէն և այս բաղնիքն գրաւ գրեց պատրուց կուշտոն: Այսպէս  
սուտ ձեռնագիր գրեցին այս վերո այլքն, կնքեցին թէ՛ իրաւ  
էր, այսու հնարիք կարօղ լինեն բաղնիքն ազատել: Եւ հաւա-  
նեցաւ պատրին: Յետո բաղնեցպանն թավրիղեցի ուստա Հա-  
տին եկաւ իմ կուշտն և աղաչեց թէ՛ «Որօվհետև պատրին ըն-  
դունեց և հանձն առաւ այս բանն, նոքա որ չեն գիտել խոսել  
և դուն խոսէ, քեզ տանք քսան թուման քո աշխատանանց հա-  
մար»: Ես ոչ կամեցայ: Եւ նմանապէս վերո այլքն կաղաչէին:  
Եւ ես մտածեցի և անձն առաւ երկու պատճառի՝ թէ՛ այս սուտ

68ա բանն պատրին անձն առաւ, թէ՛ չկարենա, ը խայտառակ գինի  
մեր անունն և թէ՛ ինձ վարձ կու տան: Հանձն առաւ և  
հանդերձ պարոն Օվանէսիւն գնացինք բանակն թագաւո-  
րին, քանզի թագաւորն յէլել էր դուրս: Բաղում աշխատա-  
նօք հրամանաւ դարձանք էկիք թարվէլ: Ես անդ աշխատեցաւ  
և ոչ կարացի առնուլ: Կրկին մարդ առաքեցի և ծանուցի շա-  
հին: Կրկին սաստիկ հրաման էկաւ, առինք բաղնիքն: Յետո  
խնդրեցի իմ վարձն, որպէս խոստացան: Պարոն Բեռնարտոսն  
չթողեց: Եւ այն հրաման բերօղ ծառայն ևս խնդրէր տասա-  
նորդն և ոչ որ չէր տալ վերո մարդկանց: Եւ շատ աղաչանօք  
վերո Արութիւնէն առի Ժ (10) թուման և տվի տասանորդ: Եւ  
ասի թէ՛ «Որ բաղնեցպանն իմ և քո փողն տա, բաղնիքն նրան  
տուր, թէ՛ ոչ՝ բաղնեց պղինձն ծախէ, քո տասն թումանն առ,  
իմն մնայ»: Երբ որ կամեցաւ գնալ, բարկացաւ վերո պարոն  
Բեռնարտոսն և ասէ՛ «Հանէ իմ տնէն բաղնեց պղինձն և տար,  
որ ես էտ բանիտ մէջն չեմ խառնել, քանզի էտ պատճառիցն  
իմ տունն պիտ քանտի»: ը Եւ իմ հանեալ պղինձն տվի թիֆլի-  
սեցի Գաֆտիլին և պատվիրեցի թէ՛ Մախէ, Արութիւնի տասը  
թումանը տուր, երբ որ բաղնեցպանն վատ գլինեք, ինձ վատ  
կասեր, երբ լաւ դու գար, ինքն կհրամայէր, որպէս կամէր:  
Թողումք անյիշելիքն:

Վերջապէս եկի մինչի Կիլան: Իմ յետնէն որչափ վատ գիր  
գրեց ի վրա պարոն Օվանէսին և որչափ անունս կտորեց, որ

լսել պիտի լսողաց: Յետո Կիլանու գրեցի բանակն բաղնեց համար և իմ փողին: Կրկին հրաման տվին բաղնեց համար և գրեցին թէ՛ իմ փողն պատրաստ է, որ մարդ զրկեմ՝ առնուն: Ղըրկեցի ախլցխեցի Զօրապի որդի Արութինին և պաշտօնեա Սուլէյմանին: Երբ գնացին բանակն, ընդունեցին և խոստացան տալ իմ փողն կատարեալ: Եւ պարոն Բեռնատոսն գրել էր վերո՝ Սէթին՝ թէ՛ «Հասկացար, որ էլիսան դառցաւ ուռուսաց կողմըն և իր մարդն առաքեց, որ լրտեսի»: Այսպէս Զ (6) օր արգելեցին: Յետ վեց աւուրս արձակեցին, որ փախստեամբ էկին և քիչ մնաց, որ սպաննէին: Այսքան ինձ վնաս հասաւ պատրուցն, այս քանի խոսքս ես չը տեսի, միայն ինձ ասացին իմ զրկած մարդիքն, որ լսեցին յայտնի ականճօք իրեանց: ॥ Եկեսցուք այժմ իմ յընկեր Յօհաննէսի բանն:

Երբ որ տեսի սրա սիրտն դառնացած է կարծիքով և բանակոխ լինէր, աւուր միում ասի. «Պատրի, խորհուրդտ քո ի՞նչ է, էս բանն ես եմ շինել, կամ թող ես կատարեմ, դու բան չունիս, կամ դու շինէ, ես բան չունեմ, քեզ կու տամ»: Ասաց. «Ո՛չ, դուն ես սկսել»: Ասի՝ «Ես աշխարհական եմ, կաշխատեմ վասն շահելու, դուն ի՞նչ կասես»: Ասաց. «Ես կամիմ գնալ միայն հաւատոյ»: Ասի. «Երբ որ ինչ դատում լինի լինի քո՞նն է, թէ իմն է»: Ասաց. «Երեք բաժին քեզ լիցի և մինն՝ ինձ, որովհետև դուն աշխատում ես և ամէն բանն դուն ես տեսնում»: Թողումք այլ և այլ բաներն:

Թարվէզու եկինք Գիլան: Յետ միո աւուր գնացինք տեսութիւն ուռուսի մեծաւորն: Սկսաւ խոսիլ շատ: Եւ սկսեց հարցրեց մեծաւորն թէ՛ «Օ՛վ ես, ո՛ւր ես գնում»: Ասաց. «Գիր եմ տանում շահին մեր թագաւորաց կուշտն»: Ինձ համար հարցրեց թէ՛ «Սա օ՛վ է»: Ասաց որ «Մին մարդ էր, որ ծառայ էր ֆռանսիղաց, անկաւ, այժմ կամի գնալ մեր թագաւորի կուշտըն»: Ուրացաւ թէ յընկերն եմ և փքանալով սկսեց հրամայել ի վերա պաշտօնէից և ամենեցուն, և ես ոչ խոսեցա, համբերեցի: Եղև զի խառնակեցան մեր ամէն պաշտօնեայքն: ॥ Եւ մի յելանէին: Եւս փոխակերպվեցին, քանզի հրամայել էր թէ մի գտակ առնուն: Երբ ինձ հարցին, ես չկամեցա, վասն այն փախաւ: Յետո ասի. «Պատրի, ոչ գիտես՝ փողն ուստի դու գայ, միայն թէ գիտես հրամայել. որպէս գիտես հրամայել, այնպէս և գիտացիր փող ճարելն, քանի ժամանակ է, որ ձեռ եմ քաշել, ահա խանգարեցաւ տունն. կամ արա, կամ թող անեմ, քեզ հաղար անգամ ասացի, եթէ մարդ ես գիտացիր»:

Պատասխանեց. «Դու ես սկսել, ես էլ բան չունիմ: Երբ պատահի նեղութիւն, ինքն յետ քաշի, երբ լաւ լինի, սկսէ հրամայել և ոչ գիտէ:

Յետոյ եղև, զի վասն միոյ վնասու, ծեծեցի պատի Պետրոն: Լսեց ձայնն և թաւ, բարկութեամբ սկսաւ կանչել, վիճել թէ՛ «է՛ր ես թագում, մի՞ թէ միայն քեզ տվին այն երեխան» և այլ շատ բանք, ամօթ արար զիս: Ո՛հ, զի՞նչ արարից, եթէ թողում, մեծ վնաս և ամօթ լինի ինձ և ինքն լինի անպարտ. եթէ չթողում, ամէն օր պիտի որ կոխ անեմ տէր աստուածն ամենաբնի տացցէ համբերութիւնք և շնորհք, որ բարեպէս տանիմ այս մեծամեծ փորձութիւնը ի փառս աստուծոյ մերո, ամէն:

66 ա ॥ Այս պարօն Օվանէսն խրատէր առանձին մեծ Պետրօյին, թէ՛ Ինչ որ խարճես, աւել գրէ, որ աւելցած փողն ինձ համար մին զայլեան առ և թաքուն պահէ, որ էլիսան չիմանա և Ֆռանկիստան ինձ տուր, որ յում ուզեմ՝ պաղշեմ:

Երբ ախլցխեցի Յարութինն էկաւ բանակէն և խապար բերեց թէ՛ պարոնն հիւանդ էր, խոսեցաւ հետ մուսիու Տալանսոնին և ասէ. «Վախեմ պատրու զուլան կտրեցին» և աչքով ասեց թէ՛ «Այս մարդու պատճառիցն»՝ իբր թէ իմ բանին համար: Երբ լաւ լինի, պարծեն թէ՛ իրեանք արին, երբ վատ լինի, վնասն դնեն այլոց վրա:

Մին օր պատիւ ունեցաք և ես յելի դուրս: Այրն, որ փշէր թութաք, եկաւ դուրսն ածեց, և ինձ հետ էկաւ: Տեսաւ պատրուն և ինքն ցանկացաւ առժամայն յելաւ դուրս, թէ իրեն էլ այնպէս կանեն: Ոչ եղև: Դարձաւ ներս և միշոց չուվանօվն սկսաւ յարկանել և ասէ. «Նրա համար յելիր դուրս թութակն ածեցիր, ընդէ՛ր ոչ ինձ համար»: Այրն պատասխանեց թէ՛ «Դուն պատրի ես»: Ասաց թէ՛, «Ինձ պատրու պէս մի՛ք նայիլ, ինձ աղայի պէս մտիկ արէք»:

Եւ աւուր միում խօսէյին նիկոլային հետ: Ասաց. «Մեք չէյինք գալ, շահն մեզ ուժով զրկեց», որ սուտ է: Նաւիցն, որ 65 ք գնում էր քա[փ]իթանի հետ քաղաք ॥ փասափօթն առաւ միակ իրան համար: Քափիթանն շատ ասաց թէ՛ «Ինձ հետ ես, մի՛, պետք չէ»: Ոչ օգտեց: Քանզի մեք յետ մնացինք 9 մարդով առանց [փասափօթի]: Եւ հարբաց, որպէս որ սովոր է և յուժով խմեցնէր այլոց և հարբեցնէր զայլսն: Եւ ինձ ասաց թէ՛. «Ես գնամ առաջ պաշտօնէութիւն անեմ և դուն տեղս կաց,

որ աղայութիւն անես»: Զի ոչ գիտէր, թէ զի՞նչ խոսէր: Ինձ հետ չփնայն շատ պատճառ ունէր:

Ապրիլ 5 ես բարկացա պաշտօնէից թէ՛ ոչ բարեպէս ծառայէի: Ինքն հակառակեցաւ: Եւ ես ասի. «Դուն այս հանապաղ հակառակ լինիս...» Իսկոյն կանչելով ասաց ինձ. «Հարամըդա, դուռումսաղ»: Ասի. «Այդպէ՛ս»: Ասաց. «Այդպէ՛ս»: Վկայ է պարոն Յելիքս քափուշինն Իտալիոյ:

Հաշտարխան համբարձման յետի կիրակին, որ էր մայիսի 28 օրն, իմ օթաղի պատն հերսունով ծակեց իրան նստածէ օթաղիցն:

Հաշտարխանա յելած օրն հարբած ման էր գալիս և նան 65ա կայնած նայում էին մեզ: || Սիդոան գնաց գումենտանտի կուշտն, հարբեցաւ, էկաւ ինձ հետ կուռով խոսիլ: Եւ ես ասի. «Գնա՛ քնէ, հարբած ես»: Շիշն քաշելու պէս արաւ թէ՛ «Քեզ կսպաննեմ»:

Սիմպիրիցքա մտած իրիկունն շատ հարբեց, կռիւ արաւ, դուր տեղն ուշունց տվեց սեռժանին, Ալեքսանին վրան շիշ քաշեց: Սիմպիրիցքայու յելած օրն հարբած կռիւ արաւ սեռժանին հետ դուր տեղն և ապտակով զարկեց: Յետ դադարեցնելուն հացին վրա սկսաւ ուշունց տալ: Ես ասի. «Ամաչիլ չէ՛ս»: Սկսաւ ինձ հետ կուլիլ թէ՛ «Լինէր թէ՛ քեզ չէ՛լի տեսել» և այլն...\*\*:

\* Անվայել խոսքեր, որ բաց ենք թողնում:

\*\* Անվայել մի ղեպքի նկարագրութիւն, որ բաց ենք թողնում:

166. ԿԱՐՆԵՅՈՒ ԴԻՄՈՒՄՆ ԻՇԽԱՆ ԳՈՂՈՎԿԻՆԻՆ<sup>61</sup>  
(1725 մարտի 31)

### Պատուելի Գաբրիէլ Յովանիչ Կալովքինին

1725 մարտի 31. Սուշենբոռ:

Մանուցում լիցի տէրութեան քում, որ փօտեաչի Վասիլ Կուզմիշն և թըլմած Յովան Գլլպաշինն մեզ Մօսքոֆու վեր առեալ բերին Ուկլից վայվօտն մեզ պօսպօրտ շքերեց վասն այն մնացինք անդ արգելեալ 2 ամիս:

Մարտի 4-ումն մին սերժան արեկ հանդերձ 6 սօլտատով, անունն Վասիլ Մաթվեյիչ, իբր թէ առաքեալ է ի տէրութեանէն ձերմէ, և մեզ Ուկլիցու վեր առեալ եբեր Սուշենբոռք, պահում է բերթի մէջն, պատճառն ոչ գիտեմք: Եւ որ մեր ութն մարդ եմք և խարճի շունիմք, սերժանի տվածն մեզ չէ բաւական, վասն այն հարկ եղև մեզ ծանուցանել տէրութեան քում, խնդրելով, որ մին թլմած առաքես հանողերձ հրամանաւ, որ մեզ շուտով բերէ ի ձեր ծառայութիւնն, քանզի ունիմք հարկաւոր և պեթքական բան ասել թագաւորին, զի յոյս ունիմք, որ մեր բանէն բազում օգուտ գլնի թագաւորին, և սուրբ հաւատոյն և մեր ազգին:

Եւ գիտութիւն լիցի, որ խօրհուրդն ոչ եմ կարող գրեմ կամ այլոց յայտնել, բացի թագաւորին միայնոյ: Եւ մեք, որ ոչ գիտեաք ձեր յերկրին սովորութիւնն, թէ այսքան զերկարէր, վասն այն ոչ ծանուցաք մինչի այսօր: Այժմ, որ մին աւուր ճանապարհ է մնացել, շնորհեա, որ շուտով գամք, զի յետանալն մեր անօգուտ է:

321ա || Եւ խնդրեմ, որ ինչ կամի տէրութիւնն քո հարցանել, առանձին հարցե՛, յայտնին՝ ոչինչ, զի մի՛ ոք չիմասցե՛, թէ տէրութիւնն քո ինձանից բան հարցուց, պատճառն ծանուցանելոց եմ հրամանուցտ:

Մառա Եղիա Աստուածատուրեան Մուշեխանց

Իմ աստուածաւէր պարոն աղայներիս<sup>62</sup>

Մալում լինի հրամանոց, խնդրեմ ձեզանէ, վասն սիրուն Քրիստոսի շարշարանաց խաթիր համար, վերև աստուած, ներքև դուք, աղայներ, թակալորի կերեղմանի խաթիր համար, ձեր արևին մատաղ, պիտի լայ, որ ինձ էս աղին ձեռնէն աղատէք, աստուծո խաթիր համար: Հազար մարդ ձեր հրամանոց սատաղէն մէկ ջութ հաց ուտում այ, ես էլ ձեր դռան շուն պիտի լայ, որ ինձ պախէք: մին ջութ խացի տէր անէք, ձեր գլխին մատաղ, ձեր հրամանոց սատաղըն լինեմ, ամպրն ձերն այ:

Ես Թարվիզայ ընկամ էս մարդի խետ, էկամ թէ կնամ հայի մէջ ինձ լաւ այ, ուրախացամ թէ քուրդի ձեռնէն պրծամ: Յամ ասամ՝ Պետրպորթ ինձ յամշարի ունեմ, ինձ խամար լաւ այ, մին դուքան կու պանամ, կու նստեմ, իմ պանն կանեմ, մին քանքանի տակ կու դատեմ, մին քուր յունեմ երեք-չորս եթիմ ունի, դարէն հինգ-վեց հազար դին կողարկեմ խարջի անի: Աստուած մեր գլխին պարկացաւ, այսպէս ելաւ: Խնդրեմ ձեզ հրամանուցէն, ինձ աղատէք: Ես պատրոն խետ չի կնացի, թէ կու պոծնեմ, ինձ կաղատէք, աստուծո խաթիր խմար, վասն սիրուն Քրիստոսի շարշարանաց խաթիր խմար, Սոսքը Նիկողոս խաթիր խմար, ձեր գլխին մատաղ, ինձ մին ջար արէք, իմ բորս խե[ղ]ճ այ, եթիմի տէր այ, թակալորի կերեղմանի խաթիր խմար: Երկու խոքի ենք, երկուսանքս էլ Մո[ս]կով, Պակու սաք ունէնք, ասանք լաւ այ, կու գնանք տեղն, մին ջութ խացի տէր կեղենք, աստուած այսպէս արաւ, փառք աստծոյ, յէրէ սայ երկու դարու մոտ այ, որ այս մարդու մու[տ]ն ենք ինձ ԴՌ (4 000) դիան փող այ տվեր, ասեր այ դարէն ԺԲՌ (12 000) դիան կու տայ, չեմ ուզում, ձեր հրամանոց գլուխն սաղ էլի, Քրիստոսի խաթիր խմար, մեզ մին ջար արէք: Մինիս անունն՝ Ատիլխան, մինիս՝ Յարութին ձեզ ծառայ:

(թ. 221ա—բ)

Սիսայ աղա Գիրումին, հայր Հահինին

Ի նուսստ ծառայ Դավութէս, Բակնազարէս, ծնող մօրէս, տան մեծ և փոքունէս, շատ բարով, հազար բարի հասցէ վերոյգրեալ պարոնացն և այլ ձեր հրամանոց սեղանակից հազրջումխաթին: Եւ թէ դուք մեր աֆալն, կամ օղլուշաղին աֆալն հարցանէք, Աստուծոյ փարք, այս սհաթիս սաղ սալամաթ եմք և ձեր տեսուն կարօտ:

Դարձեալ, ա՛յ մեր սհապներ, այս է որ երեք շորս գիր մեր ամենայն աֆալն, դարդն, ախլն գրած ենք, ողորկած ձեզ վրայ, ոչ թէ մին գրին պատասխանն չի եկալ՝ թէ մեք այլ խաթիրջամ ելանինք, մնացել [ի]նք վերև աստված, ներև ձեզ մտիկ անում, որ շուտով այս բեքար տանս, այս պշարած օղլուշաղիս մին իմդատ հասնիր: Դուք իսա մին գիր այլ չեք ողարկում, որ թէ մեք, թէ պարտականներն մին քիչ դինջիլամիշ ելանինք: Գէնա աստված աղատի, անփորձ պահի, ձեր աֆալն ամաշա գրում է, նաթիշա, դուք եկիր ձեր տանն տէր հասիր, թէ չեմ հազար գիր՝ մին ըստակ է:

Ա՛յ աստուծոյ բանդաք, այս ի՞նչ է մեր քաշում շարշարանքն. ոչ մեռեալ ենք, ոչ կենդանի, դահրու շուրումիշ [ի]նք ելալ գիր գրելով, այլ քաղիթ կամ միրաքապ չի մնացել, շատ ասելով մեր գըլ-խումն այլ խելք չի մնացել: Մակար դուք ձեր տանն, օղլուշաղան ջիպ ձեռք [ի]ք վեր կալած, մեզ այլ հիմացրէք, թէ մեզ մալ մադաթ [ի]ք, մեզ մեհտար [ի]ք, այդպէս չեն տէրութիւն անիլ: Ով օր Հենդրեա [ի]մանում է, այս երկրիս գլումն լըսում է, գալիս [ի]ն տուն, իւրանց տանն տէր կենում, դուք ի՞նչ ֆիքրումն էք, ի՞նչ նիաթի տէր իք: Այս գլում սութամներս եկաւ, տասը շաբաթ մեր պարքն անց կացաւ, խապար չենք՝ թէ ո՞րին օհտէն գանք:

Ամա՛ն, աստուծոյ խաթրին համար, եկիր, հասիր: Աստուծոյ շաբաթն մին անգամ թաւջի ին անում, պարք չի ընկնում, էհտիբար չի կա, միսա մհակ մեք ի՞նչպէս անիմք, շիտակ որ առիքան շարիտ [ի]նք գծել վըզնիս, խեխտիլ, ամայ դուք իք մնալ դատաստանին

պարտական: Այ բեմուրվաթ, նիսաֆ արէք, տեսէք թէ ի՞նչ [ի]ք  
անում: Աստուծոյ փարք, խելօք, կատարեալ մարդիք իք, դուք աշ-  
խարհի խրատ իք տալիս, հիմայ օ՛վ խրատ տա:

Ամա՛ն, մին հալ ու յօլ արէք, Բէթաշա պարքն ողարկեցէք:  
Քրիստոսի շարձարանք են մեզ տալիս, այլ իրզը, սուրաթ չի մնա-  
ցել, այս աս, ամօթ է: Տարազի թէ մեք ասինք, գրինք ոչ, դուք ձեր  
տան հասպն, պարքն, աֆալն խա՛պար չէք: Աստուծոյ խաթրին հա-  
մար, շուտով մին մալ մատաթ հասիք, որ տունն ձեռաց գնացել այ:  
Աստված մի արասցէ, որ ջուրն կու տա գլխօվն, անտի յետն կուգես  
թէ ձեր հարիւր քսան [ի]նի, մին տիան չի հասալվիլ:

Ամա՛ն, ամենայն բան գրիլն մուսպաթ չի, միտք արիք, յիմա-  
ցիք, այս ինչ կրակ ա վիլիաթիս վերայ. այլ գեղ, աւաղանուղ չի  
մնացել, ամէնն յետիւր յաղմանին արալ, մնացել ա մեր գեղն: Աստ-  
ված փրկի, Տէրն ազատի, սարը, քար ասկար կոխած է: Եկին զըր-  
դէնի մեր նախիրն ջիպ տարին, մեր եզինքն այլ տարին, մնացինք  
այսպէս բէքար, մաբաղ: Վարը վաստակ ունինք, կալը կասա, ինչ  
անինք, ի՛նչպէս հաւաքինք: Եզն չի կա, էհտիբար չի կա, փող չի կա՝  
թէ եզն առնինք: Գեղումն տասն եզն չի կա, ամէնն՝ տարած են,  
կորցրած: Գեղին սօխախներն, շորս թարաֆն, ամէն քուշաբանտ է,  
ոչ գիշերն ունինք դադար, ոչ ցերեկն, շիտակ որ ջիպ փուշացել ինք:  
Դահլին լիտրն դառավ հազար դիան, ոչ ասվել ա, ոչ էլ լավել: Լիտրն  
հազար դին ի՛նչպէս դահլ առնինք, օղլուշաղ պահինք, մալ ու շար  
տանք, ջավր քաշինք: Մեղայ աստուծոյ՝ թէ այս ջավրիս հրեշտակ  
աստուծոյ կա՛րի համբերել: Վալահի, շուտով եկիք ձեր տանն հետ-  
նան կացիք: Այս է շորս ամիս է, որ Յաղնա, Ըստոպի, Քուչն, Գրզան՝  
մեր գեղն քուլօլան գեղարանքն, օղլուշաղօվ, նասուն տավարօվ, մեր  
գեղումն ին կենում, ջահթըն հէսիւր յաղման ին: Մակար այս զլումս  
լսում չիք, որ դինջիլամիշ իք ելած: Հիմայ, աստուծոյ փարք, մին եր-  
կու շաբաթ է, որ ասկարն քաշվեց դեպի Թարվեզ, օրթալուզն մին  
բիշ ֆարադաթ ելաւ, դահլն դարձաւ շորս հինգ շահի, աստուծոյ  
փարք, ուրիշ դասաֆաթ միթկըն չի անիք, իշալահ, որ սաղանաղ էր,  
անց կացաւ սէլի նման, այս էլ մեր մեղացն է, որ տեսնում ինք:  
Խօփ, ինչ որ մեր ճակատներին գրված է, ամենաբարի աստուծոյ է,  
բօլաբիմ այլ աստված ողորմած ելանի, ազատի: Մեր մեծ դարդն,  
մեր մեծ շալակն, մեր դահր դազաֆաթն, մեր պարտքըն է, զարա  
շատ սխալթ են տալիս, օրն տասն գալիս է, քսանն գնում: Մին դու-  
րու էհտիբար ունինք, այն էլ ջիպ կտրվեց, որ մին մարդ մեզ այլ  
ձեռն չի բռնում: Թէ յիմանաք, այս գիրս գիր չի հասալիք, գիտա-  
ցիք որ երկու թուաման տված ենք, մինն ողարկած ձեր հետան: Ար-

թուխ մեք մեռած [ի]նք, մեզ հողով անող չի կա: Վասն Քրիստոսի  
խաթրին համար, եկիք մեզ հողով արէք ա՛յ մեր սհասպներ, ա՛յ մեր  
աշաց լուս: Այս տանս հազար տարվան ամակտարի շինութիւն կա,  
վախինք որ ոչինչ տեղն էլի գունի մէջում մահվիա ելանինք, այլ կա-  
րիլ չենք գլուխ վեր պատիլ: Ժամանակիս դահում դահումի, մարդ  
մարդի ֆայտա շունի, ձեր շնմբին հողն, քարն էլ ձեզ համար լեզու  
ելած ձեր ասմունքն, դայպաթն [ի]ն անում: Մեր բարեկամն  
դրուտն միայն աստվածն է, որ սուրբ խնամքն այս օշաղաս ոչ պա-  
կաս անի: Այդր գօրա իմացիք, թէ մեր օղլուշաղին դարտն, աֆալն  
ինչ ա: Տատն քիւթ ջան ա, դըւաթա՛րնկած, կարում չի թէ իւրան  
համար ժամ գնա: Մաբաղ օղլուշաղ [ա] նասուն տավար բռնաց  
մեք այլ, մեր պակասն, մեր օղլուշաղն ենք, չէ վուր մեզանում, որ  
աստուծոյ կամօքն դուշմանի սրտով չի ելանինք:

Ա՛յ մեր սհասպներ, ջանըներս շատ աջիմիս իլած, թահր թօհ-  
մա շատ ինք դրում, խաթրներս մնայ ոչ, մեր ցան այլ ելած է  
մեր գլուխն, ոչ դարման է գտնվում, ոչ մեռանում ենք, որ ազատ  
ելանինք վասն պարտականի ձեռաց:

Ամա՛ն, ամա՛ն, ամա՛ն ձեր գլխին, արևին սատաղ լինինք,  
ֆաբիր բօրջի արէք, ինչպէս որ գիտէք, արեցէք, թաք այս պարքերիս  
մին հալ, մին ֆիքր քաշիք, զմեզ կամ ձեր մեռեալըն ազատ արէք:  
Ոչ հալալ հացի ենք, ոչ ջրի, ամէնն աղու զէհեր են անում: Աստված  
վկա է, դասաֆաթու մեզ վերայ ցաւ ա ճնկանիլ, այլ օհտէն գալու  
ճար, թաբիր չի գտնուվիլ: Շիտակ որ ջրի մէջա դուրս ձգած ձկան  
նման բերաններս բաց ա մնացել: Վերև աստծոյ, ներքև ձեզ ինք  
մտիկ անում, որ շուտով մեզ մալ ու միտ ելանիք: Աստված վկայ է,  
այս գիրս ձեզ համար սայլի է եկալ, գլխներդ այստեղ թրջեցիք,  
այստեղ թրաշ արէք, այլ ուրիշ ֆիքր էհմալ չի անիք: Հազար, հա-  
զար, հազար հալպաթ, պարքն ողարկեցէք կամ մինարքտ եկիք, որ  
տունն ձեռաց գնացել ա:

Արդ արեց մեղաւոր Ծատուրս: Ա՛յ սհասպ պարոն Գիրում և  
Շահին, օղլուշաղն սխալթ շատ ին քաշում, ոչ ասվիլ և ոչ գրվիլ  
սրանց քաշում սխալթն, միայն աստվածն է գիտել, հազար հալ-  
պաթ, եկիք, հասիք, հրամանք ձերն է:

Գրեցաւ թվ. ՌՃԶԳ (1725) յունիս ամսի ԺԵ-ումն (տասն և հի-  
գումն): Վուազ գրեցի, թողութիւն անիք, Պարոնայց մին օրն՝ հարիւր  
հազար, ամէն:

Բարսեղէս ծանիր ա՛յ սլարոն Շահին. թէ հիմանաս, բըրտեցի  
Փանին այն թամասկին ջհաթէն ԺԵ (15) մաշառ ոսկի է տվալ:

Հասցէ գիրք Մօսկօվն կամ ուր և իցէ ուսմեցի Գրիգորի որդի

պարոն Գիրումին և պարոն Շահինին ձեռն, անբաց հարցանողն տէրն օրհնէ, ամէն:

Եղև թվ. ՌՃՀԴ (1725) յունիս ամսին Ժն-ումն (տասն և հինգումն): Թաալիմ պարոնաց զուլուզ:

168 ք. ՀԱՀԻՆԻՆ ԵՎ ԳԻՐՈՒՄԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

### Սեապ աղա Գիրումին, աղա Հահինին

Ի նուաստ ծառա Դաութէս, Բակնազարէս, ծնող մօրէս, տան մեծ և փոքունէս շատ բարով, հազար բարի հասցէ վերոգրեալ պարոնացն և այլ ձեր հրամանոց եղեալ հազրչումիաթին: Եւ թէ դուք մեր աֆալն հարցուցանէք. աստուծոյ փարք, այս սհաթիս սաղ սալամաթ ենք և պարոնացն տեսուն կարօտ:

Դարձեալ ա՛յ մեր սհապներ, մեք չորս հինգ բարաթ գիր, ամենայն աֆալ գրած ենք, ողարկած ձեզ վրայ, ոչ մին գրի պատասխանն չետ չի եկալ՝ թէ մեք այլ ձեր աֆալն յիմանամք, մին քիչ ըռըհաթ իլանք: Աստուած վկայ է, այսչափ նեղութիւն, դարդը, կրակ, յէսիր, յեաղմա, ամենայն զլումի դարդն թողած ինք, ձեր ֆիքրն [ինք] քաշում, թէ՛ աջապ ի՞նչ [ի]ն էլալ: Վախինք թէ՛ դուշմանի սըտով ելանինք, մեր ճարն ի՞նչպէս կնի:

Ա՛յ մեր սհապնի, շատ գրիլն մուսպաթ չի, վասն Քրիստոսի խաթրին համար, եկի՛ք, հասի՛ք, տանն տիրութիւն արէք, այս ի՞նչ դարդը կրակ է, որ միջումն եմք: Աստուած վկայ է՝ ոչ ինսան ենք, ոչ հայվան, այլ խելք չի կա մեզ մօտ: Հառաջ էլ [է] ինք գրած. եզինքն տարին, մնացէնք ըռանց եզն. փող չի կայ, եզն չի կայ, մասուն հասած ժամանակն է, ի՞նչպես անենք, ի՞նչպէս հաւաքինք, ի՞նչպէս օղլուշաղ պահինք: Վասն աստուծոյ խաթրին համար, զմեզ մորթիլ միք, գեղի մէջ դուշմանի սըտով միք անիլ, շուտով հասիք, պարքն ահալ արէք, մեկայլ բաներն այլ աստված ողորմած է. թէ աստված սաղլուղութիւն կու տա: Այլ նաշարինդան մեր ամենայն բանն զլուխ [ի]նք տանիլ, անջախ մեր մեծ դարդն, ծանր շալակն, մեր պարքն է: Աստուած վկայ է, այսչափ գերի, զուլումաթութիւն հաջաթ չի, հաջաթ՝ պարքն է, դիջլուղութիւն չեն տալիս, դադարք չեն տալիս. ոչ գիշերն է մանշուր, ոչ ցերեկն, ամէն զարանլուզ է: Այստեղ մարթի արէխէրք գերի ան անում, տանում, հայրն գնում է, տասը, տասնըհինգ թման տալիս, աղատում, բերում: Մեք այլ գերի ենք պարտականի ձեռաց, դուք այլ զմեզ ազատ արարէք: Թէ

զմեղ աչք չիք անում, Գաւութին, Բակնազարին խաթր արէք, եկէք: Այլ ինչ գրենք, ամենայն սամթ դժար է, աստված ազատի:

Թէ յիմանաք, միայն մեր գեղն մնաց, թէ չէ ամենայն գեղ յեւոր յեազմա են արած, մեր ճարն այլ ընկած է, աստուած որ փրկի փորձանաց: Վարթալարին մեր գեղին քու [լի] սպայն վերի թաղու կթանին կէսն տարեցին, խիստ դժար է, կարում չենք տանից դուրս գալ: Համ էլ գեղումն տկարութիւն էլ կա. Հայրանց Ապրհամին, Բարսեղին կնոջն, մեր ախշկան, Դիւանչոց Պետրոսին, մեր թոռան տեղուց դուք սաղ [ը] նիք: Մեր օղլուշաղին կողմէ խաթրջամ կացիք, Աստված ողորմած է, ինչ-որ աստված կու տա, բարի է, թաք ձեր գլուխն սաղ [ը] նի:

Միրզա Բարսեղ ձեզ շատ բարով կանի: Վռազ գրեցաւ Բանդաս Աստվածատուրս թվ [ին] ՌՃՀԴ (1725), յուլիսի ամսին ԺԵ-ումն (տասնևհինգումն):

Թէ Բրթեւանց տըներին կողմէ հարցանիք, մեր ձեռացն է, շորս տընվուր կա մէջումն՝ Յընցի, Ըստպէցի աչ: Զան ախպար, ամա՛ն, աչիզ ամ մնացէլ, դահում զարդաշ այլ մտիկ չեն անում, մին դոշ մեկի ձեռն չեն բռնում, պարտականերն այլ, դասունն այլ իմ յեախան [ը] ն բռնում, խապար չեմ թէ ո՞ր մինին ջուղապ տամ: Ա՛յ ջան ախպար, քոչ եխպայր հետ մին փիքը քաշեցիք, բըլբիմ պարքն ողարկիք, աստված ողորմած է. քիմին մնաթ, քիմին ոտն ձեռն պաչիլ, մին հալ կանինք: Հազար հալպաթ, պարքն ողարկեցէք, այլ է՛հմալ չի անիք: Երեք տարի ա գնացել [ի] ք, մաբլաղ պարք [ի] նք արած, տասն տասնհինգ են տալիս, ավալթին պէսըն տալիս չեն, մեք այլ նաշարինդան թանգ պարտք [ինք] անում թէ ինչա խարջ տանք, որ օղլուշաղին խաթրին համար, որ գերի չի ելանին: Խապար [ի] ք, որ իմ [ա] այլ փող շունիմ, թէ մին սխաթ անկանի, տանն քոմակ անիմ, այլ մարդ ձեռն չի բռնում: Վերև աստված ունինք, ներքե՛՛ ձեղ, որ շուտով մի իմզատ հասէք ա՛յ իմ սհասպնի: Ա՛ֆալ շատ կա, բայց գրիւն պետքն չի, բարով գաք՝ յիմանաք: Այլ ինչ գրիմ, դուք գիտէք:

Հասցէ գիրս Մոսկովն կամ ուր և իցէ ոսմէցի Գորգի որդի պարոն Գիրումին և պարոն Շահինին ձեռն: Անբաց տանողն աստված օրհնէ:

Թվին ՌՃՀԴ (1725) յուլիսի ամսի ԺԴ-ումն (տասնչորսումն):

(Арм. дела, Ка 23, 1724, № 4, л. 46)

169. ԲԱՂՎԱԾՔՆԵՐ ԵՂԻԱՅԻ ՀԱՇՎԵՍԱՏՅԱՆԻՑԳԻ

Բալուցի Աթանասի որդի Մելիքշահին տուինք յօլպօճի Զ (6) թուման ապասի թէմէսուկօվ, զնա Հաշտարխան Ը (8) թուման 4000 դիան կօփիկ տայ:

Սուազցի Պողոսի որդի Մելքոնին տուիք Շամախի յօլպօճի Դ (4) թուման 5000 դեկան ապասի թէմէսուկօվ, աստուծով, զնա Հաշտարխան Զ (6) թուման 3000 դեկան կօփիկ տա:

Պաքուցի Նազարի որդի Մուրատին տուինք Շամախի Բ (2) թուման 5000 դիան ապասի, որ զնա Հաշտարխան Գ (3) թուման 5000 դիան քօփիկ տա:

Քաֆայեցի Սաֆարի որդի Ասլանին տուինք յօլպօճի է (7) թուման 1400 դիան ապասի թէմէսուկօվ, զնա Հաշտարխան, Ժ (10) թուման քօփիք տա:

Էրզրումցի մահտեսի Յակոբի որդի Գրիբորին տուինք Շամախի յօլպօճի երկու թուման ապասի թէմէսուկօվ, զնա Հաշտարխան երկու թուման 8000 դեկան քօփիկ տա:

Գրիգորի որդի Մատուրին տուինք Շամախի յօլպօճի մին թուման ապասի թէմէսուկօվ, զնա Հաշտարխան մին թուման 4000 դիան քօփիկ տա:

Շամախի խրիտ արինք զարպաֆ ապրեշում 11 լիտր 23 խտիլ, փողն մինչև ի Նիազօվա 10 թուման 7800 դիան խարձօվն: Մօվսէսին հետ խրիտ արին [ը]: ԼԳ (33) լիտր ԿԹ (69) խտիլ: Երկու փայն Մօվսէսին է, մին փայն իմ՝ Եղիեային, իմ մին փայն կանէ ԺԱ (11) լիտր ԻԳ (23) խտիլ, Շամախու մինչև Նիազօվա խարձօվն իմ ԺԱ (11) լիտր ԻԳ (23) խտիլ ապրեշումն կանէ 107800:

Շամախի որ Մօվսէսին հետ խրիտ էինք արել ԼԳ (34) լիտր ԻԿ (21) խտիլ շարպահ ապրեշում, իմ՝ Եղիեայիս մին փայն (յ), Մօվսէսին երկու փայն, իմ մին փայն ԺԱ (11) լիտր, ԻԳ (23) խտիլն ծախեցի գալիշօվ ԻԵ (23) թուման ԳՌԳՃԼԳ (3333) դիան պակրաստ շուխի հետ՝ ԺԴ (14) կտոր շուխա:

Ես՝ Եղիեաս, Գանձա առի 12 ջրի շուն, գինն 7950 դիան, մէկ սև աղուէս՝ 500 դիան:

Գանճա որ Ադիրեկին մին թօփ ճերմակ ապա էյի տուել, որ ծախէ, թին ՌճԳ (1714) դեկտեմբերի ամսո զանճեցի Յուսէփէն առա մին հազար դին ապային գինն:

Հաշտարխան յօլպօռճի տուինք ջուղայեցոց նաւին հետ ջուղայեցի Փիրին, արուլեցի Սահակին տուինք, որ բարով գնա Շամախի 530000, 31 օր վատա, 53 թուման թաղա սխալ ապասի տա: էս 53 թումանին երկու հիսան իմ է: Միատեղ մի թամասուկ առինք, իմ՝ Նղիայիս, հիսան կանէ ժԸ (18) թուման ԳՌԳՃԼԳ (3333) դին:

Որ երեսունչորս լիտր ու քսան մին իստիլ զարպաֆ ունէյինք, ես՝ Նղիեաս, ու Գրիգորի որդի Մօվսէսն, երկու գումրուկ տուինք քերայօվն ու խարճօվն նիազօվայու մինչև ի Հաշտարխան երեք թուման երեք հազար եօթն հարիուր յի [ւ] ուն դիան՝ երկու փայ Մօվսէսին, մին իմ՝ Նղիայիս, իմ փայ գումրուկն խարճօվն արաւ մին թուման մին հազար երկու հարիուր յիսուն դիան տուի, հախլաշմիշ եղա:

Հաշտարխան յօլպօռճի տուինք ջուղայեցի Փերին, ջուղայեցոց նաւին հետ յիսուն թուման քաբիկ, որ գնա Շամախի երեսուն ու մին օր վատա քառասուն և եօթն թուման, հինգ հազար դիան ապասի տա: էս յիսուն թուման քաբիկին երկու փայն էրզրումցի բուռչի Գրիգորի որդի Մօվսէսին է, մին փայն իմ՝ էրզրումցի Աստուածատուրի որդի Նղիայիս է, միայտեղ մին թէմէսուկ առինք, որ իմ փայն կանէ տասնուվեց թուման վեց հազար վեց հարիուր վաթսուն ու վեց դիան:

Հաշտարխան(ն) ես՝ էրզրումցի Աստուածատուրի որդի Նղիեաս, յօլպօռճի տուի (Ապրահամի որդի Մարտիրոսին) եօթն թուման երեք հարիուր դիան քաբիկ, որ գնա Շամախի, երեսուն ու մին օր վատա, եօթն թուման թաղա ապասի տա: Թեմսուկն էրզրումցի Բուռչի Գրիգորի որդի Մօվսէսին անունօվն է գրած, ամենայն փողն իմն է:

Հաշտարխան յօլպօռճի տուի դաշտեցի Իսայի որդի Սահակին, հինգ թուման քաբիկ թէմէսուկօվ, որ գնա Շամախի երեսուն մի օր վատ(ա), թաղա ապասի տա՝ շորս թուման ութն հազար դեկան:

Որ Հաշտարխան տակիշօվ տասնուչորս կտոր պակրատ շուխա առինք վեց հարիուր ընսուն և վեց ուռուսի արշուն էր, երեսուն ա [ւ] շուն գլուխ առինք, մնաց վեց հարիուր վաթսուն և վեց առշուն, մին ուռուսի առշուն երեք հազար տասներեք դիանով առինք: էս վեց հարիուր վաթսուն և վեց առշունի փողն կանէ երկու հարիուր տասն և վեց դիան: էս վերո տասն և շորս կտոր շուխան երեք մարդ ընկերութենօվ առինք: Ես՝ Նղիեաս, ունիմ էս վերո ապրանքին մէջն մին հարիուր յիսուն և եօթն դաստա կանճայու ալուչինայի ապրի-

շում, մին դաստան երկու հազար դիանօվ դակիշ դրի, որ կանէ փողն երեսուն ու մին թուման շորս հազար դին: Ունէյի տասնուեկ հունքարի լիտր ու քսանումին իստիլ զարպաֆ դակիշիս մէջն դրի, քսանուհինգ թուման ութ հազար երեք հարիուր երեսուն երեք դիան, էրզրումցի դասապ Արութինի որդի բուռչի պարոն Թորոսի տղան ունէր երեք հակ Շամախու եփած ապրեշում, դակիշ դրեց ութսուն ու վեց թուման եօթն հազար դեկան: էրզրումցի բուռչի Գրիգորի որդի Մօվսէսն ունէր քսաներկու լիտր ու քսանուվեց իստիլ դակտեղ դրեց յիսուն ու մին թուման վեց հազար վեց հարիուր վաթսուն և վեց դիան: Պարոն Մօվսէսն դակիշ դրեց հաշիա ու տարայի հինգ թուման մին հազար դիան: էս վերո երեք մարթուս ապրանաց ջամն կանէ երկու հարիուր թուման եօթն հազար դիան:

Հաշտարխան մին զօղլուկ առա Ղազարին համար՝ 250:

Տասն գինու ստաքան՝ 1000:

Տասներկու ուռուսի առշուն խաթայու կտաւ՝ 1000:

Վեց արաղի ստաքան՝ 420:

Թվին ՌճԿ (1711) յունիսի ամսո քսանէրկուսին Շամախու յէլա մինչև ի հօկտեմբերի ամսո երկուսին որ Շամախի մտա, գնալն թէ դալն թեմպիլիթ, ըրախտարանա կամ վարց կամ օտայի քիրա կամ փսոն կամ յուրիշ մանտրումունտր խարճի ջամն արաւ էսչափ՝ 12285:

Վերո գրեալ զարպաֆին Հաշտարխան զօմրուկ տուի տա(ս)ն ու մեկ հազար երկու հարիուր յիսուն դիան:

Վերո գրեալ Կանճայու ապրեշումին, ջրի շան, աղուէսին Հաշտարխան զօմրուկ տուի տասն ու մեկ հազար ութն հարիուր դիան:

Էլչի Բաղուն բուրոչն տղան շափառութենօվ եկաւ Ղում մարտի 21 օրն, Գանճասարու կաթողիկոսն էլ հետն էկաւ, գնացին Սպահան մարտի 22 օրն:

Թին ՌճԿԱ (1712) ապրիլի ամսո քսան և ինն օրն իրեքշափաթ որ գանք Ղազպին, տէր աստուած բարի ճանապարհ տա, ամէն: Առանց պարիշիլ բարեկամ դեյի շարուատար Օրօճիցն մին ձի հեծա մինչի Ղազպին, կարծէյի թէ հազար դին վարձ կառնու, էկաւ Ղազպին, դանթար բերեց խունամ դատօլն, սուֆրան, կարպետն, յօրդանն, մինչի ջրին փռան կըշոնց, քսան և եօթն լիտր Թարվիլի էկաւ, մի լիտր երեսուն և հինգ դինօվ առաւ, որ արաւ ինն հարիուր եօ (45) դին: Մին հազար հինգ հարիուր ինճանից առաւ, ջամն՝ ԲՌԳՃԽՆ (2445) դին: Խրատ լինի, որ առանց պարիշիլ շարուատարի ձի չի հեծնում:

Երկու կազ կէս շարակ նարինճի սօլտաա արի՝ 2475:

Մին զուլնար շաշխր առի՝ 6000:  
Մին սաղրի պաշմաղ առի՝ 600:  
Չորս կազ շիթ առի՝ 400:  
Հինգ կազ աստառ առի՝ 115:  
Չորս ջրի փարչ առի՝ 20:  
Մին թօփ ասեղ առի՝ 20:  
Մին ձի առի՝ 9000:  
Երկու բուխարայու մորթի առի՝ մին հազար դին:  
Չորս կազ պակոաստ առի մեր օրթայի ճոթիցն՝ մին թուման:  
Ղում երկու մորթ առի՝ 450:  
Ձիուն նալելու տուի՝ 150:  
Ղազպին քսան օր օթրաղ արի՝ թէ ինձ, թէ ձիուս փսոն տուի  
Ի (20) աուր՝ 1682:  
Չզմա կարելու տուի՝ 40:  
Արտաւիլու ժԲ (12) աուր փսոն տուի ինձ և ձիուս՝ 1275:  
Շամախի սարմայա վեր առի քառասուն և հինգ թուման ութն  
հազար դին ապասի, որ յօլպօռճի տամ կամ խրիտ անեմ գնամ Մօս-  
քօֆ:  
Մին երկու երեք ջուխտ Թիֆլիսու զուրպա առի մին հարիուր  
յիսուն դին:  
Մին թօփ կապուտ համայուն առի վեց հարիուր երեսուն և  
հինգ դին:  
Չորս կազ նոյն համայուն ճերմակ խաւունցուն առի ինն հա-  
րիուր դին:  
Մին ջամ թաս առի մին հարիուր դին:  
Շամախի երկու բեռ զահուվային պարանա տուվի քարուվան-  
սարչատար Սահակին վեց հարիուր դիան:  
Շամախի երկու բեռ զահուվային քիրա տուի մինչի նիազովա  
սարվան Մահմատ Ալուն երկու հազար չորս հարիուր:  
Շամախի երկու բեռ զահուվային քաղաքին զուռն պաճ տուի  
չորս հարիւր դիան:  
Շամախի ապրիշումին հակին մին միշինէ զապճուղ առի վեց  
հարիւր դիան:  
Նիազովա մին հակ ապրեշումին րախտարնա տուի եօթն հա-  
րիուր վաթսուն դին:  
Նիազովա մին հակ ապրեշումի զուրպանի տուի քսան և հինգ  
դին:  
Նիազովա մին հակ ապրեշումի «Նուրէ» նան ցքեցի մուղտու-  
րան տուի երեք հարիուր դին:

Իմ ապրեշումին հակն, որ «Նուրէ» նան ցքեցի մէջն, վիճակ եմ  
գրել դրեր և արմս վրան եմ կարել վերո հօսօմ Բանայօթին ապրս-  
պրեցի ժԵ (15)՝ երկու շաբաթ:  
Հաշտարխան կօմրուկն իմ երկու հակ զահուան կշոեցին քսան  
և չորս փութ էկաւ, մին փութն մին թուման ութն հազար դին գին  
արին, որ ջամին փողն արաւ քառասուն երեք թուման երկու հազար  
դին: Մին թումանին հինգ հարիուր դին գօմրուկ առին, որ ջամն կա-  
նէ երկու թուման մին հազար եօթն հարիւր դին:  
Երկու հակ զահուվային նաւուն տուի թաքաւորական երկու  
հազար դիան:  
Երկու հակ զահուվային փրեքուփնա առին հինգ հազար տասն-  
հինգ դին:  
Մօսկոֆու Յեաւիհնն գօմրուկն քսան երկու փութ գրեցին, մի  
փութին մին թուման երկու հազար դին գին արին, ջամն արաւ քսան  
և վեց թուման չորս հազար դին: Մի թումանի երկու հարիուր յիսուն  
դին գօմրուկ արարին, ջամն կանէ վեց հազար վեց հարիուր դին,  
որ է Մօսկոֆու կէս գօմրուկն...  
Պարաթ փօտօսօծնային իմ փայ խարճն տուի եօթն հարիուր  
ութսուն դին:  
Այս փօտօսօծնայի հսարն ծուռ էր եղել, Կամիշինք մին հա-  
րիուր յիսուն դին յետ առի:  
Երկու հակ զահուվային կշոեիլու տուի թաքաւորական մին հա-  
րիուր քսան դին:  
Խահվան քաշօղ Սօլօվօնի կնեքուն տուի քառասուն դին:  
Ղահվան կշոեիլու զվօշիկի տուի մին հարիուր դին:  
Չորս լըռօկօծնա առի հակներու զահուվային վրա քաշելու՝ ութ-  
սուն դին:  
Մին սև թալաթինէ ֆռանկի չրզմա առի՝ վեց հարիուր յիսուն  
դին:  
Չուխաս կարելու տուի՝ երեսուն դիան:  
Մին սև գառի մուշտակ առի՝ չորս հազար ութն հարիւր յիսուն  
դին:  
Չմերուկ առի՝ տասը դին:  
Տասն և մին օր օթրաղ արի՝ թէ ճանփու խորակի, թէ փսոն  
տուի մին հազար երկու հարիուր վաթսուն դին:  
Տասն ու մին աուր օթրաղ օտայի քիրա տուի ութն հարիուր  
դին:  
Հաշտարխանու մինչ նաւա էօերս Սառիլն վերո ապրանացո  
ւօթքայի քիրա տուի, որ է քսան և չորս փութ, մին փութն երկու հա-

բիւր երեսուն և եօթն դիան ու կիսօվն, որ ջամն արաւ հինգ հազար երկու հարիւր քսան և հինգ դիան:

Անտի վեր կացանք մինչի Կամիշինք վերո ղահուվայի քսան և երկու փութին սեպեցինք, մին փութին մին հարիւր իննսուն և իրեք դին... որ ջամն մին արապայու կիսու քերա տուի շորս հազար երկու հարիւր յիսուն դին:

Հաշտարխանու մինչի Սառիւն իմ մեկ գլխուս համար լօթքայի քերա տուի մին հազար դիան:

Սառիլ տեղէն մինչի Կամիշինք փսոն խորակի տուի շորս հարիւր քսան և հինգ դին...

Կամիշինքու վեր կացանք, որ գնամք Սարաթօվ:

Կամիշինքու մինչի Սարաթօվ իմ երկու արապային քերա տուի շորս հազար դին:

Սարաթօվ եօթն ատուր օթուրադի փսոնի խորակի տուի մին հարիւր յիսուն դին:

Կամիշինքու մինչի Սարաթօվ իմ երկու վօզին նամէլիմ տվի յիսուն դիան:

Սարաթօվու մինչի Տրօյիցքա քերա բոնեցինք, մին վօզն եօթն հարիւր յիսուն դիանօվն՝ խարճն մեր հետ:

Սարաթօվու մինչի Տրօյիցքա իմ երկու վօզին քերա տուի մին հազար հինգ հարիւր դին:

Սարաթօվու մինչի Տրօյիցքա իմ երկու վօզին նամէլիմ տվի քսան դիան:

Թէ Կամիշինքու Յակօտ Մուխայիլիչ սան, թէ Սարաթօվու ուլուշնիք Յուվան Աֆանեսիլի տան փէշքաշի նամելիմ իմ փայն տուի երկու հարիւր երեսուն դին:

Սարաթօվու Տրօյից գալն ճանարարհին թափթիշի յըռաստ եկաւ ապրանք տեսնելու, փէշքաշ տուինք: Իմ փայն նամելիմն տվի երկու հարիւր հինգ դին:

Տրօյիցք պօյարին փէշքաշի տուինք, իմ փայն տուի մին հարիւր ութսուն դին...

Տրօյիցքու վեր կացանք, որ գնամք Մօքթօֆ:

Տրօյիցքու մինչև Մօքթօֆ իմ երկու վօզին քերա տուի երկու հազար շորս հարիւր դին:

Սարաթօվու մինչի Մօքթօֆ իմ երկու վօզին թաքաւորական փրքագի խարճն՝ թէ գափիսն, թէ խամութա դեկին, թէ տասնանոցն, թէ փոտի յեաճու փողն, ամէն խարճն տուի վեց հարիւր դին:

Սարաթօվ պուտմիսին փէշքաշ իմ փայն տուի մին հարիւր դիան:

Յունվարի ինն ուրփաթ աւլամէթ ապրանքով դախիլ եղա Մօքթօֆ, տէր աստուած բարի յաջողմունք տա:

Յունվար 12. աստուծօվ, կէս փութ ալիբուխարան ծախեցի՝ ջամն մին հազար հինգ հարիւր դին:

Իմ փայն փսոնի քացախէն կէս բատրա ծախեցի՝ հինգ հարիւր դին:

Իմ փայն փսոնի դինին մին բատրան, մին շաթվար ջամն ծախեցի՝ մին հազար ութն հարիւր յիսուն դիան:

Հաշտարխան, որ մին սեւ զառի մուշտակ էի առել, ծախեցի եօթն հազար հինգ հարիւր դիան:

Մօքթօֆ արադի փսոն տուի մին հազար երեք հարիւր ութսուն և հինգ դին:

Նախ կէս փութ ղահվան ծախեցի եօթն հազար հինգ հարիւր դին:

Քսան և շորս փութ ղահվա ծախեցի, ջամն երեսուն և շորս թուման հինգ հազար երկու հարիւր յիսուն դիան:

Շամախու առած մեծ կարպետն ծախեցի երեք հազար դին:

Չորս կրվանքա ղահվա ծախեցի մին հազար շորս հարիւր դին: Մին լեհու բան շեղխանա թուֆանք առի մին թուման երկու հազար դին, որ Քօոն քաղաքն է շինած:

Ընկուզ ծախեցի եօթանասուն և հինգ դին:

Պուտադին քսան դաստա ապրեշումն ծախեցի թալլալի տուեց, առի հինգ հարիւր քառասուն դին:

Մին ոսկոռի ջէպի դիւթի առի ղաւամթրաշ մէշն՝ հարիւր ութսուն դին:

Մին Մարտամու ստանփա ոսկօվ նոր կտակարան առի մին հազար դին:

Եօթն կրվանքա ու կէս պարուտ առի, մին կրվանքան մին հարիւր երեսուն դիանօվն, ջամն կանէ ինն հարիւր ութսուն դիան:

Երեք կտոր խաթայու մօհրի համար մուրաքապ առի, մին կտորն երեսուն դիանօվ, ջամն կանէ իննսուն դիան:

Մին ոսկօնէ սանտր առի՝ քսան դիան:

Շոր լուանալու տվի քառասուն և հինգ դիան...

Մին երկաթէ հաւան առի՝ հինգ հարիւր դիան:

Երեսուն կազ քաթանէ ղանճիր առի, ջամն մին հարիւր իննսուն և հինգ դիան:

Մին երկաթէ սանտուխ առի՝ երեք հազար վեց հարիւր դին:

Մին ձեռնաման առի՝ ութսուն դիան:

Քսան և մին մսխալ թանգուր խաթայի առի, որ է երեք կտորն

կարմիր, մինն՝ դեղին, շորս կտորը՝ երեք հարիր քսան և հինգ դին:

Երեք դաստա թուխթ առի, մին դաստան եօթանասուն դիանօլ, ջամն կանէ երկու հարիուր տասն դիան:

Ղազպին որ մին ևս մորթի էյի առել շորս հարիուր դին, աստու-  
ծօլ Մօսքօֆ ծախեցի մին հազար երեք հարիուր դին:

Շամախի, որ մին ջամ թաս էյի առել մին հարիուր դին, աս-  
տուծօլ, Մօսքօֆ ծախեցի երեք հարիուր դիան:

Հինգ կրվանքա արճիճ առի, մին կրվանքան քառասուն դիա-  
նօլն, ջամն կանէ երկու հարիուր դիան:

Տասներկու թֆանքի քար առի՝ վաթսուն դիան:

Մապաթ նան տանելու զվօշիկի տվի մին հարիուր տասն դին:

Նան զնալն զվօշիկի տուի երեսուն դիան:

Մօստի խարճ տուի իմ թամպալիթի արապին՝ տասն դին:

Մին փոքր սանտուղի կողպէք առի քառասուն դիան:

Պարոն Շահանի հետ ընկերօվի զունտուղ զայիրի առինք, իմ  
փայն է տասն կրվանքա, վեց մսխալ, փողի ջամն է իմ փայն վեց  
թուման երկու հարիուր իննսուն դիան:

Պարոն Շահանին հետ ընկերօվի պալուխ տիշի առինք, իմ  
փայն մին փութ հինգ կրվանքա, փողի ջամն իմ փայն տուի երկու  
թուման եօթանասուն և հինգ դիան:

Պարոն Շահանի հետ ընկերօվի սակառ առի, որ է իմ փայն մին  
հարիուր հատ, իմ փայ փողի ջամն կանէ, տուի տասն և հինգ թու-  
ման:

Հինգ թիմսալ առինք պարաթ պարոն Շահանին հետ ընկերօվի,  
իմ փայն է հինգ թիմսալ, գինն հինգ հազար դիան տուի:

Երկու տօնլուխ կարմիր խաթայու լօվտան առի, մին տօնլուխն  
երեք հազար հինգ հարիուր դիան, երկու տօնլուղն ողջ մին թօփ է:

Մօսքօֆ մին տօլուղ սև խաթայի կտաւ առի՝ երկու հազար  
հինգ հարիուր դին:

Իմ վերո քսան և երկու փութ զահվայի գօմրուկն փրէքուփնայի  
տուի երեք թուման շորս հարիուր յիսուն դին:

Ճանապարհի համար հացի տուի երեք հարիուր երեսուն և հինգ  
դին:

Մօսքօֆ օթրաղի քիրա տուի մին հազար ութսուն և հինգ դին:

Էրզրումցի Շահպաղի որդի Յօվանէսին սալամէթի տուի մին  
հազար դին:

Մօսքօֆ ԻԳ (24) կազ ու կէս ուռուսի ալաճա դիմի քաթան առի  
տօշակի համար, մին կազն վաթսուն դիանօլն, ջամն կանէ մին հա-  
զար շորս հարիուր յօթանասուն դին...

Մօսքօֆու վեր կացանք որ զնամք Հաշթարխան, տէր աստուած-  
բարի ճանապարհ տա մեզ և ամենայն քրիստոնյա եխպարց, ամէն:

Կօլօմնիկա թել առի կարիչ՝ քսան դին:

Նան պօլօթա ցրեցի՝ մին հարիուր յիսուն դիան:

Փուլիկօստ մին դանակ շանկալ առի՝ մին հարիուր դիան:

Նիժնա քսան և մին կազ ու կէս կապուտօլ ալաճա քաթան առի  
չարսաւի համար՝ մին կազն եօթանասուն և հինգ դիանօլն, որ ջամն  
կանէ մին հազար վեց հարիուր տասն երկու դիան ու կէս:

Մին արճիճ հալելու երկաթի թաւա առի՝ քսան դին:

Նիժնա մին կրվանքա գուլուլա առի՝ յիսուն դին:

Նիժնա բաղնեց տվի եօթանասուն հինգ դիան:

Չորս թօփ բարակ քանեփի սիճիմ շուան առի՝ մին հարիուր  
[դիան]:

Հինգ կազ սպիտակ քաթան առի, մին կազն երեսուն դիանօլն,  
որ ջամն կանէ մին հարիուր յիսուն դիան:

Նիժնա երկու փութ տասն կրվանքա քանտրէ հաստ շօսան առի՝  
մին փութն հինգ հարիուր յիսուն դիանօլն, ջամն կանէ մին հազար  
մին հարիուր քսան դիան:

Շոր լուանալու տուի երեսուն դիան:

Մին ձեռնաման առի՝ մին հարիուր յիսուն դիան:

Հաշթարխան դախիլ եղա թրաշի տուի Կ (60) դին:

Վերո պատրոն սապատն կշռեցի, ԺԳ (13) փութն ու կէս էկաւ,  
թաքաւորական փրօվլ տվի մին հազար հինգ հարիուր ութսուն հինգ  
դին...

Մին բատրա արաղ առի՝ մին հազար դին...

Մօսքօֆու փօտօքօմնի նամելիմ տուի երկու հարիուր յիսուն  
դին:

Մօսքօֆու մինչի Հաշթարխան իմ փայ զունտուղ զայիրուն կե-  
ռիքին խարճ քիրա տուի մին հազար ինն հարիուր դին:

Մին կրվանքա պարուտ առի՝ մին հարիուր ութսուն դին:

Տասն և ինն օր Հաշթարխան օթուրաղ արի, քիրա տուի եօթն  
հարիուր դին:

Շամախի որ մին տօնլուխ կապուտ համայու կտաւ էյի առել  
ԶՃԼԵ (635) դին, Նիազօվա ծախեցի մին հազար դիան:

Մօսքօֆում, որ ՍԱ (51) կեռիք էինք առել ընկերօվի, Շամա-  
խի վեց կեռիք ծախեցի հինգ լիտր երկու իստիլ, մի լիտրն՝ ութն  
հազար հարիուր դիանօլն, որ ջամն կանէ շորս թուման շորս հազար  
հինգ հարիուր դիան:

Մեր Յոհաննանին տանն ԻԱ (21) լիտր գինի ծախեցի, մի լիտրն

4 (60) դիանօվն, որ փողի ջամն կանէ մին հազար երկու հարիւր վաթսուն դիան:

Քսան երեք իստիլ դունդուզ դայիր ծախեցի, լիտրն Ե (5) թուման ԳԻ (3000) դիանի վրա, որ ԻԳ (23) իստիլ դայիրի փողի ջամն կանէ հինգ թուման մին հազար երկու հարիւր դիան:

Հաշթարխանու մինչի նիազօվա դախիլ լինելու նախն մէջն փողըն տուի մին հազար վեց հարիւր երեսուն դիան:

Ղետնդին համար արին առնելու տուի ԻԵ (25) դիան:

Նիազօվալու մինչի Շամախի ձիու քիրա տուի ութն հարիւր չիսուն հինգ դիան:

Չարուխ կարելուն տվի ութսուն դիան:

Մին տախտակ սնճապի փոր և մին հատ սև կատու ծխեցի, ջամն էլաւ մին հազար չորս հարիւր չիսուն դիան:

Շահանին զողն տարած դահուան էկաւ ԻԸ (28) լիտր, Շամախի ծախեցի մի լիտրն մին հազար եոթ հարիւր դիանօվն, որ փողի ջամն էլաւ չորս թուման եոթն հազար վեց հարիւր դիան:

ԻԶ (26) շահի լիտր դարտալիլ առի, մին լիտրն ԶՃԽ (640) դիանօվն, որ փողի ջամն եղաւ մին թուման ԶՌԶՃԺԵ (6615) դիան: Հուսեչն աղիմէնէ առի ԲՃ (200) յալտուղ ոսկի, ամէն մինն ՌԳՃՀԵ (1475) դիանօվն, որ ջամն եղաւ ԻԹ (29) թուման ԵՌ (5000), երբ որ ուղէ տամ: Մլթանի վալուին պօշմիշ արի մի օսկին մին ՌԳՃԿԵ (1465) դիանօվն, որ ջամն եղաւ ԻՊ (29) թուման ԳՌ (3000) դիան:

Փոքրիկ Մօվսէսն ունէր սարմախա մին թուման ԸՌԹՃ (8900) դիան: Ես տուի սըրմիայս հինգ թուման մին հազար մին հարիւր դիան, որ ջամն է եօթ թուման, բանեցնէ, ինչ որ դատում լինի՝ կէսն ինձ, կէսն նրան:

Մին կարմիր շաշխուր ծախեցի վեց հարիւր դիան:

Շահանն Սպահանու եկաւ, վրան խրճեցի շաշխուր, պաշմխ, խաթաչ, կապա, շուխա կարելօվն, էլաւ եօթ հազար չորս հարիւր եօթանասուն հինգ դիան:

Ղաչարցի Շահմիր օղլի Մարտիրոսն, որ Հաշթարխանու ամանէթն էր զրկել Շամախի վերո Մօվսէսին, ես առի ԸՃԿ (860) կարմիր, Անզաղու աղուէս Խ(40) հատ գլուխ, մի աղուէսն ԵՃ (500) դիանօվն, որ ԸՃ (800) աղուէսի փողի ջամն կանէ ԽԱ (41) թուման:

Այս աղուէսին հաւայի տուի թումանին մին շահի, որ ջամն կանէ ԲՌԾ (2050) դիան:

Երկու կարպիտ առի՝ աղուէսն մէջն կօխելու համար, մի կարպետն էճ (700) դիանօվն, որ փողի ջամն կանէ մին հազար չորս հարիւր դիան:

Այս վերո աղուէսն երկու հակ շինեցի, հակ կապելու տուի երկու հարիւր դիան:

Երկու հակին պարանու տուի ԳՃ (300) դիան:

Երկու օտապաշուն սալամէթի տուի ԳՃ (300) դիան:

ԻԶ (26) կազ շալ առի հակներու վրա քաշելու համար, մի կազն ԻԵ (25) դիանօվն, որ փողի ջամն կանէ ԶՃԾ (650) դիան:

Զիս նալելու տուի ՃԿ (160) դիան:

Մին Աստուածաշունչ առի Ե դուռուչ:

Զի առի Իէ (27) դուռուչ մին ըստակ:

Մին մորթի ծախեցի մին դուռուչ:

Գումիշխանա տարած մին քուրքն ծախեցի երկու դուռուչ երկու թուլթ:

Գանճա ԻԳ (23) դիանի լիտր դալայ էր ծախել քաթանչի Յուսեփին, մի լիտրն ԲՌԸՃ (2800) դիանօվն, որ փողի ջամն կանէր վեց թուման ԳՌԳՃ (4400) դիան առի:

Ղազարն Շամախի մին ձի էր ծախել թօխաթցի Շայպաղին, Գանճա առի ԵՌ (500) դիան:

Ծ (50) ջուխթ դուրպա՝ ԵՃ (500) դիան:

Մին խալիշա առի մին ՌԶՃ (1600) դիան:

Պարոն Քաթոսին մին խալիշա՝ երկու հազար դիան:

Իմ՝ Եղիայիս և իմ՝ Ղազարիս Իսթանպուլու խրիտ արինք, այս 1. 2 քաշ ու կէս Իսթանպուլու դեղին կլապիտոն, կէս քաշ՝ ճերմակ, մեկ քաշն առինք 32 դուռուչ, վենետիկու դեղին կլապիտոն առինք 62 մսխալ, գինն 25 դուռուչ: Նոյն վենետիկու ճերմակ կլապիտոն 35 մսխալ՝ գինն 11 դուռուչ: Սրմա 100 գրամ՝ գինն 16 դուռուչ բոուպ, ճերմակ սրմա՝ 50 գրամ 7 դուռուչ...

Ես՝ Եղիեաս, Շամախի յօլպօճի առի էրզրմցի Պաղտասարի որդի քուռչի Հարապետէն երկու թուման հինգ հազար դեկան (5000) ապասի. թէմեսուկ տուի, որ գնամ Հաշտարխան քսան ու մին օր վատա, երեք թուման հինգ հազար (5000) դեկան քարեկ տամ:

Ղազարն էրզրում առել էր Ե (5) փոքր քաշ 28 գրամ մարճան, մին քաշն 12 դուռուչ դակիշօվ: էս 528 գրամ մարճանի առքն 56 դուռուչ էր:

էս Ղազարի բերած 528 գրամ մարճանն Կանճա դակիշ գրի 150 ալու շինայի ապրեշումի հետ, 355 մսխալ էկաւ, մին մսխալն 110 դիանօվ տուի, փողն ջամն արա 39050 դիան:

Ես՝ Եղիաս, Կանճա Ղազարի բերած 528 գրամ մարճանն, որ արաւ 355 մսխալ, դակիշ գրի 150 ալուշինայի ա(պ)րեշումի հետ, մարճանի մսխալն 110 դիանօվ: Մարճանի փողի ջամն արաւ 39050

դիան. 95951 դիան էլ ապասի տուի, 150 դաստա արուչինայի ապ-  
րեշում առի, ապրեշումի դաստան՝ 900 դիանով, փողն արաւ 135000.

Կանճա որ դակիրշով ճՄ (150) դաստա արուչինայի ապրեշում  
էլի առել, Հաշտարխան պակրաստի հետ դակիրշ դրի՝ մին դաստան  
ԲՌ (2000) դիանով, Ե (5) դաստա էլ աւելացաւ: Էս մին ճՄԵ (155)  
դաստա ապրեշումի ջամի փողն արաւ ԼԱ (31) թուման շորս հազար  
դին:

Պարոն Ղազարն առաւ Բ (2) դաստա արուչինայի ա(պ)րեշում,  
մին դաստան՝ 800 դիան: Այս վերո(յ) մին հարիուր և յիսուն եր-  
կու դաստա ապրեշումն Հաշտարխան հինգ դաստը յաւելացաւ,  
ջամն էղև մին հարիուր յիսուն և եօթն դաստա:

Ղազարն որ Բ (2) դաստա ապրեշում էր առել, մին դաստան  
ալ, մին դաստան շինայի, ծախեցի ԴՌ (4000) դեկան: Վերոյ հա-  
րիուր և յիսուն հինգ դաստայ ապրեշ(ու)մին վրա դրի, որ եղև հա-  
րիուր յիսուն և եօթն դաստա, թամամ փողի ջամն արաւ երեսուն  
և մին թուման շորս հազար դին:

ԺԲ (12) կազ բարակ դուկուր քաթան առի շապկացույի համար,  
մի կազն յիսուն դիանովն, որ փողի ջամն կանէ վեց հարիուր դին:

Նարինճի շուխիս կարեղու տուի ԸՃ (800) դիան:  
Հաշթրխանու շափառ էկաւ, էրզրմցի դասապ Յարութենի որդի  
պարոն Մարկոսէն մին գիր եկաւ, տվի յիսուն դին:

Մին լազկու շալէ կարած կապա առի էՃ (700) դին:

Պարոն Քաթոսից ԲՃԵ (205) դարսաղ առի յընկերովի, մի դար-  
սաղն մին ճՁ (180) դիանովն, որ իմ երկու բաժին դարսաղի փողի  
ջամն կանէ երեք թուման ԶՌ ինը հարուր (6900) դին:

Մին ճՂ (199) յընկերովի կուզ առի՝ թէ Կիլանու, թէ տեղիս, մի  
կուզն ԲՃՁԵ (285) դիանովն, որ իմ երկու բաժին կուզի փողի ջամն  
կանէ երեք թուման էՌԸՃԺ (7810) դին:

ԲՃՁԲ (282) թէ Կիլանու, թէ տեղիս՝ զարգաւ առի յընկերովի,  
մի զարգաւան ԴՃԽԵ (445) դիանովն:

Մին Շամախու լիտր հինա առի էՃ (700) դիան:

Մին Սպահանու զալամբարի շիթ առի իմ մօրքուրի աղչիք նըռ-  
նայի համար՝ մին Ռ (1000) մին ճԻԵ (125) դին:

ԺԵ (15) իստիլ ու կէս շաքարլամէ առի՝ նօխութի, զերայի,  
փողի ջամն է էՃՄ (750) դիան:

Իսթիլ Քիրմանի զիրա առի ԲՃ (200) դիան:

Մին լիտր քիշմիշ առի շորս հարիւր դին:

Մին լիտր խաշխաշ առի մին ճԽ (140) դին:

Պարոն Քաթոսին մին կեռիք ծախեցի ԺԸ (18) իստիլ, լիտրն

ԸՌ (8000) դիանի վրա, որ ԺԸ (18) իստիլի փողն կանէ ԶՌ (6000)  
դիան:

Երկու թիմսալ ծախեցի ԲՌ (2000) դիան, որ Մօքթօֆ Ժ (10)  
հատ Շահանի հետ յընկերովի առել էլինք:

Բ (2) թրաշի տուի ԽԵ (45) դիան:

Ղեռնդին կապին կարեղու տուի ԲՃ (200) դիան:

ԻՁ (26) շաթմա ութսուն դարսաղբիրո կարմիր շիլայի հետ  
սովտա դրինք, մի շաթման՝ ԲՌԲՃ (2200) դիանովն, որ ԻՁ (26)  
շաթմայի փողի ջամն կանէ Ե (5) թուման էՌԲՃ (7200) դին:

Մին ալաճա ապրեշումի յերես առի ջէճիմ, յորդանի յերես առի՝  
մին հազար ԲՃԻԵ (1225) դիան:

Մին թիմսալ ծախեցի մին ՌԲՃ (120000) դին:

Վերո նիժնայու առած կապուտ ալաճա շարսաֆսուլիցն Զ (6)  
զըլլալաշի կազ ծախեցի, մի կազն մին ճ (1000) դիանովն, որ ջամն  
փողին կանէ վեց հարիուր դին:

Գանճա որ Բ (2) տօպրակ մումլաթ էլի շինել ալու շինայի ապ-  
րեշումին համար, ծախեցի մին տօպրակն ԶՃ (600) դիան:

Պարոն Քաթոսին մին կեռիք ծախեցի, մին լիտր մին իսթիլ  
ԸՌԷՃ (8700) դիան:

Պարոն Քաթոսին մին թիմսալ ծախեցի ԸՃ (800) դիան: Մին  
դօտի շարքազի գրով եմ առել որ ԶՃ (600) դիան էլ բերէ առածս  
ԸՃ (800) դիանով:

Գ (3) շարեկ շամախու լիտր սապոն ծախեցի ԵՃ (500) դին:

Ղեռնդին համար մին սև յափունչի առի վեց հարուր Ե (605)  
դիան:

Ղազարին համար ալաճան կատվի մշտակ առի զոմցի Կութա-  
նէն ութն հարիւր դիան:

Հալաւ լուանալու, թրաշի տուի մին ճ (100) դիան:

Մին «Բիւրաստան աղօթից» մին «Դուռն ողորմութեան»՝ Բ (2)  
դիրք առի ԵՃ (500) դին:

Գ (3) կազ ու կէս քաթան առի բարցի յերեսի համար, տուի մին  
ՃԵ (105) դին:

Բ (2) տօնլուզ կապուտ խաթայի առի, մի տօնլուզն 800 դիա-  
նովն, որո փողի ջամն կանէ մին Ռ վեց հարիւր (1600) դիան:

Մին երկաթէ կրակի մանդալ առի ԵՃ (500) դին:

Քառասուն իստիլ մեղրի մում առի, ջամն՝ մին հազար մին ճԻ  
(1120) դին և եկեղեցուն տուի ողորմութիւն:

Կազ ու կէս դուկոր քաթան առի շապկացու համար, մի կազն Մ  
(50) դիանով, որ փողի ջամն կանէ մին ՂԵ (95) դիան:

Մին շարեկի մին յերեսն սպիտակ բակրաստ առի գրտակնցուլի  
համար ԶԾ (600) դիան:

Մին բուխարու մորթ առի սպիտակ գտակիս համար՝ ԶՃԵ (650)  
դին:

Մօսքօֆու բերած սև խաթայ կապիս մէջի մի խայեաթու կարե-  
լու տօնուղ աստառի տուի մին ՌԴՃԼ (1430) դին:

Մին յեզտու կարած ալաճա արխալուիս առի մին Ռ մին ՃԻԵ  
(1125) դին:

Ե (5) շարեկ լօնտա կապուտ շուխա առի շալվարի համար մին  
ՌՃ (1100) դին:

Շալվարին արխալուղօլն կարելու տուի ԴՃ (400) դին:

Պարոն Քաթգոսին մօհր շինելու տուի մին ղուտուշ ու կէս:

Իմ մի մատանու շինելու երկաթէ տամղան և փայտէ տիպն  
գրելու տվի կէս ղուտուշ:

Մին հօխա ղէյթունի եղ առի մին ըռուպ:

Արծաթէ բիլազուկն շինելու տուի ՄԱ (51) գրամ: Արծաթ[ի]  
գինն մին ղուտուշ Գ (3) ըռուպ:

Երկու սալ աթար առի մին ղուտուշ:

Մին մեծ հայելի առի ֆոանկի մին ղուտուշ:

Մին հօխա սապոն առի մին ըռուպ:

Երկու լիտր գինի առի մին ղուտուշ:

Նըռանային համար մին թօփ Բիթլիսու կապուտ կտաւ առի  
կապացուի համար Գ (3) ըռուպ Ժ (10) ըստակ:

Մին թօփ ճերմակ կատաւ առի Դիարպաքիրու՝ մին ղուտուշ կէս:

ԺԱ (11) լիտր ալիուր առի է (7) ըռուպ:

Շահանն որ մին թօփ ճերմակ խաթայ էր ղրկել Շամախի, ևս  
առի ըստակն տուի Բ (2) ղուտուշ Գ (3) ըռուպ:

Մին կարպետ ծախեցի մին ղուտուշ մի ըռուպ:

Մին լիտր մեղր՝ Գ (3) ըռուպ:

Խրիթ արարի՝ մին ճՃԲ (172) յալտուղ, Թ (9) պաճախլու մա-  
ճար ոսկի, Բ (2) ունկուրուղ ոսկի, Գ (3) թուրալու, որ ջամն կանէ  
մին ճՄԶ (156) ոսկի, փողի ջամն է հինգ հարի[ւր] ղուտուշ:

Դըմակ եղ առի տան համար՝ Ժ (10) հօխա մին ղուտուշ:

Մին ջուխա շուպտ առի ԲՃՄ (250) դիան:

Մօսքօֆ, որ պարոն Յովհաննէսէն է (7) թումաննոց փող էր  
առել, մին ջուխթ թապանչա պարոն Քաթգոսին. ծախեցի, թապան-  
չան ԶՌ (6000), որ ջամն ելաւ է (7) թուման ԶՌ (6000), որ դիամ

Գանճա պարոն Փալօլին տամ: Պարոն Փալօն մեռաւ թիւն ՌՃԿԳ  
(1714) նօլեմբերի Ի (20):

Մին դեղին պղծէ թիֆլիտան առի ԳՃ (300) դիան:

Մին սև գառի մուշտակ առի, որ Գանճա պարոն Քաթգոսին  
ղրկեցի. ԳՌԵՃ (3500) դին:

Ժ (10) լիտր բրինձ առի ԶՃ (600) դին:

Պոտաշէն և իփաքլի Հուսէյին Ղուլիցն առի ԲՃԴ (204) դաս-  
տա ապրեշում, մարթա գլուխ Մ (50) դաստա շորս յըռանկ՝ կարմիր,  
կանաչ, կապուտ և սպիտակ ղվրճուղ, մի դաստան ԹՃ (900) դի-  
նօլն, որ փողի ջամն կանէ ԺԼ թուման ԳՌԶՃ (3600) դին:

Հաճի Մահմատիցն առի ԻԳ (23) դաստա ապրեշում, մի  
դաստան մին Ռ (1000) դինուլն, որ փողի ջամն կանէ ԻԳՌ  
(23000) դիան. կարեցի շուն որ այնպէս մուղլաղ էյինք թողել, որ  
ջամն էլաւ երկու թուման ԲՌ (22000) դին:

Հաշթարխան ինձ համար Ե (5) փութ, Իէ (27) կրվանքա մոմ  
էր առել, մի փութն մին Ռ (1000) դինարօլն, որ փողի ջամն կանէ  
ԵՌԼՃՃԵ (5875):

Վերո Հայրապէտին Հաշթարխանու բերած երկու բուրք ճերմակ  
կատուն ծախեցի մին ՌէՃ (1700):

Մօսքօֆ որ մին հաւան առի ԵՃ դին, ծախեցի մին ՌԲՃ (1200):

Շահանն որ էրզրմ ինձ ամանէթ էր տուել երկու բարձ պուրաս-  
լու, Ղեւոնդն ծախել էր ԴՌ (4000):

Ղեւոնդն առել էր ԻԴ (24) Ղարապաղի աղուէս, փողի ջամն է  
ԲՌԵՃՄ (2250):

Երեք շարեկ լիտր սապոն ծախեցի ԵՃ (500) դին:

Պարոն Քաթոս հինգ մսխալ ջրի յընկերօվի ոսկի ծախեցի, մի  
մսխալն մին 1800 դիանօլն, որ փողի ջամն է ԹՌ (9000) դիան:

Պարոն Քաթոս յընկերօվի ջրի ոսկին ծախեցի ԻԵ (25) մսխալ,  
մի մսխալն մին ՌԼՃՄ (1850) դինօլն, որ փողի ջամն կանէ Դ թու-  
ման ԶՌԲՃՄ (6250) դին:

Վերո շուխաս, որ լաղու կնիկն կարել էր, քանդել տուի կա-  
րել տուի ԲՃ (200) դիան:

Մին դեղին պաշմախ առի երեք հարիուր դին:

Երկու բուրք ճերմակ կատվի բուրք առի, որ իմ Բ (2) բաժին  
փողիս ջամն կանէ մին ՌԶՃԿԵ (1665) դին:

Քառասուն բուրք՝ սնճապի բուրք առի մի բուրքն ԳՌ (3000)  
դինօլն, որ իմ երկու բաժին փողիս ջամն է ութն թուման:

Մահմատի Ալեքսանի Շամախի յօլպօռճի տուի դաս թուման,

իմ անուանն թէմեսուկ առի՝ Ժ (10) շահին մին ղուուուշ, որ իմ Բ (2) բաժնի ջամն է Զ թուման ԶՌԶՃԿԶ (6666) դին:

Ե(5) կարպետ առի, որ իմ Բ (2) բաժնի փողի ջամն է մին ՌԹՃԼԲ (1932) դիան:

Բ (2) Հինդիստանու մեծ կարմիր փեշթամալ առի, մի փեշթամալն մի ՌԳՃ (1300) դինօլն, որ փողի ջամն կան է ԲՌԶՃ (2600) դին:

Պարոն Թաթոս մին մսխալ ծախեցի ջրի օսկի, մին 1870 դին: Այս վերո է (7) ղալամ լրնկերովի օսկուն ծախսն ջամն ԶԶ (76) թուման ԸՌԲՃԼ (8230) դին: Այս վերո 76 (76) թուման ԸՌԲՃԼ (8230) դին փողէն իմ բաժնի յիսուն թմնին լրնկաւ փող քառասուն և մին թուման, որ ղառուշի խրիտն արարի:

է (7) լիտր Ղազպինու թրի երկաթ առի, մի լիտրն էՃԵ (705) դինօլն, Շամախու լիտր է, որ իմ Բ (2) բաժնի փողիս ջամն կան է ԳՌԳՃԼ (3330) դիան:

ԽԵ (45) Շամախու զօքսով ապրանք աղուէս առի, մի աղուէսն ԲՃԻԲ (222) դինու կիսօլն, որ իմ Բ (2) փայ փողիս ջամն է ԶՌԶՃԿԷ (6667) դիան:

Մուսի Պուրաղարին համար որ մին գարպաֆ էյի առել ԵՃ (500) դիան:

Մին ղաջարցու շուխա էյի առել, տվի Մօվսէսին ԵՃ (500) դիան:

Սպահանու եկած Գ (3) հակ խունկին կէս հակ ղարտաֆիլին խարճ քիրա տուի Ուուստամին մին թուման ԵՃԻԵ (525) դին: Շամախի դռան խարճօլ՝ 70525:

Մուսի Պուրաղարէն առի Լ (30) շամախու լիտր տաքտեղ, մին լիտրն մին Ռ մին Ճ (1100) դինօլն, ջամն ըրիք թուման ԳՌ (33000):

Բալվեցի շիլաչի Պետրոսէն առի մին ՃԻԵ (125) կարմիր տօնլուղ, մի տօնլուղն ԶՃ (600) դինօլ, որ փողի ջամն է Եօթ թուման ԵՌ (5000) դին:

Թիւն ՌՃԿԳ (1714) սեպտեմբերի ամսո Ղեւոնդն մին բէո գինու գին էր տուել մատրասեցի տէր Մկրտչին Կ (60) շամախու լիտրի գին ԲՌ մին Ճ (2100) դին:

Թիւն ՌՃԿԳ (1715) յունիսի ԻԶ գնացի կարասն բացի, ծախեցինք ԲՌԲՃ (2200) դին, մին ՌԶՃ (1600) դինն առի, մնաց առնկլու ԶՃ (600) դին:

էրզրեմցի վերո Մանկասարի որդի Մալխասէն թամասուկօլ փող առի քսան երկու թուման, ամսէնն մին թումանին մին հարիուր դիան շահ տամ. երբ որ ուզէ, շահն և մայնն հասապօլն տամ:

Թիւն 1716 դեկտեմբերի Ի (20) որ Շամախի տուել ի ախլըր-խեցի Աստուածատուրի որդի Ուուստամին մին ՃԶԸ (188) յեալտուղ ոսկի, որ տանէ Սպահան էրզրեմցի ղաթրչի Նիկողոսի որդի Շահանին տա, տուել էր Շահանին, մին ՃԶԸ (188) ոսկի, Շահանն ծախել էր, փողի ջամն է 28 թուման 4185 դին:

Պարոն Թաթոսին ԼԳ (33) լիտր նիշատիր ծախեցի մինն ԳՌ (3000) դիանօլն, որ ջամն է Թ (9) թուման ԹՌ (9000) դին:

Բ (2) լիտր և է (7) իստիլ նիշատիրի հող ծախեցի, փողի ջամն է ԵՌԷՃԻԵ (5725) դին:

Շահանին ձին ծախեցի էրզրեմցի քուուշի Մուրատջանին ԵՌԲՃ (5200) դիան:

Շահանին համար շուխա կարելու տուի ԵՃ (500) դիան: Մին գինու տիկ առի ԳՃ (300):

Գ (3) լիտր քացախ ղրկեցի Ղևոնդին տուն ԳՃ (300) դին: Իէ (27) լիտր գինի առի, ղրկեցի Շահանին հետ ՌէՃՄ (1750):

Իստանպօլցի Աւաք իրիցու որդի հօքօմ վասիլիցն առի մին փանտուկ սահաթ ԸՌ (8000) դին:

Մովսէսին համար մին կապացու շալ առի՝ մին ՌԲՃԿ (1260) դին:

Արութենին Մ (50) յեալտուղ ոսկի ծախեցի, ջուղայեցի պարոն Պետրոսի, մի ոսկին մին ՌԳՃԿԵ (1465) դինօլն, որ ջամն եղաւ 73250:

Պարոն Թաթոս Մուլթանի Հասանին ծախեցի մին ՃԻԱ (121) յեալտուղ, մինը՝ մին ՌԳՃՄ դիանօլն, որ ջամն է 17 թուման 5450 դին:

Պարոն Թաթոսին է (7) ունկրուղ ծախեցի, փողի ջամն է ԸՌԵՃ (8500) դին:

Ջուղայեցի Գօռկինի որդի Պետրոսին ծախեցի մին ՃԿ (160) յեալտուղ ոսկի, մին ՌԵՃ (1500) դինօլն, որ ջամն է 24 թուման:

Ջուղայեցի պարոն Գրիգորիցն առի ԺԵ թուման սանաթօլ, ամսէնն մին ՃՄ (150) դիան շահօլն, երբ ուզէ, տամ:

Պարոն Թաթոս ջուղայեցի [Լ] պարոն Գրիգորիցն առի 10 թուման սանաթօլ, էս և վերո սանաթն ամսէն շահն ԲՃ (200) դին ղրեցի, բայց միայն ՃՄ (150) դիան պիտի տամ:

170. ՆՈՔԱՐ ՆԱԶԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԼ ՏԵՐ ԱՎԱԳԻ ՄԻՋԵՎ  
ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ<sup>65</sup>

Զորութիւն գրոյս այս է, որ թիւն ՌՃԿԵ (1716), մարտի Ա (1), Մօսկօվումս, Յիսուսի ծառայ տէր Աւագս, թարվղեցի նազարի որդի Գրգորն նօքար բռնեցի, որ տարէն Բ (2) թուման ԴՌ (4000) դին իւրն դօնլուղ տամ և իւրն նըսպաթ Ա(1) դաստ էլ շոր առնեմ, ներքսջ գրեալ թարեղէն մինչի մին տարի վաղայ, աստուծով ստրվադին, վերոյ Բ (2) թուման ԴՌ (4000) դին դօնլուղն և փուշակն բիուզը տամ: Եթէ մին տարուցն ավելի կայ, որչանք որ մօտըս մնայ, էլ վերոյ դարարօլն իւր դօնլուղն և շորն էլ բիուզը տամ:

Եւ այլ նօքար Գրիգորն էս շարթօվս նօքարութիւն առի, որ միշտ, ամենայն ժամ, իմ հոգևոր կամքն կատարէ, իմ հրամանէն և իմ յօրդնէն դուրս բան չառի, իւր հալօլն կայ, սուտ շտայ մէկն խօսի, և ճշմարտութեամբ շարժի, խմելիք չխմի, թամբաքլ չբաշի, լիզու չտայ, բերանն, ձեռն, ոտն յիստակ պահի և իմ տան սըռն դուրս չտանի, վաղայխաֆ դուրս չելնի, շարութիւն և խայնութիւն չառի, սրտցաւի և հաւատարմութիւն առի, իմ սիրելոյն սիրելի և իմ ատելոյն ատելի լինի, իմ բարեկամն և իմ թշնամին ինձ ծանուցանի: Եթէ մէկն կայ, իւր հախն իւրն արժանի լինի և օրհնութիւնն աստուծոյ առցէ: Եթէ շարութիւն առի, վրէժ և պատիժ ի տեառնէ առցէ, քանզի «Շառայ հաւատարիմ՝ գործ բարի գտանէ»:

Այս է շարթ և ղօվլագիր, որ Յիսուսի ծառայ տէր Աւագս իմ ձեռամբս գրեալ կնքեցի և յիտու նօքար Գրիգորին, որ մեկնութեամբ կայ, ի մերմէ օրհնութիւն ժառանգէ:

Գրեցաւ թիւն Փրկչին ՌէՃԺՁ (1716) մարտի Ը (8) Մօսկօվումս: Յիսուսի ծառայ տէր Աւագիս դարուլ այ, և իմ անուան միրս այ:

Կնիք\*

(1716, քղրպագակ № 4, ր. 2)

\* Կնիքը կրօր կտրված, հանված է: Ըստ երևույթին, սովորութիւն է եղել պայմանաժամը լրանալուց հետո, վավերագիրը արժեքագրելու համար, կնիքը կտրել, դուրս հանել:

171. ՆՈՔԱՐ ԱՏԵՓԱՆԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԼ ՏԵՐ ԱՎԱԳԻ ՄԻՋԵՎ  
ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Զորութիւն գրոյս այս է, որ թիւն 1718, լունվարի ամսոյ 10 (30), Մօսկօվումն, Յիսուսի ծառայ տէր Աւագս Յակոբեան, նօքար բռնեցի Եակոբի որդի Ըստեփանն և էս գիրն տվի իւրն, ջ[ա] հաթն էս, որ յերևանեցի Ապկարի որդի Մարտիրին ընկերագիրն, վաքելագրերով և բարեագրերով, տվի վերոյ Ըստեփանին և Պողոսի որդի Ադամին, որ եթէ տէր կամեսցի, դարարդան, վեռուն դնան, տանին, աստուծով հասացանեն Շամախի, տան մեր վաքելանի Մեսրօպի որդի պարոն Բարսեղին և մօսկովիցի քնազ Գրիգոր Յիվանիչ հայուն ձեռն, և մին բարեագիր յինք առուն նոցանէ, և մեզ հասուցանեն. և իրենք, Մսկուր վաքելանու յօրդնօլն, վեր կենան գոն է Մօսկովս: Եւ էլ որպես որ վերոյ վաքելանիս կամենան, էնպէս առնն, առանց նոցա օրդնին բան չառեն: Վասն էս ղուլուղիս համար նօքար Ըստեփանին իւրն դօնլուղ կտրեցի շոք թուման ըսուսի կօպէք փող, որ կէսն կառի երկու թուման, խօրակն և քրէն ինձ վերայ, և փուշակն իւրենցն այ, ինձ յիւղայ շունեմ:

էս ղօվլամէս Յիսուսի ծառայ տէր Աւագս ձեռամբս գրեցի, տվի նօքար Ըստեփանին: Գիրս Բ (2) գրեցաւ մին մաղբուն. մինն էս այ, որ ձեռք տրի, և մրեցի, տվի Ըստեփանին, և միւսն Ըստեփանին ձեռք դնել տվեցի, արեա Յիսուսի ծառայ տէր Աւագիս, որ Յիսուսի ծառայ տէր Աւագիս դարուլ այ և իմ միրս այ:

Կնիք. Տէր Աւագ

Ես յարդրումցի Շահպաղի որդի Յօհաննէսըս, վերոյ տէր Աւագին իղրարուլն գիրս գրեցի, և վկայ եմ:

Կնիք. Հովհաննէս

Աստուծով թիւն ՌՃԿԷ (1718) մարտի Ե-ումն (5-ումն), Մօսկօվումս, սարխաղիս գրեալս իմ տօնլուղիս ջահգան, իմ աղայ տէր Աւագիցն, երկու թուման կօպէք փող փէշաքի յինք առի, որ հասաւ ինձ Եակօբի որդի նօքար Ստեփանիս, և էլ ինձ տեղ մսկար Յովհաննէսն գրեց և ձեռք գրեց, որ ինձ Ստեփանիս դարուլ այ:

Կնիք. Հովհաննէս

172. ՆՈՔԱՐ ՄԿՐՏՉԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԼ ՏԵՐ ԱՎԱԳԻ  
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Զօրութիւն գրոյս այս է, որ թիւն ՌՃԿէ (1718) ապրիլի մին, Մօսկօվումս Յիսուսի ծառայ տէր Աւագս Դաշտեցի Ապէլի որդի Մկրտիչն նօքար բռնեցի մինչի մին տարին, որ տարէն երկու թուման հինկ հազար չորս հարիւր դին իւրն դօնլուղ տամ և իւրն նսպաթել մին դաստ շոր առեմ, ներքոյ թարեղէն մինչի մին տարի վադայ: Նայև նօքար Մկրտիչն էս շարթօվս նօքարութիւն առի, որ միշտ, ամենայն ժամ իմ հոգևոր կամքն կատարի, իմ հրամանէն և իմ յօրհնէն դուրս բան չառի, իւր հալովն կայ, սուտ շտայ և մեկն խօսի, ճշմարտութեամբ շարժի, խմելիք չխմի, լեզու չտայ, բերանն, ձեռն, ոտն չիստակ պահի, իմ տանըս սրուն և ամենայն կողմանէ յանցանքն դուրս չտանի, վադախլաֆ դուրս չը գնայ, շարութիւն և խայիսութիւն, մատնութիւն չառի, սրտացւի և հաւատարմութիւն առի, տանէս յիբմին, ապրանք և ամանեղէն շկորուցնի և գողանալ չտայ, լէվ տիրութիւն առի, տանէս և դռներէս զգոյշ կենայ, ահըն սրտէն չգձի, իմ սիրելոյն սիրելի և իմ ստեցողին ատելի լինի, իմ բարեկամն և իմ թշնամին ինձ ծանուցանի, շնութիւն, պտունկութիւն, ազահութիւն և վերաքաշութիւն չառի, և ամենայն բանիւ ճշմարտութեամբ կենայ: Եթէ մեկն կենայ, իւր հախն իւրն արժանի լինի, և օրհնութիւն աստծոյ առցէ, եթէ շարութիւն և թշնամութիւն առի, վրէժխնդիր Տէր լիցի և պատիժ ի Տեառնի առցէ, քանզի ասէ գիր՝ «Եթէ ծառայ հաւատարիմ՝ գործ բարի գտանէ»:

Այս է շարթ և ղօվլագիր, որ գրեալ կնքեցի ետու նօքար Մկրտիչին, որ աստուծով, վերայ շարթ և ղօվլօվն կայ և, աստուծով, սարվադին մսկար Բ (2) թուման ԵՌԴՃ (5400) դինըն տամ իւրն, յինք առու, ուր և կամի գնալ, Տէր ընդ իւրեանն, Տէրամբ Յիսուսի մեկնու ճշմարտութեամբ կենայ և ի մերմէ օրհնութիւն ժառանգէ:

Եղև թիվն ՌՃԿէ (1718) ապրիլի մէկին, Մօսկօվումս:

Գիրս երկու գրեցաւ մին մազբուն՝ մեկն էս այ, որ Յիսուսի ծառայ տէր Աւագս ես իմ ձեռամբս գրեցի, մրեցի տվի նօքար Մկրտիչին,

որ ինձ ղաբուլ այ և միւսն նօքար Մկրտիչն իւր ձեռնօվն գրեց արեա տէր Աւագիս, որ երկու կողմանց էլ մեզ ղաբուլ այ, մեր ձեռնագիրն և մեր մերն այ:

Այս վերոյգրեալն Յիսուսի ծառայ Աւագիս ձեռնագիրն այ, ինձ ղաբուլ այ և իմ մերն այ:

(1716, քրպապանակ № 4, ք. 6)

173. ՏԵՐ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿԸ ՏՐՎԱԾ  
ՔԱՆԱՔԵՌՅԻ ԹՈՒՄԱՆԻՆՆԵՐ

Ես՝ յերեվանցի Յակոբջանի որդի տէր Աւագս, Մօսկօվու-  
մբս, դեպի Շամախի եօլթօռչի վեռի քանաքեռքցի Գալուստի որդի  
տէր Թումանիցն տասն և մին թուման զըզըլբաշի թաղայ սքայ ա-  
քասի, որ կէսն լինի հինկ թուման հինկ հազար գին: Աստուծօվ, սա-  
նաղրս գնայ Շամախի, նշանց տալէն չեա ԽԱ(41) օր վաղայ, սար-  
վաղին էլ մեր երեվանցի Մեսրօպի որդի պարոն Բարսեղն վերոյ  
մասկուր ԺԱ. (11) թումանըն տայ վերոյ տէր Թումանին կամ իւր  
յօրդնուն տայ, ուզր չբերի: Այս նայ թէ պարոն Բարսեղն Շամախի  
հազար չլինի կամ թէ ուզր բերի, որ սանաղիս ձեռնն դնի՝ թէ տվի ոչ,  
Շամախու մինչի Մօսկօվս ինչ դարարում որ բեշուքամ հօլթօռչի  
լինի, էկեկ էն դարարօվն ես տէր Աւագս, ըռուստի կապէք փող տամ  
տէր Թումանին կամ իւր յօրդնի վաքըլին տամ, ուզր չբերեմ:

Գրեցաւ թիւն ՌՃԿԵ (1716) փետրովարի ԻԸ-ումն (քսանութու-  
մըն) Մօսկօվումս:

Այս վերոյ գրեալն Յիսուսի ծառայ տէր Աւագիս ձեռաց գիրն  
այ, ինձ դաբուլ այ և իմ մերն այ:

(Կնիքը կտրված է):

Ես մղտսի Դիլանի որդի Վարաքըս տէր Յվաքի յիրզարօվն  
վկայ եմ:

Թվին ՌՃԿԵ (1716) ունիս ամսոյ ԻԴ-ումն (քսանչորսումն) այս  
թամասուկիս տասն մեկ թուման, որ տէր Աւաքն բարաթ էր արեկ  
պարոն Բարսեղի վրայ, թամամ այս թամասուկիս ըստակն պարոն  
Բարսեղիցն եկաւ ինձ՝ տէր Թումանիս, հասաւ:

(1724, քղրապահակ № 3, ք. 186)

174. ՏԵՐ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿԸ ՏՐՎԱԾ ՕՀԱՆՁԱՆԻՆ

Ես՝ յերեանցի Յակոբջանի որդի տէր Աւագս և իմ որդի Շահ-  
քիմանբս, Մօսկօվումս, յինք առինք և պարտ եմք շուղայցեցի Մկըր-  
տումի որդի Յօհանջանին երկու հարիւր վաքսուն թուման ըռուսի  
կօպէք, որ կէսն լինի մին հարիւր երեսուն թուման: Ներքոյ գրեալ  
թարեղէն ինչ որ յանց կենայ, ամեն մի թումանին մի յամսէն ութ-  
սուն գին շահ տամք: Աստուծօվ, երբ որ ուզի, Յիսուսի ծառայ տէր  
Աւագըս և իմ որդի Շահքիմանբս կամ մեր յօրդնէն, վերոյ մաք-  
յաղն, իւր անցեալ մուրաթօվն տամք, վերոյ Յօհանջանին կամ իւր  
յօրդնուն տամք, ուզր չբերեմք:

Գրեցաւ թիւն Փրկչին ՌէՃԺՁ (1716) մայիսի Դումի (չորսումն)  
և թիւն փոքր ՃՕԱ (101) ազամ ԺԵ-ումն (տասն հինգումն), Մօսկօ-  
վումս:

Այս վերոյ գրեալն իմ՝ տէր Աւագիս ձեռացայգիրս այ, մեկ դա-  
բուլ այ և իմ մերս այ:

Կնիք

Ես՝ Թասալի որդի Ավետս, վերոյ տէր Աւաքին և իւր որդին Շէր-  
մանին եղրարօվն վկայ եմք:

Կնիք

Ես՝ Թասալի որդի Պողոսըս, վերոյ տէր Ավաքին և ուր որդի  
Շարիմանին եղրարօվն վկայ եմք:

Կնիք

Ես՝ Յոանդուլի որդի Իգնայտոսըս, վերոյ տէր Աւաքին և իւր  
որդի Շարիմանին եղրարօվն վկայ եմք:

Կնիք

Ես՝ Սաֆարի որդի Մարգարս, վերոյ տէր Աւագին և իւր որդի  
Շէրիմանին եղրարօվն վկայ եմք:

Կնիք

(1724, քղրապահակ № 3, ք. 179)

Զօրութիւն գրոյս այս է, որ թիվն ՌէճժԶ (1716) մայիսի ժեէն (15) թարեղ, Մօսկօվումս, որ ես յերեանցի տէր Աւագս մին ֆարգ սանազով թալապ գուզի Գէշենց Աղազարի որդի Ավետէն, որ ջամն մին ՃՁէ (187) թուման ԸՃ00 (800) դիան կօպէք փող, որ էս ջահ-զան Ապկարի որդի Մարտիրոսի տված ընկերագիրն, դրեց իմ կըշտին և ինձ վաքիլ և ախդիար արար վաքիլագրով, որ վերոյ Մարտիրոսն գոյ Մօսկօվս կամ ինչ տեղ որ լինի, ես ախդեար ունեմ, որ վերոյ Ավետին յօրդնօվն մասկուր Մարտիրոսին թամամ խսէպն անեմ և ընկերագրին միջին գրած սարմայէն, աստուծոյ տված շահովն, յինք առում, ընկերագիրն ձեռք դնեմ տամ իւրն, որչանք որ շահ մայեա շինեմ, յինք առեմ վերոյ իմ մին ֆարգ սանազով, թալապն վերում և մնացեալն հասուցանեմ մասկուր Ավետին կամ իւր յօրդնուն բիուզուր:

Այս վերոյ գիրս Յիսուսի ծառայ տէր Աւագիս զաբուլ, էս իմ ձեռացայ գիրս այ և իմ անվան մերս այ:

(1724, քղրապանակ № 2, p. 51)

Ես՝ յուշկանցի Ապկարի որդի Մարտիրոսըս, Շամախի յինք առի և պարտ եմ Բանդուրի որդի Ղաւէլուն քսան թուման, որ կէսն կանէ տասն թուման: Ներքոյ գրեալ թարեղէն ինչ որ հանց կենայ, ամէն մին թումանին ամէն մին ամսէն երկու հարիւր դին շախ տամ և ինչ վախտ որ ուղի վերոյ մապլազն՝ շախ և մահայ ըռէշայ ապասի, տամ, ուղր շքերեմ:

Գրեցաւ թիվն ՌճԿԶ (1717) շքաթ Իումն (քսանումն):

էս վերոյ գրեալն ինձ՝ Մարտիրոսիս, զաբուլ այ և իմ մերն այ:  
Կնիք

Աղամալի որդի Մ[ա]նուէլս Մարտիրոսի իղրարովս վկայ եմ:  
Կնիք

Տատօյի որդի Թաղիս վկայ եմ:  
Կնիք

Ես՝ թարվիզեցի Շահնայազարի որդի Դօլուխանս, վկայ եմ:  
Կնիք

Ես՝ Աղաբաբի որդի Աղազարըս, Մարտիրոսի եղրարովն գրեցի վկա:

Կնիք

Սանաղիս մապլզն որ իսայ ժԹ (19) ամիս էր հանց կացել, ամէն մին թումանին ամէն մին ամսէն ԲՃ (200) դին մուզաթն կանէ, ջամն այ՝ Դ (4) թուման ԵՌՁՃ (5600), ջամն այ ԻԴ (24) թուման ԵՌՁՃ (5600), ինձ՝ Բանդարի որդի Ղվէլուն հասաւ սամուրի փողէն, որ ծախսելի, Ե (5) թուման էլ հախսայ վերի, որ վերոյ Գ (3) դաֆայ փողին, ջամն այ ԻԹ (29) թուման, մութաթէն ԸՌ (8000) դին խասել էր, վեր առի, վերջ:

(Քղրապանակ G № 2, p. 60ա)

177. ՏԵՐ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿԸ ՏՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՏԵՐ ՍԱՐԳՍԻՆ

Զօրութիւն գրոյս այս է, որ թիվն 1718 մարդի ԻՕ (20), ավելեաց Ե (5) Մօսկօվումս Յիսուսի ծառայ տէր Աւագս Արիստակէսի որդի պարոն Սարգսէն դօզուշի փողի վեռել, որ ջամն էր ՃԺԹ (110) թուման կօպէք փող: Եւ էս ջահդան պարոն Ռուստակէսի ձեռօվն և նման գրած պուտրիկատ տվել իւրն ՃԺԹ (110) ֆունթ ոսկօվ և արծաթօվ հաշի այ, որ տանէր պարոն Սարգիսն Հաշթարիսան, ծախէր կամ բազար անէր, չետ կեր Մօսկօվս, տեղս թէ նաղդ լինէր, թէ տպրանք ծախէր, էլ նաղդէր, վերոյ իւր թալապն վեռէր, ավել պակասն միմիանց տինք և առնինք: Նայլե թիվն 1719-ումն Հաշթարիսանայ եկել էր Մօսկօվ, վախտն բերած ապրանքն, որ հաշին հետ բազար էր արած, Մօսկօվումս ծախել էր, իւր թալապն վեռել: Եւ թիւն 1720 ապրիլի ութնին վերոյ Սարգիսն Յիսուսի ծառայ տէր Աւագիս հետ խսէպ տեսինք, վերոյ մսկար ապրանքի ծախսի ավել պակասն մինմինոյ չետ տվինք, խօսէպն կտրեցինք, զաթչելադայ ելանք, էլ խսէպ և պալպ շմնաց, էս ջահդան եթէ պարոն Առքստակէսն կամ թէ պարոն Սարգիսն հետ խօսէ կամ դաւէ առի, էս օհդէն գոմ և ջուղաբն տամ:

էս վերոյգրեալս Յիսուսի ծառայ տէր Աւագս զաբուլ այ, իմ ձեռագիրն և իմ մերն այ:

(Թղթապանակ G N 2, p. 60ա)

178. ՏԵՐ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿԸ ՏՐՎԱԾ ԽԵՉՈՒՄԻ  
ՈՐԴԻ ԱԼԱՀՎԵՐԴՈՒՆ

Ես՝ յերևանցի Յակոբջանի որդի տէր Աւագս, Մօսկօվումս չինք առի և պարտ եմ Խեչումի որդի Ալավերդուն մին հարիւր նրսուն թուման մին հազար դիան ըսուսի կօպէք փող, որ կէսն լինի նրսուն և հինկ թուման հինկ հարիւր դիան: Ներքոյ գրեալ թարեղէն մինչի ԺՅԸն (10) ամիս վատա, որ աստուծօվ, սարվադին վերոյ մաբլազն տամ մսկար Ալավերդին կամ իր յօրդնի Վաքիլին բիուղուր: Եթէ սարվադին յանց կացնեմ՝ մին թումանին ամսէնն մին հարիւր յիսուն դիանօվն շահ տամ: Երբ որ ուղի վերոյ մաբլազն, իւր անցեալ մուղաթօվն, աստուծօվ տամ, ուղր չբերեմ:

Գրեցաւ ՌՃԿէ (1718) ապրիլի ԻՕ (20), շամս ԼՕ-էս (30)

Կնիք

Վերոյ գրեալս Յիսուսի ծառայ, ինձ՝ տէր Աւագիս, զաբուլ այ: էս իմ ձեռացայգիրս այ և էս իմ անուան մերս այ: Եղև Մօսկօվումս:

Ես՝ Շահրիմանս, վերոյ իմ հայր տէր: Աւագին դամին, աստուծօվ, որ վադին հազր լինենք, բիուղուր տանք, ձեռք գրեցինք ի նայ:

Կնիք

Ես՝ Սաֆարըս դի Վասիլ, տէր Ավաքին եղրարօվն վկայ ամ:

Կնիք

Ես՝ Աղայբէկի որդի Ասկանտըրս, տէր Աւաքին եղրարօվն վկայ եմ:

Կնիք

Ես՝ Թասալէ, որդի Աւէտիս, վերոյ տէր Աւաքին եղրարօվն վկայ եմ:

Կնիք

Ես՝ Առաքելի որդի մահտեսի Եավրիս, վերոյ տէր Աւագին իղրարին վկայ եմ:

Կնիք

Ես՝ Հայրապետի որդի Յարութիւնս, վերոյ տէր Աւաքին եղրարօվն վկայ եմ:

Կնիք

(Թղթապանակ G N 2, p. 59ա)

Ես՝ Յակոբջանի որդի տէր Աւագս, յինք առի Մօսկօվումս և պարտ եմ Մկրտումի որդի Յօվանջանին ԽՕ (40) թուման կօպէք փող, որ կէսն լինի ԻՕ (20) թուման Ա (մին) ամսէն ամէն մի թումանին ԾՕ (50) դին շահօվ լինի: Ներքո գրեալ թարեղէն մինչի Գ (3) տարի վաղայ: Յիսուսի ծառայ տէր Աւագս կամ իմ որդի Շահրիմանն, կամ իմ [Յօվանջանին կամ ԻԸ] յօրդնի վաքիլն վերոյ մաքլաղ Խ (40) թուման կօպէք փողն, իւրեանց էլ մուղաթօվն, սարվաղին բիւղրում տամ վերոյ Յօվանջանին կամ իւր որդի Վաքիլն տամ, ուղր շքերեմ:

Գրեցաւ թվին փրչին ՌՃԿԹ (1720) մայիսի ԺԵ (15), աղամ ԻԶ (26):

Այս վերո գրեալն Յիսուսի ծառայ տէր Աւագիս ձեռագիրն ալ, ինձ դաբուլ ալ և իմ՞ մերն ալ:

Ես՝ Սաֆարս դի Վասիլ, տէր Աւաքին եղրարօվն վրկայ ամ:

Կնիք

Ազարէ որդի Սիմոնըս տէր Աւաքին եղրարօվն վրկայ ամ:

Կնիք

Ես՝ Թասալի որդի Աւէտըս, վերոյ տէր Աւաքին եղրարօվն վրկայ եմ:

(Թղրապանակ G № 2, ր. 58ա)

1. Բերգար — հայկական փաստաթղթերում հայտնի է Պոռեկար անունով: Ռուսական վավերագրերում նրա անունը հիշվում է մի քանի տարբերակներով՝ Բուլդար, Բորեզարդ, Բուրգար, Բորիզարդով, Բուլդաղ և Բերեզարդ: Յրանսիացի ապա, ծառայել է Բարայել Օրու մոտ և մտել նրա շքախմբի մեջ՝ 1707 թվականին նրա գլխավորած պարսկական զենպանության ժամանակ: Պարսկաստանից վերադառնալիս, Օրին Պոռեկարին թողեց Շամախիում որպես իր պաշտոնական ներկայացուցիչը (տե՛ս Գ. Ա. Յօզ, Сношения Петра Великого с армянским народом, էջ 56, 57, 59 և այլն): Ահա այդ ժամանակ էլ Եղիան Շամախիում հանդիպել է Պոռեկարին: Նա այդ մասին իր «Անձկութեան» մեջ հետևյալն է գրում. «Վերոյ յիշատակեալ Հօնօռէ Պօռկարն, էր ազգաւ ֆռանցիզ, գաւառէն Մառշիլիտ: Մայ ընդ սիսիանցի Բարայել Օռի զենպանին եկել էր Ֆանկիստանու և ծառայէր նմայ ի գործս տնօրէնութեան: Մինչ վերոյ զենպանն դարձաւ ի Պարսից և գնաց յերկիրն Ռուստաց, զայլ թողել էր ի Շամախի վասն իրիք ինչ գործոց: Առաջի անգամն, որ ևս գնացի Շամախի, տեսի զնայ անդ և ծանեայ, թէպէտ ևս զեռես տղայ գորով ամաչէցի ի նմանէ, և ոչ համարէլի զանձն իմ արծանի փարիլ զնովաւ, բայց տեսութեան նորա ուրախանայի» (տե՛ս «Անձկութիւն», թ. 29ա):

Մինաս վարդապետի Գեորգի խանին ներկայացրած դիմումից երևում է, որ Պոռեկարը հայց է հարուցել և պահանջել, որ նա վճարի Շամախիում իր պաշտօնավարած տարիների վարձը: Այդ հայցի հիման վրա վրացական իշխանութիւնները ձեռքբերակալի են Մինաս վարդապետին, պահել որոշ ժամանակ բանտում և հետո բաց թողել: Հետագայում Պոռեկարը նշանակվել է Արևելյան հնդկական ընկերության ներկայացուցիչը Շամախիում: 1721 թվականին նա փոխադրվել է Թավրիզ, իբրև Արևելյան հնդկական ընկերության ներկայացուցիչ: 1721 թվականից Եղիան մտել է Պոռեկարի մոտ ծառայության և մեծ նվիրվածությամբ աշխատել: Թավրիզի ընկերության ողջ գործերը, ինչպես երևում է, ընկած է եղել Եղիայի վրա. «Տանն բանն զամենեսեան առն և տորն, դիրն և մատեանն, համարն տան ծախիցն, նաև զդրոնս մեծամեծացն» («Անձկութիւն», թ. 30բ): Պոռեկարը սակայն սպերբարոս է դառնվել. նա ոչ միայն չի գնահատել նրա նվիրվածությունը, այլև աշխատել է նվաստացնել, վարկաբեկել նրան: «Ոչ տեսի ի նմանէ բարութիւն, այլ շարութիւն,— բողբոս է Եղիան,— ոչ տեսի քաղցրութիւն, այլ՝ դառնութիւն, ոչ տեսի շահ՝ այլ վնաս, ոչ տեսի սէր՝ ատելութիւն» («Անձկութիւն», թ. 38բ): Պոռեկարի Եղիային արած ամենամեծ վատութիւնը եղել է այն, որ նա որոշ հայ վաճառականներից զրամ է վերցրել և խորամանկորեն ստացականներ գրել տվել Եղիային: Տարիներ հետո, երբ Եղիան ռուսական բանտից ազատվել և նյութական շատ խեղճ վիճակում եկել է Կարին, Պոռեկարն արդեն մահացել էր, պարտատերերը Եղիայի օձիքն են բռնել և շատ նեղութիւններ տվել նրան:

2. Խոսքը վերաբերում է Շվեդիայի թագավոր Կարլոս XII-ին (1682—1718), որը 1709 թվականին Պոլտավայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խայտա-

ուակ պարտութիւն կրեց ռուսական զորքերից և փախաւ Քուրքիա (տե՛ս Շ. Մ. Соловьев, История России, т. VIII):

3. XVIII դարի առաջին քառորդին թուրքական կառավարութիւնը հալածանք է սկսած եղել կաթոլիկների դեմ, ամենուրեք հետապնդել նրանց, եղել են մի շարք ձերբակալութիւններ: Կաթոլիկների դեմ հալածանքներն ուժեղացան հատկապես 1721—1722 թվականներին: Նրանց առաջնորդներից շատերը ձերբակալուեցին, բնակիչ հաջողից մեծ փրկանքի գնով ազատվել (տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն ունեցող հալածանքը և նրանց հանդիպելու ու գործակցելու ռուս գործակալութիւնը նկարագրված է նաև Կարնեցու մոտ. «Անտի (այսինքն՝ Համիթից),—գրում է նա,—եկել է Կոստանդնուպոլիս: Գոյին աստ ի քաղաքին բաղում Պատրիս, բայց ոչ կարէջի գնալ առ նոսա վասն մեծ երկիւղէն, որ մնացել էր վերոյ հալածանէն, որ ի սասանեալ դոգայր բնակիչք քաղաքին, քանզի շատ ժամանակ չէր անցել ի մեծ հալածանէն: Այս այն հալածումն էր, որ Քոմարճոնց տէր Կոմիտաս նահատակեցին, վաթսուն գլխատրացն շուրջ մատենցին ի Քարխանոց անուանեալ բանտն ընդ գերեալան: Ես այս ամենայն յերկիւղն ոչ ինչ համարէի վասն սիրոյն նոցա, միայն եթև կամէիք տեսանել զնոսա... Այս օրինակաւ անցորդի գամեանցն ատար, մինչև որ մերձեցաւ լելն մեր ի քաղաքէն: Յուսեցաւ սիրտ իմ յո՛ւմ՝ թէ որպէս տոսնց տեսանելույ զնոսա գնամ աստի: Խորհեցայ, հնար գտի. այր ոմն ախլոխեցի մշկածախ, որոյ Ղուկաս օղի առածնիւր, որ իւր անուշաճոտ իւղն ծախելով շրջագայիւր ամենայն քաղաքն, շատ աղաչեցի նմա, որ ինձ տանէր առ պատրիսն, բայց ոչ առաւ յանձն՝ վասն մեծին վտանգին: Ասի՝ «Եթէ յերկնչես, միայն թէ հետու տեղաց ցոյց տար ինձ»: Ասաց. «Ամենայն փողոցաց զլուխն կայնեցուցած է լրտես»: Յետ բազում թախանձանացս յանձն առաւ, միայն թէ հետու տեղաց կողմն և կամամքն ցոյց տալ՝ զպաղտ ի Ղաղարէն: Նշանաբանիւր եցոց: Գնացի, աստուծով գտի: Մինչ մտի ի սրահն նոցա, առժամայն պատահեցաւ վերտ Լեհեցի պարոն Օլանէան: Ո՛հ թէ որքան ուրախացայ: Զկնի համբուրելույ զաչս նորա և ողջագոյրելույ և փարելույ զմիմեամբք, սասց. «Օվ որդեակ, Աստուած առաքեաց զքեզ առ չիս, քանզի ա՛հայ երեք ամիս է, որ եկալ եմ ի Լեհաստանու, աստ ոչ որ տեսի, բացի քե՛ն՝ վասն յերկիւղացն և մեծամեծ վտանգին ոչ որ իշխէ ի մերոցն զալ առ մեզ, արդ՝ դու ո՛րպէս իշխեցիր զալ առ չիս»: Զարմանալով ճանաչելով առաւել սէրն իմ զբզուր գիս և ասէր. «Մնացել էյի անձարակ, քանզի կամէիք գնալ Երևան, ոչ որ էր, որ առաջնորդէր ինձ»: Այսբան թագատրաց դեսպանք և մեծամեծ վաճառակաւք կան և ունին թարգմանս և պաշտոնեալս, բայց ոչ որ ճանապարհորդէր զնա ընդ բարաւանի միտջ: Աւետիս ետու նմայ, թէ Ղաղարն ընդ իս է, այսու մօտ ատարս յիւանեմք: Ուրախացաւ յոյժ:

Մինչ դարձաւ և պատմեցի Ղաղարին, թէ որքան տղեղ խոսոս ասելով անարդեց գիս և թէ որքան յերկեաւ, ոչ կարեմ պատմել: Զկնի այս ամենից, ինչեիցէ, հանի զպատրիսն անտի իւր քարօքն և տարեալ հասուցի զնալ մինչի Ղաաղ կոչեցնալ խոշակն ի նաւահանգստի: Այնուհետև եկաւ Ղաղարն և մտաք ի նաւ, Սև ծովի վրայօքն եկաք ի Քերասուն, անտի նաւակաւ միտջ գնացաք յելաք ի Ալազի կոչեցնալ նաւահանգիստն, անտի ցամաքաւ յելաք ի հանքն Ղարաթորքու, առաք արժամ, անտի եկաք ի Գումիշխանայ, անտի՛ էրզրում և յանգուցաք զնա ի տան իմուսն («Անձկութիւն», թ. 13ա—բ):

4. Վախրսնի VI (1675—1735)—սկզբում Քարթլիի խան, իսկ հետո՝ թագաւոր: Հայտնի է նաև Հասան Ղուլի խան անունով: Անդրկովկասի ազատագրական շարժումների աշխի բնկնող ղեկավարներից մեկն էր: Նա հռանդուն ջանքեր է թա-

վել Ռուսաստանի օգնութեամբ ազատագրելու հայրենի երկիրը պարսկա-թուրքական տիրապետութիւնից, բայց հաջողութիւն չի ունեցել: 1724 թվականին Անդրբլինկասում ստեղծված քաղաքական ծանր իրադրութեան մեջ, հարկադրված է եղել իր ընտանիքով և շքախմբով տեղափոխվել Մոսկվա: Վախրսնի VI-ի հետ է կապված վրացական մշակութի մի շարք ձեռնարկումներ՝ առաջին տպարանի հիմնումը Վրաստանում (1709 թվականին), Վրաստանի ամբողջական պատմութեան («Քարթլիս Յիստորիքա»-ի) և վրացական օրենսդրքի կազմումը և այլն: Վախրսնի թագաւորը սերտ փոխհարաբերութիւնների մեջ է գտնվել Ղարաբաղի հայ մելիքների և Սյունիքում գործող հայ ազատագրական շրջանների, մասնավորապես՝ Գավիթ Բեկի հետ:

5. Եղիալի մոր անունը եղել է Գոհար: Բացի երկու հարազատ տղաներից, նա ունեցել է նաև Ալմաստ անունով մի որդեգիր աղջիկ, որին ամուսնացրել են համշեցի Նորիկի որդի Սարգսի հետ, նյութապես օգնել են նրան, տուն ու տեղ ստեղծել Կարինում: Գոհարը Ալմաստին սիրել է իր հարազատ աղջկա նման: Մերովան հասակում տեղափոխվել է նրա մոտ և նրա տանն էլ մահացել է:

6. Մելիքն Բահան—էրզրումցի, որը կաթոլիկութիւն է ընդունել և աշխատանքի հրավիրվել Նոր-Ջուղայի Եհեթիմանյանների եկեղեցում: 1716 և 1717 թվականներին Եղիալին գրած նամակներում նա արտակարգ գովեստով է խոսում Եհեթիմանյանների մասին, որպես իրեն հովանավորողների և սրտացավ կաթոլիկների, իսկ հետո՝ 1718 թվականի սեպտեմբերի 17-ին գրած մի նամակում գանգատվում է նրանց ժլատութեան համար. «Շարիմանեցիք մին փայտէ շուն կուգեն,—գրում է նա,—որ իւրեանց գումն հաչէ և հաց շուտէ» (Եհեթիմանյանների մասին տե՛ս Տեր-Հովհաննիսյան, Պատմութիւն Նոր Ջուղայու, հ. 1):

7. Հայ դրամագիտութեան մեջ ևս հայտնի է, որ Երևանում գոյութիւն է ունեցել դրամահատման ստու. վաճառականները իրենց ձուլ արծաթը կամ ոսկին տվել են գրած կտրելու համար: Երևանում կտրվել է նաև պղնձե դրամ: Երևանում կտրված դրամներից մեզ են հասել Քահմազ I-ի ժամանակից սկսած (1524—1576): Այնուհետև շարունակվել է Երևանում դրամահատութիւնը մինչև շահ Քահմազի ժամանակ (1722—1731): (Տե՛ս Կ. Հ. Քասմանջյանի, Հայկական ընդհանուր դրամագիտութիւն, Վեներիկ, 1936, էջ 68—69):

8. Վերին աստիճանի ուշագրավ փաստ է մյուս փաստաթղթերում եղած այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են ձկան արտահանութեանը Երևանից: Այդ ձուկը, անշուշտ, «Իշխան» էր և բերվում էր Սևանա լճից: Բոլոր ղեպերում, ձկան արտահանութեան մասին այս տեղեկութիւնները կարեւոր են մեր մայրաքաղաքի պատմութեան համար: Ուշագրավ է այն, թե ի՛նչ միջոցներով էին կարողանում ձուկը պահել երկար ժամանակ:

9. Թաղեսու Գուլգինսկի՝ Հուլա մականունով—հեղինակ պատմական մի շարք աշխատութիւնների, որոնք վերաբերում են զլխավորապես XVIII դարի առաջին քառորդին Պարսկաստանում տեղի ունեցող իրադարձութիւններին: Արժեքավոր է հատկապես նրա «The History of the Revolution of the Persia» աշխատութիւնը: Եղել է ճիզվիտ պատրի, որի հետ Եղիա Կարնեցին ծանոթացել է Գանձակում այն ժամանակ, երբ եզվիտները վանք և միաբանութիւն ունեին այնտեղ: Հետագայում Պապի կարգադրութեամբ փակվել է ճիզվիտների վանքը և Թաղեսու տեղափոխվել է Երևան: Եղիան մտերմական կապերի մեջ է գտնվել Թաղեսուի հետ և նյութապես օգնել նրան: Պատրի Թաղեսուը, սակայն, երախտամոռ է գտնվել Եղիալի նկատմամբ: Ռուսական բանտից ազատվելուց հետո, երբ նա Ահաստանում նամակով դիմել է նրան և խնդրել նյութապես օգնել իրեն որպես հին բարեկամի, նա

պատասխանել է. «Ոչ, դու կուզես առ զիս գալ և ոչ ես՝ առ քեզ. քանի մի ոսկի որ ունէի ծախսեցի ի տպագրութեան պատմագրին, զոր լինիցի վասն անձկութեանց չեղորին Պարսից, վասն աշնորիկ, ոչ կարեմ օգնել քեզ»: Միաժամանակ պատրի Թաղեոս Կարնեցոց պահանջել է նրա կենսագրութիւնը, որ զետեղի իր «Պատմութեան» մեջ («Անձկութիւն», թ. 42բ):

10. Մովսէս—Եղիաշի եղբայրը, որը Եղիաշի գործակիցն էր առևտրի ասպարեզում: Հրապարակվող վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում Եղիաշի նրան ուղղված նամակները: Նրա, ինչպես և մյուս վաճառականների հետ վարած նամակագրութիւնից երևում է, որ հայ, ինչպես և օտարազգի առևտրականների վիճակը շատ ծանր է եղել շահ Հյուսիսիսի և նրա որդի շահ Թահմազի գահակալութեան շրջանում: Գրեթե ամեն մի խանութիւն իրավունք էր համարում առևտրականից մաքս պահանջել. վաճառականը պարտական մի սահմանից մինչև մյուսը հասնելը, հարկադրված է եղել մի քանի տեղ հարկ վճարել: Մաքսային իշխանութիւնների կամայականութիւնը պատկերացնելու տեսակետից ուշագրավ է մի տեղեկութիւն, որը հազորում է Կարնեցին իր «Անձկութեան» մեջ: Բերում ենք այն ստորև. «Մինչ հասաք այն կոյս ծովուն և լելաք ի դուրս ի Նիսազովայ կոչեցեալ տեղն, զինի ուրախութեան մերոյ, զարձալ տրտմալի լուր լաք՝ թէ ոչ որ կարէ տանել Շամասի իր ինչ, մինչև որ խանի մարդն գայ և կնքէ դամենայն զուղակ վաճառականաց, զի յորժամ որ գնայ ի քաղաք, գայ խանի տնօրէնն և տեսնու, զի զոր ինչ գտանի գիրս արժանի թագաւորին և կամ վասն խանին, առնու զնոսայ, և ապաջ թէ մնացեալն տան վաճառականաց: Այս սահմանս յառաջմանէ ոչ գորը, նորագոյն է եղեալ զօրէնս գայս» (թ. 50բ):

11. Հարութիւն—Եղիաշի որոշ նամակներում հանդիպում է Արութիւն ձևով, Ղալամբարենց Սահակի որդի, Կարնիի հայ առևտրականներից, որը գործակցել է Եղիաշի հետ:

12. Ղազար Մարգարեան—Եղիա Կարնեցու հորեղբոր որդին, որ 1705 թվականին՝ Եղիաշի հոր մահանալուց հետո, նշանակվել է Եղիաշի խնամատարը: Նա է Եղիաշին Կարնեում ուսման տվել եզվիտ Պետրոս Ռիքարդի մոտ, որը և կաթողիկէ է դարձրել նրան: Ղազարն աչքի ընկնող առևտրական է եղել Մերձավոր Արևելքում:

13. Շահին (Եղիաշի նամակներում հիշվում է Շահան ձևով)—Ղաթրի Նիկոզայոսի որդին, հայ խոշոր վաճառական, որը գործարքի մեջ է գտնվել Արևելյան հնդկական ընկերութեան հետ: Եղիաշի մոտիկ անձնավորութիւններից մեկն էր և նամակագրութիւն ուներ նրա հետ:

14. Անանիա Չելարի—Նոր-Ջուղայի աչքի ընկնող առևտրականներից, խոշու Ալահվերդու որդին, կապված է եղել Արևելյան հնդկական ընկերութեան հետ:

15. Ղևոնդ—Եղիաշի կրտսեր եղբայրը, ծնվել է 1701 թվականին: Եղիան իր բժշկարաններից մեկում թողած հիշատակագրութեան մեջ գրում է. «Իմ ծննդեան՝ Եղիաշիս թիւն Փրկչին 1689... Յետ երկու տարէն Ղևոնդն լքնծայեցաւ Խօտաչուր գիւղն Կրման, սուան Գասպարանց, որ էր մեր պապի տունն, բարեկենդանի առաջին ուրբաթուն լուս ի շարաթ»: Հետագայում Ղևոնդը դառնում է աչքի ընկնող առևտրական և գործակցում իր եղբոր՝ Եղիաշի հետ:

16. Աննարզու Մանիբե—Եզվիտ հոգևորական Կարնեում, որի հետ Եղիան, իրր զեռ չէր հիասթափվել կաթողիկէներից, բացառիկ սիրով էր կապված: Գանձակից վերադառնալուց հետո, գրում է նա, Կարնեում «Գարձեալ գտի անդ վերոյ պարոն Պետրոսն... Յետ փոքր ինչ աւուրց եկաւ սմա ընկեր պարոն Առնարզոսն, որ մակ Մունիեր կոչիւր: Թէ որքան ուրախացայ... ես ոչ կարեմ պատմել» («Անձկութիւն», թ. 11ա):

17. Հակոբ Վարդապետ—Կարնիի հայ կաթողիկէների հոգևոր առաջնորդ, որը Մրեմտյան Հայաստանի հայ կաթողիկէների շրջանում գործուն աշխատանք է տարել: Եւրոպայից Պարսկաստանի կաթողիկէ հոգևորականների գրութիւնները մեծ մասամբ նրա միջոցով է ուղարկվել, յուրատեսակ զիվանագիտական կապավոր է եղել:

18. Պետրոս՝ Նազարի որդին—չուղայեցի հայ առևտրական, որը գործել է Ռաշտի և Կասկարի շրջաններում: Առևտրական կապի մեջ է գտնվել Եղիա Կարնեցու հետ:

19. Միրզա Մումին—Թավրիզի աչքի ընկնող քաղաքական գործիչներից, որը շահ Հուսեյնի գահակցութիւնից հետո, երբ Պարսկաստանում ստեղծվեց քաղաքական խառնակ վիճակ և շահ Թահմազը անցավ Ատրպատական և Մումինը կասկածվեց, որ գաղտնի ցանկանում է կաղմակերպել հյուսիսային Պարսկաստանի ազդեցական ուժերը ու անջատել հարավային Աղբրեջանը Պարսկաստանից, դավադարաբար սպանվեց: Մումինը մոտիկ փոխհարաբերութիւնների մեջ է գտնվել Եղիաշի հետ, խոստացել է նրան օգնել՝ հավաքելու նրա պարտքերը, այդ պատճառով Եղիան նրա սպանութիւնը ցավով է նշում իր նամակներում:

20. Գարբիել—Թիֆլիսի հայ կաթողիկէ համայնքի ղեկավարներից, որը նամակագրական կապեր է ունեցել ինչպես Պոտեկարի, այնպես և Եղիաշի հետ: Գործակցել է Արևելյան առևտրական ընկերութեանը:

21. Հովսէփ Մարիա—կաթողիկէ հոգևորական: Գանձակում այդ ժամանակ գոյություն է ունեցել կաթողիկէ երկու միաբանութիւն՝ կապուլչինների և ճիզվիտների, որոնք ունեցել են իրենց վանքերը: Այդ մասին Եղիան իր «Անձկութեան» մեջ հետևյալ տեղեկութիւնն է տալիս. «Իբրև մտաք ի քաղաքն (այսինքն՝ Գանձակ—Ա. Ա.) գտի անդ երկու եկեղեցի որոյ մինն էր այնկոյս գետաբերանն, որք բնակէին քափուլչինք, որոց անունն առաջնոցն պատրի Պատրիցիոս, երկրորդին՝ որպէս Յովսէփ Մարիա և այլն: Միա եկեղեցին՝ յետ կոյս հայոց մեծ հրապարակին, որք բնակէին ճեղուիտ պատրիք, ազգաւ լեհեցի, որոց անուն յառաջնոցն էր պարոն Շվանէս, մակ Ռէյլոթ, երկրորդին էր պարոն Փաւլօ, մակ Փոռիչիանքի, երրորդին էր պարոն Թաթէոս, մակ Բոռուինսքի» (9բ):

Հետագայում, ինչպես երևում է Եղիաշի տեղեկութիւններից, պապի կարգադրութեամբ փակվել է Գանձակի ճիզվիտների վանքը և մնացել միայն կապուլչիններիսը: Տարիներ հետո նա գրում է. «Մինչ գնացի դարձալ Գանձայ, գտի միայնակ պարոն Թաթէոսն, քանզի քափուլչինք տեղոյն ոչ կամեցան թէ ճիզուիտ պատրիքն անդ մնան, հրամանաւ փափին կապեցին ղեկեղեցին ճիզուիթաց, միայն բաւական համարեցան քափուլչինացն, վասն որոյ տրտում էր պարոն Թաթէոսն և միայնակ» (19բ): Գանձակի կաթողիկէներից Եղիան նամակագրական կապեր է ունեցել Թաթէոսի հետ:

Պարսկաստանում դոմինիկյան կրոնավորների ղեկավարը՝ Բառնաբասը, որի նրատավարը Սպահան քաղաքն էր: Նա է 1722 թվականին առաջադրել Եղիաշի թեկնածութիւնը շահ Հուսեյնի աչքն՝ տանելու Ավստրիայի և Ֆրանսիական թագավորներին ու Պապին ուղղված պարսկական արքունիքի հրովարտականները: Այդ մասին Եղիան իր «Անձկութեան» մեջ գրում է. «Յամի Տեառն 1722, որ էյի ես ի քաղաքն Սպահան, յառաջ բան զպաշարումն Աղուանից, պարոն տէրն Գոմէնիկանաց Պառնաբասն, հրաւիրեցաւ ընթրիս պարսից թագաւոր շահ սուլթան Հուսէյնին: Հրամայեցաւ ինձ գնալ ընդ նմայ, որ և գնացի: Անդ ընկաւա երեք նամակք՝ պատասխան չիւր մատուցած նամակացն, որ էր՝ մինն կայսերն, միա ֆրանցիկ թագաւորին, վերջինն Փափին» («Անձկութիւն», թ. 41բ):



մտերիմ բարեկամներից մեկն է եղել, երբ նա դիրք է հարստություն ունեւր, իսկ հետագայում՝ ուսական բանտարկությունից հետո, երբ Կարնեցին ամեն ինչ կորցրած եկել է Նոր-Ջուղա և օթևանել նրա մոտ, շատ վատ ընդունելության է արժանացել:

33. Գաֆտել—հայազգի կաթողիկէ, նախկին անունը եղել է Հովսեփ, որ փոխել է կաթողիկոսություն ընդունելուց հետո: Գտնվել է Քավրիզում և զբաղվել վաճառականությամբ: Հետագայում թողել է Քավրիզը և տեղափոխվել Թիֆլիս: Կապված է եղել Արևելյան հնդկական ընկերության հետ:

34. Մամաչան—Արևելյան հնդկական ընկերության հետ կապված Թիֆլիսցի հայ վաճառական:

35. Եղիա Տախեզոյի—ղարսեցի հայ առևտրական, որը գործել է Թիֆլիսում և նամակաղբարկան կապ է ունեցել Եղիա Կարնեցու հետ: Հավանական է, որ նա վրացական արքունիքի հետ կապված անձնավորություններից է:

36. Վախթանգ թագավորը Պետրոս Մեծին խոստացել էր Գանձակում գտնվել շրջանների 20-ին, բայց Թիֆլիսից շարժվեց միայն սեպտեմբերի կեսերին: Հայ-վրացական միացյալ զորքերը Գանձակ են ժամանել հոկտեմբերի կեսերին (տե՛ս Առ, Հայոց պատմություն, հ. III, էջ 620):

37. Մինաս վարդապետը, ինչպես հայտնի է, գտնվում էր Պետրոս Մեծի արշավող բանակում: Ուշագրավ է վավերագրի մեջ հաղորդվող այն տեղեկությունը, որ Մինաս վարդապետը Երբրենդից եկել է Գանձակ և 10 օր մնացել այնտեղ:

38. Բեռնարդոս, Պիղատոս կոչված—Թավրիզի եզլիտ հոգևորական, որին Եղիան համարում է իրեն մատնողը և խորտակողը: 1723 թվականին, երբ վերջնականապես պարսկական արքունիքում որոշվում է շահի հրովարտականը Եղիայի միջոցով ուղարկել ավստրիական, ֆրանսիական արքունիքներին և Վատիկանին, Բեռնարդոսը որպես խոստովանահայր, իմանալով, որ Եղիան ուզում է օգտագործել առիթը և ուսական իշխանությունների հետ բանակցել հայ ժողովրդի ազատագրության համար, գործի է անցնում ու ամեն կերպ աշխատում խափանել նրա ծրագրերը և խորտակել նրան: Նա հետաքրքրվում է, թե ինչ ճանապարհով է գնալու Եղիան: Ակզում, երբ Եղիան որոշել էր գնալ Պուրբիայի վրայով, նա աշխատում է որոգայթ լարել ճանապարհին ֆրանսիական զեսպանի և հյուպատոսների միջոցով: Այնուհետև, երբ Եղիան փոխում է իր մտադրությունը և գնում է Ռուսաստան, այս անգամ նա ձեռնարկում է նոր դավադրություն: Ամբաստանում է Եղիային ուսական իշխանությունների առջև որպես պարսկական գործակալի և ձերբակալել տալիս նրան: Ավելորդ չենք համարում բերել Եղիայի խոսքերը «Անձկություն»-ից.

«...Աստի միտմ մինչ խորհուրդ ընդ բարեկամի ումեք՝ թէ ընդ որ ճանապարհաւ գնամք, որ ոչ անկանեմք ի որոգայթ: Մինչ գնաց այն լինէն, ասաց քափուլին Բեռնարն. «Ինչ շատ խորհուրդ կանես վասն ճանապարհորտ, ես կնայեմ թէ որ ճանապարհովն գնաս, որ գրեմ զկնի քոյ. պատրին կարգատր է, գուցէ գերծանի, բայց քո գլուխն կզնայ»: Առ որ հարցի պատճառն, արտափոխեց ի բերանոյ իրմէ այնքան ժամանակաց մթերեալ նախանձն:

Եթէ գնացել էի Օսմանցու չերկրին, հարկի կորուսանէի զգլուխս իմ... մտնականդ որ Քօփրու օղլի Ապտուլայ փաշայն զօրավարն ամենից օսմանցոց եկալով էր երկու հարիւր հազար արամբ և տիրեալ էր ամենայն սահմանացն Պարսից: Ինքըն մտեալ բանկան, նստէր ի Սալմաստ կոչեցեալ գաւառին: Աստուածն իմ ամենաբարին, որ ոչ կամի կորուսան մեղատրաց, զարձոյց զսիրտ իմ ամենկին զնայ ի չերկրն Ռուսաց:

Իրեն տեսաւ, որ ոչ կամեցայ գնալ առ ճանապարհան օսմանցոց, մատնից

զիս ի Ռուսաց: Նմանապէս ողորմելին ոչ գիտէր զօրին և զժէն Ռուսաց թէ առաւել պինտ պահեն մատնին, բան թէ մատնեալն. բազմիցս մատնեցեալն զերծաւ և մատնին կորաւ: Զկնի գնալուցն իմ անդ սկսեց ստեղծ գրել ի Ռուսաց, թէ ոչ եմ դեպան, այլ լրտես է Պարսից, զի եկաւ առ ձեզ լրտեսել և յետս դանաւ: Ոչ թէ միայն ինքն գրերի, այլ և գրել տալիս այլոց:... Ինձ հետ կարգեց լրտեսուս, թէ եթէ խաբ տամ և գնամ այլ ճանապարհ, դառնան փոխանակի և գան յիմաց աննն նմա, որ այնիոյս գրե՞» (թ. 97ա—100ա),

39. Գեւլան—Նոր-Ջուղայի եզլիտական վանքի միաբան: Ռուսաստանում բանտից ազատվելուց հետո, երբ Եղիան գալիս է Նոր-Ջուղա, շատ վատ ընդունելություն է ցույց տալիս:

40. Ըստ Պետրոս զի Մարգիտ Գիլանեցի, աֆղանները մտել են Սպահան հոկտեմբերի 14-ին (տե՛ս «Дневник осады», էջ 16): Հրատարակվող վավերագրում աֆղանների մտադր Սպահան համարվում է մահարամի 16-ին: 1722 թվականին մահարամ ամսի 1-ը եղել է հոկտեմբերի 12-ին, եթե նրան գումարելու լինենք մահարամ ամսի 16 օրերը, կտանանք հոկտեմբերի 28, Գիլանեցի հիշած հուլյան ամսաթիվը նոր տոմարի վերածելով, կտանանք հոկտեմբերի 25, տարբերությունը կլինի 3 օր:

41. Եվալիս—Շիրազի ֆրանսիական կոնսուլ:

42. Մահալ—Երևանի աչքի ընկնող հայ վաճառականներից, մեկը Նադիի եզբայրը: Առևտրական գործարքներով կապված է եղել Թավրիզի Արևելյան հնդկական ընկերության հետ:

43. Քերտս—Երևանի հայ վաճառականներից, ծննդյամբ բալուցի:

44. Բոճակ (Մուսիու Բոնո թր Բոնակ)—ֆրանսիական ղեկավար Պուրբիայում: Նրա գործուն մասնակցությունը Պուլտում 1724 թ. հունիսի 12-ին կնքվեց ուսա-թուրքական պայմանագիրը և Անդրկովկասը բաժանվեց ազդեցությունների շրջանների (տե՛ս Соловьев, История России, т. IX, էջ 402—403):

45. Փելրան—Հալեպի ֆրանսիական կոնսուլ:

46. Տեր Վարդան—Մոլլա Սուլեյման գյուղի քահանա, որին զիմել է Եղիան Պուրբիայի վրայով ճանապարհորդելու կապակցությամբ, որպես սահմանի մոտիկ վայրում ապրող անձնավորության:

47. Նախիջևնում, Երնջակում և Ջահուլում վաղուց կային կաթողիկ համայնքներ և ազատ գործում էին, սակայն XVIII դարի սկզբներին պարսկական իշխանությունները, հաշվի չառնելով նախկինում պարսկական արքունիքի տված առանձնաշնորհումները, սկսեցին նեղել հայ կաթողիկներին: Նրանց պաշտպանությունն իր վրա է վերցնում Եղիա Կարնեցին, դիմում պարսկական կառավարությանը և հանրապետությանը վերականգնում նրանց նախկին արտոնությունները: Կարնեցու «Անձկություն» մեջ ևս տեղեկություն կա այդ մասին, որը գալիս է հաստատելու վավերագրում եղած տեղեկության ճշտությունը: Անհրաժեշտ ենք համարում «Անձկություն»-ից բերել այդ հատվածը. «Ե՛լ յաուրս այստսիկ մեծ հարկապահանջութեան և մեծ նեղութեան մէջն էր գլաւոսն Նախիջուվանայ, մանաւանդ ջահկեցոց դեղարէնքն: Առաքեցաւ ի նոցանէ պատրի մի, որոյ անունն պարոն Բեռնարտոս Միլանցի, յայտնեաց մեզ զամենայն ինչս նոցա և զհալածանս նոցա, զորս կրէին ի ձեռանէ պարսից: Ի բերանոյ ամենայն ժողովրդեանն աղաչէր օգնել նոցա: Մատոյց մեզ աւանայն հին թագաւորաց ողորմութեան հրամանն: Տարեալ մատուցաք շահ Քահանայն հին թագաւորաց ողորմութեան հրամանն: Տարեալ մատուցաք շահ Քահանայն ի նմանէ առնել ողորմութիւն, որպէս որ նախին հայրն արամազին և խնդրեցաք ի նմանէ առնել ողորմութիւն, որպէս որ նախին հայրն արամազին էր: Հրամայեաց ըստ հայցուածոց մերոց նորել և հաստատել զամենայն բնի թագաւորաց հրամանն և ալ ինձ, որ և աստուծով անթերի կատարեցաւ և հին թագաւորաց հրամանն և ալ ինձ, որ և աստուծով անթերի կատարեցաւ և

ևս վերստին լինե՞նէ նոր հրաման: Այս ամենայն հրամանաց մէջն գրեցաւ, թէ բոս-  
խնորդ Յեաչ բէկին, և պարոն Յաննային պատրու անունն գրեցաւ: Զի շրջեցուցա-  
նէյին զնա ընդ իմ: Յետ ամենեցուն, առաքեցի զնոսա ի գիրչս ուղղագրաւաց...»  
(թ. 30ա):

48. Գալանսոն—Ֆրանսիացի սպա, որը ծառայել է Ռաշտի ռուսական զորա-  
մասում: Գաղտնի կապեր է ունեցել Նդիալի ուղեկից Օվաննս պատրու հետ և նրա  
հետ միասին կազմակերպել Նդիալին զրպարտելու և բանտարկել տալու ստոր գոր-  
ծը: Ամենայն հավանականությամբ Գալանսոնը Ֆրանսիական գործակալության  
հետախույզ է եղել: Իր «Անձկութեան» մեջ Նդիան Օվաննս պատրու և Գալանսոնի  
կապի մասին հետևյալն է հաղորդում. «Իբրև որ չեւաք ի Դավրէժու, ընդ նմայ էր  
թին Փրեկին 1723 և ժամանեցաք ի գաւառն Կիլան: Ի մայրաքաղաքին Ռաշտ,  
սկսեց օրատր յօրանալ, քանզի անդ գտաւ զագագախից նորա ոմն Ֆրանցիզ, որոյ  
ձակ Տալանսոն կոչիր, հարիւրապետ Բեուին քաղաքին, որ ժամանակին ծառա-  
լէր ռուսաց, քանզի զօրքն ռուսաց անդ էին: Զկնի տեսանելոցն մեր սպառա-  
պետն ռուսաց յայս Տալանսոնն գարգեցաւ լրտես ի վերայ մեր: Յամենայն աւուր  
գայր առ մեզ, ուսելք, ըմպէր և ապա յերեկոյին գնայր: Յերբմն գային ընդ նմայ  
զայլ հերթացիս, քանզի բազումք էյին: Իբրև հարեանար իմ քափուշինն, սկսէր  
բարբանջել ընդ նոսա բազում բանս, որ չէր ճշմարիտ»:

49. Միրզա Ալի Նադիր—շահ Թահմազի աշքի ընկնող քաղաքական գործիչնե-  
րից մեկը, որին վստահված է եղել գանձապետի և շահի գործերի կառավարիչի  
պաշտոնները: Նդիան նրան ներկայացնում է իբրև «Առաջին դարապետ պարսից  
կազմավորին ի վերայ գանձարանի, որին Մունշի մոսալիք ստձայնեն»:

50. Միրզա Յուսուֆ—Մավրիզեցի, որը, Նդիան Ռուսաստան ճանապարհորդե-  
լիս, պաշտոնավարել է Ռաշտում վեզիրի պաշտոնով:

51. Միրզա-Արղու Քարիմ—շահ Թահմազի արքունիքի ղեկավար քաղա-  
քական գործիչներից մեկը, որը կարճ ժամանակով վարել է Լոտիմա զովլայի  
պաշտոնը: Ռուսաստան ճանապարհորդելուց առաջ Նդիան դիմել է նրան՝ օգնել իրեն  
վարչական կարգով հավաքելու իր պարտքերը, ինչպես և լուծելու Շահբեմանյան-  
ների պատկանող թավրիզի բաղնիքի վեճը:

52. Մուստաֆա խան—Աստարայի սարդարը:

53. Արղու Քարիմ—հիշվում է որպես շահ Թահմազի «եպարքոս»:

54. Աեֆի Դուլի բեկ—շահ Թահմազի արքունիքի ծառայողներից:

55. Պաշուտ Լյուդովիկոս—Արեւելյան հնդկական ընկերության հետ կապված կա-  
թոլիկ քարոզիչ, գործել է Շամախում, մահացել է 1721 թվականին («Անձկութեան»,  
36բ):

56. Իսմայիլ բեկ—պարսկական ղեկավար Ռուսաստանում, որին հանձնա-  
բարված էր շահ Թահմազի կողմից բանակցություններ վարել և պայմանագիր  
կնքել ռուսական արքունիքի հետ: Իսմայիլ բեկը, կատարելով շահի հանձնարարու-  
թյունը, 1723 թվականի սեպտեմբերի 12-ին Պետերբուրգում կնքեց պայմանագիր,  
ըստ որի ռուսական զորքերը պիտի օգնեին Պարսկաստանից զուրս վտարելու աֆ-  
ղաններին, իսկ դրա դիմաց ռուսական տիրապետության տակ էին անցնելու մեր-  
կասպյան շրջանները՝ Գերբեք, Քաբու և այլ քաղաքներով: Ռուսաստանին էր տրո-  
վում նաև Գիլանի, Մազանդարանի և Աստառապատի շրջանները: Պարսկական ար-  
քունիքը զոգո՞ւ էր Իսմայիլ բեկի կնքած պայմանագրից, ուստի չհաստատեց  
այն: Իսմայիլ բեկը, ինչպես երևում է հրապարակվող վավերագրերից, թրջ-  
նամբար է տրամադրված եղել Նդիա Կարնեցու ղեկավարության նկատմամբ և  
առաջին անգամ նա է, որ ահազանգել է ռուսական իշխանություններին, թե Նդիան

իբ հետ տանում է արևմտա-եվրոպական երկրների արքունիքներին շահ Թահմա-  
զի պաշտոնադրերը և ներկայացրել է Նդիային որպես կառկածիլի անձնավորու-  
թյուն: Ի դեպ, իր ժամանակին այդ նկատել է Նդիան և «Անձկութեան» մեջ գրել.  
«Իսմայիլ բեկն, որ դարձել էր ի Մոսկոֆու, կամէր գնալ ի Ղարս, որ և սաչ յայտնի  
զրեց հակառակ իմ առ Պետրոս թագաւորն Ռուստաց» (թ. 50բ):

57. Արղուլիան Պապուն բեկ—Մուստարա գյուղացի պարսիկ, հավանական է  
գյուղի քալանթարը, որը պատրաստակամությամբ է հայտնել՝ օգնելու Նդիայի պատ-  
վիրակությանը ղեկավար Ռուսաստան մեկնելիս (թ. 43ա):

58. Փարսաղան Լուզայեցի—թիֆլիսեցի, վրացական արքունիքի հետ կապված  
անձնավորություն, որի հետ նամակագրություն է ունեցել Նդիան:  
59. Ուշագրավ փաստաթուղթ է Կարնեցու կտակը, որը ի կատար ածելու հա-  
մար հանձնարարվել է ախալցխեցի Զոհրաբի որդի Հարությունին:

60. Նդիայի «Օրագրություն» մեջ, որ ընդգրկում է իր ղեկավարության շրջանի  
իրազարձությունների նկարագրությունը, մեծ տեղ է հատկացված իր ուղեկից  
պատրի Օվանեսի գործունեությանը և նրա վարք ու բարբիս:

61. Գալովիկն—իշխան Գավրիլ Իվանովիչ Գոլովիկին, ռուսական արքունիքի  
կանցլերը (վարչապետը) Պետրոս Մեծի գահակալության շրջանում: Իր բանտար-  
կությունից հետո Նդիա Կարնեցին նրան է դիմել՝ հայտնելով, թե ինքը գաղտնի  
խոսակցություն ունի թագավորի հետ, որը «Բազում օգուտ կլինի թագաւորին, և  
սուրբ հաւատին և մեր (այսինքն՝ հայոց—Ա. Ա.) ազգին»:

62. Ադիլխան և Հարություն—Նդիայի պատվիրակության հայ ծառայողներից,  
որոնք ձերբակալվեցին Ղասիմով քաղաքում Նդիայի հետ միասին: Գիմել են ռուսա-  
կան արքունիքին իրենց ազատելու համար, որպես հանցանք չունեցող անձնավո-  
րություններ: Ազատեցին՝ արդյոք նրան բանտից թե ոչ, մեզ ոչինչ հայտնի չէ:

63. Հին Նախիջևանի գյուղերից մեկի ընտանիքի անդամների երկու նամակ-  
ները Ռուսաստան աշխատանքի գնացած իրենց հարազատներին՝ Գիրումին և Շա-  
հինին, ուշագրավ վավերագրեր են հայ ժողովրդի ծանր վիճակը պարսկա-թուրքա-  
կան տիրապետության արդյունք շրջանում պատկերացնելու տեսակետից: Այս եր-  
կու վավերագրերը հրապարակված են մեր «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և  
հայ ռուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության մեջ, բայց,  
քանի որ դրանք գտնվում են Կարնեցու թղթապանակներից մեկում և արժեքավոր  
վավերագրեր են, ուստի անհրաժեշտ ենք համարում ղետեղել մեր ներկա ժողո-  
վածոսում:

64. Կարնեցու հաշվեմատյանների ծավալը շատ է մեծ. դրանք հազարավոր  
ապագրական էջեր կարող են կազմել: Հաշվեմատյաններից մենք բերում ենք մի-  
այն որոշ քաղվածքներ՝ ցույց տալու համար այն մեծ արժեքը, որ ունեն նրանք  
Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի XVIII դարի տնտեսական կյանքի պատմու-  
թյան համար:

65. Անցյալում աղալի և ծառայի միջև գրավոր պայմանագիր չի կնքվել: Այդ  
պետք է բացատրել նրանով, որ աղան իրեն հավասար կողմ չի համարել ծառային  
և անպատշաճ է համարել նրա հետ գրավոր պայմանագիր կնքել: Հրապարակվող  
պայմանագրերն ուշագրավ են այն տեսակետից, որ մեզ որոշ պատկերացում են  
տալիս՝ թե աղաների մոտ ինչ ստորացուցիչ պայմաններում են աշխատել ծա-  
ռաները:

66. Հրատարակվող պարտավորությունները անձամբ Նդիայի անձնավորություն  
հետ չեն կապված, սակայն գտնվում են նրա «Գիլան»-ում և արժեքավոր վավերա-  
գրեր են տնտեսական կյանքի պատմության համար. ուստի նպատակահարմար հա-  
մարեցինք ղետեղել ներկա ժողովածուում:

Ա

Ա դաթ—սովորություն  
 Ազլութ անել—պաշտոնանկ անել  
 Ազուդա—պաշար, պարենամթերք  
 Ալա—բարձր, լավ, գեղեցիկ  
 Ալաճա—բաղձագույն կտոր  
 Ալթուն—սակեղրամ  
 Ալիբրուխարա—սալոր  
 Ալիշվերիշ—առևտուր  
 Ախտիար—իբրավունք  
 Ահվալ (աֆալ)—վիճակ, դրություն  
 Ադուդ—թաշկիճակ  
 Ադր—ծանր  
 Ադու—թույն  
 Աճամ (աջամ)—պարսիկ  
 Աճենթ—գործակալ  
 Ամակ—երախտիք  
 Ամակտար—երախտիք ունեցող  
 Ամանաթ—պահ տված ապրանք, ավանդ  
 Ամբ—հրաման, կարգադրություն  
 Այիպ (էյիբ)—խալտաակություն, ամոթ  
 Անա—մայր  
 Անճախ—հազիվ  
 Աշնա—ծանոթ, բարեկամ  
 Աշբարա—ախհատ, բացահայտ  
